Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24709

89:99
Ш-96

ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

891.542-1
Խ-99

# ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

ՅՕՐԻՆԵԱԼ Ի ՆՈՅՆ ՉԱՓՍ ՀԱՅԿԱԿԱՆՍ

Ի ՄԿՐՏՉԷ ԽՐԻՄԵԱՆ ՎԱՆԵՑԻՈՑ

ՍՐԲՈՑ ՔԱՂԱՔԻՆ ՔՐԻՍՏՈՍԱՃԵՄ ՎԱՅՐԻՑ ՓԱՓԱԳՈՂ
ՎԵՀ ԵՒ ՀԵԶԱՆՁՆ ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐԻ ՈՒՐՈՒՄՆ

ՀԱՑՑԵԱԼ

ԵՒ ԱՐԴԵԱՄԲՔ ՆՈՐԻՆ ՃՇՄԱՐԻՏ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ
ԸՆԾԱՅԵԱԼ Ի ԼՈՅՍ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ
ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ Տ. ՅԱԿՈԲԱՅ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ
1851 — ՌՅ

1967
100

24709 ин

(91046-ЦЧ)

ԱՌ

# ՀՈՅԱԿԱՊ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԱԶՕՐ

## ԲԱՐԵՓԱՐ

Որ ոգւովըդ սիրասուր ելեր այդպէս դու 'ի Նաբաւ
Ո՛չ 'ի հուպ ըստ Մովսիսին, այլ 'ի բացուստ հեռանըշմար
Աւետեա՛ց երկրին սըրբոյ կացեր 'ի դէտ երգոյս աչօք ։
Զի՞նչ տեսեր անդ, ասա ինձ, ոչ լոկ զերկիր հանդոյն նըմին .
Այլ զերկի՛ն նոր հրաշաւոր, Աստուած 'ի նմա մարդ երևեալ,
Այլ զհովուա՛ց այրիկ ցածուն, Տէրըն մանուկ՝ կուսին 'ի գիրկ,
Այլ ըզբլու՛րըն զըմուռսոյ, Յիսուս խաչին վըշտօք խընկեալ ։
Հոտ սիրո՛յ նորին անոյշ խոնարհ անձի՛նըդ բուրեցաւ,
Որ այդքա՛ն ըզմայլելովդ ելեալ 'ի քէն՝ բերիս առ նա .
Վարեցե՛ր անդր և ընդ քեզ երգովս դու զողջ մանկտիս Հայոց,
Հրաւիրա՛կ ետուր նոցին՝ յԱրարատոյ զիս դարձուցեալ ։
Ի Սաղէմ ելի սիրով և շուրջ ածեալ անդր ըզնոսին՝
Դարձայ ես խընդամիտ անդուստ առ քեզ և յուսալից .
Գիտացի՛, ոգիդ անձկով մնայր 'ի հանել զերկս իմ 'ի լոյս ։
Հանե՛ր փոյթ և յօժար և միշտ հանել բանդ խրախուսէ,
Զի գիտե՛ս դու այնուքիւք քեզ անթառամ յօդել ծաղիկս
Ի ճեմե՛լդ կենցաղոյս ընդ առապարըդ բարձրութեան .
Որ ընդ ա՛յս Վեհիդ 'ի գլուխ պըսակ լիցի բոլորահիւս,
Անե՛ղծ ու անթարշամ կեցցէ յաւէժ դարուց 'ի դարս,
Դօղելոյդ անփառասէր անուան հըռչակ հանցէ յապայն ։

ՀՐԱՒԻՐԱԿՆ

Արի՛, Երուսաղէ՜մ, եւ կա՛ց ՚ի բարձու, եւ հայեա՛ց ընդ արեւելս, եւ տե՛ս ժողովեալ զորդիսն քո յարեւելից մինչեւ յարեւմուտս՝ բանիւ Սրբոյն։ Բարուք. Ե. 5։

Համբա՛րձ զաչս քո եւ տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի եկին հասին ՚ի հեռաստանէ որդիք քո եւ դստերք քո ՚ի վերայ ուսոց նոցա բարձեալք բերցին։ Եսայի. Կ. 4։

# ՆԱԽԱՇԱՒԻՂ

ՕՒ՞ՆՁ երկիր իցէ, յորում լոյսն ագանիցի, հարցանէ բազմահամբերն Յոյլք. արդեօք մեծահռչակ Հռո՞մ, եթէ պերճ և հոյակապ Բիւզանդիոն և կամ աշխարհանազն Հայաստան. ոչ, այլ միայնակ Երկիրն Աւետեաց, որ յերջանիկն Արաբիա: Որում և եթ վիճակեցաւ 'ի մէջ հանուր աշխարհիս լինել ասպընջական Լուսոյն այնմիկ. որով 'ի հողանիւթ գոյութենէն փոխարկեցաւ նոր երկին լուսակերտ և հրաշալոր: Նա մանաւանդ բարձրագոյն ևս քան զերկին՝ անմատոյց խորան եղև 'ի յերկրի և լեառն Աստուծոյ՝ իջելովն 'ի նմա արարչագործ Բանին 'ի մարդեղութիւն: Յաղագս որոյ անցանէ քան զմիտս գերազանցութիւն սրբոյ Քաղաքին Երուսաղէմի, որ նստելոյն 'ի յաթոռ Դաւթի անվախճան թագաւորութեամբն՝ արքայարան ընտրեցաւ, որ ընդունարան եղև համայն փրկաւէտ և տնօրինական գործոցն մարմնացեալ Աստուածորդւոյն: Յայս ակնարկեալ երանելին Սարգիս՝ ասէ փափագանօք ոգւով. “Ես սակս այնորիկ սիրեմ զԵրու-

սաղէմ, սիրեմ և գովեմ և երանեմ. զի այսպիսի զա֊
նազանութիւնք շնորհաց եղեն անդ։

Կամիս գիտել զանհամեմատ բարձրութիւն Քա֊
ղաքին Աստուծոյ, և թէ քանի՜ տենչալի է համօրէն
ազանց երկրի՝ ուսիր 'ի Դաւթայ, որ զԵրուսաղէմ
կոչէ սկիզբն ուրախութեան իւրոյ և երգելով նուա֊
գէ. “Որպէ՜ս սիրելի են յարկք քո, Տէր զօրութեանց,
ցանկայ և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո”։

Եթէ տենչալի տեղիք հայրենեաց ըղձալի են յոյժ
հայրենասէր ոգւոց և Արարատն փափագելի է Թոր֊
գոմեան մանկտւոյն տարագիր եղելոցն 'ի նմանէ, քա֊
նի՜ առաւել ևս հրաշալին վայրքն Աստուածաճեմ և
երկիրն Աւետեաց՝ Քրիստոսասէր սրտից։

Քաղցր է ինձ և մանկտւոյն Հայաստան աշխարհ
իւրով երկրաւոր վայելչութեամբքն, Մասիւքն և գե
ղեցկադիր ծաղկաւէտ լերամբքն, հովային և շուշանա֊
բեր հովտիւքն, դիւր պարարտ և կանանչաւէտ զո֊
ւարճալի դաշտօքն, քառավտակ եդեմաբուղխ գետովքն,
քաղցրաշունչ և առողջարար օդովն, գինեբեր և պտ֊
ղատու այգեօք և պարտիզօք, արգաւանդ և արդիւ֊
նաշատ անդաստանօք։ Այլ յաւէտ անդրագոյն ևս
քաղցր է Երկիրն Աւետեաց իւրով անհամեմատ գե֊
ղեցկութեամբն երկնային, Սինայիւն և Թաբոր լե֊
րամբն, Եփրաթայ դաշտիւքն մայրեաց, ուր Թափառ֊
եալ հարսն եգիտ զնազելի փեսայն, խոնարհագոյն հով֊
տիւն, որ 'ի Նազարէթ, յորում շուշանն Մարիամ Յի֊
սուսի ծաղկեցաւ, գետովն Յորդանանու, յոր մաք֊
րիչն տիեզերաց մկրտեցաւ, Սողոմոնեան փակեալ պար֊
տիզիւն և կնքեալ աղբերբն, յորոց կենաց պտուղ և

կենդանի ջուր մեզ քաղցելոցս և ծարաւելոցս պարգևեցաւ, մեղերբն և կաթամբն և մանանայիւն թագուցելով, յորոց ախորժանօք վայելեալ՝ անմահացան մարդիկ, հայրաշարժ Հոգւոյն քաղցրութեան օդովն, յորմէ շունչ կենդանի ծծեալ ոսկերացս սփռելոց 'ի դաշտի աշխարհիս մեռելութեամբ՝ կենդանացաք հոգւով:

Սիրելի՛ են հարազատ սերընդոցս առաջինի նախնիքն մեր, քաջաբազուկն Հայկ կործանիչն հպարտացելոյն Բելայ և հզօր պաշտպան հայրենեաց, արին այն Արամ ահարկուն Թշնամեաց, խորտակիչն Նիւքարայ և ընդարձակիչ սահմանի իւրում տէրութեան. հուժկու և հանճարաւոր Տիգրանն սատակիչն Աժդահակայ և 'ի նորին մահաբեր շնչմանէ պատսպարիչ նորատունկ ազգին իւրում: Այլ ո՞վ են սոքա, զի ընդ երկնաւոր Հօրն խաչազէն նահատակին համեմատեցից, որ գեր քան զՀայկ հզօր երևեալ զնետ սրտմտութեան իւրոյ յաղեղանէ և 'ի կապարճից խաչին արձակելով՝ ընդ սիրտ Բելիարայ մխեալ կործանեաց. որ արի քան զԱրամ գտեալ՝ զՆիւքարն աներևոյթ կալեալ և խաչին ցցից ընդ ճակատն վարսելով՝ կախեաց յաշտարակէ լերին Գողգոթայ. որ իմաստուն և զօրաւոր քան ըզՏիգրան ցուցեալ՝ մենամարտիկ խաղաց 'ի յասպարէզ և իբրու զջուր հերձեալ զԹանձրութիւն սևագունդ զօրաց սատան Աժդահակին հուպ առ նա եհաս 'ի դժոխս և հար սատակեաց նիզակաւ բուռն զօրութե̄ Աստուածային, աւարեալ զոգիս մարդկան 'ի նմանէ, ոչ 'ի վշտալի վայրս աշխարհաց բնակեցոյց. այլ 'ի դիւր և հանգիստ յանտրտմական վիճակն երկնային, որ ա-

զատ է 'ի դառն և վշտալի աղէտից աստեացս ։

Զի՞ է ինձ այսպիսեօք 'ի կշիռ բանից արկեալ՝ ըղ-գերագունին հաշակել զգերազանցութիւն. զի զի՞նչ նմանութիւն իցէ Արարատայ ընդ Երկրին Աւետեաց, մահկանացու դիւցազանց Հայոց, ընդ անպարտելի և անմահ մարտադիր փրկչին մերում ։

Իսկ ես, որ զպարտս իմոյ հայրենեացն լնուլ հատուցի սիրողաբար առաջին Հրաւիրական իմով ձեմեցուցեալ զմանկտիս նորին ընդ փափագելի վայրս իւր, յորդորեալ յօժարիմ աւասիկ 'ի սիրային սրտէ լինել նոյին կրկնակի Հրաւիրակ՝ երկրորդի երգոյս դուզնաքեայ աշխատասիրութեամբ շուրջ ածեալ 'ի սուրբ Երկիրն ամենատենչալի. զի ցանկալի է ինձ յոյժ կոչել և Հրաւիրակ Երկրին Աւետեաց ։ Ոչ ըստ առաջնոյն օրինակի հեռի կալ կարօտալից ոգւով և մտօք միայն հրաւիրել զնոսին. այլ երթալ անձամբ 'ի Սաղիմ և շրջիլ ոտիւք և դիտել աչօք և վայելել զշնորհսն, և անդուստ ապա ձայնարկեալ կոչել զնոսին ։

Եւ քանզի Յիսուսին ազգաւ յոյժ սիրեցի զԵրուսաղէմ քան զԱրարատ, սիրեցի զնորին քարուտ անբուսաբեր ապաշուք վայրս քան զծաղկազուարճ վայելչազարդ բնակասնունդ տեղիս հայրենեացն. զի գեղեցկութիւն միոյն 'ի հողոյ երկրի է և միւսոյն 'ի յերկնից, միոյն Թառամելի, միւսոյն անԹարշամ, միոյն անցաւոր և վաղալախձան, միւսոյն անմահ և մշտնջենաւոր ։

Զարմացեալ քո 'ի վերայ անպայման սիրոյս, որ առ Աւետեաց Երկիրն, գիտեմ, իղձ լինիս հարցանել, ով սիրելի ընթերցող, եթէ զի՞ է քեզ առաւել 'ի

նորին բերել քան 'ի հայրենեացդ սէր։ Մի՛ դու բանիւդ այդ զիս Թերացեալ վարկանիր 'ի սիրոյ հայրենեացս. այլ քաջահայեաց լեր ուշով քոյին յառիմն։ Զի ես վասն այն սրտիւ սիրեմ զԵրկիրն սուրբ և զայն, որ 'ի նմա վասն իմ պատարագեցաւ. որ այսու և զցանկալին իմ Այրարատ և զորդիս նորին զհայրենակից զեղբայրսն իմ սիրեցից։ Քանզի չէ և չէ հնար առանց միոյն սիրել զմիւսն, որպէս և ոչ առանց միւսոյն, իմա դու եղբայրսիրուԹեան սիրել զմինն, այսինքն զԱստուած ըստ սիրաքարոզ Աւետարանչին Յովհաննու։

Համա դուք, ով կրկնակի հրաւիրեալ Հայոց մանկտիք քան 'ի յԱյրարատ առաւել ես յօժարասիրտ ոգւով 'ի յԵրկիրն Աւետեաց ընԹացարուք ընդ իս, զի տարայց զձեզ 'ի ցանկալի քաղաքն Սաղիմ 'ի տուն Աստուծոյ Յակովբայ, ուրանօր պատմեցից զՔրիստոսի սիրոյն անձառուԹենէ, որ 'ի սիրտս ամենեցուն սփռեալ՝ զգազմուԹիւն արանց և կանանց իբրու զաղաւնիս ձագախառն երամովին զմանկունս 'ի գիրկս բարձեալ՝ վարեալ տանի յիւր արքունաձեռն Երուսաղէմ փառաւոր առնել զտեղի սրբուԹեան իւրոյ առհասարակ սարդիւն և սօսիւ, նոճիւն և մայրիւ։ Ընդահա տեսջիք ըստ Ամովսածնին Եսայեայ, Թէ բիր եղեն Թագաւորք դայեակք նորա և կանայք նոցա մանկակալք նորա, զիա՞րդ 'ի վերայ երեսաց իւրեանց երկիրպագանեն նմա և զհող ոտից նորին լիզեն։

Ո՛ն առեալ և մեք նոյնափափագ բաղձանօք ելցուք անդր. այլ մարգարէն արգելու զմեզ հարցանելովն. Թէ "Ո՞վ ելցէ 'ի լեառն տեառն, կամ ով կացցէ 'ի տեղւոջ սրբուԹե՛ նորա"։ Նոյն ինքն դարձեալ

պատասխանէ այսմ. «Որ սուրբ է ձեռօք և ամբիծ սրտիւ, որ ոչ էառ զնանրութիւն յանձն իւր։ –

Ուստի որ հանդերձեալ եմք ելանել 'ի լեառն Աստուծոյ և կալ 'ի տեղւոջն սրբութեան, պարտիմք մաքուր և ամբիծ լինել սրտիւ, զի արժանաւորութ̅բ անկեալ երկրպագցուք պատուանդանի խաչին սրբոյ յոր բազմի ծիրանապակ յաղթող փրկիչն մեր Յիսուս. ուր և ես փառաւոր արարից փողով ձայնի երգոյս զնորին տնօրէնութեան սքանչելի գործս գերանձառ՝ հրաշագործեալ անտանոր կերպիւ նուաստութեան առեցեալ մարմնոյն յաղագս վերածելոյ զմարդիկ անդրէն 'ի փառսն. յորմէ կողոպտեալ զրկեաց զմեզ նախանձ բանսարկուին։ Եւ 'ի ճեմելն մեր անտանօր յիւրաքանչիւր հրաշափառագոյն վայրսն, յորս որդին Աստուծոյ սիրով շրջեալ կատարեաց զառ 'ի Հօրէն յանձնեալ զգերագոյն տնտեսութ̅ի մարդկային փրկութ̅ե, 'ի միտ ածցուք զանքանակ սէր, զանչափ շնորհս և զմեծ երախտիս մարդասէր, քաղցր և սիրելի Աստուծոյն մերոյ։ Որ շատ ոչ համարեաց մարմնանալ միայն 'ի կուսէն. այլև յանձուժելի չարչարանս խաչին զանձն ոչ խնայեաց։

Ի նոյն սէր և մեք ըստ Պետրոսի բանին վառեալ լիցուք առ նա և ըստ նախատուր պատուիրանին իւրում Իսրայէլի սիրեսցուք զնա 'ի բոլոր սրտէ և յամենայն զօրութենէ մերմէ։ Զի չէք և չէք այլ ինչ քան զայս զուգակշիռ տրիտուր և փոխարէն սիրոյ նորին որ առ մարդիկ։

Ընդ այս մեծութիւն սիրոյ Քրիստոսի երախտեաց հայեցեալ մարգարէին՝ և այնմ զփոխարէնն հա-

տուցանել անբաւական եղեալ՝ տարակուսելով գոչէր. “Զի՞նչ տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի զոր ետ ինձ”։

Որ զբաժակ փրկութեան Քրիստոսի դեռ ոչ արբեալ և զգեղեցիկ ճաշակս ձրի շնորհաց Նորին չև ճաշակեալ՝ այսպէս զփրկողին անկշիռ երախտեաց փոխարէն տալ փափագէր. մեզ քանի՜օն պարտ իցէ, որ զպարգևս ծայրալիր շնորհաց Նորին կշտապինդ վայելեցաք 'ի գալստենէ Նորին և վայելեմք յաւիտեան։

Սիրեսցուք ուրեմն 'ի սրտէ զԱ՟Ծ և զգուշութեամբ պահեսցուք զքաղցր պատուիրան հրամանի Նորա և զոր ասէն՝ արասցուք ըստ հաճոյից և այնպէս կոչեսցուք զնա, Տէ՛ր Տէր. որով լիցի մեզ վայրագոյն առ հաւատչէիւս՝ արժանանալ և վերնոյն Երուսաղէմի։



ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

# ՆԱԽԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ ԽՄԱՍՏԻՑ

## ԱՌԱՋԻՆ ԵՐԳՈՑ

*Ի սկիզբն առաջին գլխոյս՝ յարմարէ Հրաւիրակն զբանն ՚ի դիմաց հայրենւոյն առ ինքն։ Յորդոր և յուսադրական պատասխանիք իւր առ հայրենին և առ մանկտին հրաւիրեալ։ Հայցուած առ Յիսուս առաքիչն Հոգւոյն ՚ի Թիկունս հասանել իւրում տկարութեանն։*

*Նա սկիզբն առնու ապա հրաւիրել նախ ՚ի սուրբ քաղաքն Նազարէթ. երգէ անտանօր զհրաշալուր աւետեացն և զկուսութենէն երջանիկ և անարատ Կուսին։ Բանք երանութեան առ Նազարէթ յաղագս տեղի լինելոյ այնպիսում շնորհաց և յորդորակ առ մանկտին նմանող լինել Յիսուսի անմեղ մանկութեանն։*

*Ածէ անտի ՚ի վանս ծննդեան Յովհաննու Կարապետին։ Այցելութիւն եղանէ կոյսն Եղիսաբեթի մօրն Յովհաննու։ Գովեստ առ Մկըրտիչն Քրիստոսի, որ արժանի եղև մատակարար լինել գերագոյն շնորհաց տնօրէնութեան Աստուածորդւոյն։*

*Բերէ անդուստ ՚ի Բեթլէհէմ. և անդ նուագէ զսքանչելի ծնունդ Փրկչին մերոյ՝ աւետիս տալով նախադուշակ տեսանողացն ծածկեալ խորհրդոյն, որ յայտնեցաւ։ Համառօտ նկարագիր կոտորման Բեթլէհէմեան մանկանցն։*

*Տանի յետոյ ՚ի Յորդանան գետ։ Իջումն Յովհաննու յանապատէն, և բանք նորին կշտամբողական առ ազգն Հրէից։ Մկրտութիւն Քրիստոսի ՚ի նմանէ, և իջանելն Հոգւոյն որպէս աղաւնակերպ ՚ի վերայ փառակցին։ Վկայութիւն Հօրն զսիրելի Որդւոյն, և բան զգուշութեան առ Յակոբ չթողուլ զփառս իւր այլում ազգի։ Յորդոր առ մանկտին զգոյշ լինել անարատ պահելոյ զընկալեալ շնորհս մկրտութե՟, մի գուցէ կոճոպեսցին ՚ի յարմատոյն. առ որ պատուաստեցան Քրիստոսի ձրի շնորհաց ձեռամբ։*

## ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

### ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Որ 'ի սփիւռ ցիր և ցանեալ զիմ ըզմանկտիս հայրենազուրկ
Զայնարկեալ փողոյդ երգով՝ բերեալ 'ի յիս ճեմեցուցեր,
Այդպէս իմ և ըզքոյդ փափագ 'ի լռումն ածեր յօժար.
Դարձիր օ՛ն առիս այժմիկ, ա՛յ Հրաւիրակդ Արարատեան,
Ի քաղցրիկ ծոց հայրենւոյս, յորմէ ելեր տըրտում տըխուր.
Կարօտիմ ես քո դիմաց և դու սիրեալ իմ հայրենւոյս։
Մի՛ որ անդ խրախուսելովդ յիս վառեցեր մանկտեացն ըղձեր,
Ասա այդու՛ յապաղելովդ առ 'ի յինէն ուծանայցես։
Անդո՛ւլ ջանաս և Նըկըրտիս ինձ այլ պարծանս երկնել, գիտեմ,
Օ ըղձալի՛ն ոգւոյս յաւէտ, վասն այն ցընծամ ես ընդ յամելդ.
Թէ միայն ոչ մոռասցիս ըզքաղցրանոյշ մօրըս քո գիրկ,
Որ տած ըզքեզ և հասոյց յայդ 'ի հասակ արբուն և միր։

Յաւիտեա՛ն ոչ մոռացայց ըզՀայրենիդ իմ ցանկալի ,
Թէ և 'ի քէն կարի յոյժ հեռանայցեմ պանդխտութեամբ ։
Զ՛իղձ ոգւո՛յդ քոյոյ լըցեալ՝ այն ինչ կամ էր ինձ խնդամիտ
Դառնա՛լ անդրէն խուճապաւ և տալ զողջոյն քեզ աւետեաց .
Թէ զորդւո՛ցդ 'ի քէն զատեալ սիրտ դարձուցի առ քեզ սիրով ,
Դիմեալ աՀա՛ ճեպընթաց՝ գան ժողովին 'ի ծոցըս քո
Նո՛ր բերկրա՛նս և ցընծութիւն բերել այրւոյդ սգացելոյ ։
Այլ յանկարծ ուժգնակի հողմըն սիրոյ երկնաւորին
Յե՛ս շընչեալ 'ի հարաւոյ՝ ելից սըրտիս իմ զառագաստ ,
Զ՛իս , որ նաւե՛լ փութայի առ քեզ ընդ սեաւ ծով Պո՛նտոսին ,
Աւասի՛կ բըռնի վարէ առ Պաղեստին և Սուրբ Սաղիմ .
Ա՛ռ ի՞նչ , անդ ըզնորին առնուլ 'ի յերգ ըզվեհավայրսն ,
Ո՛ւմ ըղձանա՛յր Հոգերգուն նախ նըւագել քնարիւըն իւր ,
Եւ 'նդ ոչ յիշէ՛լ զԵրուսաղէմ լեզուին 'ի քիմս խնդրէր կըցել ։
Այս քա՛ղցր է ինձ և յաւէտ հաճոյ կամացն Աստուածային ,
Քա՛ն 'ի սէ՛ր քոյդ առաւել խաչեցելոյն վառել զմանկունդ .
Եւ 'ի նմի՛ն որպէս 'ի քեզ տարեալ այսպէս ճեմեցուցից
Ընդ սիրո՛յ հայրենւոյդ յորդիլ նոցա և Քրիստոսին ։
Ուստի քե՛զ աղէրս ածեալ ես աղաչեմ արդ 'ի հեռուստ ,
Համբե՛ր սակաւիկ մի և լեր յուսով ինձ ըսպասող ,
Ես կանո՛ւխ , ոչ անագան դառնամ առ քեզ կըրկին Չօնիւք ։
Դու բա՛ց այժմէն զքո գիրկ և ծոց լեր ընդունակ սիրողապէս ,
Վաստակեա՛լ հրաւիրակիդ տեղի տուր դիւր հանգըստաւէտ .
Ուխտեա՛լ եմ 'ի քեզ հիւսել ըզԴիւցազանց Հայոց Պըսակ .
Անձանձի՛ր խրախուսանօք Վեհ մեր քաջացըն սիրողին ,
Վա՛չ , յայնժամ ցընծալ առցէ Արթունանուն հայրենասէրն
Ի լըռո՛ւմըն ծայրալիր տարփող սըրտին փափագանաց .
Թէ և տրո՛ւպ աշակերտիս տացես շըրջել , ո՛հ , պարկաբարձ ։
Այլ դո՛ւք , ո՛վ համօրէն Թորգոմածին աղնիւ սերունդք ,
Ա՛նդ որպէս 'ի յԱրարատ և աստ 'ի սուրբ Երուսաղէմ ։

Հրաւիրեա՛լ տանիմ ըզձեզ ճեմել և անդր 'ի հրաշավայրսն.
Ուր ո՛չ Հայոց աշխարհին գոռ դիւցազանց կոխեցին ոտք,
Այլ հեզո՛յն Յիսուսի և աղքատիկ այն ձըկնորսացն,
Որ բոկանի՜ տաժանաքայլ հետևեցան խաչաբարձին.
Անդըր յաղբե՛րց քաղցրահոս և 'ի ծաղկանցն անուշաբոյր
Ըմպեա՛լ և հոտոտեալ դուք հեշտացայք երկրաւորօքն.
Աստ 'ի փոխակա՛յցըն կողահոս, որ ոռոգեաց խաչին ըզտունկ,
Արբեա՛լ և հոտ առեալ զմայլեցարուք երկնաւորօքն.
Անդ հանի զձեզ 'ի Մասիս և 'ի Սեպուհ լերինս Հայոց,
Աստ 'ի Թափո՛ր և Հերմո՛ն և Գողգոթայ լեառն Աստուծոյ.
Ուր ճըմլեցա՛ւ իբր 'ի հընձան խաչին ողկոյզըն կուսաբեր.
Անդ ճեմեա՛լ 'ի բնակասնունդ տեղիս՝ եղէք հայրենասէր,
Աստ 'ի վա՛յրըս հրաշաւէտ շըրջեալ՝ լերուք Աստուածասէր.
Հա՛պա զըօսանս մարմնոյն և կիրս արդ առ 'ի մէնջ մերժեալ 'ի բաց.
Ըզհոգւո՛յն կըրեալ 'ի սիրտ՝ ելջուք ապա 'ի սուրբ քաղաքն
Գո՛ղ արժանի՜ մաքուր մըտօք կենարարին ոտից տեղեացն
'Ի խոնա՛րհ երկըրպագել և տալ համբոյր երեսամած.
1 Դո՛ւ սակայն, սէր իմ Յիսուս, որ յանդիման սըրբոյ լերինդ
Կացեալ՝ հետո՛յդ երկնընթաց արդ ըզշաւիղըս նըկատեմ.
Որպէս անդ խոստացար աշակերտացըդ սիրելի
Նըթա՛լ յերկինս առաքել զՀոգին շնորհաց առ 'ի Հօրէն.
Յէս, հայցեմ 'ի քէն զնոյն առաքեա յաթոռոյդ Հօր,
Զի եկեա՛լ դադարեսցէ առ իս որպէս 'ի Փափագողն,
Զծարաւեա՛լ իմ ծառայիս հոգի Թափուր արբուցանել.
Որով յորդեա՛լ քոյդ 'ի սէր և ըզմայլեալ ելից յինէն,
Նըդեցի՜ց մարդացելոյդ տնօրէնութեան սուրբ ըզՏեղեացն.
Ուրանօ՛ր շըրջեցար ոտիւք քոյին մարմնազգեցիկ.

2 Սկիզբըն 'ի քէն առնեմ երգոյս, ո՛վ սուրբ քաղաքըդ Նազարէթ,
Վըճակեա՛լ տուն հայրենի խօնայր ծերոյն Աստուածահօր.

Որ ըզկո՛յսն 'ի տաճարէն առ և պահեաց 'ի քեզ մաքուր ,
Մի՛նչ յածեա՛լ Գաբրիէլ ընդ տիեզերըս բովանդակ
Ի քե՛զ եկեալ միայն եգիտ ըզդուստրըն հրաշագեղ ,
Ողջունի՛ւն եւ ըզնըշան և խօսեցաւ զնա Յիսուսին :
Դու առագա՛ստ երկնային կազմեալ եղեր աղքատ այրիդ
Այս հարսի՛ն և փեսային անախտաւոր պըսակելոցն :

Վայելո՛ւչ իմն է , մանկունք , յառաջ ըզձեզ աստ հրաւիրել
Ի տաճա՛րըն մաքրութեան , ուր եկըն Տէր յանկարծակի ,
Եւ 'ի տո՛ւն աստուածաբնակ աղքատ հիւսանըն Յովսէփայ .
Ուր ընտրեա՛լն 'ի բիւրոց Դաւթեան բողբոջըն Մարիամ
Իբրու շուշա՛ն փըթթեցաւ ընդ մէջ հովտիս խոնարհագոյն :
Հրաշաւէ՛տ և նորաքանչ դրախտ է տեղիս այս վայելուչ ,
Յորում տո՛ւնկ ծառոյն կենաց երևեցաւ որպէս Եդին
Մարիա՛մըն հրաշագեղ , որ կուսութեամբն անմատչելի
Բոցանիւթ սրով քրովբէից շուրջ փակեցաւ պարածածուկ ,
Մի՛նչ եբե՛ր ըսքանչելեօք ըզպտուղ լուծիչ դառնագունին ,
Յոր դիւրամե՛րձ լեալ մեր արդ , վա՛չ , ճաշակեմք ախորժօրէն :
Բոյս վարդի՛ն երփնափայլ ցուցաւ աստէն առանց փըշոց ,
Ի՛ջ և նըստաւ սոխակն 'ի նմա վեհ դասապետն երկնից զօրուն ,
Գեղգեղեա՛ց քաղցրախօսակ բանիւ զողջոյն իւր շնորհաբեր .
Թէ վարդի՛դ գեղոյ չըքնաղ երկնից արքայն է խանդակաթ ,
Սիրո՛վ իջեալ այժմիկ և ծոց 'ի թփոյդ օթագայի ,
Ուրա՛խ լեր , ողջոյն ընդ քեզ , երջանիկ մայրդ արքայուհի :
Տե՛ս կալոյն Գեդէօնի ճըշգրիտ ցուցաւ մեզ աստանօր ,
Մարիամ գեղմըն մաքուր և լուսակիզըն կուսութեամբ
Պարզեցա՛ւ խոնարհ ոգւոյն ինքն 'ի ներքոյ երկնից յերկրի
Ընդունի՛չ քաղցրածաւալ ցօղոյն վերնոյ լինել մեզմիկ
Ա՛յնպէս հեզ և անձայն զերդ ըզընութիւն փափկիկ ասեր :
Տեսի՛լըն հրաշաւոր ցուցեալ հովուին անդ 'ի Սինա

Հրավառեալ ՚ի մորենին, որ բորբոքէր անծախապէս·
Նոյնահրաշ և աստա՛նոր տեսաք ՚ի ծառըն Մարիամ,
Որ ըղհ՛ուըն Աստուածեղէն հայրածին Բանն խսկըղըանէ
Յարգանդի տարաւ մարմնով և ինքն եկաց անկիզելի։
Նոր երկիր բանեղէն և անդաստան իմն անարօր
Երևեալ աստ Մարիամ սերման երկնից լեալ ընդունող·
Արբեալ ՚ի ջրոյ Հոգւոյն և մշակեալ աջովն Հօր
Սովելոյ բնութեանըս մեր բեր ըղցորեան կենաց հացին։
Կուսութեամբ կընքեալ աղբիւրն, որ ըստ Երգոյն Սողոմոնեան,
Աստ յամպոյ երկնից առեալ զկենդանի ջուր յիւր աւազան՝
Բըղխեցոյց ՚ի Բեթլեհէմ պապակելոցըս զովարար։
Երջանիկ ես, Նազարէթ, զի քո վերայ բացաւ երկին,
Ուստ ՚ի վայր շող արփենւոյն հրաշածագեալ ՚ի ծոցոյ Հօրն՝
Ցոլացաւ, և սքանչելեօք մուտ ՚ի յարգանդ կուսին անփորձ.
Եւ ՚ի Նմա ճըշգըրտապէս ագաւ իբրու զարև յերկրի։
Երանիս ընդունողիդ անբաւ շնորհաց տամ բիւրանգամ,
Դու նախկին խանձարուր և բնակասնունդ տեղի Փըրկչին.
Որ այն ինչ նըստեալ ՚ի յամպ թեթև՝ փախեաւ ՚ի յԵգիպտոս
Անդ՛ուստ ՚ի հայրենիդ եկըն դարձեալ և բնակեցաւ։
Զքոյդ անուշակ օդ ծըծեաց և զարգացաւ Յիսուս մանկիկ,
Այն որ շընչովըն կենսատուր զոգիս մարդկան զարգացոյց։
Երանիս տամ և դաշտացդ, աղբերց, լերանցըդ քարաշատ,
Որ ուրեք մանկացելոյն եղեն տեղիք և ճեմարան։
Առ ՚ի ջրոյդ քո էարբ կենդանի ջրոյն առատաբաշխն,
Ի հողոյդ վերայ ննջեաց, այն որ ըստեղծ յերկրէ զԱդամ.
Ընդ ապաշուք և գեղջկական յարկիւըդ քո անփառունակ
Պատըսպարեալ օթեցաւ զերդ շինական ոք անուագ։
Աստ, մանկունք, ընդ օրինակ Յիսուս մանկան հայեցարուք,
Եւ նորին ըզողջութեան զանմեղութիւն ցուցէք ՚ի ձեզ.
Թէ որպէս՝ մանուկ եղեալ՝ յանձին եբեր ըզմանկական,

Եւ տակաւ տակաւ 'ի տես պրականին վերամբարձաւ :
Նա որ Աստուած էր և կարող շուտ յաւելուլ զհասակ մարմնոյն ,
Ում յաւէտ ըղձալի էր զբեռըն խաչին բառնալ յօժար
Ելանել 'ի Գողգոթայ և զենանիլ 'ի նմա կամաւ .
Այլ ժուժկալեա՛լ համբերէր 'ի լնուլ սիրով զՀօրըն սահման ,
Եւ 'ի տա՛լ այսու մեզ խրատ մի քան ըզժամ փութալ 'ի գործ .
Զա՛յս ուսոյց նախախոնարհ օրինակաւըն մանկութեան :

3 Չե՛ւ տարեալ, մանկունք , ըղձեղ փըրկչին 'ի ծնունդըն Բեթլէհէմ
Նախ աստո՛ւստ ածել անկ է մեծին 'ի ծնունդըն Յովհաննու ,
Եւ 'ի տո՛ւն լեռնակողմ Զաքարիայ քահանային .
Ուր զողջո՛յն 'ի տաճարին առ ընկալաւ նախ քան զԿոյսն
Գաբրիէլն աւետեօք ծնանիլ ծերոյն Եղիսաբեթ :
Այսր ահա ելեալ դիմէր Կոյսըն յըղի Հոգւոյն շնորհիւ
Տալ զողջո՛յն տոհմակից մօր մկրտչին երիցագոյն .
Նա և 'ի լո՛ւր ամուլ ծնողին պատմել բանիւ ուրախական
Զաւետեա՛ցըն հրաշալուր ազդեալ ինքեան 'ի հրեշտակէն :
Մինչ մեղմիկ ձայն ողջունի յունկըն հընչէր պառաւ ամլոյն
Շուտ 'ի ներքուստ լըսէր ծառայն և կայր յողջոյն Տեառն առաջի .
Եւ նըկատի՛չ լեալ Լուսոյն յարգանդ կուսին տաղաւարեալ
Ցընծալո՛վ խայտայր խաղայր ընդ այն գալուստ Փըրկչին յաշխարհ ,
Եւ խոնարհեա՛լ յորովայնէ 'ի յորովայն երկըրպագէր
Կարապետն յառաջընթաց լըցեալ հոգւովն Աստուածեղէն :
Հրաշանա՛յր ընդ այս յաւէտ մայրըն մանկան Եղիսաբեթ ,
Նոյն հոգւո՛վ լըցեալ և ինքն աղաղակէր ձայնիւ առ կոյսն .
Օրհնեա՛լ ես 'ի կանայս , ո՛վ դու լուսոյդ մայր Մարիամ ,
Որ ընդ մէջ մարմնոյդ ամբիծ իբրև 'ի տուն տաղաւարի .
Օրհնեա՛լ է և այդ պտուղ , որ յորովայնըդ քո բուսեալ
Պարգեւէ բանաւորաց համեղ ճաշակ անմահական :
Մինչ մերձէր ժամ ծագելոյ արուսեկին ծնընդեամբ յաշխարհ

Տեղի տալ Մօր Արեւուն՝ ժպտէր սիրով Եղիսաբեթ ,
Որ անդրէն դառնայր աստուստ ուրախ 'ի տուն իւր Նազարէթ ։
Քանի՜օն մեծ խնդութեան հանդէս լինէր աստէն , մանկունք ,
Ի ծնանե՛լ ամուլ ծերոյն զանհամեմատն 'ի ծնունդս կանանց
Զմկրտիչն Աստուածորդւոյն մաքուր տատրակն անապատի
Ի Քրիստոսի բերանոյն ըզդրուատեալն արժանապէս .
Թէ մե՛ծ ոք յորդւոց կանանց չէ յարուցեալ քան զՅովհաննէս ,
Որ անուամբըն շնորհագեղ բաց ըզլեզուն պապանձեալ հօրն
Յորժամ գըծեաց 'ի տախտակին ըզտարփալի ձայն Յովհաննէս ։
Զարմացան տեսողք հրաշիւս և որ լըւան զլուր նորասքանչ ,
Ափշեա՜լ գուշակէին , զի՞նչ լինիցի մանուկս այս ։
Մարգարէ բարձրելոյն առ 'ի հօրէն անուանեցաւ
Երթալով Տեառն առաջի և զառապարս հորդել շաւիղ ,
Զանպատրաստ ոգիս մարդկան գոլ դիւր և հարթ Փրկչին ոտից ։
Նա՝ հանգո՛յն արուսեկին ընդ մերձ այգուն ծագեալ պայծառ
Զգերարփւո՛յն աւետիս ետ որ ' Կուսէն հրաշածագէր ։
Գօղեցաւ յանապատին ըզշառաւիղս ամփոփելով ,
Ուր զուարթունք 'ի վերուստ առաքեցան 'ի սպասաւոր
Պահպանե՛լ ըզցանկալին մինչ 'ի լըրումն երեսնամի ։
Զօրէն Եղիայի վարս ըստացաւ ըզհրեշտակաց ,
Մաշկեղէն գօտի ընդ մէջ և 'ի ստեւոյ ուղտու հանդերձ ,
Զվայրենի մեղր և մարախ պարէն առեալ մարմնոյն 'ի պէտս ։
Այնչափ գերագունի վիճակեցաւ Նորոյ շնորհաց
Մինչ եռանձնեայ Աստուածութեան տեսող եղև 'ի Յորդանան ։
Խորհրդեա՛ն մարմնազգեցին , ում ցանկային հեռուստ գուշակք ,
Ընդ աչօք տեսող եղէն բանին մարմնով թանձրացելոյ .
Այլ մկրտիչն Աստուածորդւոյն մարմնոյն աչօք հուպ նըկատեալ .
Ցո՛յց մատամբ ինքն 'ի մօտոյ զգառն Աստուծոյ բարձող մեղաց ։
Եւ իւրո՛ց աշակերտացն 'ի բաց մերժեաց ըզտարակոյսն
Անշուշտ վըկայելով վասըն Նորին Աստուածութեանն .

Ես չե՛մ, ասէր, Քրիստոս, այլ ընդ առաջ նորա հրեշտակ,
Զայս իսկ առ իմ ճառեաց կանուխ տեսողն անդուստ Մաղաքիաս։
Որ ունի՛ զհարսն անարատ ընտրածնեալ Եկեղեցին
Ա՛յն է ահա փեսայն անախտ առ սէր հարսին իջեալ յերկնից։
Միա՛յն ես հարսնաւէր և բարեկամ եմ փեսային,
Ի հանդէս այս հարսանեաց, վա՛շ, փեսային ցընծամ ձայնիւ,
Որ և ա՛յս ուրախութիւն սրտիս իմոյ լըցաւ իսպառ։
Ժամ է աճիլ արդ նըմա մեծ զօրութեամբըն Աստուածային,
Այլ ի՛նձ մեղմանալ յոյժ տըկար բնութեամբըս մարդկեղէն։
Ես նըմա՛ն գիշերայնոյ փոքրիկ աստեղն աղօտանշոյլ
Երևեցայ՛ նըւազ լուսով դոյզըն բանիւ քարոզութեան.
Եւ ՚ի գա՛լ առաւօտեան պայծառ արփւոյն աշխարհալոյս
Ուստի ա՛րդ ես ՚ի նորին ճառագայթիցն աղօտանամ։
Սա գինարբու օրինամերժ Հերովդէսին լեալ կըշտամբիչ,
Նա վասն ա՛յն խընդրէր հընարս գործել ըղձաւ մահու նըմին.
Պատկառեա՛լ ոչ յանդըգնէր ՚ի յանարատ նորին վարուց
Թաթաւե՛լ զձեռն իւր յարիւն յանդիմանչին իրաւապէս։
Աւա՛ղ, ՚ի ձեռն անպարկեշտ կնոջըն մատնեալ զուր ՚ի զընդան՝
Կաքաւմամբ լըկտի դըստերըն՝ դահճին սըրով գըլխատեցաւ։
Այսպէս ՚ի ջուր մըկըրտիչն ինքն ՚ի յարիւն իւր մըկըրտեալ
Ճըրագ՛ին այն դեղանըշոյլ լոյս առ աշխարհ աղօտացաւ։
Եւ այսու բանտն ՚ի խաւար գնացեալ ելոյց դարձեալ ըզնա
Ցընծութեան աւետատու լեալ անդ հոգւոցըն վտարանդի.
Որ ՚ի ստուե՛ր մահու նըստեալք փըրկող աջոյն ըսպասէին։
Մինչ ըղձա՛յն Կարապետին լուան աւետեաց այս նորալուր
Խընդացին՝ Նահապետք և գուշակաց գունդքըն բոլոր։
Այսպէ՛ս նախընթաց եղև յերկրի և ՚ի դըժոխս
Կանխագո՛յն տալով նըշան ըզփըրկողին գալըստենէն.
Սովի՛մբ ինքըն ցուցաւ վեհ ՚ի ծառայըն Քրիստոսի,
Եօթնեկի՛ խորհրդական գըտաւ անուանց արժանաւոր։

Յովհաննէս յորջորջելով բացող եղեւ կարկեալ լեզուին ,
Մըկրտիչ՝ ՚ի Յորդանան զԱստուածորդին մըկրտելով ,
Մարգարէ՝ վերջին գոլով մարգարէիցըն նախատես ,
Առաքեալ՝ ՚ի նոր քարոզ լեալ ինքն ըսկիզըն Առաքելոցն ,
Կարապետ՝ իջելոյ Բանին յաշխարհ յառաջընթաց ,
Մարտիրոս՝ մարմնովըն իւր նահատակեալ ՚ի մէջ բանտին ,
Աւետիս՝ գոլ ՚ի դըժոխս աւետատու գերեալ հոգւոցն ։
Ո՜վ , այսքան շնորհագործ տնօրէնութեան Մարդացելոյն
Դու եւ եթ ըսպասաւոր ՚ի սուրբ Հոգւոյն որոշեցար ,
Յիսուսին բարեկամ եւ մըտերիմ սուրբ Յովհաննէս ։
Որ ըզկնի երջանիկ Մօր եւ ընտանւոյն Աստուածամերձ
Յաւէտ սիրելի ցուցար Բանին մարմնացելոյ ։
Լեր ուրեմն ընդ Տիրուհւոյն դու առ Քրիստոս աղերսարկու
Ըզմանկանց եկեղեցւոյ հրաւիրելոց ՚ի քո տաճար ։
Նա՝ վասն իմ անարժանիս ըզքեզ երգող անուանակցիս
Մաղթեմ լինել միջնորդ քեւ ընդունել շնորհս ՚Յիսուսէն ,
Որ ետ ինձ ըզմեծարեալդ առ ՚ի նմանէ երգաբանել ։

4 Ելանեմք աստի , մանկունք , արդ եւ ՚ի Ծնունդ Փըրկչին մերոյ
Բեթլեհեմ տուն Եփրաթայ քաղաք Դաւթի վեհ արքային
Յերջանիկ այրըն հովուաց սուրբ յիջեւանն աղքատ Կուսին ,
Այլ զինչ առցուք ընդ մեզ , որ ընդ արքայսն ընծայաբերս
Ձօնեսցուք Յիսուս մանկան արքայ ծնելոյն Իսրայէլի ։
Ընդ ոսկւոյն հողանիւթ ըզկատարեալ ամբիծ հաւատս ,
Ընդ կընդրկին եւ զըմըռսոյ ըզհուր սիրոյն Քրիստոսի
Բարձեալ ՚ի սիրտ սուրբ եւ մաքուր իբր ՚ի բուրվառ խընկամատոյց
Նուիրեսցուք Մանկացելոյն բարդեալ ՚ի ծուխ անուշահոտ ,
Որ բազմի անդ ՚ի մըսուր եւ գիրկ Կուսին Քրովբէաթոռ .
Եւ անկեալ ՚ի սուրբ այրին՝ երկըրպագցուք Մօրն եւ Մանկան ,
Երգեցից ես անդ ապա զԲանին ծընունդ անճառահրաշ ։

Որ զոգիս հանուր մարդկան թըլեալ ունէր իւր 'ի ձեռին ,
Տէր տիեզերաց և Թագաւոր միահեծան .
Ով , ինքն եւս 'ի կարգ մարդոյ գալ 'ի համար աշխարհագրին
Ե՛լ դիմեաց 'ի Բեթղէհէմ 'ի քաղաքէն իւր Նազարէթ :
Այն ի՛նչ արեւն 'ի մայր իւր մուտս առնէր յերեկորեայ
Այսր եկեալ հասանէին վաստակեալ Ծերն և Մարիամ ,
Իջեա՛լ յայս տուն հովուաց , ո՛հ , օթէին ընդ անասունս :
Բա՜բէ , որ եկեալն էր հանել զմարդիկ յերկնից քաղաքն ,
Ի՛նքն 'ի մէջ երկրի անիջեւան եկաց արտաքս :
Վայելո՛ւչ էր հովուաց գող քաջ հովուին ասպընջական ,
Եւ Եւայի՛ն՝ իւր չիրմաւն , յորում հեծէր ինքըն ցաւօք ,
Հիւրընկա՛լ լինել այսպէս ամբիծ դըստերըն տիրածին
Որ զերկո՛ւնըս մօրն եբարձ անախտ ծնընդեամբըն կուսական :
Աստ 'ի լո՛ւսմըն բոլորէր Լուսինըն մայր Լուսոյն ծընող
Զինննամսեայ ժուժկալեալն 'ի յարգանդին ծնանէր հրաշիւք :
Որոյ զգե՛ստն աննիւթական լոյսն էր երկնից արփիահրաշ ,
Խանձարրօք նիւթականին պատեալ դընէր 'ի մէջ մըսրոյն
Զայն փափկի՛կ քընքուշ մանկիկ 'ի ծղօտս յարդից քըստըմնելի :
Ընդ յերկի՛նս յաջմէ սրովբէք և յահեկէն հոյլք քրովբէից ,
Աստ յերկրի՛ 'ստ Ամբակումայ զարմանալեօք տեսանողին ,
Ի մէջ երկո՛ւց կենդանեաց , եզինն ասեմ ես և իշոյն ,
Ընդ հասանի՛լ ժամանակին անճառ սիրովըն ծանուցաւ .
Որ 'ի գա՛հ չորեքկերպեան փառօք ընդ Հօր բազմէր յերկինս ,
Լո՛յսն անմատչելի միշտ ըղնոյաւ պարածածուկ ,
Ի մատո՛ղ Կուսին 'ի գիրկ գըգուեալ եղև որպէս մանուկ :
Եւ որո՛ւմ չբաւէր տեղի երկնից տաճար լայնակամար ,
Խոնարհեա՛լ նուաստացաւ բովանդակեալ 'ի փոքրիկ այր .
Զի նորին խոնարհելովըն բարձրասցուք մինչ 'ի յերկինս ,
Եւ մարմնո՛վըն նուաստացեալ մեծանայցեմք մեք 'ի հոգիս :
Որ ցանկայի՛ն Թագաւորք ըղձի յաւուրց այս տեսանել ,

Յառաջեա՛լ քան ըզնոսա հովիւք տեսին զօրն անդրանիկ.
Եւ զուարթնոյն զաւետիս նոքին և եթ լըւան յերկնուստ.
Որ հընչէր մեծաբարբառ, ո՛ն փութացէք ’ի Բեթլէհէմ,
Նորածին Մանկան այնմիկ դո՛ւք նախ եղէք խորհրդազգած։
Զի յայնժամ մի ըզմիով արշաւէին ’ի տես հրաշիցս.
Այն ինչ մըտեալ ’ի մէջ այրիս տեսին զաղքատ Կոյս մի ծընեալ,
Նորահրա՛շ և ծիրանի լոյսն ըզնովաւ կամար կապեալ.
Զունէր զոք մերձ մանկաբարձ այլ միայնիկ զծերըն Յովսէփ,
Ի չգոյէ գոյն ինչ տեղի եդեալ զմանուկն իւր ’ի մըսուր։
Ըննըման էր գեղ դիմացն, երեսքըն ողջ լոյս փայլէին,
Եւ փըլթթեա՛լ վարդատիպ, շաղն ’ի վերայ մարգարտափայլ,
Որ ’ի Մօր սիրուն աչացըն ցօղէին Որդւոյն ’ի դէմս։
Որպէս յայնժամ երջանիկ հովուացն ’ի ծունկըս խոնարհեալ
Փափագմամբ հոգւով սրտիւ երկըրպագին Նորածնելոյն։
Զնո՛յն և ես, որ հասեալ կամ արդ ’ի Տաճար քո սուրբ ծնընդեան,
Տենչանօ՛ք համբուրեմ զտեղին, յորում խանձարրապատ
Եդա՛ր իբրև յօրօրան, լացեր աստէն դու տղայաբար,
Ո՛վ հայրածին Բան, վասն իմ կըրկին ծնեալ ’ի Կուսէն։
Եւ որ Տէր և Նոյնագոյ Աստուած գոլով հաւասար Հօրդ.
Եւ ըստ տեսլեան Դանիէլի ծեր հին աւուրց նըստեալ յաթոռ.
Բա՛բէ, այնչափ խոնարհեալ փոքրըկացար եղեր մանուկ.
Զի մեզօ՛ք ըզմանկացեալս և ըզլթերկս ’ի քո շնորհեդ
Ի կատա՛ր այրութեան դու հասուցես օրինակաւդ։
Այլ քե՛զ արդ աւետիս տամ, ո՛վ փըրկեալդ արեամբ Գառինն,
Որ ’ի ձեռն Օժանդակին կերեր զպըտուղըն մահառիթ.
Եւ այնու արտաքսելով յաստուածատունկ դարաստանէն՝
Թափառեա՛լ ’ի յաշխարհիս բերեր ծնընդովքդ ըզփուշ մեղաց.
Դու այժմ ցընծա՛ զուարճացեալ քանզի ’զարմէ քոյդ զաւակաց
Յայտնեցաւ առանց փըշոց Կոյս մի ամբիծ և անարատ,
Որ ծնո՛ղ եղև Լուսոյն ծածկեալ ’ի ծոց ծնողին անմայր.

Զա՛յն, որ ըզքեզ իւր Աստուածութեանն 'ի ճոխ պատկեր
Յօրինեա՛ց ինքնին ձեռօք. փըչմամբ հոգւոյն կենդանարար.
Նո՛յն՝ ըզծառայիդ արդ ըզգեցաւ ըզկերպարան.
Զի զծառա՛յդ ճոխացուցեալ 'ի վեր անդրէն բարձրացուսցէ
Տիրակա՛ն 'ի պերճ պատիւ, յոր պանծայիր անդ 'ի դրախտին,
Ուստ 'ի վա՛յր անկանելովդ, գտար անասնոց դու հաւասար։
Աւետիս և Եւայիդ, բերկրեալ ուրախ լեր ընդ դըստերդ
Լուծողին ծնընդեամբըն իւր տըրտմածին մօրդ երկանց ցաւոց,
Պարտեցա՛ր 'ի բանսարկուէն անդ 'ի յԵդեմ դու պատրանօք
Զձեռըդ 'ի ծա՛ռըն մահածին կարկառելով դառն 'ի պըտուղն.
Յաղթեա՛ց սակայն խաբիչ օձին ընտրեալ քո դուստըր Մարիամ
Ջախելո՛վ ըզգլուխ նորին խոնարհութեան գարշապարաւն։
Զաւա՛կս անխծապարտ ոչ ևս ծընցիս այսուհետև.
Օրհնեցա՛ն քո զաւակունք Կուսիդ որդւով անախտածին։
Ցընծասջի՛ր, Դաւիթ արքայ. ընդ քո բողբոջ լուսածաղիկ
Ընդ քընքո՛ւշ գեղմն որոջիդ, յորում անձրևն առատահոս
Է՛ջ և ցօղեցաւ քաղցրածաւալ Բանն 'ի վերուստ։
Զբանեղէն բոյսըս Թարշամ առ 'ի շնորհաց՝ Նոր զուարթացոյց։
Թագաւո՛րք 'ի Սաբայէ և յԱրաբայ եկեալ տենչմամբ
Մատուցին ըզպատարագըս քո Մանկան արքայածին։
Բարձրացա՛ւ քան զԼիբանան պըտուղ ծառոյդ լուսաբողբոջ
Ի քաղաքի՛դ քո և Տեառըն ծաղկեցաւ ծաղիկն Յիսուս։
Ցընծասջի՛ր ընդ հօրդ և դու, ո՛վ Իմաստունըդ գերահրաշ,
Խանդակա՛թ սիրով երգող ըզսէր հարսին և փեսային.
Բացա՛ւ անճա՛ռ կերպիւ պարտիզին այն դուռըն փակեալ,
Ուստ 'ի դուրս բուրեաց անոյշ հոտ Նարդոսի և շուշանի,
Է՛ջ 'ի նմա Եղբօր որդին և ճեմեցաւ մարմնանալովն։
Եւ ակն աղբեր կնքելոյ բըղխեաց հրաշիւք 'ի Բեթղէհէմ
Կենդանի՛ ջուր 'ի նմանէ 'ի բանաւոր երկիր խաղաց.
Արբեցո՛յց ըզպապակեալս, այլ յաւիտեան ոչ ծարաւիմք։

Երջանի՛կդ առ 'ի զարմէ Ամովսածին Եսայիաս,
Գուշակո՛ղ յայտնաբարբառ զԿուսին ծննունդըն հրաշալի,
Խընդա՛ յաւէտ հոգւով 'ի լըռումըն քո բանից անշուշտ.
Աւագի՛կ 'ի Թագազարմ շառաւիղէ տանըն Դաւթի
Ընձիւղեա՛լ ծիլ կուսական և փըթթեցոյց ըզնոր ծաղիկն,
Ի հոտո՛յն անուշաբոյր ըզմայլեցաւ աշխարհ բոլոր.
Թըմբրեցեա՛լ հոգիքըն 'ի մեղս ըսթափեցան Նորին հոտովն:
Յանարօ՛ր անդաստանէն ոռոգելոյ ցօղով Հոգւոյն,
Ե՛լ բուսաւ ցորեան առոք յերկնից իջեալ կենաց հացին,
Հրաշիւ Կոյսըն յըղացեալ ծընաւ զորդին Էմմանուէլ:
Եւ ընդ մե՛զ փըրկողն Աստուած էջ շըրջեցաւ իբրև ըզմարդ,
Ժողովո՛ւրդն 'ի խաւարի ետես ըզԼոյսն եկեալ յաշխարհ:
Դու ևս ո՛վ լեր զուարճալից հրեշտակացեալըդ Դանիէլ,
Ա՛յն փոքրիկ վէմն 'ի լեռնէն բարձրացելոյ խոնարհութեամբն
Ինքնի՛ն 'ի կոյս Մօրէն հատաւ 'ի դաշտ աշխարհիս այս
Ուր զկանգնեա՛լ չարին պատկեր մանըր փըշրեաց ուժգին հարմամբն.
Զբարձրացեա՛լս հըպարտութեամբ ըզԹագաւորս խոնարհեցոյց.
Մեծութեա՛մբըն լեռնացեալ ելից համայն ըզտիեզերս:
Եւ հի՛ն աւուրց ալևորն մատաղացաւ Նոր մանկութեամբն,
Որ յաթոռ փառաց յերկինս, աստ յանբանից 'ի մսուր նըստաւ,
Ընդ բիւրաւո՛ր հրեշտակացն և երգեցին ըզնա հովիւքն:
Առաւե՛լ քան զամենայն դու խրախացիր Կոյս լուսածին,
Ըստ ողջունին Գաբրիէլի բերկրեալ ուրախ լեր յաւիտեան.
Լո՛յսն անպարունակ, որ 'ի յերկրի մարմնոյդ ագաւ,
Ծագելո՛վ 'ի քէն պայծառ՝ ճառագայթեաց ըզտիեզերս
Ցընծացի՛ն, որ ընդ մահուն մըթով նըստեալ ոգիք մարդկան:
Քե՛ւ բարձան ծանըր երկունք ցաւածին մօրըդ Եւային,
Որ միայնա՛կ 'ի նմանէ նոր շառաւիղ անդատապարտ
Ըստ երգո՛յն իմ Մովսիսի դու յԱրմատոյն Յեսսեայ բուսար:
Եւ յերկիր կարկամելոյն կանգնիչ եղեր Որդւոյդ ձեռօք,

Աճառաւըդ սրբութեան լուացեր նորին զախտին ըզբիծ ։
Ո՛վ, 'ի քեզ մե՛ծ էր խորհուրդն, որ դեր հրաշիւք աւարտեցաւ
Զանըսկիզբըն ծնունդըն Հօր ծնանել մարմնով ժամանակաւ ,
Եւ 'ի գըրկի՛դ կաթ ջամբելով 'ի կոյս ըստեանցըդ քաղցրաբուխ
Սնուցանե՛լ դայեկապէս զտածիչ մարդկան բանին կաթամբ .
Եւ երգո՛վ ըզմայրական զօր օր ասել Աստուածորդւոյն
Եւ շըրթամբքդ շուշանագեղ համբոյր հըպիլ անմատչելոյն .
Եւ զմարմինըն հրաշարփի քընքուշ ձեռօքըդ շօշափել ,
Որ տըւա՛ւ քեւ 'ի յերկնից համեղ ճաշակ մեզ քաղցելոցս .
Այս անբաւ գանձու շնորհաց գտիչ և միայն արժանաւոր
Դո՛ւ եղեր , ո՛վ 'ի կանայս անհամեմատըդ Մարիամ ,
Սըխրալի խոնարհութեամբդ և քո վարուքըդ հրաշագան ։
Զանչափ ըզմեծութիւնդ եդեալ 'ի կշիռ Սողոմոնի
Ցո՛յց ըզքեզ առաւելեալ յոյժ 'ի դըստերըս հրաշաւորս
Լի շնորհօքըդ ծայրագոյն անցեալ զանցեալ քան ըզնոսին ։
Ի քեզ ո՛չ նըշմարեցաւ սուտ հաճութիւն և գեղ պատրիչ ,
Դու վասն այ՛ն զաւակ ազատ գտար 'ի պարտեացըն Նախամօրդ ։
Եւ տաճար զարմանահրաշ առ 'ի Հոգւոյն մաքրազարդիչ
Յօրինեա՛լ պատրաստեցար անճառելոյ Բընակողին ,
Որո՛վ 'ի համօրէն ազանց երկրի երանեցար ։

Ընդ Կուսին և քեզ հըրճուիլ վայել է արդ , ո՛վ Բեթլեհեմ ,
Լուսակա՛զմ երկին ցուցեալդ 'ի մէջ երկրի Արարողին .
Այս քո այրի՛ւդ անձկութեան հանգոյն մաքուր արգանդին Մօր
Կըրկնակի տուն տաղաւար վիճակեցար անբաւելոյն .
Եւ գըլխո՛յն անօթևան , ուր ո՛չ ետուն մարդիկ տեղի ,
Դու սիրո՛վ ապըրնջական լեալ հանգուցեր 'ի մէջ մըսրոյդ ։
Ուր ըզլալո՛յ ձայնիկ բարձեալ և արտասուեաց նա տղայապէս ,
Սիրային յաչաց կաթիլքըն կայլակեալ իջին 'ի քեզ ,
Որ զի՛ հոգս և խանձարուրս իմ լացողիս սըրբեաց զարտօսր .
Զի չէ՛ր մարդ մանկանացու Ծ՛ընեալն 'ի քեզ ըսքանչելեօք ,

Այլ անմա՛հ Աստուած գոլով ծնաւ առ 'ի տալ կեանս մեռելոյս ։
Զա՛յն առնէր քեզ աւետեաց նախագուշակըն Միքիաս ,
Բեթլէհէ՛մ երկիր Յուդայ չես դու կրտսեր կամ աննշան ․
Ի քէ՛ն ելցէ ինձ նոր Իշխան հզօր Իսրայէլի ,
Որ հովուէ՛ զիւր ժողովուրդ Տեառն Աստուծոյ մեծ զօրութեամբ ։
Տո՛ւր ուրեմն այժմ աւետիս մարգարէիդ քո խնդալից ․
Թէ յայրէս եւ աւասիկ մանուկ Իշխան ըսքանչելի ,
Ում եկեա՛լ երկրպագին մեծ Թագաւորք խոնարհելով ։
Երջանի՛կ ես , Բեթլէհէմ , լեալ արժանի դու նախագոյն
Ընդ Գառինն անարատի քոյդ ըզգառինս տալ 'ի զենումն ․
Զի զայն ողջամբ պահեսցես , որ 'ի սեղան խաչին անպարտ
Կամաւո՛ր վասն աշխարհի զանձն ընծայեաց իւր յողջակէզ ։
Ո՛վ ընդ իս այսըր հասեալ հոգւով ձեմիք , փըրկեալ մանկունք ,
Առաջի ձեր նըկարեմ զպատկերըս մարցն աղիողորմ ։
Զերկեմեա՛ն տղայս 'ի գըրկաց , ո՛հ , սուր դահճին անագորոյն
Ի բա՛ց խըլեալ խողխողէր , ո՛վ աստ աղէտ պատմէր ըզմարցն ․
Իսկ որ պի՛նդ գըգուեալ զորդեակն , և նա ըզմօր փափուկ զըստինս
Ի բերա՛ն առեալ ծըծէր զկաթըն քաղցրիկ փափագելով ․
Վէրացեա՛լ սուրն անարգել ընդ մէջ երկուցըն թափանցեալ
Զդիեցի՛կն հարեալ զատէր և կամ գըրկին ընդ մէջ զենոյր ,
Ո՛հ , արիւն կաթամբ խառնեալ թանայր ըզմօր ծոց քաղցրանոյց ,
Ո՞ր սիրտ յայնժամ հանդուրժէր հայել 'ի կերպն այն ապաժոյժ ։
Թէ խուճապէ՛ր սըրտապալ մայրըն մանկամբ զերծիլ 'ի դաշտ ,
Շո՛ւտ ըզկնի աճապարէր դաժան դահիճն արիւնըռուշտ ․
Պարտասեա՛լ մայրըն կըթոտ ծընկովք յերկիր ուշաթափէր ,
Ո՛հ , ոտիւք հարեալ անդէն , զերթ խակ ողկոյզ 'ի յուռ որթոյն
Քուռումո՛ւռ ճըմլէր այնպէս ըզնոր մանկիկն 'ի հընձան մօր ․
Կամ նըռնենեա՛ց հանգունակ պըճնեալ գեղով կարմիր ծաղկանց՝
Ճըղակոտո՛ր լեալք 'ի կարկտէ՝ վայր թօթափին ծիլք ընդ ծաղիկս ․
Նոյնակի՛ սպիտակաթոյր փափկիկ մարմինք արիւնթաթաւ

Ի վերայ գետնոյն թաւալ՝ թափեալ ծաղկանց նշմանէին ։
Քո բան աստէն կատարիւր, ո՛ մարգարէդ Երեմիաս,
Ի Հռամայ որդեկոտոր մայրըն գուժեալ ձայն լալականչ
Այսպէս, ո՛վ մանկունք, նախանուէր հոտ անոյշ զոհ
Յիսուսի ընծայեցան Բեթլէհէմեան մատաղ մանկունք.
Ոյց ոգիք լուսատեսիլ կացին թէպէտ փոքր ինչ 'ի մթան,
Այլ ընդ աճիլ Մանկան Հօր և բարձրանալ խաչին 'ի ծայր,
Իբր յայնժամ աղաւնանման և ձագախառն երամովին
Թռուցեալք 'ի վեր գնացին առ Հայրն ըստ Եսայեայ բարբառելոյն
Պըրգուկիլ առ 'ի նմանէ, ոյր Միածնին փոխան զենան ։
Իսկ մեք ապա զի՞նչ տացուք ընդ մեր 'ի մահ զենեալ Գառինն.
Թէ չունիմք արեամբ զանձինս այժըմ ձօնել նորին փոխան,
Մի՛ սակայն վերջասցուք լինել հաճոյ զոհ անարիւն
Ի սեղան սրտից մերոց առ սէր նորին ճենճերելով.
Կամ հոգւով խոնարհ ըղձեղ Հօր պատարագ նուիրեսցուք,
Որ հաճոյ եւս է նըմին բուրմամբն 'ի վեր հոտոյն անոյշ

5 Ի ծնընդեան Սուրբ տաճարէս ելեալ իջցուք 'ի Յորդանան
Ի լերանց Ահերմոնի և Սանիրայ սահեալ յորդոր,
Որ երբեմն էր ուղղիչ դրախտահանգոյն երկրին Սոդոմ
Մինչ ո՛չ էր սուզեալ 'ի խորս երկնատեղաց հրոյն ծըծըմբով.
Այն ինչ բանն 'ի վերուստ ազդէր պայծառ արուսեկին
Առ եզեր գետոյս այսմիկ ծագէր անդուստ յանապատէն
Քարոզել գալ 'ի զըղջումն 'ի ջուր մարմնով մըկըրտելոցն.
Կըշտամբօղ ձայնիւըն իւր բարբառ հանէր ըստ Եսայեայ
Ընդառաջ Հանդերձելոյն հարթ ճանապարհըս պատրաստել,
Եւ տալ արժանաւոր պըտուղ զըղջման այնուհետեւ.
Մի՛ պարծել բանիւ յանձինս, թէ հայր ունիմք մեք զԱբրահամ.
Կարող է և հնարաւոր, ասէր, Աստուած ամենակար
Ի քարանման հեթանոսաց և չսիրեցեալ ժողովրդէն

Զօրդիս Աբրահամու յարուցանել ըստ հաւատոյն ։
Բանիւք ըսպառնալեաց նա որոտայր 'ի լուր նոցին ,
Աւանիկ տապարըն սուր ահեղ հրաման Հօր մըշակին
Դնի պատրաստ յարմին ծառոց մօտակըտուր առնել ըզձեզ ։
Թէ ոչ բերջիք այժմիկ դուք ըզպըտուղ պահանջողին
Հաւատամ Որդին Աստուած , որ 'ի վերուստ գայ 'ի Հօրէն .
Հատանիք իսպառ 'ի բաց 'ի ճըշմարիտ բարի Որթոյն ,
Անաչառ դատաստանօք դատեալ մատնիք հրոյ գեհեննին ։
Այլին խիստ քարողութեամբ և անձկագոյն վարուց շաւղօք
Կարծեցեալ Հրէից ազգին գոլ Մեսիայ ինքն Յովհաննէս .
Ուստի բանիւն իւր խոնարհ զլոյս իւր ճրագին եցոյց նըւազ
(Առ որով առ ժամանակ մի ցընծացին Իսրայէլեանքն)
Թէ զձեզ արդ ես մըկըրտեմ ջրով նիւթեղէն առ 'ի զըղջումն ,
Այլ որ հուպ ըզկնի գայ իմ յոյժ զօրաւոր է իւր արդեամբքն
Որում չեմ ես արժանի լուծիչ լինել խըրացից կօշկաց .
Ահա նա հրով հոգեղէն մըկըրտեսցէ ըզձեզ ողջոյն ։
Որ 'ի ձեռին հեծանոց ունի զարդար ըզդատաստան ,
Կըրկնակի յիւր գալըստեան , որ 'ի յերկնից իբրև ըզհուր ,
Ժողովել զցորեան յամբար զհաւատացեալ դասս արդարոց ,
Եւ ըզյարդն անշիջանուտ հրոյն տալ յայրումն յաւիտենից ։
Իսկ որ դեռ 'ի մէջ մարդկան Թագչէր լուսոյն 'ի մարմնոյն քօղ
Որ աճեալ զվայելչութեան հասակն առցէ ադամային .
Գալով գայր և հասանէր ժամ յայտնելոյ զինքն աշխարհի ,
Ընդ յառաջեալ Կարապետին , փութայր և ինքն ըզկնի նորա .
Մարմնացեալ Բանն 'ի Կուսէն գայր մըկըրտիլ 'ի Յորդանան ։
Որ հոգւոյն ակամբն ըզնա նախ նըկատեաց 'ի յարգանդին ,
Մինչ մարմնոյն աչօք 'ի հուպ տես կըրկնակի , ծանեաւ ըզՏէրն ,
Մատամբ աստէն տայր նըշան աշակերտացն իւր Ամըրդին ,
Աւասիկ Գառն Աստուծոյ , տեսէք ասէր , ում տենչայիք .
Ի լերանց Գալիլեայի , ով , հետիոտս խոնարհաբար .

Առիս գայ, հեղ է թէպէտ, այլ ես ահիւ Նորին լցայ.
Եւ յորժամ մերձեալ մօտէր Տէրն 'ի ծառայն իւր պակուցեալ,
Սիրալիր բանիւ հայցէր առ 'ի Նմանէ զմըկըրտութիւն։
Մըկըրտիչըն հրաժարեալ և դողալով աղերս ածէր.
Մի՛ դու զայդ հրամայեր, ո՛վ Տէր, 'ի քէն ինձ մըկըրտիլ
Արժա՛ն է հողոյս անարգ, հի՞մ Աստուծոյդ է խոնարհիլ։
Ո՞վ սիրոյդ, նիւթականի ջրոյս մաքրութեան և անկարօտդ
Այդպէս դիմեալ գաս առիս իբրև ըզմարդ ոք երկրաւոր։
Դու մաքրիչ աշխարհի առ 'ի Հօրէդ պարգևեցար,
Եւ կիզիչ հրովդ հոգեղէն հնացեալ մեղաց ադամային.
Եւ կուսակա՛ն յարգանդէ, ո՛վ անարատ մարմին ծընեալ,
Ազա՛տ ամենայնիւ 'ի Նախահօրըն յանցանաց,
Զմե՞ ապա զիս ըստիպես ըզմըկըրտողս ջրով անկատար։
Զի՛ս հրեշտակ Մաղաքիաս, և Եսայի ձայն բարբառոյ,
Այլ ո՛չ գառինդ անմահի գուշակեցին գոլ ինձ լուացող։
Սիրո՛վ ըզծառայի և եթ պաշտօն տանիմ քեզ արդ՝
Կարապե՛տ լեալ նախընթաց ըզքոյդ ոտից հորդել շաւիղ,
Տա՛լ և նշան ծագման Արփւոյդ՝ աղօտ լուսով արուսեկիս
Որ ժամ է արդ ծածկիլ բնաւին ինձ 'ի պայծառ քո նըշուլիցդ։
Մի՛ զպաշտօն տիրականիդ տար ծառայիս, ժըտեմ, ո՛վ Տէր,
Չհանդուրժեմ տարժանակիր այս իմ ձեռօքըս հողաստեղծ
Հո՛ւպ մերձիլ յանմատչելի Հուրդ 'ի մարմինդ Աստուածախառն,
Յորմէ սրովբէն սարսելով և ունելեօքըն մերձենայր։
Ո՞րպէս կարեմ ջուր ածել ափովս Գըլխոյդ գերագունի,
Առ որ հայե՛լ ոչ զօրեն թևասքօղեալ հոյլք հրակերպիցն,
Բա՛ւ, Տէր իմ, չառնեմ զայդ ես, դու մի ստիպեր զիս հեզութեամբդ։

Թո՛յլ արա, ով Մըկըրտիչ, հեզաբանէր Գառըն Յիսուս,
Ի բարձանց խոնարհելոյս, մի արգելիչ լինիր այդպէս.
Որչափ իջի՛ց ես 'ի վայր, այնչափ զանկեալդ հանեմ 'ի վեր։
Թո՛ղ 'ի լնուլ մեզ արդ սիրով զնորոյ կրօնիս արդարութիւն.

Որ ըզՏէրս պարտաւորէ տանել պաշտօն ըզծառայի ,
Նո՛յն ըզկարապետդ զոլ իմ բանից կամակատար .
Լէր հապա հնազանդ հեզոյս և մուտ 'ի ջուր , ո՛վ Մըկըրտիչ ։
Զարհուրէր և Յորդանան ընդ Մըկըրտչին հրաժարելոյ ,
Տեղի տային Տեառըն ոտից ալիքն 'ի վեր վէտ վէտ դարձեալ .
Եւ զի տե՛ս Ճըշգրիտ ըզՏիպն ոչ փայտագործ 'ի տապանակն .
Այլ 'ի մարմնի կուսական նոր երևեալ կերպիւ անճառ ։
Նա՝ ո՛չ յուս քահանայից բարձեալ պատուով Աստուածական ,
Կամ 'ի ծո՛ց ոսկիապատ արկեղըն սուրբ ծածկեալ յաչաց ,
Ում Քրովբէք հոլաթևեան աստի ուանտի հովանաւոր ,
Հապա ի՛նքն , որ 'ի Սինէ գըրեաց ըզտառսն 'ի տախտակին ,
Կենդանի և նորահրաշ տապանակաւ մարմնոյն ծածկեալ ,
Ճըշգրիտ մա՛րդ կերպանալով՝ առ ի՛նքըն գայ և մըկըրտի ։
Ուստի խո՛յս տըւեալ փախչէր , Դաւիթն ըզկնի ձայնէր հարցմամբ .
Զի՞ է քեզ , զո՞ տեսեր դու դառնաս անդրէն , ո՛վ Յորդանան ,
Միթէ ըզՔոյդ արարիչն եկեալն առ քեզ կերպիւ խոնարհ՝
Դարձիր օ՛ն , ընկալ 'ի ծոցդ և ջուր լուացման տուր մաքրելոյդ ։
Մերկանա՛յր անդէն Յիսուս և 'նդ Յովհաննու իջեալ 'ի գետ
Վեհային ըզԳլուխըն իւր առ ծառային աջով կալեալ
Այնպէ՛ս խոնարհ ակընկոր յոտին լինէր և նուաստանայր .
Յոր ածեա՛լ ձեռնադրողին ջուր ըզմարմնովըն մաքրագոյն՝
Լըւանա՛յր , և շոյտ անդէն ելեալ 'ի դուրս՝ կանգնէր յաղօթս .
Բանային երկինք վերուստ և երևէր Հոգին Աստուած ։
Որպէս ա՛նդ խոկըղըանէ շըրջէր 'ի ջուրս համատարած ,
Նոյն և ա՛ստ 'ի Յորդանան , այլ հրաշագոյն օրինակաւ
Սաւառնեա՛լ աղաւնակերպ յիւր Փառակցին վերայ հանգչէր ։
Առ նըմին և հայրական բարբառ լըսիւր որոտագոչ .
Ահա դա՛ է սիրելի և անդրանիկ միակ Որդիս
Անդո՛ւստ խոկըղըանէ ծընեալ յինէն անճառաբար ։
Եւ մինչ ես 'ի յոչընչէ ըզտիեզերս պատրաստէի ,

Դա յիս էր պատշաճեալ իմաստութեամբըն շարժադոյն ։
Որ հայցէր փափագելով զայդ ընդունել յերկնից բարձանց ,
Նուաճիկ արձակեցի ամենիշխան յիմ աթոռոյ ,
Որ եկեա՛լ դադարեսցէ 'ի ձեզ կերպիւ այդ մարմնազգեաց ·
Դիտէ՛ և խելամուտ է դա բնաւ իմ ճանապարհաց ,
Թէ զինչ կամիմ ես յերկինս և զինչ հաճոյ յերկրի աչացս ։
Դա՛րձ , Յակոբ , հայեաց 'ի դա և տես ըզլոյսըդ քո ծագեալ ,
Բո՛ւռըն հար ըզդըմանէ , ո՛վ սիրեցեալդ իմ Իսրայէլ ·
Մի՛ Թողուր անարգելովդ՝ զառ քեզ հասեալ ըզփառսդ այլում ,
Եւ զգո՛յշ լեր , բաց զաչըս քո , պինդ գրաւեա զդա երկու ձեռօք ·
Մի՛ գուցէ շնորհիդ զօգուտ տացես ազգի օտարօտւոյ ։
Դու մի՛ երկբայիր զխոնարհ դորին գալըստենէ ·
Թէ իցէ՞ դա ինքն անշուշտ փըրկիչ եկեալ Իսրայէլիդ ·
Ասեմ քեզ , որդւոյս 'ի վկայ լինիմ ահա ես 'ի յերկնուստ ,
Եւ ընդ իս Հոգին Աստուած յիւր փառակիցըդ հանգչելով ։
Այսպէս առ 'ի Հօրէն և 'ի Հոգւոյն՝ Բանըն մարմնով
Մըկըրտեա՛լ վըկայեցաւ Աստուածորդի գոլ ճըշմարիտ ·
Եւ ըզգլուխըն կամակոր վիշապ օձին բունեալ 'ի ջուր
Ջախջախեա՛լ և խորտակեաց առեցելոյ գարշապարօքն ,
Եւ օծեա՛լ Քրիստոս արքայ , Յիսուս փըրկիչ՝ իւղով Հոգւոյն՝
Զօրացաւ քան ըզՅեսու և կործանեաց զհին Երիքով ·
Եւ յերկիր այս Աւետեաց , որ օրինակն է վերնայնոյն ,
Մո՛յծ ըզմեզ և ժառանգորդ արար սըմա զնոր Իսրայէլ ։
Նորագո՛րծ մեզ աւազան կազմեաց ըզծոց Յորդանիսիս
Ուր մըկըրտեա՛լ մերկանամք զհին մարդ մեղաց ըսկըզընածին ·
Զարդարի՛մք լուսազգեաց պատմուճանաւն անմեղութեան ,
Երկնակի՛ արժանանամք ընդունելոյ զՀոգին շնորհաց ·
Երանի՛ է մեզ , մանկունք , զի զփառս ազնիւն Յակոբայ
Հաւատո՛յն ուժով 'ի մեզ յափըշտակեալ մեք գրաւեցաք ·
Եւ զերկիրս , որ քաղցրութիւն կաթին մեղեր բըղխէ զԲանին ,

Ժառանգեա՛լ և կըշտապինդ արդ վայելեմք 'ի բարութեանցն ։
Այլ ըղձմ՛ւ լինել պարտ է ըստ Պօղոսեան ըսպառնալեացն ,
Մի՛ գուցէ կոճոպիցիմք 'ի յարմատոյն նոր պատուաստեալքս ։
Սիրելի՛ էր տընկողին Իսրայէլեան ազգ ծեռատունկ ,
Որ , անարգեալ մերժեցաւ , զի զհաւատոյն չէբեր պըտուղ ։
Երկընչել արժան է մեզ , մի և ոստոցս անհարազատ
Դիպեսցի՛ այս և յայնժամ 'ի բաց քանցեալ և փըշրեցիմք
Լեա՛լ շնորհազերծ ու անպըտուղ առ պատուաստիչըն բարեխնամ

ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

# ՆԱԽԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ ԽՄԱՍՏԻՑ

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳՈՑ

Ի յերկրորդ մասն երգոյս հանէ 'ի լեառն փորձութեան և անդէն 'ի մէջ բերէ զերրակի փորձութիւնսն դարանամուտ խորամանկին և զքաջայաղթ լինելն Քրիստոսի ժուժկալութեամբն պահոց և իմաստուն պատասխանատուութեամբն։ Խրատական բանք առ մանկտին, մի երկիրպագանել փառաց ախտին՝ յորժամ հասանէ նոցա 'ի մէջ աշխարհիս ամբառնալ 'ի գլուխ լերին մեծութեան հրապուրեալ յերևելի վայելչութեանցն, զորս ընդ առաջ աչաց նոցին բերէ պատրիչն։

Իջուցանէ անդուստ յեզր ծովուն Տիբերական. ուր զկոչմանէն ձկնորսացն յաշակերտութիւն և զլուսաւոր քարոզութենէն Քրիստոսի համառօտիւք անցեալ՝ դարձուցանէ զոճ բանին առ ազգն Հրէից և զստակս 'ի բազում և զարմանազան սքանչելեացն Յիսուսի 'ի դէմս բերեալ՝ յանդիմանէ զխստութիւն սրտի նորին, որ չհաւատաց 'ի գալուստ Որդւոյն Աստուծոյ։ Աղքատաբար կենցաղավարութիւն Քրիստոսի և նորուն աշակերտացն՝ այլովքն հանդերձ։

Հանէ ապա 'ի լեառն Թաբորական։ Պայծառակերպութիւն Քրիստոսի և ուշաթափ լինել երից աշակերտացն։ Երևումն Մովսիսի և Եղիայի սքանչելեօք, որոց տայ խօսիլ ընդ Յիսուսի յաղագս անճառահրաշ տնօրէնութեանն և զխաչին չարչարանաց, որ կատարելոց էր 'ի նոյն աւուրս յԵրուսաղէմ։ Բանք՝ ուշամոռաց Պետրոսին առ Քրիստոս վասն տաղաւարաշինութեան։ Պատասխանիք նորին առ նա, մի խնդրել զերկնային փառաց հանգիստ և զվայելումն առանց չարչարանաց խաչի։

Ի վերջոյ յորդորէ զմանկունս հետևել Քրիստոսի խաչակիր առաքինութեամբ. որով արժանանալ ելանելոյ յիմանալի լեառն վերին 'ի Թաբորն երկնից և անդ վայելել յաւերժ յԱստուածային զմայլեցուցիչ քաղցր տեսութենէն ըստ ընտրեալ երից աշակերտացն։

## ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

### ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Որ յարգանդ աւազանին մըկըրտեցաք անդ ՚ի ծնընդեան,
Խաչակնիք դրոշմեալ իւղովն՝ արիացաք զինու Հոգւոյն,
6 Ի լեառըն փորձութեան արիք ելցուք ընդ Քրիստոսի.
Ուր պահոց Օրէնըսդիրն անդ ՚ի դրախտին հնոյն Ադամայ
Ժուժկալեալ զաւուրս այնքան՝ եկաց ընաւին ինքն անսըւաղ.
Այլ որ նըմին որդիացեալ էր՝ ՚ի նմանէ առեալ մարմնովն,
Փոխանակ հօրն անցելոյ զպատուիրանօք ծառոյ պըտղոյն
Կամաւոր յօժարութեամբ մնայր անճաշակ քառասուն օր։
Ահա որ մերձեալ փորձողին իբրև ՚ի մայրն օձապատիր
Գո՛լ հասու Լուսոյն ճըշդրիտ որ ՚ի մըթան մարմնոյն ծածկէր,
Այլ դարմանս դաղտնագիտին դընել ջանայր պէս պէս հնարիւք
Խելամուտ լինել նորին խորախորհուրդ տնօրէնութեան։
Ով, ասէր, Աստուածորդի դու վըկայեալ առ ՚ի վերուստ,
Զոր լըւայ ՚ի Յորդանան և զքէն ունիմ ես տարակոյս,
Թէ որդի ես արդարև Հօր Աստուծոյ և սիրելի,

Չե՛ս հապա ումն ապիկար, այլ համազօր նըման նըմին.
Որ ձեռբն իւր պարգեւօք արարածոց է լըցուցիչ։
Զի՞ զկարօտ մարդոյ կըրեալ քաղցիւ այդպէս դու տագնապիս.
Ծրնչելո՛վ զմարմինդ այդչափ եւ կենդանւոյն մեռուցանես։
Տո՛ւր հրաման Թող այս քարինք հաց լիցին քեզ առատ առատ.
Զի գնացէ՛ իմ տարակոյս եւ զքեզ ծանեայց անշուշտ Աստուած։
Ո՛չ, ասէր, քաղցեալն Յիսուս հացիւ լոկով կեայ եւ եթ մարդ,
Այլ եւ բանիւ պատգամաց 'ի հրամանէ Աստուածային։
Բուսանի հացն 'ի հողոյ բուծիչ լինել մարմնոյն միայն,
Պարգեւի բանն 'ի վերուստ 'ի սնուցանել զոգիս մարդկան։
Զհողածին անարգ մարմնոյն, տաս դու հոգալ, որչօգնէ ինչ,
Եւ զհոգւո՛յն կենդանածիր անփոյթ առնես, ո՛վ կեղծաւոր.
Այդպէ՛ս 'ի մէջ երկուցըն դատ առնես յանիրաւի
Լեա՛լ զըրկիչ մեծագունին եւ ընդ փոքուն փութաս հոգալ.
Վերառեա՛լ տանէր ապա 'ի յաշտարակ վեհ Տաճարին,
Արկանե՛լ զքեզ վայր աստի. մի զանգիտեր, ասէր, դու բնաւ,
Պաշտպա՛ն են գունդք հրեշտակաց քեզ թէ որդի ես Աստուծոյ.
Զա՛յն տայ զքէն խրախուսանաց Դաւիթն անդուստ, մի՛ երկընչիր,
Պատրա՛ստ են նըքին առ քեզ, բազկօք բառնան մինչ գնաս ընդօդս.
Եւ յերկրի զոտըս քոյին չթողուն երբէք ընդ քար հարուլ։
Զի՛նչ առ այս Իմաստութիւնըն պատասխան բերէր պատշաճ,
Որ ի՛նքըդ Աստուածորդւոյս զբանդ 'ի վըկայ գիտես ածել,
Զի՛մ եւ զայն 'ի Մովսիսէն գըրեալ 'ի տառս ոչ ընթեռնուս
Որ սպառնայ մի՛ ժըպըրհիլ փորձել ըզՏէր Աստուած բնաւին։
Շա՛տ լիցին վասն իմ եղեալքն 'ի Բեթլեհէմ եւ Յորդանան,
Տա՛ր 'ի քէն ըզտարակոյս եւ հաւատա ըստուգապէս.
Ես ա՛յն եմ իսկ, որ 'ի գերել ըզքոյդ աւար իջի յերկնից,
Ըզհընա՛րս հաղէից քոյին տակաւ տակաւ խայտառակեմ,
Մի՛ յուսար այլով հնարիւք զիս դարձնել 'ի քո թակարթ.
Բաւակա՛ն լեր երկոքումք, որով եղեր ամօթապարտ։

Իսկ չարին խորամանկ ոչ շատացեալ կրկին փորձիւքս՝
Յաւե՛լ և երրակի կերպիւ հընարքս ճարտարել ։
Նոյն հետայն առեալ հանէր զնա 'ի լեառն ինչ բարձրագագաթ ,
Զգիտե՛մ , Գառըն հեզիկ որպէ՛ս երթայր զհետ կամակար ·
Եւ ներշմարե՛լ տայր անտի զհանուրց երկրի արքայութիւնս ,
Եւ նոցի՛ն նանրապատիր ըղձոխութեան շուք անցաւոր ,
Քե՛զ , ասէր , տամ զայդ բոլոր իշխանութիւնս հանդերձ փառօք ·
Ի՛մ են բնաւքն և ինձ տըւեալք , ում և կամիմ տամ ես ազատ ·
Թէ անկեա՛լ երկրպագցես , քեզ տաց ահա զայդ ամենայն ։
Խոժոռեա՛լ Հեզագունին ընդ այս յաւէտ , ասէր ցասմամբ ,
Ե՛րթ , ո՛վ սատանայ , երթ 'ի յետս իմ , դարձիր 'ի չիք ·
Ո՞չ 'ի տառսըն գրեալ է Տեառն Աստուծոյդ երկրպագցես ,
Եւ նըմա՛ միայնում տարցես պաշտօն զայդ վայելուչ ։
Ո՞վ քո ոգւո՛յդ հպարտամիտ և զօրութեանըդ մուրացիկ ,
Յերկնաւո՛ր փառաց զըրկեալ՝ անկար յերկիր այս տարագիր ·
Ի՞ւ այդչափ պերճանաս դու իբրև իշխան այս աշխարհիս ։
Համբե՛ր այժմիկ մինչ վառեալ իմ խաչիւս ելից 'ի Գողգոթայ ,
Ընդ քո զա՛յդ իշխանութիւն հանից 'ի քէն նոր յաղթութեամբս ·
Եւ հզօրի՛դ 'ի տուն մըտեալ զգանձըդ բոլոր աւարեցից ։
Զինուո՛ր եմ ես Հօրն իմոյ , եկի յաշխարհ 'ի յասպարէզ
Փոխանա՛կ պարտեալ մարդոյն արդ ելանեմ 'ի մարտ ընդ քեզ
Ո՛չ ուժով աստուածային , այլ առեցեալ մարմնովս անզօր ։
Ճե՛պ ընթա դու արդ 'ի դժոխս լինել պետից պատգամաւոր ,
Ծանո՛ նմին թէ եմ անշուշտ Աստուածորդի , մարդ երևեալ ·
Հանդերձեա՛լ է և պատրաստ մենամարտել ընդ հըզօրիդ ,
Թող գընդի՛ւըն իւր բոլոր գայ խըմբեսցի անդ 'ի լերինն ,
Ուրանօ՛ր զիմ յաղթութեան Խաչին ըզդրօշ կանգնեմ 'ի բարձր ։
Տէրն այսպէս ըզմեքենայս չարահնարին խայտառակեալ ,
Յաղթակա՛ն հանդիսացաւ 'ի յասպարէզ նախկին մարտիս ·
Եւ փորձի՛չն 'ի բաց լինէր լի ամօթով և կորագլուխ ։

Շո՜ւտ անդէն մատեան զուարթունք պաշտօն տանել ՚Բաջին քաղցեալ՝
Սեղան կազմեալ երկնային և նորաստեղծ հաց ՚ի վերայ
Ի Հօրէն յղեալ պարգև յաղթող Որդւոյն իւր սիրելի·
Որ Թշնամւոյն խորտակեաց հնարից ըզնետս ժուժկալութեամբն։
Ցընծայր Հայրն ՚ի յերկինս, հանդէս առնէր ուրախութեան,
Եւ հիւսեալ լուսոյ պըսակ յաղթող Մանկան իւր առաքէր·
Խըրախոյս կարդայր մարտադրին, ազնիւ, Որդեակդ իմ քաջազօր,
Այդպէս մինչ ՚ի խաչ յաղթող չարին հանդիսացիր։
Եւ մեք ևս, ով մանկունք, Փըրկչին մերոյ նախամարտիկ
Հետևեալ ժուժկալութեամբ յաղթող լիցուք փորձողին·
Թէ մեծութեամբ աշխարհիս լերանց ՚ի գլուխ բարձրանայցեմք
Ընդ առաջ երևեսցին վայելչութիւնք փաղփուն փառաց·
Որ զօրէն դաշտի ծաղկանց հեշտատեսիլ են հայելեաց,
Վայրիկ մի զուարթ են գեղով մինչ երջանիկ գարնան է ժամ։
Իսկ ընդ մերձիլ աշնայնոյն և կամ ՚ի չուել բախտին հիւրեկն
Փոյթ անդէն լեալ ծաղկընկէց և մերկանան տերևաթափ։
Մի՛ լիցի ուրեմն մեզ, որ ՚ի չարէն հրապուրելով
Պատրանաց վայելչութեան յառեալ ՚ի գեղըն հեշտասցուք·
Մի՛ և խաբեալ երևելեօքն, աւա՜ղ, անկեալ իբր Աստուծոյ
Ի գլուխ լերին մեծութեան երկըրպագցուք փառաց ախտին։
Թէ նըման երկնաւորին չառնեմք երես երևելեացս,
Յայնժամ փորձողին յաղթող լինիմք խաբէութեան·
Եւ ՚ի Հօրէն շնորհի մեզ՝ մանանայէն թագուցելոյ։

7 Իջանեմք այժմ, ով մանկունք, յափըն ծովուն Տիբերական,
Ուր ըղձնի յաղթութեան էջ Զօրագլուխըն հաւատոյ,
Հեզ ոտիւքըն ճեմելով՝ զաչըս յածէր ամենանկատ
Ի գիւտ արի զինուորաց իւր ընտրելոց իսկըզբանէ,
Որ գիտ և ետ յանշուք վայրէս և յանտոհմիկ ՚ի մարդկանէ։
Ոչ յԱթենեան տաճարէն ՚ի կիրթ ուսման վարժեցելոյն,

Կամ յազա՛տ տանէն Հռովմայ հռչակելոյն ՚ի շուք փառաց ,
Կամ ՚ի տոհմէն Պարթևական արի սպայիւք պերճացելոյն ,
Ոչ և ՚դըպրա՛ց փարիսեցւոց , որ ձո՛խ էին արդարութեամբ .
Այլ աղքա՛տ և նուաստարուեստ ՚ի ձկնորսաց ծովավաստակ ,
Այլ յիմա՛ր և պարզամիտ գեղջիկ յարանց ռամկականաց ։
Որ ընդ լըսե՛լ ըղձայն հեզիկ կոչման Հովուին երկնաւորի
Փութացա՛ն ըզկնի Նորին իբրու զգառինս անմեղագոյն ,
Հօ՛տ առեալ և դիմեցին մի ըզմիով յԱյն երկնաւոր ։
Զորս առեա՛լ կոչողին գունդ մի փոքրիկ կազմեաց ինքեան
Մարտակի՛ց լինել ընդ իւր յորժամ կըռուէր ինքն ընդ աշխարհ .
Մինչդեռ առնոյր շրջիլ նոքօք ՚ի մէջ երկրին իւր Հրէաստան ,
Լո՛յսն ՚ի ճրագ մարմնոյն լուցեալ՝ վառէր ՚ի տան Իսրայէլի ,
Որ ծածկեա՛լ ամփոփէր զամս երեսուն զիւր շառաւիղս
Թագուցեա՛լ զԱստուածութիւն մարմնոյն իւրոյ ընդ գըրուանաւ ,
Իբրև որդի՛ մարդոյ լոկ ՚ի Նազարէթ քաղաք սընեալ ,
Հիւսա՛նըն ծերունի ձետ կարծելով ՚ի մարդկանէ ։

Իսկ յորժա՛մ ՚ի Յորդանան վըկայեցաւ առ ՚ի վերուստ
Սիրելի՛ և միածին որդի լինել երկնաւոր Հօրն .
Ո՛չ ժուժայր այնուհետև լոկ Յովսեփայ կոչիլ որդի .
Կամ լուսո՛յն Աստուածութեան երկար ղօղիլ ընդ մէջ երկրի ։
Եւ որ ինքն ՚ի գլուխ լերինըն սըրբութեան քաղաք շինեալ ,
Կենդանի՛ աննիւթական վիմօք բանին նորոյ կտակաց .
Ո՛չ կարէր թաքչիլ երբէք ՚ի լուսատենչ աչաց մարդկան
Ի նոցու՛նցն առեմ ես միայն , որ սիրեցին հայել ՚ի Լոյսն
Եկեա՛լ ՚ի յաշխարհ գոլ լուսատու խաւարելոցն ։
Դիւրամե՛րձ էր նոր Մովսէս , լոյս ՚ի բանէն արտափայլէր .
Բացադէմ և ոչ քօղով նըման նըմին ծածկէր զերեսս ։
Այլ աւա՛ղ , առ որըս հուպ ճառագայթեաց Լոյսըն ճըշգրիտ ,
Կափուցի՛ն զաչըս իւրեանց , մի տեսանել նորին ըզդէմս
Որ քա՛ղցր էր և ոչ իբրև ըզՄովսիսին աչաց վնասիչ ։

Ո՛չ որպէս անդ 'ի Սինէ ծածկեալ ամպով մառախլապատ՝
Մեծագո՛չ լերինաթինդ ձայնիւքն իւր տայր ըզպատգամս ,
Յոր զարհուրէր ծառայն Մովսէս , զընդայր ահիւ բոլոր բանակն :
Այլ աստ , ո՛վ , ինքնին Աստուած 'ի Սինայէ երկնից իջեալ
Միայնակ նըւաստ կերպիւ եկն առ ընտրեալ իւր ժողովուրդ .
Բերանովըն իւր խօսէր Թարց միջնորդի մըտերմաբար ,
Որ 'ի ձեռըն հրեշտակին տայր անդ պատգամս ահագնագոչ :
Նոյնեա՛յ բանին էր տիպ՝ ընտրեալ Մանուկըն Հօր սիրոյ ,
Ո՛չ վիճէր բնաւ ընդ ումեք և կամ հանէր ինչ աղաղակ .
Չեղե՛ւ երբէք ոք լըսող զբարբառ նորին 'ի հրապարակս :
Ընդ անջո՛ւր յանապատին յորդահոսան վիմին վըտակ
Հետընթա՛ց խաղայր հրաշիւք զհետ բանակին Իսրայէլեան ,
Ջո՛ւր անո՛յշ բաշխէր առատ ծարաւ լեզուացըն տըրտընջող :
Աստանօր աղբիւրն անմահ կենդանի Վէմն ինքըն Քրիստոս
Գետահետեա՛լ ընթանայր 'ի սուրբ երկիրս այս Աւետեաց ,
Երկնախօս 'ի բերանոյն յորդոր բըղխէր զբանին վըտակ ,
Ծարաւո՛ւտ երկիր հոգւոյ արբեալ լինէր ջրովըն կենաց :
Աւա՜ղ անընդունակ ուանբեր երկրիդ Իսրայէլեան .
Ոռոգեա՛լդ 'ի Քրիստոսի քաղցր ականէն կենդանաբուղխ ,
Տակաւին ոչ ընձիւղեալ բողբոջեցար դու հաւատովք :
Երկնաւո՛ր Սերմանահանն և պարարակ Եղըն Յիսուս
Խոնարհ մարմնո՛յն առեալ ըզլուծ վարեաց ըզքեզ ակօս ակօս
Մարմնաւո՛րկ ոտիւքըն սուրբ ընթանալով յայսկոյս յայնկոյս
Ըզբանին սերմն 'ի գոգոյ հոգւոյն 'ի քեզ ցանեաց լի բուռն .
Եղո՜ւկ , որ չընկալար յերկիր սըրտիդ ապառաժուտ
Սիրաշխա՛տ քոյդ Մըշակին ոչ բերեր բնաւ բարի պըտուղ ,
Որ այնչափ վաստակեցաւ , ո՜հ , և 'ի քեզ Թափեաց քըրտունս :
Տէրըն ո՛չ բանին յարօր միայն 'ի վարել զքեզ ջանացաւ ,
Նա՝ հրաշիւք զարմանազան Աստուած լինել զինքըն ծանոյց .
Թէ բանիցըն ճըշմարիտ քեզ հաւանիլ ծանր էր ունկանդ ,

Թող աչացըդ գոնէ քաղցըր Թուէին հրաշիցըն գործք
Երեւեալ 'ի քեզ պէս պէս , առ որ չուժէ մարդկային կար ։
Ի Կանա դու ո՞չ գնացեր 'ի նորահրաշ գինւոյն արբումն ,
Ուր ընդ Մօրըն հրաւիրեալ 'ի հարսանիս երթայր Յիսուս ․
Որ ինքն էր Որթ ճըշմարիտ յայգւոջ Կուսին շառաւիղեալ
Ծաղկեցաւ , և անդ եբեր զանոյշ գինին նորոյ նշանացն ․
Եւ այնու զգառնահամ ջուր հնոյն օրինացըն խըստագոյն
Նոր՝ սիրոյն պատուիրանօք 'ի քաղցրութիւն դարձոյց գինւոյ ․
Որ 'աւա՜ղ , քեզ դառն եղև և ոչ ախորժ քո բերանոյդ ։
8 Ի Նային , ուր դագաղօք ըզմիամայրըն տանէին
Դու չէի՞ր յուղարկաւոր և սքանչելեացըն տեսանող ․
Որպէ՞ս մօտէր 'ի դին գորովաշարժ Կենդանատուն ,
Մեռելոյն ըզձեռանէ կալեալ 'ի վեր՝ ձայնէր նըմին ․
Քեզ ասեմ , պատանեկիկ , զարթիր և ել 'ի ննջմանէդ
Լէր քարոզ դու առ մարդիկ իմ զօրութեանս աստուածաձեռն ։
Զինչ անդէն , յառնէր կանգնէր իբրև 'ի քնոյ մեռեալ որդեակն
Լալական մօր ողբոյն ձայն յուրախութեանըն փոխարկէր ։
Ծանուցման մեռեալ ունկան ձայն Արարչին , ո՜վ սքանչելեացս ,
Կենդանւոյդ ոչ ազդեցաւ , զի խուլ եղեր դու կամօքն
Առ 'ի ոչ լըսել կանգնիլ քեզ հաւատով 'ի մահուանէդ ։
Ի դաշտին տափարակ , ո՞չ բազմեցար Տեառն 'ի յընթրիս ,
Ուր հընգեակ նըկանակօք ըզհինգ հազարսըն կերակրեաց ։
Տեսեր զայս և յագեցար դու կըշտապինդ աճեալ հացիւն ․
Նօթի մարմնոյդ քո յաւէտ ցուցաւ այնչափ փափագելի
Մինչ ջանացար նըստուցանել քեզ Թագաւոր ըզԿերակրիչն ։
Իսկ ըզՀացըն կենահրաշ քեզ 'ի վերուստ իջեալ 'պարգև
Ո՜հ , 'ի բաց անարգեցեր և ոչ մատեար 'ի ճաշակումն ։
Ի սեղան Հացիս այսմիկ զքեզ հրաւիրեաց Դաւիթ հոգւովն ,
Մատերուք , քաղցեալ ոգիք , ճաշակեցէք , զի քաղցր է Տէր ․
Երանիս ասէր և քեզ Թէ յուսայիր նըմա սըրտիւ ․

Լեալ անյոյս չաւատալովդ՝ արդ մեռանիս դու սովալլուկ ։
Ուսար ըստուգապէս 'ի ծնէ կուրէն հարցանելով ·
Ում այն ինչ 'ի տաճարին Տէրըն կըրկին երեւեցաւ
Ընկեալ երկըրպագէր Աստուածորդի խոստովանեալ
Յամօթ և նախատինս քեզ ունողիդ աչըս տեսող ,
Զոր խըցեալ կամովին ըստ Նշայեայ գուշակութեանն
Մի Լուսոյն աշխարհասփիւռ լինել երբէք քեզ նըկատիչ ·
Որ զի մի դարձեալ սըրտիւ և հաւատով 'ի քո Բըժիշկն
Ոգւոյդ աչքըն բացցին ըզքոյդ Փըրկիչըն ճանաչել ։
Զո՞րն ես աստ 'ի սքանչելեացըն Քրիստոսի բերից 'ի դէմդ ·
Զգաստանա՞լն 'ի հեզ բնութիւն Գերգեսացւոց դիւահարացն ,
Իզճեմե՞լն 'ի լուծական ծովուն վերայ իբր 'ի դաշտի ,
Զհնազանդի՞ն ալեաց հողմոց 'ի հրամանէն արարչաձայն ,
9 Զընթացու՞մն ոտից լուծեալ Պրովպատիկէ յաւազանէն ,
Զյարութի՞ւն Ղազարու չորեքօրեայ 'ի թաղմանէն ։
Այսչափ հրաշից հանդէպք շատ ո՞չ եղէն անհաւատիդ
Ճանաչել Աստուած ըզնա և ոչ որդի մարդոյ և եթ ·
Որ տակաւին 'ի նմանէ այլ ևս նըշան պահանջէիր ։

Արդ երգեմ և զշինական անշուք կենաց ըզՔրիստոսին ·
Որ 'ի մարդիկ համարեալ՝ կենցաղ վարեաց նոցին նըման
Աղքատիկ աշակերտօքն , որ խաչաբարձ գնացին ըզհետ ։
Որ զվերին աշխարհ զուարթնոց , զերկիր մարդկան հրաշակերտեաց ,
Ով անճառ սիրոյն իւրոյ ինքն անվայրիկ եկաց պանդուխտ ,
Անօթեւան և անտուն կեանս անցուցեալ աստանդական ։
Գանգատէր , ո՜հ , սըրտառուչ 'ի լուր ազգին անհիւրասէր ·
Աղուեսուց որջըս ետուն ուսապընջական եղեն լերինք ,
Եւ թըռչնոց երկնից ըզձոյնս ծառքըն ոստովք ապաստանի ,
Ո՜հ , չետուր , ո՜վ Իսրայէլ , Հիւրոյդ քոյոյ գըլխոյն հանգիստ ։
Նախահաւըրդ հիւրընկալ նըստեալ 'ի դուռըն խորանին

Անծանօթ ուղեգնացից 'ի հրաւիրումն ընդառաջէր.
Ցանկացայ և Ես երթալ հիւր նազելի ծերոյն այնմիկ,
Մինչ ետես փութացաւ տարաւ հանգոյց զիս իւր 'ի վրանն.
Ջուր, աստէն վաստակելոյ և մարմնաւիկ ուժից իմոց
Նա յայնժամ ածեալ անդէն՝ լուանայր ձեռօք և դիւր առնէր.
Եւ սեղան լիախորտիկ կազմեալ հիւրոյս՝ ինքըն պաշտէր։
Որ այսօր պարծիք այդչափ գոլ հարազատ որդիք Նըմին,
Հապա զի՞ զնմանութիւն Հօրըն ձերոյ չունիք յանձինս։
Ո՛չ և եթ չեղեն յօժար զՏէրըն սիրով ընդունելոյ,
Ո՜հ, լըցեալք ատելութեամբ արտահալած ես առնէին.
Որ երբեմն աշակերտօքն աստ անդ 'ի գաղտ ծածկէր զերեսս։
Մերթ 'ի դաշտի բացօթեայ հովուաց նըման իջեւանեալ՝
Ցօղաթուրմ անձրեւահար լինէր զգիշերըն բովանդակ.
Մերթ ընդ յարկօք շինականաց նընջէր այնպէս գետնախըշտի,
Ընդ փափուկ մահճաց մերոց Ինքն 'ի վերայ խոտոց յարդից.
Չարձակէր զգօտին երբէք զերդ ուղեւոր տարադիմիկ։
Եւ մերթ ես 'ի միջօրեայ տօթաժամու ճանապարհին
Զայն քընքուշ հրաշատեսիկ մարմին խարշէր շող արեւուն։
Չունէր ցուպ 'ի ձեռին, Խաչն էր Նորուն ցուպ հաստագոյն,
Կամ պարկիկ ինչ հացաբարձ ըստանձնելով ձեռնասունիցն.
Որ բանիւքըն պատուիրէր՝ տալ զօրինակ փութայր արդեամբք.
Հեզ էր և ոչ բարձրավիզ Ինքն 'ի միջի աշակերտացն.
Իշխան և կառավար, այլ ոչ յօնօք էր ակնարկող,
Քաղցր և ընտանի սիրով խօսէր ընդ մըտերիմսն։
Անշուք էր ըզգեստ անձին և չունէր բնաւ երկուս հանդերձս,
Պատմուճան մի փորանկեալ, այն էր ծածկոյթ և զարդարիչ,
Միրայնոյ և խնամածու Մօրըն իւրում մատամբք հիւսեալ։
Զողջոյն գիշեր անքուն ակամբ 'ի Ձիթենեաց լերին հըսկէր,
Չունէր պէտս Ինքըն աղօթից, այլ աղագաւ իմ նըւիրէր.
Եւ 'ի տուընջեան 'ի տաճարին կայր 'ի քարոզ բանին կենաց։

Մանո՛ւկ , այլ մըտավարժ և ծերունեացըն խրատատու ,
Նոր ո՛մըն Դանիէլ 'ի վեհագոյն տոհմէն Յուդայ
Երևեա՛լ հրաշաշնորհ ոգւովն 'ի մէջ Իսրայէլի ,
Անաչա՛ռ բանիւն արդար յանդիմանիչ Փարիսեցւոցն .
Որպէս նա Շուշանին դատապարտիչ՝ շամբուշ ծերոցն ։
Մինչ ուղղիչ էր խոտորեալ սրտի ազգին իւրում յերկինս ,
Թուէր սակայն 'ի մէջ նոցին իբրև Թիւրիչ ժողովրդեան ։
Եւ որ զդե՛ւս 'ի մարդկանէ հանէր մատամբն աստուածազօր
Աւա՜ղ , 'ի զօ՛ւր բամբասէր իբր իշխանաւ Բէեղզեբուղ ։
Տանէր այսմ ամենի երկայնամիտ ներողութեամբն ,
Գոլով գա՛ռն Ինքն Աստուծոյ . վասն այն յինքեան կրէր զգառինն ։
Այսպիսի՛ կենցաղ վարեաց Տէրըն փառաց պատուեալ յերկինս
փառօք անպատում և մեծութեամբըն ճոխացեալ .
Բա՜բէ , Թափո՛ւր 'ի նոցանէ իբրու կարօտ ոք տառապեալ
Շըրջեցա՛ւ 'ի Հրէաստան 'ի տան ազգին իւր սիրելի ։
Հանդո՛յն վարդապետին և աշակերտքըն հետևող
Մերկացա՛ն 'ի բնաւ յընչից , Թողին ըզտուն և զընտանիս
Ընդ անձո՛ւկ շաւիղ մըտեալ՝ հետևեցան Խաչաբարձին
Կամաւո՛ր յօժարութեամբ մինչ և չունել ակն ինչ վարձուց ։
Վասն որո՛յ յուշի եկեալ հարցանէին հասու լինել .
Տէր , ահա զգոյս մեր բոլոր Թողեալ եկաք մեք ըզկնի քո ,
Զ՛ինչ լինիմք 'ի վախճանի , և զի՛նչ լիցէ վարձ մեր 'ի քէն ։
Դո՛ւք , ասէր , որ այդպէս , վասն իմ կամաւ աղքատացայք ,
Եւ զԹիկո՛ւնս յօժարասիրտ եդիք ընդ իմ խաչիս բեռամբ .
Ձե՛զ ասեմ , որպէս հաղորդ եղէք աստէն այսքան վըշտաց ,
Նոյնգունակ և անպատում անդ պատրաստեալ երկնից փառացն .
Եւ ընդ իս յաԹոռ նըստիլ դատիչ լինել՝ արդ խոստանամ .
Յորժամ ես կըրկնակի գամ 'ի դատել զազգըս մարդկան ։
Թէ փառացըն հանդերձեալ դուք փափագիք լինել տեսող ,
10 Իբրև դո՛յզն ինչ 'ի նշուլիցն ելէք ցուցից լեառն 'ի Թափօր .

Օ՜ն առեալ մանկունք, և մեք արդ ընդ երից աշակերտացն,
Ելցուք ա՛նդր և Տենչալւոյն 'ի գեղ դիմացըն յառեսցուք.
Քանզի ա՛նդ հրաշածաղիկ Վարդըն Յիսուս մարմնովըն իւր
Ծիրանի և երփնագոյն գեղով վառեալ պայծառացաւ.
Լոյս 'ի կուսական յանձնէ մարմնոյն արտափայլեալ,
Ճառագայթք առ 'ի նմանէ հատան իբրև 'ի յարփենւոյն,
Զինուափայլ դարձան հանդերձք, որ նուաստ և նսեմ էր զառաջինն.
Նոր երկին եղև Թափոր լցեալ լուսով անմատչելի
Տէրն 'ի սմին իբր 'ի Սինա փայլատակեալ Աստուածութեամբն ։
Յորմէ ահիւ զարհուրեալ ընտրեալ երից Աշակերտացն
Զհանդուրժեալ 'ի տես հրաշիցն անկանէին ուշամոռաց,
Եւ նայէլ ոչ ժուժէին 'ի Հայելին Հօրն՝ անարատ,
Ի Պատկէրն առատութեան և 'ի Ծագումն ամենափայլ,
Ի Ճաճանչըն հրանըշոյլ Տիրականին մեծ զօրութեան ։
Ո՜վ, աստ ո՜չ գիտեմ ըղձափ արագութեան վեհ հրամանին,
Զի կոչմամբն յերկնից յերկրէ այսըր բերէր վաղ ըղձառայսն,
Եւ ահա շոյտ 'ի միջի կացին Մովսէս և Հեղիաս.
Զարմանք հիասքանչ, տիպ յարութեանըն համօրէն ։
Ոյք խօսէին ընդ Յիսուսի ըզփըրկաւէտ խաչին ելից
Հրաշապէս կատարելոց առ 'ի նմանէ յԵրուսաղէմ ։

Օրհնեալ է, ասէր Մովսէս, այդ քո խոնարհ գալուստ, Փըրկիչ,
Որ հանդերձեալ ես կամաւ մատնիլ 'ի մահ և մեռանիլ ։
Ցընծամ ընդ երևումն անտես դիմացդ Աստուածահրաշ,
Ընդ այնչափ թախանձելով՝ տեսի զյետոյսըդ միայնակ,
Վա՛շ, այժմիկ բըըր հայիմ հուպ 'ի տիպարդ լուսաճաճանչ ։
Մեռանի, Դու ասէիր, թէ ոք զերեսս իմ տեսանէ.
Բա՜քէ, ինձ մեռելոյս արդ կեցուցիչ եղեր տեսլեամբդ,
Ընդ ահիւ զարհուրէի, աստ խրախուսիմ և զուարճանամ ։
Նա յակճիռս եղեալ ափշիմ մինչ նըշմարեմ զՀուրըդ կիզիչ,
Որ յայնժամ ըզմորենին վառէր և մայր անկիզելի,

Եւ այժմիկ նոյնահրաշ 'ի կուսական մարմնիդ վառեալ՝
Ո՛վ անհաս քո զօրութեանդ, պահել գիտես դու զայդ անկէզ։
Այո՛, Տէր, ես հաւատամ մարգարէն իսկ ես ճըշմարիտ
Յարուցեա՛լ 'ի վերջ դարուս 'ի հզօր տանէն քո Յուդայի։
Աւա՛ղ, որ ո՛չ լըսեն քեզ որդիքըն Թիւր և արատոյ,
Զանձն զ'ի քէն շնորհեալ անբաւ բարիսըդ քո 'ի յուշ,
Որ բազկաւըդ զօրութեան հաներ զնոսին յԵգիպտոսէն,
Որ 'ի ծով և ծարաւոյ պաշտպանեցեր Թևապարփակ,
Որ խնամով դարմանեցեր առատ արդեամբք անդաստանաց,
Որ կոգւով կովուց ուանոյշ կաթամբ մաքեաց գիրացուցեր,
Որ տարեա՛լ տընկեր զնոսին 'ի Լեառնըդ սուրբ ժառանգութեան։
Եկե՛ր և յագեցաւ Յակոբ 'ի քէն զայս բարութիւնս,
Գիրացաւ և յափրացաւ, Թող և Թողու զքեզ Արարիչդ,
Ո՛հ, ո՛վ Տէր, ըզսիրելիդ արդ անկուշէ՞ խաչին վըշտօք։
Մի՛ սըրտմըտիր դու ընդ այս, համբեր քոյին ներողութեամբդ.
Թող ասցե՛ն ըզհատուցումն 'ի քէն յաւուր վրէժխնդրութեան։
Քեզ փութա՛լ է աւասիկ 'ի փըրկութիւն օձահարացն,
Թոյնամա՛հ եղև աշխարհ յանբուժելի լարից չարին.
Հասի՛ր, Տէր, սիրովդ անչափ շուտ բարձրանալ 'ի ձող խաչիդ.
Որ առ քե՛զ վիրաւորեալքըն հայելով բըժըշկեսցին։
Եւ 'ի մահո՛ւն սուր ժանեաց դու զըմբըռնեալքս 'ի բանտ ներքին,
Կարկառեա՛ զձեռըն քոյին կորզեա և հան անդուստ առ քեզ։
Երթա՛մ և աւետիս տամ ըսպասող անդ Նախահարցն,
Զազատչիդ մերոյ զիջումն ըզմերձ լինելըն քարոզեմ.
Զայս ասէր, լուէր Մովսէս, խօսիլ առնոյր և Հեղիաս։
Դո՛ւ Աստուած նախանձաւոր և վրէժխընդիր փառացդ անուան,
Որ վառելո՛ս 'ի քոյդ նախանձ ցուցեր այնչափ ըզքանչելիս.
Իմ բանիւ փակեալ զերկին չետուր անձրև Իսրայէլի.
Եւ Թա՛թիւ սիրոյդ ամպոյ դարձեալ ցօղեր ծարաւելոյն։
Մինչ առ Ջրո՛վ հեղեղատին ես Թաքչէի միայնաւոր

Ագռաւո՛ւց հրաման ետուր հացիւ մըսով զիս կերակրել ։
Անհա՛տ իւղով և ալերբ զեղեր ըզտուն այրի կընոջն
Ի պարէ՛ն ինձ և նորին մանրիկ մանկտեացըն սովալլուկ ․
Եւ փըշմամբ իմով դու շունչ նոր շնորհեցեր մեռեալ մանկանն ։
Հրաշալի՛ն հրովդ երկնաէջ ծախեր ըզզոհն իմ քեզ հաճոյ ,
Զի՛ս խընդրո՛ղ զերկ յիսնապետս պատուհասաւ բոցոյդ կիզեր ։
Մաշկեկի՛ն իմոյ հարմամբ ըզՅորդանան անջրպետեր ․
Ի վերջնումն հրեղէն կառօք հաներ ՚ի դրախտըդ երկնային ․
Եւ այսօր դարձեալ անդուստ փայլաբերեր այսր ՚ի Թափօր ։
Առ ի՞նչ այս , և զի՞ տեսիլ կերպարանիդ այդ նորահրաշ ․
Մեղմախառն հեղիկ օդոյն երևեցար ինձ ՚ի Քորեբ ,
Օրինա՞կ էր այն միթէ մարմնոյդ այդմիկ խոնարհակերպ ․
Յորում Լո՛յսդ անվայրափակ պարագրելով անճառապէս՝
Ետո՛ւր այսօր ՚ի քէն ծագիլ այդպէս արփիանման
Առ ՚ի վկա՛յ միացելոյ Աստուածային բնութեանդ ՚ի մարդ ,
Կամ ՚ի տի՛պ հանդերձելոյ քոյդ գալըստեանըն միւսանգամ ։
Չե՛ւ հասեալ իմ ժամանակ , ընդէ՞ր այժմէն ածեր զիս , Տէր ,
Վայելո՛ւչ է նախ Փըրկչիդ զպաշտօն լընուլ իւր զփըրկական ․
Զ՚ի մա՛հ մատնիլ և ՚ի խաչ և սիրտ յերկրի թաղիլ մեռեալ ,
Ըզյառնե՛լն և համբառնալն և ըզնըստիլն ընդ աջմէ Հօրն ։
Ես ապա՛ հանդերձիմ գալ և կարապետ լինել յայնժամ ,
Եւ ՚ի վէ՛մդ անշարժելի նոր հաստատել զազգն անարգող ․
Ո՜հ , որ ՚ի նուագ նախ գալըստեանդ առ ՚ի նոցունց անարգեցար ։
Էջ , ո՛վ Տէր , արդ ՚ի լեռնէս , մի յապաղեր , փութա ՚ի խաչ ․
Սիրակա՛ն որդւոյդ այդ նոր գեղոյ կերպիդ ադամային՝
Ո՛վ , քանի՞ Հայրըդ ցանկայ և փափագի անձկակարօտ ․
Թէ և Դո՛ւ առ ՚ի նմանէ անբաժ ծնելովդ ես անորոշ ։
Զայս առ Տէր , իսկ և իսկ և Ինքն անդէն ընդ Մովսէսի
Մեկնէին ՚ի Քրիստոսէն , Մինն ՚ի յերկինս և Միւսն ՚ի բանտն ։
Եւ անդէն լուսահրաշ ամպ հովանի լինէր վերուստ ․

Որոտայր և 'ի միջոյ բարբառըն Հօր հաճոյական.
Դ՛ աւադիկ է միածին և սիրելի Որդեակ իմ իսկ,
Որպէս ա՛նդ 'ի Յորդանան, զնոյն կըրկնակի աստ վըկայեմ:
Իսկ ըղձալեալըն Պետրոս ընդ այս տեսիլ Աստուածաքանչ
Խօսէր իբրև արբեալ և զոճ բանիցըն ոչ գիտէր.
Թէ հաճոյ է քեզ, ով Տէր, այսըր երիս նոր տաղաւարս
Մեք յօժա՛ր եմք յօրինել քեզ, Մովսիսի և Եղիայի.
Յո՛յժ բարւոք է մեզ, ասէր, մնալ յայս վիճակ մինչ 'ի վախճան,
Եւ 'ի լո՛յսըդ երեսաց յառել այսպէս և զուարճանալ:
Չի՛ք և չի՛ք ուրե՛ք յերկրի մեզ դիւր և հեշտ կեանք խաղաղիկ.
Աշխա՛տ ամենայնիւ յազգէն դըժպեհ և ոխերիմ,
Որ միշտ առե՛ն սաստիկ ըզքեզ և հալածեն տարապարտուց.
Թողո՛ւմ զայս և աւասիկ խորհի՛ն ըզքէն սպանանել:
Բա՛ւ, Տէր իմ, մի լիցի քեզ երթալ աստի կամաւ 'ի մահ,
Եւ սիրո՛յդ երկնաւորի վաղ առ 'ի մէնջ մեկնիլ, աւա՛ղ.
Մի՛, Պետրէ, ասէր Յիսուս, լիցիս այդպէս ինձ խոչընդոտն.
Որ սիրե՛մ ինքըս խաղալ 'ի յասպարէզն իմ Գողգոթայ:
Մինթէ մե՛ծ է սէրդ առ իս քան Հօրն իմոյ գորովագոյն,
Այր ես որդի եմ միածին և սիրելի անձին նորա.
Այլ 'ի սիրո՛յ ձեր յաղթեալ՝ զիս ոչ խնայէ մատնել 'ի մահ:
Դու առա՛նց վըշտաց խաչի հանդիստ խընդրես արդ, ո՛վ Պետրէ,
Ասե՛մ քեզ, թէ ոչ ընդ իս 'ի չարչարանըս դիմեսցես
Մի՛ յուսար լինել երբէք հաղորդ փառացս այս գերահրաշ.
Այլ ուրեմն ուր Ես երթամ, եկ և ըզկնի դու իմ յօժար:

Զա՛յն բանիս, որ առ Պետրոս և մեզ լուի, գիտէք, մանկունք,
Թէ փառացըն Քրիստոսի մեք փափագիմք լինել հաղորդ,
Ո՛ն ըզկնի նորին սիրով ըզխաչն առեալ հետևեսցուք
Լեալ նըմին չարչարակից՝ նովիմբ հանդերձ մըտցուք 'ի փառս.
Որ յորժամ յայտնեսցի 'ստ աւագափող Տարօնացւոյն

Եւ մեք նըման նըմին լուսափայլեալ լիցուք դիմօք ։
Մի՛ հանգիստ առանց խաչի աստ խընդրեսցուք իբրու զՊետրոս .
Չէ՛ և չէ հընար զայն գըտանել մեզ հեշտ և դիւր ։
Եւ մի՛ Թարց վաստակելոյ ընդ առապար աշխարհիս այս
Ելանե՛լ յօժարիցիմք յիմանալի երկնից Թափօրն ,
Կամ փառացն անճառագոյն արժանանալ տեսանելոյ ,
Յոր այժմիկ սիրով յառեալ պըշնումք յերկրէ յուսոյն աչօք
Զտիպ նորին տեսանելով ընդ հայելւոյ սուրբ հաւատոյն ։
Նա՝ ըստ բանի՛ ըզմայլողին 'ի տեսլենէն Աստուածահրաշ
Զերրակի՛ ըզտաղաւարս յօրինեսցուք Երրորդութեան .
Ո՛չ սակայն հողանիւթիւ , այլ 'ի սըրտի խոնարհ ոգւով ,
Յոր եկեա՛լ հանգիցէ Յիսուս ընդ Հօր և Սուրբ Հոգւոյն .

ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

# ՆԱԽԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ ԻՄԱՍՏԻՑ

## ԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՑ

Ընդ կենաձիր այցելութիւն Քրիստոսի՝ ցնծացեալ Հրաւիրակին ՚ի սկզբան երգոյս, հրաւիրէ զմանկունս ՚ի գիւղն Բեթանիա։ Յարութիւն Ղազարու ՚ի չորեքօրեայ թաղմանէն՝ այլովքըն հանդերձ։

Նկարագրութիւն մեծահանդէս և խոնարհ գալստեան Փրկչին՝ իշով յԵրուսաղէմ, ընդ որ մախացեալ ոխերիմ երիցանցն Հրէից՝ ՚ի խորհուրդ ժողովին չարութեան սպանանել զՏէրն։

Հրաւիրէ ապա ՚ի Սիոն վերնատուն, ուր յաղագս ծայրագոյն խոնարհութեան երկնաւոր Վարդապետին, զքաւիչ և կենարար խորհըրդոյն, զմատնիչ Յուդայէն և զվերջին ողջունական սրտառուչ սիրոյ բանիցն, որ առ աշակերտսն՝ երգէ տրտմալի ձայնիւ։

Իջուցանէ անդուստ ՚ի պարտէզն աղօթից․ ուր մահուն երկիւղիւ տագնապի Քրիստոս քրտնահար և ՚ի յաղօթս կանխէ առանձին․ առաջի բաժակաբեր հրեշտակն ՚ի Հօրէն, որ մերձեալ ահիւ՝ խրախոյս տայ և զօրացուցիչ լինի նմա ՚ի դառն տագնապին։ Ինքնահամ ըմբըռնումն Քրիստոսի դաւաճանօք տիրադրուժ աշակերտին։

Հանեալ ՚ի պարտիզէն բերէ ՚ի տուն Աննայ քահանային և անդ ՚ի պատասխանելն ապտակի Տէրն ՚ի դաժան սպասաւորէն․ անճառ հեզութիւն բարերարին և ժանտաբարոյ բժշկեալ ծառային ապերախտութիւն։ Կապելն Յիսուսի ՚ի ձիթենւոյն ծառ և դալար ստեղամբք հարկանիլ անխնայապէս։

Ածէ անտի ապա ՚ի տուն Կայիափայ Քահանայապետին, ուր քարշի Քրիստոս կրկին յատեան և ՚ի վկայել զինքենէ գոլ որդի Աստուծոյ և գալ ընդ ամպս երկնից՝ պատառէ Կայիափայ զձորձ իւր և ատեանն բողոք բառնայ թէ մահապարտ է․ որով հանեալ յատենէն ձաղեն պէս պէս անարգանօք և կապեալ ՚ի սիւն՝ գանահարուած առնեն զողջ գիշեր։ Դարձ Պետրոսի յուրացութենէն և դառնապէս արտասուելն։

Հուսկ յետոյ ածէ ՚ի պալատն Պիղատոսի, ուր եկակոչ լինի Յիսուս և քննի գոլ մահու անպարտական․ բողոքէ խուժանն Հրէից և ՚ի հաճոյս նոցին վճռէ դատաւորն ՚ի խաչ հանել զանպարտն և արձակել զպարտաւոր Բարաբբայն։

Վերջին դառն և դժուարին ձաղանք Քրիստոսի, փշով պսակիլ, նախատանաց ծիրանեաւն յաթոռ անարգանաց նստիլ՝ այլովքն հանդերձ։

## ՀՐԱՒԻՐԱՆ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

### ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

ՑԸՆԾՈՒԹԻ՛ՒՆ է ինձ յաւէտ երգոյս այսմիկ ձայն Թախծալի,
Ո՛չ քանզի և եկն ինձ յայց կենդանաձիր Աստուածն յերկնից․
Ես հրճուեիմ յոյժ 'ի ճառս, Տէրն իմ տըրտմի վասն իմ և լայ,
Մինչ կենդանւո՛յն ըզթաղեալս 'ի վեր հանցէ ընդ սիրելոյն,
Կանգնեցայց, և 'ի յանձնէս լուծել տացէ զկապըն մահուն․
Յայնժամ և յարուցիչն առցէ հրճուել ընդ նորոգեալս ։
Ընդ ահա զձեզ հրաւիրեմ, ուր այս եղև ինձ, ո՛վ մանկունք,
Ի գեղջիկըն Բեթանիա և գերեզմանըն Ղազարու
Քրիստոսի բարեկամին և սիրողին հիւրընկալիչ․
Ուր այն ինչ լուաւ ըզմահ կենդանատուն հեռաստանէ
Մըտերմացըն պատմելով՝ փութայր նոքօք Երուսաղէմ
Մեռանել ինքնակամ, զի յարիցէ իւր սիրելին ։
Իսկ որ առ մա՛հ անձկալւոյն դըժուարացեալ երկընչէին
Խրախուսէր զնոսին 'ի սիրտ քաջըն Թովմաս երկուորեակն․
Ո՛ն արիք, ասէր, և մեք ընդ նազելի Վարդապետին

Երթիցո՛ւք և ընդ նըմա մեռցուք անդէն սիրով նորին.
Բա՛ւ լիցի զանգիտել 'ի մահուանէն որ ըստ մարմնոյ,
Առ որ ըզմեզ Տէրըս մեր նախ վառեալ զինեաց բանիւ խրատուն.
Զի սիրեմք մնալ յաշխարհիս թըշուառավայր աղէտալից,
Երկին է մեզ դիւր վիճակ, մեռցուք, զի անդր ելցուք աստի։
Զձայն գալո՛յ Կենսաբերին լուեալ Մարթա ընդառաջէր
Մինչ 'ի վէմն, ուր 'ի վերայ նըստեալ հանգչէր Վաստակաւորն.
Տէր, ասէր, թէ հանապազ դու 'ի տան մեր մնայիր մեզ հիւր
Չմեռանէր քոյդ բարեկամ, ո՛հ, եղբայրիկն իմ Ղազարոս։
Գիտեմ, զի կեանք ես Դու և պարգևիչ կենդանութեան,
Զինչ հայցես առ 'ի Հօրէդ, տայ նա քեզ փոյթ, չառնէ երես.
Որ յայս խոկ առ 'ի Նմանէ ելեալ եկիր սիրով յաշխարհ
Յարութիւն մեռեալ բնութեանս տալ քո բանիւդ կենդանարար։
Գայր անդէն և Մարիամ լռիկ ազդմամբըն Մարթային.
Սիրայեն քոյրքըն երկու փարեալ ոտիւք Վարդապետին
Թափէին արտասուս և սրտային մահուամբըն եղբօր։
Սէրն անչափ, որ եկեալն էր ըզսուգ մերժել իւր սիրելեացն,
Զուր եդի՛քն հարցանելով լայր և դիմէր մինչ 'ի շիրիմն.
Ցօղէին Տէրունեոյն յաչաց կաթիլք կենսակայլակ
Առ 'ի ցոյց բնութեան մարդոյն, որով ցաւէր կարեկցաբար։
Որ բանիւն իւր զօրութեան լերանց փոխել տայր 'ի տեղեաց,
Հրամայէր բառնալ ըզվէմն իբրը կարօտ ձեռին մարդկան.
Թող աչօք իւրեանց տեսցեն ըզդին մեռեալ թերահաւատքն,
Առ որ բանիւ վըկայէր քոյրըն Մարթա հառաչելով.
Տէր, հոտեալ է արդ մեռեալ գոլով չորեքօրեայ։
Իսկ որ հոտո՛յն իւր անմահ էր նորոգիչ նեխեալ բնութեանս,
Մի՛, ասէր, զայդ ինձ, Մարթա, զիս լոկ անզօր կարծելով մարդ.
Թէ յուսա՛ս հաւատալով զփառս Աստուծոյ տեսցես այժմ իսկ։
Գո՛յր կանգնէր 'ի դուռն այրիս կոչէր ձայնիւ Կենդանատուն,
Հրամանաւն արարչական, որ զարարածըս գոյացոյց,

Սիրելի՛դ իմ Ղազարէ, ել այտի արդ և եկ 'ի դուրս,
Ընդ մահո՛ւն վիմիդ հեծել շատ եղև քեզ իմ անձկալուդ ։
Ո՛վ ձայնիս ահարկութեան, սարսեալ դողաց սանդարամետ,
Կապեալ հոգին Ղազարու լինէր անդէն շղթայազերծ,
Եւ յանե՛լ դրանէ բանտին 'ի դուրս վազէր ազատաբար ։
Դարապա՛նքըն պակուցեալ 'ի կոչողին ահեղ ՚ձայնէն
Զդէմ ունե՛լ ոչ կարէին միոյ ոգւոյն արձակելոյ ․
Որ 'ի բարբառ Տէրունւոյն արագ դիմեալ շոյտ հասանէր,
Ընդ մարմնո՛յն պատանելոյ զուգաւորէր զարմանապէս
Յիսուսի՛ կենդանաբուղխ 'ի բերանոյն նոր շունչ առեալ ։
Մի՞ թէ 'ի քո՞ւն էր Ղազար, որ 'ի շիրմէն զարթնոյր նըստէր
Ա՛յնպէս մարմնովըն ողջ պատանապատ պարաւանդեալ,
Զոր լուծանե՛լ հրամայէր, որ պատեցին ձեռօք իւրեանց,
Ազա՛տ այնուհետև վազել 'ի կեանս յաւիտենից ։
Յիսուսի կենսահրաւէր ձայն և ըզմե՞զ կոչեաց, մանկունք,
Որ 'ի դժո՛խս իբրև յայրիս թաղեալ էաք, ո՛հ, կենդանեաւ,
Եւ յորժամ տառապէաք 'ի մէջ գըբոյն խաւարային
Պարանա՛ւն իւր գըթութեան քարշեալ ըզմեզ եհան 'ի վեր ․
Եւ որ գա՛րշ մեղօք նեխեալ փըտեալ էաք 'ի մեր հոգիս,
Սըրբագո՛րծ շնորհիւըն իւր ողջ խընկալիր զըմըռսելով
Դարձեա՛լ ըստ առաջնոյն անապականս արար ըզմեզ ։

Ընդ մանկա՛նցն Եբրայեցւոց ելէք և դուք Հայոց մանկունք,
Զօրհնութի՛ւնըս նուագելով նոր Արքային որդւոյ Դաւթի
12 Ի լեռնէն ձիթաստանեայց տարցուք ըզնա յԵրուսաղէմ ։
Մինչ տակա՛ւ տակաւ մօտէր օր փրկական չարչարանացն
Անհամըն հեզութեա՛մբ նըստաւ 'ի յէշ և յաւանակ,
Որպէս կանխա՛ւ ետես գուշակն և ցընծութեան ետ աւետիս ․
Ուրա՛խ լեր Դուստըր Սիօնի և պարառեալ դու զուարճացիր,
Ա՛ռ քե՛զ գայ հա՛ քոյդ թագաւոր արդար, փըրկիչ, հեզ և խոնարհ ․

Հեծեալ յէշ և յաւանակ մըտեալ՝ սիրով ՚ի քեզ բնակի։
Ընդ այս գալըստ հանդարտիկ թընդայր ողջոյն Երուսաղէմ.
Խուռընթա՛ց ամենեքին երագէին ընդառաջել.
Խումբ ծերո՛ցն երթայր յառաջ ՚ի յօրինակ Հրէից ազգին,
Եւ ըզկնի մանկտւոյն երամ, որ տիպ էր այն հեթանոսացն.
Իսկ ըզնովա՛ւ ՚ի բոլոր դասք հետեւակ աշակերտացն,
Ինքն ՚ի միջի Վեհ Թագաւոր, ո՜վ, ոչ ՚ի կառս նըստեալ փառօք,
Կամ յերիվա՛ր սիգաճեմ ոսկեսարեան պալարակապ.
Այլ ՚ի ցա՛ծ և անշուք անհամեստ էշ յուշիկաքայլ,
Որ այնու զհպարտութեան կառս Եփրեմի սատակեսցէ։
Ո՜հ ՚ի ծառո՛ց ձիթենեաց, ո՜հ յարաղուարթ յարմաւենեաց
Նորընձիւղ ծաղկափըթիթ ոստըս հատեալ արագ արագ
Բերեալ ՚ի սփիւռ պարզէին զճանապարհաւ արքունաճեմ,
Ողջ ուղին քարուտ անբոյս ծաղկազարդէր կանանչագեղ.
Եւ այլ ո՜հ ըզհանդերձիկըն իւր հանեալ ստիպով սիրոյն
Ըզգետնո՛վ փոշոտելոյ ՚նդ ոտիւք իշոյն տարածանէր։
Տարածեցո՛ւք, ո՛ մանկտիք, և մեք զանձինս խոնարհութեամբ,
Զի Փըրկիչըն մեր եկեալ սիրով ընդ այն անցանիցէ.
Նա՝ հեզ ոգւո՛վ և սըրտիւ լիցուք նըմին կենդանի կառք,
Յոր նըստեա՛լ հանգիցէ ըստ իւր բանին, որ առ գուշակն։
Ընդ իւղընձիւղ ձիթենեաց ոստոց բերող լուսոյ զպըտուղ
Ի սըրտի՛ց պարարելոց իւղով սիրոյն, որ առ Քրիստոս,
Իբր ՚ի ծառո՛ց բանաւորաց ոստըս հատեալ նըւիրեսցուք.
Եւ փոխա՛ն տերևագեղ արմաւենեացն ընձիւղելոց
Փըթթեալ ծաղկեա՛լ ընտիր վարուք զանուշահամ բերեալ պըտուղ
Ընծայեսցո՛ւք Յիսուսին, որ ընդունի հաճոյապէս։
Իսկ յորժամ մեծ հանդիսիւ Փըրկիչն եմուտ Յերուսաղէմ
Քաղաքըն բովանդակ դըղըրդեցաւ ՚ի տեղւոջէն,
Եւ ձայն մանկտւո՛յն բազմութեան լընոյր զողջոյն ըզհրապարակս.
Դիեցի՛կ տղայոց բերանք ՚ի յօրհնութիւնըս բանային,

Որ քաղցրիկ գեղգեղէին թոթով լեզուօք 'ի գիրկս մարցն
Որպիսեօք ճռչգըրտագոյն յայտնի ծանոյց Դաւիթ հոգւոյն,
Զօրհնութիւնս 'ի բերանոց դու ըստընեայց առ ընկալար ։
Խանդացեալ երիցանցն և աւէին ըղչարելով,
Լուա՞ս, ո՛վ վարդապետ, թէ զի՞նչ դպիրն ասեն զքէն.
Սաստեա՛ զի լռեսցին, քեզ արժա՞ն է երգ Արքայի ։
Անցասումն և հեզն առ այս պատասխանէր սիրոյ բանիւն.
Ձե՛զ ասեմ, թէ դուք և ձեր որդիք յերգոյդ այդ լռիցէք
Քարի՛նքդ անբանաւոր ազգք անծանօթ հեթանոսաց
Խօսուն եղեալ հաւատովք՝ լեզուքն առիս բանին երգովք ։
Բացէք ո՛ն, Հայոց մանկունք, զի Տէրն առ մեր ասաց զայս անդ,
Օրհնեցէք քաղցր երգով դուք զայցելուն հեթանոսաց ։
Յայնժամ առ Աբգարաւ մեր արքային նախահաւատ
13 Այսր եաք և մեք Փրկչին 'ի գալստեան հանդիսատեսք
Հրաւիրեալ զՅիսուս բժիշկն 'ի մեր աշխարհըն Հայաստան.
Զի գըլխոյն բորոտելոյ ընդ ախտացեալ ողջ անդամոցն
Բուժիչ ուառողջարար լիցի դեղովքըն զօրաւոր ։
Աստ յայնժամ կենդանիքս, աւա՜ղ, իբրու զքարինս թուեցաք
Գող անշո՛ւնչ տարրեղինաց երկըրպագու իբր Աստուծոյ.
Երանի՛ է մեզ այժմիկ, որ հաւատովք հոգի զգեցաք
Ընդ գալուստ Աստուածորդւոյն աղաղակեմք բարձրաբարբառ.
Դաւանեալ ըզնա Մեսիայ 'նդ երգող մանկանցն Իսրայէլի ։
Ո՜վ, առ մեւք փառաւորի որդին մարդոյ որպէս ասաց
Ծանուցեալ ինքըն բոլոր հեթանոսաց Տէր և Արքայ.
Եւ անուամբն աշխարհանաց հրատարակեալ ծագէ 'ի ծագ ։
Յայնժամ առ դուրս կացաք իբրև օտար 'ի Քրիստոսէն,
Փիլիպպոսն առեալ եմոյծ, Նովաւ տեսաք Լուսոյն երես.
Աւադիկ ընտանեցեալ և կոչեցեալք հրաւիրանաւն՝
Անմիջնորդ մըտեալ ըզՏէրըն տեսանեմք յԵրուսաղէմ
Աչօք հաւատոյն, որով առաք մեք զերանին ։

Իբրեւ այն ինչ հասանէր ժամ յղացելոյն ըզնենգութիւն
Ամբարիշտ բանիւ ծնանել ըզթիւր խորհուրդ ըսպանութեան ,
Որով ըստ Իմաստնոյն անջատեցան 'ի յԱստուծոյ .
Ո՜հ , երկնելով ասէին բանիւ նորին ճըշգըրտաճառ .
Որպէս մեք արդարոյն լիցուք արդեօք դարանակալ ,
Զ՚ինչ յանցանս եդեալ նմին և դատեսցուք ըզնա 'ի մահ .
Որ դըժպըհի եղև մեզ և միշտ գործոց մեր հակառակ ։
Նախատէ բանիւքն ըզմեզ թէ զօրինօք յանցանիցեմք ,
Եւ 'ի դէմըս մեր բերեալ զմեղս մանկութեան յանդիմանէ ։
Պարծի յոյժ և խոստանայ ինքն Աստուծոյ զիմաստութիւն
Յանձին ունել լիովին և կատարեալ ամենայնիւ ,
Թողումք զայս և հարազատ որդի լինել նմին , ասէ .
Մեզ 'ի վկայ ածէ առ այս պէս պէս ըզգործըս իւր հրաշից ,
Իբրու նոքիմք նոյնագոյ և համազօր գոլ Հօրըն իւր ։
Ո՞չ ահա գիտեմք մեզէն ըզնա որդի աղքատ հիւսանն ,
Եւ ըզկ մօրդ ամենայնիւ , անկար առ գործս Աստուածայինս .
Թէ զդիւա՛ցն ելուծն ասեմք , զայն իշխանաւ նոցին առնէ .
Ո՛չ պատրիմք զերդ խաժամուժն , գիտեմք ըզլաւըն ճանաչել ։
Զ՚ինչ այս , զի առ երես իշխանաբար զմեզ կըշտամբէ ,
Թո՛ղ գործոց մեր արտաքին յանդիմանիչ է և մըտաց ։
Բանի՞ ծանր է մեր աչաց և տեսանել անգամ ըզնա .
Զ՚ի կենցա՛ղ փարուց նորին ոչ են նման այլում կենաց ,
Նորագո՛յն և այլազգի շաւիղըն իւր 'ի մեր գնացից ։
Որ մաքո՛ւր եմք օրինօք՝ համարեցաք նըմին 'ի դարշ ,
Խորշի յոյժ յընթացից մեր զըզուեալ իբրև 'ի պըղծութեանց .
Այլ ի՛նքն ընդ մեղաւորս և ընդ պոռնիկս ուտել սիրէ ։
Թէ զշիրիմս մարգարէից 'ի շուք պատուեալ զարդարիցեմք
Կեղծաւո՛ր զմեզ համարի և կցորդ արեան հարցն ըսպանող ։
Որ մե՛ծ է քան զամէն՝ հըպարտացեալ բանիւըն իւր
Անդրագո՛յն քան զԱբրահամ տարեալ հանէ զօր լինելոյն .

Տիա՛ն է իւր երեկածին, գոլ ծեր ւերէց մեծաբանէ ։
Տեսցո՛ւք ուրեմըն փորձիւ զնորին բանից ըստուգութիւն ,
Թէ լինի՞ն ճըշգրտապէս ՚ի վախճանի կենացըն իւր ։
Թըշնամանօք և գանիւք խոշտանկեսցուք ըզնա պէս պէս ,
Եւ ՚ի հա՛ց նորա մարմին արկցուք ըզփայտ չարչարանաց .
Զի նորին հեզութեան չափս լիցուք մեք խելամուտ ։
Ի խաչ մահո՛ւ խայտառակ՝ դատեալ ըզնա բեւեռեսցուք ,
Գո՞յ , տեսցուք , այցելութիւն յիւր ՚ի բանիցն և յուստեքէ .
Թ’ արդարե՛ւ ինքն իցէ ծնունդ և որդի Հօր Աստուծոյ
Ապաքէ՛ն պաշտպան լինի վերուստ նըմին խնամոտ սիրոյն ,
Ձեռամբըն իւր հըզօր փրկէ փութով ՚ի տանջանացն ։
　　Զայս խորհեա՛լ յատենի , այլ խաբեցան իբրև ըզտղայ ,
Քանզի խաւա՛ր նախանձուն զաչօք մըտաց նոցին պատեալ՝
Կուրացա՛ն չարեօք կամաց և ոչ ծանեան զխորս Աստուծոյ .
Ոչ և ընտրե՛լ կարացին զպատիւ ոգւոյն անարատ ,
Կամ վարձո՛ւցըն փրկութեան ակընկալեալ ըսպասեցին ։
Զիմացա՛ն ոգիքըն Թիւր զխորհուրդ փայտին չարչարանաց ,
Թէ զոր ինքեա՛նք ՚ի նախատինըս պատրաստեն Աստուածորդւոյն
Ի նմա փա՛ռքըն պարծանաց Թագուցանի անճառապէս ,
Ի մահո՛ւն անարգութեան , անմահութիւն յաւիտենից ։
　　Իսկ անպա՛րտն ամենայնիւ Թիւր խորհրդոցըս չարութեան
Տեղի՛ տուեալ դադարէր ՚ի յԵփրայիմըն հիւրընկալ ։
Յետ ապա՛ երկուց աւուրց այն ինչ պասեքըն մերձենայր
Ի Սաղէմ դառնայր անդրէն ուտել ըզգառըն զատկական .
Եւ ըզկնի՛ մատնիլ մահու և ելանել կամաւ ՚ի խաչ ,
Անարա՛տ Գառն Աստուծոյ ՚նդ անբան գառանցըն զենանիլ .
Եւ արեամբըն փրկական դրոշմել ըզփայտըն խաչանիշ
Գո՛լ ինձ կնիք պահպանութեան ՚ի սատակիչ սատան չարէն .
Ընդ զորդիսն Իսրայէլի , ասա ըզհամայն աշխարհս փրկել
Ի սրոյ մահուա՛ն սատակիչ հանուր ծնընդոցս ադամամեղ ։

14 Առ քե՛զ, ո՛վ Վերնատուն, գամ արդ մանկտեօքըս հրաւիրեալ,
Առ 'ի քէն սկիզըն առնում զերգոյս մըրմունջ հանել ողորմ՝
Յարմարեա՛լ զայն ընդ բանից սիրապատուէր Վարդապետին.
Ու 'ի քե՛զ առ սեղանաւն երգեմ զյետին հիւրըդ Յիսուս,
Որ ցա՛նկ տենչայր փափագէր զվերջին պասեք չարչարանացն
Ուտե՛լ՝ ելեալ 'ի քեզ ընդ աշակերտօքըն բաղձեցաւ
Թախծալի՛ն յայն երեկուն և 'ի յաւուր յետին ընթրեացն։
Մէրն անմահ և անկարօտ սեղանակից լեալ սիրելեացն
Ըզնոսին սիրեաց իսպառ, քանզի յետին էր այն զատիկն,
Ու սըրտին ախորժանօք եկեր ըզգառըն խորովեալ։
Առ որ, չգիտե՛մ, ո՛վ մանկունք, ուստի՞ արդեօք Աստուածորդին
Բաղցենա՛յր ցանկանալոյն, որպէս ասէր առ աշակերտսն,
Յօրէ՞ն, յոր ըզնոսին ընտրեալ արար իւր բարեկամս,
Թէ անդո՛ւստ 'ի մարդանալըն իւր մարմնով առ 'ի Կուսէն.
Յելի՛ցն Եգիպտոսէն յորժամ զոչխարսըն տարեւոր
Կերին անոսկրաբեկ ցուպ 'ի ձեռին Իսրայէլեանքն,
Թէ յորէ՛ն վեցերորդի երբ 'ի դրախտէն Առաջնաստեղծքն
Պատրանօք օձակերպին արտաքսեցան սրով քրովբէիցն,
Որո՛վ Հայրըն Որդւոյն անդ վճիռ եհատ անդառնալի
Իջանե՛լ և զոչխարիկըն կորուսեալ 'ի մէջ երկրի
Յո՛ւս բառնալ և կըրկնակի երկնից հանել 'ի յանապատն։
Է՛ջ սիրակատար հնազանդ Որդին Հօրըն կամաց,
Մարմնաւո՛ր ոտիւքըն իւր տնօրինաբար յերկրի շըրջեալ՝
Ըստէպ ըստէպ որոնէր զայն 'ի միջի դաշտաց լերանց.
Մինչ այն մի՛նչ առ ըզբառաչ նոցին, որ անդ 'ի Գողգոթա
Թափառէր և նուաղաձայն կոչէր ըզկնի խընդրող Հովուին.
Ո՛չ, վասն ա՛յն ցանկացելոյն ախորժ բերէր վերջին պասեքս,
Զոր կերեա՛լ՝ փութայր ընդ հուպ ըզմոլորեալըն գըտանել։

Յետ ընթրեա՛ցն ըստ Յովհաննու յառնէր Յիսուս 'ի սեղանոյն,

Ի բա՛ց եղեալ զվերարկուն՝ ըսփածանէր զիւրև զենջակ,
Ջո՛ւր առեալ և եդր ՚ի կոնք, Նըստէր այնպէս խոնարհ ՚ի ծունկ ։
Լո՛ւռ ընդ այս՝ յակճիւս եղեալ պաշտող դասուցն ապուշ մնային ․
Զի՞նչ այս նոր սպաս ծառայի, զոր Տէրըս մեր տանի սիրով,
Չէք տեսեալ մեր զայս երբէք, որ ընդ սըմա ցանկ շըրջեցաք ․
՚Նո՛ր է գործոյս օրինակ խոնարհասիրտ Վարդապետիս ։
Յառա՛ջ մատէք, Տէրն ասէր, դուք աշակերտք իմ սիրեցեալք,
Զոր բանիւ անդ ուսուցի՝ զայն աստ ահա լընուլ արդեամբք ․
Եւ այնպէ՛ս բոլոր դասուն զոտըս լուանայր ըզտաժանեալս,
Եւ զղենջա՛կն առեալ սրբէր, ո՛վ, սուրբ ձեռօքն աստուածային ։
Որո՛վ քաջընթացիկս արար զնոսին ընդ տիեզերս,
Համարձա՛կս արշաւելով ՚նդ ոտիւք կոխել զօձս և կարիճս,
Լինել քարո՛զ նոր սիրոյ պատուիրանին քաղցրագունի ։
Ո՛ւմ ահիւ սեռք հրաբունից յերկին պաշտօն հարկանէին ․
Բա՜բէ, յերկրի այսգունակ ըսպաս տարաւ իւր ծառայիցն ։
Ա՜յր, ո՛վ հիւրասէր Իսրայելեան տոհմիդ քոյ Հայր,
Հայեա՛ց սարսափելով, մատիր ՚ի հուպ և քաջ դիտեա
Զգործ Աստուծո՛յդ, որում ոտից եդեր դու զքեզ հող և մոխիր ․
Զի զնորի՛ն, որ ընդ ծառով զոտըս լուացեր զովացուցեալ,
՚Նո՛յն՝ փոխան նըմին լուաց աստէն զքոյդ զաւակաց ․
Եւ ո՛ր անդ կոգուով, կաթամբ, որթու մըսով սեղան կազմեր,
՚Նուանի՛կ ըզկենահրաշ մարմինն ընդ այն ետ ճաշակումն ։
Յայս անկշի՛ռ ուանակընկալ խոնարհութիւն դիտեալ անդէն՝
Չհանդուրժէր ոտից իւր սպաս տանել Գըլխոյն ամենատէր
Պետրո՛ս, որ դաւանեաց Աստուածորդի զնա Հօրն ազդմամբն ։
՚Նա և ՚ի լեռա՛ըն Թափոր տեսող գոլով նորին փառաց,
Եւ բնութեա՛նն անտանելի հասու եղեալ դոյզըն լուսով,
Որ ըզնա՛ զարհուրագին յերկիր ընկէց ուշակորոյս ․
Սարսեա՛լ վասն այն տայր հրաժեշտ և թախանձէր աղերսադէմ ․
Զի՞նչ այդ, Տէր, զի՞ քեզ այդչափ ըզշուք անձինըդ մերկանալ,

Մինչ 'ի ծո՛ւնկս անկանելով սպասաւորել ոտից անարգ.
Դո՛ւ զայդ ինձ առնես, ու՛մ քո ծառայս է պարտական։
Քեզ երկին հրանիւթ զօրօքն, երկիր բոլոր մարդկան սեռօք
Ծունր ահիւ կրկնելով զքեզ Արարիչ խոստովանին,
Հի՛մ ապա, Տէր իմ բարձրեալ կաս 'ի սպասու ստորնագունիս։
Տակաւին առ նուրբ խորհուրդ մարմնացելոյս, ո՛վ դու Պետրէ,
Ու միթէ տղա՞յ ես մտօք և ցարդ չեղե՞ր խորհրդագգած,
Ու չլինե՞ն քեզ յուշ երբէք համօրէն գործք մարդացելոյս.
Խոնարհո՛ւմն յերկնից բարձանց յանճառ փառացն իմ թափելով,
Ժուժկալելն 'ի յարգանդի, ծնանիլ յայրին, դնիլ 'ի մսուր,
Մա՛րդ շրջիլ աղքատ անինչ՝ Աստուած գոլով և մեծատուն,
Քաղցենա՛լ և ծարաւիլ մարմնոյս կարեօք իբրև կարօտ,
Սիրով դիմե՛լ առ Յովհաննէս և մկրտիլ 'ի Յորդանան,
Ծառա՛յ լինել՝ Տէր գոլով և սպասաւոր 'ի մէջ ձեր,
Համբերե՛լ տանիլ այնչափ բամբասանացն եղեալ առիս,
Հեզութեա՛մբ նստիլ 'ի նուաստ յաւանակին, ոչ յերիվար,
Համայն գո՛րծք իմ այսոքիկ ցոյց ո՞չ էին խոնարհութեանս։
Կամիս, Պետրէ հարցանել, թէ յի՞նչ, ո՛վ Տէր, զայդ գործեցեր։
Որ ստեղծուա՛ծն էր իմ ձեռին՝ նման ինձ լինել յօժարեցաւ,
Այլ զի չարին էր հրապոյր, յոյժ խաբեցաւ ողորմելին,
Ընդ յերկի՛նս վերանալոյն, ո՛հ, էջ 'ի դժոխս առ հրապուրիչն,
Փոխան Աստուա՛ծ լինելոյն և կամ երկնից փառաց հաղորդ,
Դատա՛ւ զքրկեալ թշուառամիտն և 'ի դրախտէն երկրատունկ։
Սիրելի ձեռակերտին իմոյ դիպաւ այս մեծ աղէտ,
Շարժեցա՛ւ գութն իմ առ նա, զիս մարդ լինել յօժարեցոյց,
Ու յերկրի՛ զայդ ամենայն հաս ինձ գործել նորին սիրով,
Գոնէ ցուցի՛ց խաբելոյն ըղնոր շաւիղն երկնաւոր.
Որ կամէր Աստուածանալ ծառոյն պտղովն մահաթոյն
Թո՛ղ այսու ճանապարհաւ խոնարհութեան աստուածասցի։
Ընկելոյն անկանգնելի ձեզ մի լիցի նմանիլ երբէք,

Որ մըտօ՛քն ամբարտաւան զալթուըն իւր ընդ ամպս երկնից
Կամեցա՛ւ դնել բազմիլ և հաւասար կալ Բարձրելոյն .
Բայց , աւա՜ղ , Թափուր եկաց և յիւր փառացըն տիրատուր ,
Սաստալից Աստուածահար 'ի կայծակէն Թօթափելով
Ընդ վերնո՛յ քաղաքին եղև 'ի դժոխս անդընդաբնակ .
Փոխան երկնի՛ց լուսատարր եկաց ժառանգ տարտարոսին ,
Առ իւրո՛ւմ անսաստութեանն արժանահաս կըրեաց պատիժ :
Լե՛ր ուրեմըն դիւրանսաց , Պետրոս , դու ինձ ամենայնիւ ,
Լուա՛ր անդ 'ի Հօրէն անդիմադարձ լըսել որդւոյս :
Տիրակա՛ն հրամանիս ծառայն սիրով հնազանդ կացեալ՝
Զոտս 'ի կո՛նք եդեալ ահիւ՝ լուա դու ասէր , տէր իմ , խոնարհ :
    Ո՛րթն ապա ճըշմարտութեան ուռճազարդեալ սըրբեալ ուռովքն
Բաժակա՛ւն արեան գինւոյն , որ Թափելոց էր 'ի խաչին ,
Նոր օրէ՛ն հաստատելով՝ ետ մեզ ըմպել 'ի Թողութիւն :
Նոյնգունա՛կ հացիւն օրհնեալ , որ այն մարմին էր իւր ճըշգրիտ
Պարգևեա՛ց անմահութիւն յուտել տալով սովեալ ոգւոցս :
Զի՞նչ յետոյ բան սըրտառուչ բանայր անդէն Խաչապատրաստն
Ընդ գինւո՛յն սուրբ խրախճանացն ըզտըրտմականըն խառնելով .
Ո՛հ 'ի ձէնջ աւասիկ , ո՛վ սիրեցեալ իմ աշակերտք ,
Մատնելո՛ց է զիս 'ի մահ առիս գըտեալ , ո՛հ , ապերախտ :
Ընտրելո՛ցդ 'ի Թիւ և զնա Թէպէտ գրեցի ես առաքեալ ,
Ա՜հ , 'ի դասո՛ւց հանեալ ձեր՝ արդ որոշէ զանձն իւրովի .
Երթա՜յ մարդոյ որդին յօժար 'ի խաչ ըստ Հօր կամացն ,
Այլ եղո՜ւկ մարդոյն այնմիկ , յոյր ձեռն ես զուր մատնիմ 'ի մահ :
Լա՛ւ էր նմա՞ ոչ գալ 'ի լոյս և ոչ զարև իսկ տեսանել ,
Քա՛ն ծնանիլ մարդ յաշխարհի լինել մատնիչ Աստուածորդւոյս :
Խուճապէր 'ի սըրտին ընդ այս Պետրոսն անձնանըւէր
Առ սիրելի՛ն Յովհաննէս ակնարկելով՝ գիտել կամէր .
Որ ամպեա՛լ տըրտում դիմօք և ցօղաԹոր լըցեալ աչօք
Դառնայր մօտէր հուպ 'ի Սէրն և ըզգասակըս իւր պարզեալ

Փարէր ըզլանջօքն և զահաւոր պարանոցաւն
Բոլոր հոգւով շընչով ողջագուրեալ ըզՎարդապետն .
Տէր , ասէր , ո՛վ է մատնիչն այն ապաշնորհ և ապիրատ ,
Ծանո՛ մեզ և մի թողուր . զի տըրտմիցիմք տարակուսեալ ։
Որ զբան մի եւս չունէր ծածուկ յիւր մըտերիմ բարեկամացն
Պատառա՛ըն թացելոյ նըշաւակէր զմատնիչ Յուդայն .
Ե՛լ , ասէր , ո՛վ նենգաւոր , երթ և արա վաղվաղակի
Դու զոր ինչ եդեր 'ի մտիդ առնել ինձ այժմ յանիրաւի .
Եւ դարանեա՛լ 'ի սըրտիդ յափըշտակել խընդրես զաղքատս ։
Ա՛հ , չէ՛ քեզ այն երանին , զի դու զոնանկէս չար խորհեցար ,
Ե՛րթ աստի , մի յապաղեր , քանզի պատրաստ եմ աւասիկ
Ոչ դարանա՛ըդ քոյին , այլ իմ կամաւ մատնիլ 'ի մահ ։
Ո՛վ սըրտին սալացելոյ աշակերտին անագորոյն
Խըստացեա՛լ բոլորովին զերդ ըզդարբնաց սալս անընդոստ ,
Զոր հրացայտ սիրոյ կռանաւ եհար այսպէս հեզըն Յիսուս ,
Ոչ շարժեցաւ երբէք , ո՜հ , 'ի զեղջ դիմել թըշուառականն .
Այլ ըզհա՛ց Վարդապետին նըստեալ եկեր կուշտ և ցըյագ ,
Յաճախեա՛ց խաբէութիւն՝ չարին դըտեալ ինքն արբանեակ .
Անարգեա՛ց ըզՏէրունեան անմահ մարմնոյն քաղցըր ըզճաշակ ,
Եւ զբաժա՛կ նորոյ ուխտին արհամարհեալ՝ թափեաց յերկիր ։
Յերամէ՛ն սուրբ աղաւնեայն ել խառնեցաւ 'ընդ ագռաւուց սարմ
Իբրև այծ մի սևագէս 'ի լուսակիզն անմեղ գառանցն ։
Յաթոռո՛յն դատողական զոր խոստացաւ նըմա Փըրկիչն
Կամովին գահավիժեալ 'ի վիհն անկաւ անդընդասոյզ ,
Դիւրագին վաճառեալ ընդ արծաթոյ ըզՏէրն անգին
Ի տաղանդո՛յն շնորհէ զըրկեալ՝ կորստականին եղև դըտիչ ։
Նուաղեցա՛ն աւուրք նորին , զորմէ կանուխ ծանոյց Դաւիթն ,
Ըզվիճա՛կըն պաշտաման տարաւ ընտրեալըն Մատաթիա ։
Սիրեա՛ց նա զանէծս և ել յիւր գլուխ վաղվաղակի ,
Զգեա՛ց և յուսահատ կախեալ խեղդեաց իւրովի զինքն .

Եւ այնպէս այտուցեալ՝ հերձաւ հեղաւ փորըն իւր գարշ։
 Իսկ իբրեւ յիւր ընկերաց տարամերժէր զողըն մահիչ,
Զի՞, մանկունք, այնուհետեւ Տէրըն բանիւ աւաղական
Խօսէր ըզսիրալիր վերջին կըտակն առ մըտերիմն,
Զերթ ուղեւո՛ր հեռագնաց տայր ըզյետին ողջոյն Նոցա։
Որդեա՜կք սիրելիք եւ մերձաւոր իմ բարեկամք,
Այսօր 'ի ձէնջ հրաժարիմ, մնաց ինձ ահա փոքրիկ մի ժամ։
Յերկնից առ 'ի Հօրէն ելեալ սիրով եկի յաշխարհ
Զյանձնեալ ինձ տընտեսութիւն Նորին առնել ըստ հաճոյից.
Արարի եւ արդ 'ի լըումն ածել փութամ չարչարանօքս.
Վասն որո՛յ զաշխարհ թողում եւ ելանեմ անդրէն առ Հայրն։
Մի՛ դուք սակայն տըրտմեսջիք անմեղ գառինք վասըն հովուիս,
Եւ աստ ա՛նդ թափառեալ մոլորեսջիք իբր անտերունչք.
Յուսով անտարակոյս յԱստուած եւ յիս հաւատացէք.
Ոչ թողում զորդեակսըդ որբ, կամ 'ի խնամոյ սիրոյս իմ զուրկ.
Երթա՛մ ձեզ օթեւանըս պատրաստել Հօրն իմ 'ի տուն,
Գա՛մ դարձեալ առնում ըզձեզ տանիմ յերկնից վայրն անտըրտում,
Ուր 'ի սեղա՛ն անճառ բարեաց Նըստեալ ընդ իս խրախանայցէք։
Ա՛յն է վարձ եւ փոխարէն ձեզ մըշակացդ աշխատախոնջ,
Որ զհետ իմ յօժար բարձեալ զխաչն՝ հետեւիք յանձուկ շաւիղ,
Որ թողէք զինչս եւ ըզտուն, հայր, մայր, եղբայր եւ սիրելիս,
Որ միա՛կ զիս պաշտեցիք իբրեւ ըզՏէր եւ ուսուցիչ։
Նոր պատուիրա՛ն սիրաբուն ձեզ աւանդեմ այժմիկ, որդեակք,
Ի սըրտէ սիրել զիրեարս յամենայնի փոյթ լինիջիք.
Այս Նըշանաւ 'ի մարդկանէ դուք ճանաչիք ինձ աշակերտք։
Անկըշիռ սիրոյս առ ձեզ հասու եղէք եւ խելամուտ,
Թէ քանի՞ հայրախնամ գըթով ըզձեզ ցարդ գըգուեցի
Անդո՛ւստ 'ի ծովակէն, ուր ձուկ որսալ վաստակէիք։
Զնոյն եւ դուք ուսեալք յինէն՝ առնել միմեանց յօժար լերուք,
Այսո՛ւ պատկեր ճըշգրիտ լինջիք սիրոյ վարդապետիս։

Հեզիկ բարս ըստացարուք աղքատ ոգւով խոնարհութեան,
Որ օրինակ նոյնատիպ և ծայրագոյն ցուցաւ յինէն.
Ես Տէր պաշտեալ առ 'ի ձէնջ և դաւանեալ Աստուածորդի,
Սիրով խոնարհեցայ 'ի գարշապարըս ծառայից.
Ահ հապա դըժուար թուեսցի ձեզ նոյնօրէն միմեանց առնել,
Քանզի չէք մեծ քան ըզՏէրս, այլ հաւասար ծառայակիցք:
Չիք 'ի ձեզ իշխանական երիցութիւն ըստ աշխարհաց,
Որ 'ի ձէնջ մեծ համարի՝ լիցի կըրտսեր և նուաստագոյն,
Բազմեալն իբրու զծառայ պաշտօղ յոտին առ սեղանով:
Զայս քաջիկ տեսիք աչօք, թէ զի՞ սըրտիւ ես անհըպարտ
Ի միջի ստորնագունից երևեցայ ըսպասաւոր,
Զիջանիլ այսչափ 'ի ցած միթէ գրեցի՞ անձինս ամօթ:
Երանի է ձեզ յաւէտ, յորժամ հանգոյն Վարդապետիս
Սըրտադիւր ծառայիցէք և դուք ընտրեալ իմ աշակերտք,
Որով ըստ իմ բանիս մինչ 'ի յերկինըս բարձրանայք,
Եւ թէ աստ անձանց ըզշուք ոչ խընդրելով նուաստանայցէք,
Ընդ յերկինս եօթընպատիկ ձեզ յաւելուն պատիւք փառաց:
Ահ, մանկունք առագաստի, ընդ փեսայիս փոքր ինչ մեկնելն
Կարծիցէ՞ք թէ առ 'ի ձէնջ կամիմ իսպառ ես վերանալ,
Ուստի սուգ առեալ վասն իմ վարանեսջի՞ք յանձինըս ձեր.
Զի դարձեալ երևիմ յետ յառնելոյս իմոյ փառօք,
Յառաջեալ 'ի Գալիլեա, զիս անդ տեսեալ կերպ նորահրաշ
Ըզհանդերձ սըգոյ հանեալ՝ դուք ըզգեցջի՛ք զուրախութեանն,
Ցընծայցէ՛ք, զի ոչ ոք ևս կողոպտելով հանցէ 'ի ձէնջ:
Ահ յորժամ դաժան մըշակք այգւոյն իմոյ Իսրայէլեան
Զհայրաբո՛ւն և սիրատունկ որթըս խըլել խընդրեն մահուամբ,
Եւ ո՛ւռքըդ պատուաստեալ յիս Հօր ձեռօք, որ մըշակէ
Թուլացեալք 'ի հաւատոյն 'ի բաց քանցեալ կոճոպիցի՛ք:
Հաստատուն կացէք 'ի յիս, մինչ ես թաղմամբ երեքօրեայ
Խորարմատ կանգնեալ՝ զհողմոց շընչով խաղ առնիցեմ.

Եւ երբե՛ւ 'ի գարնայնի վերընձիւղեալ նոր յարութեամբս
Զուռս կանա՛չ յինէն ըղձեղ արձակեցից 'ի սփիւռ աշխարհս .
Ո՜չ, յայնժամ շնորհիւ որթոյս պտուղ բերջիք բազմապատիկ ։
Ա՜հ, որպէս 'ի խելս նաւին ընդ իմ նընջելըն վայրիկ մի,
Եւ շընչե՛լն ուժգին հողմոցն և խրոխտանալ ծովուն ալեացն,
Արտաթո՛ւնդ վըրդովելով յուսահատեալ տատանիցիք ։
Եւ 'ի սիրտ երկրի ննջեմ, թէպէտ պահ մի մեռելութեամբ,
Բայց անդրէն զարթնում 'ի քնոյ թարց տալոյ ձեր ձայն և ձեռին .
Զ՚ի յառնեմ ինքնազօր իշխանութեամբս առիւծօրէն,
Եւ սաստեա՛լ յուզեալ ալեացըն փորձութեան հասելոյ արդ՝
Խաղաղէ՛ որպէս յայնժամ, սըրտիւ անդէն քաջալերիք ։

Ո՛ն արիք աստի գնասցուք, մի զուր ելցեն զանձն իմ խընդրողքն,
Ա՛ւրն ահա կամացըն Հօր փայլատակեալ շողայ վերուստ,
Եւ հո՛ւպ է զիս հարկանել զհովիւըս ձեր ըստ գուշակին .
Ա՜հ, ոչխարք սիրազարման ցրուեալ յինէն աստ անդ փախչիք,
Թողանիմ ես միայնակ մատնիլ 'ի ձեռս ազգին ժըպիրհ ։
Դուք և՛ս ելէք, ո՛ մանկունք, գառինք ծընեալ նոր Սիովնի,
Հովուասէր հօտին հանդոյն իջեալ գնասցուք ըզկնի Հովուին
Ընդ 'ի Պարտէզն աղօթից 'ի ձորըն մեծ Գեթսամանի,
Ուրանօր 'ի սիրելի աշակերտացըն մնացեալ,
Ո՜վ, ընդ մե՛ր ըստէպ ըստէպ ծունըր կըրկնէր խոնարհելով,
Տըրտմէր հոգայր 'ի ժամուն և մըտադիւր կայր 'ի յաղօթս՝
Տագնապեա՛լ դառնագին 'ի մահուանէն հասեալ առ դուրս .
Եւ հոսմո՛ւնք յորդեալ քըրտանցն և արտասուացըն կայլակումն
Յայն աչա՛ցն աղաւնոյ և մայրամած 'ի ճակատուն
Ցօղելո՛վ ոլոռն ոլոռն՝ առոգանէր բոյս պարտիզիս ։
Ո՞ կարէր ժուժել, մանկունք, այն ուժգնակի ձայնին ողորմ,
Որով գոչէր 'ի յերկինս մեծապաղատ առ Ծնողըն իւր,
Հա՜յր, ուր ես այժմիկ, լըսե՞ս արդեօք աղերսողիս,

Հայիս այսր գթոյդ աչօք 'ի տնանկ որդիդ վաստակաւոր.
Որ 'ի ծոցոյդ քաղցրութեան և 'ի բարձու երկնից գահէդ
Խոնարհեալ և ծառային մեր Ադամայ զգեցայ ըզկերպ.
Արդ ափշեալ և պաշարեալ կամ ես մահուն 'ի տագնապէ։
Յորդորէ հոգիս ներքուստ, յօժար է յոյժ դիմել 'ի խաչ,
Խուսափէ բնութիւն մարմնոյս և տկար գոլով ոչ հանդուրժէ։
Ակնարկեա յիս դու այսր, զի միամօր աղքատ եմ ես,
Ի սրտիս անձկութենէ և 'ի վշտաց աստի հան զիս։
Ա՛կն ահա 'ի վերայ իմ հաս և պատեաց դողումն և ահ,
Տէ՜ր, ինձ ոք զթեւս աղաւնոյ աստի թռչեալ վերանայի
Յանապատ երկնից ելեալ՝ յանքոյթ ծոցիդ դադարէի։
Մի՞ լինիր յինէն 'ի բաց, ահա մերձին յիս նեղութիւնք,
Չիք սատար, ո՞հ, ինձ ոք այժմ, զի զգէմ կալայց անոյժ մարմնոյս։
Վասն որո՞յ լուր դու սիրով ձայնի որդւոյդ պաղատելոյ,
Օ.բան մի մ՛րդ ըստ իմ կամաց ժըտեմ 'ի քէն ամաչելով,
Թէ հնար է և քեզ հաճոյ անցցէ յինէն դառն այս բաժակ.
Այլ մի՛ երբէք լիցի այս որպէս կամիմ ես մարդկայնով,
Հապա քո՛յդ եղիցին կամք, առ որ հնազանդ եմ մահու չափ։
Այս բարբառ աղօթանուէր լսիւր յերկինս առ լաւութեանն,
Մաւառնեալ պատգամաբեր հրեշտակըն Հօր գայր առ որդին,
Բաժա՛կ մահահրաւէր դառնաճաշակ իւր 'ի ձեռին։
Տրխո՛ւր էր զուարթնոյն երես, մօտիլ 'ի Տէրըն վարանէր,
Այլ հուպ կացեալ սարսելով հնազանդելոյն մատուցանէր.
Այս հրամա՛ն է Հօրդ, ասէր, զի զայդ արբցես ախորժօրէն,
Առ դորին եկիր, ո՛վ Տէր, կամաւդ 'ի ժամս այս տագնապիչ։
Ա՛ս կարօտ քո զօրութեան արդ 'ի վերուստ առաքեցայ
Գոլ այժմիկ զօրացուցիչ խոնարհելոյդ մարմնով քան զիս.
Որ նեղիս յանձկութենէդ, ա՛հ, զի՞ քրտունքդ արիւնախառն
Յերեսացըդ վիժելով կայլակահոս թափին 'ի վայր։
Մի՞ այդչափ տագնապիր, Տէր, հանգոյն դու կնոջ ցաւոց երկամբք,

Անցանէ ժամդ առ 'ի քէն և գայ քեզ նոր օր ցընծութեան
Երբ հարսըն քո անարատ ծընցի զողջ ազգ մի փեսայիդ ։
Նո՛ր զարմանք, զորք լուսաձիր, յերկնուստ այտի ակնարկելով
Սքանչացեա՛լ լերուք ընդ իս առ այս խորհուրդ անհասութեան .
Զի՞նչ իցէ, որ 'ի ծնանիլ ամուլ հարսին ըզնոր մանկունս
Փեսայի՛ն իւր անձկալի կայ աւասիկ կըրել զերկունս ։
Խորհո՛ւրդ է այս Թաքնութեան ծածկեալ յերկինս 'ի հրեշտակաց,
Ո՛վ, յերկրի մարդկան ազին յայտնեալ կերպիւ անճառագոյն ։
Զօրացի՛ր ուրեմըն, դու մատակարար մեծ խորհրդոյս .
Ա՛ռ 'ի սէր հարսին քոյոյ դու մի խնայեր զանձդ առ 'ի մահ .
Տո՛ր զայդ երկանց երաշխէպ, զի դիւր ծընցի նոր քո Սիոն ։
Որ զգեցեա՛լդ ես զօրութիւն զօրէն ձիոյ արշաւասոյր,
16 Քաջացի՛ր յասպարիսիդ, զի զքէն ասեր անդ 'ի յամպոյն .
Ոստա՛ 'ի մէջ դաշտի պարտիզիս այս աղօթելովդ,
Հոտ առեա՛լ պատերազմի դու դափըր հատ մարմնոյդ ոտիւք,
Վաղ 'ի վա՛ղ և փռընչելով ընթա խաղա ինքնին 'ի մարտ,
Ի զնետիւք արհամարհեա և երկաթոյ մ'առներ երես,
Եւ մի եւս խըրտչեալ սոսկար 'ի շարժմանէ շողիւն սուսերց,
Յարձակեա՛լ 'ի Թըշնամիդ՝ հար սատակեա ըրտմըտութեամբդ .
Վա՜շ, յայնժամ ես 'ի վիմին զփող հարկանեմ քոյդ յաղթութեան ։
Զայս խրախոյս տըւեալ զուարթնոյն անդէն 'ի վեր արփաթեւեալ
Ի զպատգամ հնազանդ որդւոյն 'ի յատենին Հօրըն կարդայր ։
Խոնարհեա՛լ արդ, ո՛վ մանկունք, համբուրեսցուք զհող պարտիզիս,
Ուր իջին քըրտանց կաթիւք ժրաջան մշակին երկնաւորի,
Որ եմուտ աստ 'ի խըլել զփուշս անիծից հնոյն Ադամայ
Աղօթիւքըն սըրտագոչ հաշտեցուցիչ Հօրն ընդ աշխարհ .
Եւ եմոյծ անդրէն զմերժեալըն յԱստուածատունկ դարաստանէն
Ոչ 'ի դրախտըն Եդեմին, ուր մուտ եղև չարին հընար,
Այլ անհա՛ս յերկնից վիճակն, ուր ոչ զօրեն ձեռքըն նորին ։
Նա՝ զվճիռըն դըժընդակ, զոր անդ կընքեաց Հայրն անիծիւք,

Լուծանե՛լ ըղձա որդի՛ն՝ ո՜հ, քըրտնահար լինէր աստէն,
Ի սըրբե՛լ և ջընջե՛լ զքիրտն երեսաց նախաստեղծին,
Եւ ըղձո՛ղն անիծաքեր օրհնէր ցօղովըն իւր աչաց
Տա՛լ պըտուղ այնուհետև, ոչ անիծից, այլ օրհնութեան ։

Այս, գիտե՛մ, Տէր, քո սիրոյդ անհասական բան է և գործ,
Այլ 'ի կե՛րպըն հայելով՝ սարսիմ և ես ընդ հրեշտակին ։
Օ՛ն, Տէր, քո յօժար կամաւդ կրեցեր զտագնապն անտար և դառն,
Որպէ՞ս անօգնական 'ի սիրայնոյ Հօրէդ թողեալ
Քըրտնեցա՛ր, արտասուեցեր իբրև ըզմարդ յոյժ ապիկար ։
Կամ առ ի՞նչ ուժգին ձայնիւըդ գոչէիր 'ի լուր Ծնողիդ,
Հեռի՞ էր նա 'ի քէն, ո՞չ ասացեր թէ յիս բնակի,
Ընդաժա՛մ 'ի յորդւոյդ սիրովըն իւր հայրականաւ,
Որպէս և դո՛ւ 'ի Նմանէ և 'ի ծոցոյն ծնընդեամբդ անճառ ։
Եւ ընդէ՞ր իբրև տըկար 'ի հրեշտակէն զօրանայիր,
Որ բանիւըդ քո միայն զօրացուցիչ ես համայնից ։
Ա՛ռ իմէ՞ որպէս ըզմարդ ոք պաշարեալ 'ի մեծ վըշտաց
Կարդայիր 'ի նեղութեանն, որ նեղելոց էիր դիւրիչ ։
Բա՛րէ, զի՞ սիրող Ներող բնութեամբըդ քո հեզ և անոխ,
Լալո՛վ աղօթէիր վասըն մարդկան ապախտաւոր,
Որ եկեա՛լ էին որսալ և ըմբըռնել զանմատչելիդ.
Դու միամիտ աղաւնանման հըսկեալ յաղօթըս մընչէիր,
Ոչ երբէք ըզգուշացեալ դարանամուտ 'ի բազէից ։
Այսպէս կատարեցեր զ'ի քէն խօսեալ սիրոյն պատուէր
Եւ ետուր, հովիւըդ քաջ, զայս օրինակ նորոյ հօտիդ
Աղօթե՛լ ըզլըլկողացն և ատելեացն առնել բարիս ։

Ընդ Քրիստոսի կապելոյն, մանկունք, և դուք սիրով կապեալ
17 Երթիցո՛ւք ընդ Նըմա 'ի տուն Աննա քահանային.
Ուր այն ի՛նչ նըսեմացեալքն առ 'ի լուսոյն ճըշմարտութեան
Զա՛հիւք 'ի գիշերի ըմբըռնեցին զանփախչելին,

Զեռակամ և միայնակ ածին յատեան անարժանին ,
Որ յաթոռըն Մովսիսի նըստեալ էր նա դատել ըզՏէրն ։
Ա՜յր ահա 'ի հարցանելն և պատասխան տալ Յիսուսին
Դաժա՛ն և չարաշուք ծառայն , որ հուպ կացեալ Հեզոյն ,
Ապտա՛կ ածէր սաստկահար , ո՞վ , ահաւոր սուրբ երեսացն ։
Ա՜ծ յայնժամ ժանտաբարոյն , իմ արդ սոսկայ սիրտ ահալից
Մինչ հայիմ 'ի հեզութիւն ապտակելոյդ վասն իմ , ո՛վ Տէր ։
Մեռանէր տեսողն անդէն , ասա ապտակ ե՞ւս առեր 'ի ծնօտդ ,
Ո՛չ յանկարծ ընդոստուցեալ դու խըստացար , ո՛վ քաղցրութիւն ·
Այլ ներո՛ղ բնութեամբըդ քո թողեր զծառայն անպատուհաս ։
Տեսէ՛ք ասա Բարերարին զերկայնամիտ ներողութիւն ,
Տեսէ՛ք և ապաշնորհ բըժըշկելոյն ըզհատուցումն ։
Ծառա՛յ չար և ապիրատ , զի՞ մոռացար վաղ ըզպատուէրն ·
Ե՛րթ , բուժեալդ այժմիկ , մի մեղանչեր այսուհետև ։
Եղո՛ւկ քեզ , բարւո՛ք լըւար զհրաման քոյոյ Բարերարիդ ·
Ո՛չ 'ի մարդ , այլ 'ի յԱստուած դու մեղանչել ժըպըրհեցար ։
Որ զլուծեա՛լ բազկիդ անդամս հաստեաց անդրէն շարժումն 'ի ժիր ,
Ո՛հ , միթէ ապտա՞կ ածել քեզ երեսացըն կեցուցիչ ։
Գիտեմ անբոյժ լինել ախտացելոյդ ոգւոյն մասամբ ,
Լա՛ւ էր քեզ թէ անյարիր մնայիր այնպէս մարմնովդ ծընկեալ
Գէթ յերկա՛ր ապաշաւանս մաշեալ՝ հոգւով զօրանայիր ,
Քան յոտին ելեալ առողջ՝ ծառայ եղեր դու անըզգամ ։
Մի՛ կարծեր թէ անարգանս բերեր Հեզոյն ապտակելովդ ,
Դու նախկին ձեռնէրէց 'ի մէջ գընդին տիրասպանու ·
Այլ յաւէտ պատիւ ետուր և ծանուցեր զչափ հեզութեանն ։
Զապտակէն թողեալ արդ՝ մեծն ասացից ըզհարուածոյն
Զպարաւանդէն առասանաւ 'ի ձիթենւոյ ծառն ըզՅիսուս ,
Որ 'ի շո՛ւրջ բոլորելով զինուորաց դասքըն դըժընդակ
Ըստէպ ըստէպ սաստկագոյն հարկանէին դալար ստեղամբք ։
Ցա՛ւ ըզգայր ընդ Արարչին ծառն անխօսուն և անըզգայ ,

Կապելոյն Աստուածութեան լինէր վըկայ սքանչելապէս .
Զի պատառեա՛լ ՚ի մասունս ընդ մէջ առնոյր ըզգանալոյն ,
Որ փոխա՛ն լեալ ըզգայուն՝ ինքն արբ ըզգա՛ն յանըզգայից ,
Բա՛ց գիտաց զայն , որ անդէն ասաց ինքեան յերկրէ բըղխիլ ։
Ընդ եզին և իշոյ ծառն և ծանեաւ զիւր Ստացիչն ,
Եւ ՚ի ձեռս ծերոց , մանկանց օրհնաբանեաց ըզնա ոստովքն .
Եղո՛ւկ քեզ , ո՛վ Իսրայէլ , դու ո՞չ ծանեար ըզքոյդ Աստուած ,
Որ ստացա՛ւ զքեզ ժողովուրդ իւր սեպհական և սիրելի ,
Եւ զերդ այգի մըշակեաց յերկրէն փոխեալ Եգիպտոսի
Ի պարարտ և ցօղառոգ տընկեալ յերկրիս այս Աւետեաց ,
Եւ լըցո՛յց յազնիւ պըտղոցըն ձիթենեաց իւղապարգև ։
Զա՛յս բարերարին դու հատուցեր ըզփոխարէնն
Պարգևօք նորա ձեռինն տանջեալ ըզքո պարգևատուն ։
Կացցէ՛ ծառն ես դատաւոր ձեզ ընդ ազգին Նինուէացւոց
Պատառեա՛լ փայտեայ սըրտիւն առ ՚ի զըղջումն իբրու ըզմարդ ։

18 Ի կըրկին ատեան ելցուք արդ և ՚ի տուն Կայիափայ ,
Ուր ժողովեա՛լ խորհէին իշխանք Հրէից վասն Օծելոյն
Շըշընջեա՛լ ՚ի լուր միմեանց բան անօրէն ըզնըմանէ ։
Զանմե՛ղն ածին զառաջեաւ իբրև ըզգառն ՚ի մէջ գայլոց ,
Որ զժանիս իւրեանց վաղուց սըրեալ սըտիւք նենգախորհուրդ
Զի՞ արդեօք մահու դատեալ՝ պատառեսցեն զգառըն Յիսուս ։
Հարցանէր Կայիափա զեան , որ լըւեալ էր բիւրանգամ ,
Եւ դարձեա՛լ ըզնոյն բարբառ լըսէր ատէն ՚ի բերանոյն
Որդի՛ լինել Աստուծոյ և գալ յերկնից փառօք ընդ ամպս ։
Կարի ծանր էր ականջաց նոցին խըցեալ ձայնըս քաղցրիկ ,
Ընդ լըսե՛լ շըրտնոյր ատեան , ձորձ պատառէր Կայիափա ,
Չէ՞ն , ասէր , պիտոյ վըկայ արդ մեզ այլուստ ՚ի մարդկանէ ,
Լուա՛ք ահա և դատեսցուք իւր բերանով , դուք զի՞ կամիք .
Լեզուք ողջո՛յն լուտացող՝ գոլ մահապարտ բողոքէին ։

Սիրտ իմ գեղո՛ւ աստանօր և տայ լըռել ինձ յերգելըս ,
Մինչ մըրմո՛ւնջ հանել ունիմ ըզձաղանացն իմ Տէրունւոյն ։
Ոմըն Թըքո՛վ ժահալից լը՛նոյր ըզգէմըն լուսատիպ ,
Ո՜ն ապտա՛կ ածէր ծնօտիցն այն ըսպիտակ և փարղագեղ ,
Ո՜ն ըզգլո՛ւխն անպարունակ ուանտանելին երկնի , երկրի ,
Ըմբէ , ձորձո՛վ ծածկեալ կուռփըս հանէր անխնայաբար ։
Աւա՛ղ ես բիւրանգամ կըրկնեմ աստէն անմիտ ազգին ,
Զոր անգո՛ւստ յանդիմանէր Պաւլին բանիւըն կըշտամբող ,
Ծանէրո՛ւք ծանէրուք , ո՛վ անըզգամք ժողովըրդոց .
Զի՞ շնորհին զակն , որ զանդունդըս նըկատէ յերկնից բարձանց ,
Ընդ քօղո՛վ արկանէք դուք իբր անտեսող կարծեալ ըզնա .
Որ ձեռօքըն իւր տընկեաց զունկն և ըստեղծ զակըն լուսոյն
Որպէ՞ս ինքըն ոչ լըսէ և տեսանել անկարանայ ։
Անմոռա՛ց է ինձ և այն կիրք Տէրունւոյն գանահարուած ,
Ի սեւն կապիլըն մերկուց և գան ըմպել խարազանիւք ,
Մինչ քըքնո՛ւշ մորթոյն անօսր ակօսաձեւ պատառելով
Ապաժո՛յժ վըտակք արեան ծորեալ 'ի դուրս կայլակ կայլակ
Խաղայի՛ն ծաւալելով սուրբ զիրանամբքն Աստուածադեղ ,
Ողջ մարմի՛նըն ձիւնափայլ դառնայր 'ի գոյն բոսորատիպ ,
Ո՛հ , ոչ մնայր , 'ի նմա ընաւին խայծիկ մի տեղ առանց վիրաց ։
Որ 'ի նընջե՛լն Իսրայէլի՝ պահպան էր ինքն անքուն ականըն ,
Հանգչէ՛ր և քաղցրիկքուն լինէր Յակոբ և փափկանայր .
Ո՜վ սիրոյն , զգիշերն 'ի գլուխ ինքն 'ի նմանէ տանջէր աննինջ
Ա՛յնպէս պարանակապ 'ի սեւն պըրկեալ յոտից վերայ ։
Այս կըտտանաց դառնագոյն Տէրըն տարաւ անդիմադարձ ,
Ըզթիկո՛ւնս ետ հարուածոց , յապտակս և զայտսըն նըռնագեղ ,
Ո՛չ դարձոյց առ ամօթոյ զդէմս իւր 'ի Թքոյ անարգանաց ,
Ո՛չ բարբառ ինձ արձակեաց և կամ ցաւոց եհան մըրմունջ
Ա՛ռ վըշտին սաստկագոյն չըլացեալ ընաւ զիւր ըզբերան ։
Ի՛նքըն ասէր Եսայիաւ , Թէ Տէր եղև իմ օգնական ,

Առ ոչ ինչ համարեցի կրելով կամաւ զայս անարգանս ․
Եւ իբրու զվէմ հաստատուն զդէմս իմ եդի նախատանաց ,
Ուսայ ես չամաչել , զի մերձ էր ինձ իրաւարարն ,
Որ արդար զիս կացուցեալ զվրէժն իմ առնոյր 'ի նոցանէ ։

Իսկ Պետրոսն , որ անդ պարծէր դնել զանձն 'ի մահ առ սիրելոյն ,
Ո՞ւր յայնժամ , երբ Սէրըն իւր դառն 'ի ձաղանս կապեալ 'ի սիւն ․
Առ 'ի հրոյն արկանելոյ սառեալ սըրտիւք և հոգւով
Նըստեալ առ խարուկին իբրև օտար ջեռնոյր մարմնով ։
Տէրըն իւր կապեալ այնպէս կայր 'ի միջի կատակողացն ,
Ետես և չարար փոյթ լինել նըմին գէթ կարեկից ։
Վէմ էր ինքն անշարժելի , այլ սիրտն ահիւ էր պաշարեալ ,
Միոյ տկար դըստեր մատամբ շարժիւր երիցս ուրանալով ։
Զայն հաւուն կըրկնախօս կոչէր զՊետրոսն 'ի գիշերին
Թուլացեալ սըրտի նորուն խրախոյս կարդայր անբան խօսնակն ․
Արի սթափիր դու 'ի քնոյդ առ երկիւղի թըմրեալ այդպէս ,
Զարթիր 'ի սէր սիրելոյդ , դարձիր հայեաց 'ի Վարդապետն ․
Իմ ահա խօսեալ երիցս՝ եղէ վըկայ նորա բանին ։
Ընդ հաւուն և ինքըն Տէր , ահ , մոռացեալ զձաղանաց վիշտն
Յօղադին զականողիս ողորմ շըրջեալ դէպ 'ի Պետրոս
Լռու և եթ ակնարկելով աչօք լեզուին խօսէր անձայն ․
Ո՜վ այդ քեզ , պարծող Պետրէ , ո՞ւր օգնութիւն մեծաբանիդ ,
Վէմ էիր անխախտելի այդպէս փութո՞վ տատանեցար ,
Եւ ուծացեա՛լ 'ի սիրոյս զիս ուրացար իբր անծանօթ ,
Որ ցանկ ընդ իս շըրջեցար զամըս երիս մըտերմաբար ․
Դարձիր օն և հաստատեաց մի սասանիր ուժգին այդչափ ․
Ո՜ ինչ անդէն նշոյլ ինչ հրոյ ցայտեալ յաչացըն Տէրունւոյն
Թափանցեա՛լ ընդ Պետրոսի սիրտ մըտանէր կայծակնապէս
Եւ լուցանէր նոր՝ ըզսիրոյ ջահըն շիջեալ ուրացութեամբ ․
Որ բորբոքեա՛լ բոցանման 'ի սիրտըն ողջ ծաւալանայր ․

Ցըրտացեա՛լ զոգի նորին առ սէր սիրոյն ջեռուցանէր ։
Չէր պիտոյ այնուհետեւ զոփացելոյն խարոյկ վառեալ
Մինչ հրատիւ սիրանիւթ ներքուստ կիզէր անձնատոչոր.
Ովկիանոսն աշխարհածուլ չէր բաւ առ այն բոց աղէկէզ ,
Միա՛յն՝ երկեակ աղբերք աչաց նորին արտօսրաբուղխ .
19 Դաւիթ Թանայր զանկողին , իսկ նա զյատակ այրին բոլոր ։
Ո՞ ժըտի ճառել բանիւ ըզՊետրոսին դարձն եւ զըղջումն ,
Ո՛չ եւ եթ 'ի գիշերին , այլ եւ 'ի կեանս իւր բովանդակ
Մինչ քանի՛ցս 'ի յուշ ածէր զհաւուն խօսիլն եւ զուրանալն ։

20 Ո՛վ , Յիսուս , երթիցուք արդ ընդ քեզ յատեան Պիղատոսին
Դու մունջ եւ լո՛ւռ կաց անբարբառ , ես անդ ընդ քո խօսիմ քնարիւս
Տեսցո՛ւք թէ զի՛նչ եանդէն կըրեաց կամաւ Տէրըդ վասն իմ ,
Ո՛ւր ընդ այգո՛ւն եղելոյ ածար 'տանէն Կայիափայ ։
Որ լուծի՛չ 'ի կապանաց մահուն էիր մարդկան հոգւոյն ,
Ա՜հ , կապեա՛լ՝ մարդոյն ձեռօք կացեր հանդէպ դատաւորին .
Դո՛ւ՝ ոչ ապիրատ եւ անիրաւ ի՛նչ գործեցեր ,
Կամ սըրտիւ նիւթեր ըղչար կամ խօսեցար ըղնենգութիւն ,
Դատեցա՛ր եկակոչ , աւա՜ղ , զօրէն մահապարտի ։
Իշխա՛ն եւ դատիչ հանուր ծնընդոց ադամային
Եդա՛ր առ 'ի Հօրէն 'ի յերկրորդի քոյդ գալստեան .
Բա՛բէ , 'ի պատժելոց դո՛ւ նախ եղեր դատափետեալ .
Եւ խոնա՛րհ կալեալ ըզգլուխդ քո հեզ բնութեանդ ցուցեալ ըզչափ
Ա՛նհաւան եւ թիւր ազգիդ , որ զփորձ առնուլ յօժարեցան ։
Զարմացա՛ւ դատաւորն ընդ քո շըրթանցդ անշարժութիւն ,
Արարի՛չդ անխօս եղեր որպէս ըղխուլ որ ոչ լսէ .
Որ յօրինէ՛ր ըզբերան՝ խօսուն 'ի նմա եդեր զլեզուն ։
Ցի՜նչ այս , գէթ ազդիցէ ողորմ 'ի սիրտ ազգին անգութ
Խոնարհէին եւ տընանկին ուղիղ առնել դատ իրաւունս ։
Իսկ որ 'ի նոր աւետեաց քաղցրիկ փողոյն եւ հեշտընկալ

Ո՛չ զարթեան 'ի քնոյն յամառ և չարարին ձայնին ինչ ուշ
Անհաւան կամաց տըտամբք հանդոյն օձի զունկըս խըցեալ
Մի՛ լսել ճարտար թովչին բանին կենաց ճըշմարտութեան ,
Եւ չառնուլ ըզդեղ բուժիչ 'ի դեղատուէն իմաստուն .
Գո՞յր արդեօք հնար աստ Հեզոյն ուսուցանել անխօսութեամբն ,
Կամ յերկրի մատամբ գըրեալ զարդարութիւն յայտնել նոցա ։
Որ անդէտն էր օրինացն Աստուածատուր՝ ծանեաւ զարդարն ,
Գո՜ւն գործէր , հնարս հայթայթէր թափել զանմեղն 'ի մատնողացն .
Զի՛ բերիք զայրս դուք առ իբրև մահու գոլ պարտական ,
Աւադի՜կ դատեալ և բնաւ բիծ ոչ գըտի վերայ դորուն ,
Թէ հնա՞ր է խրատեալ ըզդա՝ թողից ազատ 'ի շնորհ տօնիս ։
Քանտաժո՜ւտ խըռնեալ խուժանն անդէն բողոք բառնայր սաստիկ ,
Մի՛ ըզդա , ո՛վ դատաւոր , մի՛ զհայհոյիչդ այդ՝ օրինաց ,
Տե՛ս մեզ դու զայլ ոք արժան և տուր ըզդա հանել 'ի խաչ ։
Զայս իսկ և դո՛ւ կամէիր , ո՛վ կամօվքն մատնեալդ 'ի դատ ,
Զի զէս ըզպարտականս մահու՝ մեղօք և տանջանաց
Քո մահուամբդ անմեղութեան արձակեսցես յազատութիւն ,
Եւ յարիւնդ քո թաթաւեալ թըռչիլ թողցես լեառն 'ի յերկնից
21 Որպիսեօք զաղաւնին ցուցեալ անդէն առ Ահարօն ,
Եւ ատէն մահապարտ ըզԲարաբբայն արիւնըռուշտ ։
Իսկ ջատագո՛վ մարդահաճն առեալ ըզջուր լուանայր ըզձեռս
Զարդարո՛յն անպարտ արիւն՝ ջնջել քաւել կամէր յանձնէն .
Ի բա՜ց արդ առէք , ասէր , տարայք դատել ձեր օրինօք ,
Գիտե՛մ , առ նախանձու զանմեղդ 'ի ձեռս իմ մատնեցիք ։
Զայս բանիւ . այլ ըզհաճոյս գործով առնէր կեղծաւորեալն ,
Զարժանին բիւր մահու թողոյր ազատ ընդ արդարոյն ,
Եւ զանպա՛րտըն դանելով՝ խաչիւ դատել տայր մատնողացն ։
Մնա՞ց միթէ սուտակապան անպատուհաս 'ի յարենէն ,
Ո՛չ վառեալ իմ Աբգարիոս եւ վրէժխընդիր զԱստուածորդւոյն
22 Շնորհադիր թըղթովն իւր մերժել անդէն եւ զանիրաւն ,

Որ չարա՛ր իրաւունս և զուր մատնեաց մահու զարդարն ։

Ի՛մ աստ ահա , ո՛վ մանկունք , սասանի սիրտ , քրտնին ոսկերքս ,
Եւ դողո՛վ տատանին մատունք ձեռին իմոյ 'ի գրել ,
Եւս որպէս հանդուրժեցից ասել վերջին ըղձաղանացն .
Ում ըզկնի մահուն վըճռոյ Հեզըն համբեր սիրոյն անհաս ։
Քանզի շո՛ւնք և ցուլըք գէրք , ո՜հ , զիմ Յիսուս առեալ 'ի մէջ
Պատեա՛լ պաշարեցին գընդովք իւրեանց գաղանասիրտ .
Խայթահա՛ր 'ի տատասկաց հիւսեալ պըսակ բոլորակի
Ըզգըլխո՛վ Թագաժառանգ Դաւթի որդւոյն եդին , աւա՜ղ .
Ընդ Թագին յօրինելոյ աղխիւ յականց երկոտասան ։
Եւ որ մնա՛յր Իսրայէլեան այգւոյն բերել ինքեան խաղող
Ահա փո՛ւշ եբեր գըլխոյ ոռոգողին երկնից ամպով ,
Եւ մըշակին պահպանող աջովըն իւր կուռ ցանկապատ ։
Ծիրանիս Նախատանաց ըզգեցուցին իբր արքայի ,
Ընդ ոտիւք , որում ըզձորձ տարածէին 'ի գալըստեանն .
Ինքն անտանօր բեհեզեայ պատմուճանաւըն սըրբանուէր
Զարդարեա՛ց զԱհարօն շուրջանակի պըճըղնաւոր ,
Զա՛յս ընդ այն հատուցին աստէն որդիքն անհարազատ
Երկնաւո՛ր Քահանային , ո՛վ հատուցմանս անօրինակ ։
Ի յաթո՛ռ անարգանաց և նըստուցին զհին աւուր Ծերն ,
Ընդ ոտո՛ցըն ձիթենեաց զեղէգն անարգ ետուն 'ի ձեռն .
Այս է յոյժ դառն և դըժուար , զի մերթ առեալ զայն 'ի նմանէ
Զգըլուխըն վէ՛հ սրովբէապաշտ նովիմբ սաստիկ , ո՜հ , ձաղկէին .
Ծակոտէր շուրջանակի մորթն 'ի պսակէն այն փշադաժան
Որ հանդերձեա՛լ էր հովուել գաւազանաւըն երկաթեայ
Անվախճա՛ն իշխանութեամբըն ըզհամօրէն ծագս աշխարհաց ։
Դպիրն երկնից արքայութեան 'ի գրել եկեալ էր ըզնոսին
Որդիս Աստուծոյ և անդրանիկ ժառանգ վերնոյն .
Զգրիչն առեա՛լ ժանտ որդիքն 'ի գլուխ նորա ջախջախեցին ,

Իւրովք հանէին զինքեանս 'ի Թուոց երկնից ժառանգողացն ։
Զօ՜րն ասեմ բիւրակերպ 'ի ձաղանացըն չարահնար ,
Ոյց համբո՛ւն կացեալ անխօս՝ ժուժեալ տարաւ Գառըն Յիսուս .
Արդարո՛յն հանդուռնատիպ 'ի մերձաւոր իւր բարեկամն
Սիրելո՛յ ազգին ընդ մէջ , որդի Կուսին և Աստուծոյ
Այսպէս 'ի կատականս եղև արդարն և անարատն ։



ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

# ՆԱԽԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ ԻՄԱՍՏԻՑ

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳՈՑ

ՀՐԱՒԻՐԱԿՆ զքնարն իւր բառնայ հանգոյն Քրիստոսի խաչաբարձին. և զնորոյն Իսահակայ, թէ իբր երթայր զհետ անհարազատ որդւոցն Աբրահամու՝ նուագելով ելանէ 'ի Գողգոթա. ուր զխորհուրդ խաչին նախագուշակեալ պէս պէս օրինակօք և զբարձրացեալ Մանկանէն Հօր՝ երգէ յաղթական ձայնիւ:

Փեսայն Քրիստոս ելեալ առանձին 'ի լեառն զմռսոյ և ինկեալ 'ի նմա չարչարանօք՝ բուրէ զանուշութիւն, հոտ առեալ դիմէ առ նա հարսն 'ի Լիբանանէ. զոր հրաւիրեալ կոչէ Փեսայն 'ի խրախճան Նորօրինակ հարսանեաց:

Ձայն տայ անձկով իւր Փեսային և հարսն եկեալ. սկիզբն առնու աւաղական բանիւ լալ զհեռանալն իւր 'ի նմանէ, զմիանալն ընդ անմռունչ կուռս քարանց և փայտից. և ուրախանայ մինչ յաւուր փեսայութեան եկեալ գտանէ զՓարելին:

Ցնծայ Հրաւիրակն և բերկրի ոգւովն 'ի նկատելն իւր զայսոսիկ 'ի վերայ լերինն Գողգոթայի. այլ կրկին ակնարկելով ըստ Ամբակումայ 'ի գործ խաչեցելոյն, ընդ մերկութիւն և տեսիլ նորին անշքութեան՝ զարմանայ և զարհուրի յոյժ:

Նկարագիր անկշիռ վշտաց Կուսին, որ 'ի սեղան սրտի իւրոյ կենդանւոյն կիզեալ 'ի հուր սիրոյ մայրական՝ անարիւն ողջակէզ նուիրեցաւ և այնու խաչակից եղև միածնի որդւոյն:

Ցաւալի ողբ նորին առ սիրասուն որդեակն իւր Յիսուս. և սփոփիչ յուսադրական բանք Որդւոյն առ Մայրն:

Փոխէ ապա Յիսուս զդէմս բանիցն առ Հայրն և 'ի դէմս ածէ նմին զթողանիլն իւր 'ի նմանէ առանց օգնականի. առաջի արկանէ զնուիրումն անձին հաճոյական պատարագ. հայցէ զի հաշտեսցի ընդ աշխարհ և թողցէ զյանցանս չարչարողացն իւրոց:

Պատասխանիք Հօրն առ որդին վասն փոյթ կատարելոյ սիրով զնորին հայցուած. վաղվաղակի վրէժխնդիր լինել առ անմեղ դատապարտութեանն. խրախուսէ խաղալ 'ի ստոր երկրի զհետ իշխանին խաւարասէր և խոստանայ դնել զթշնամին 'ի պատուանդան ոտից նորա:

Հուսկ ապա իջուցանէ 'Գողգոթայէն 'ի Պատանատեղ. ուր զանվեհեր համարձակութիւն Արեմաթացւոյն Յովսեփայ, զկրկին կոծ և ջայլանս պարկեշտ Մարեմանցն և Մօր Տեառն. և զպատանիլն Քրիստոսի 'ի մահկանացու ձեռաց՝ համառօտ նկարագրեալ՝ վերջացուցանէ:

### ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

## ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

Ա՛Ռ ըղձնայրդ, երգահան, ընդ Քրիստոսին դու խաչաբարձ
Ի լեառըն Գողգոթայ եւ աւասիկ նըւագելով,
Մինչեւ նոր Սահակն ըզփայտ ողջակիզին բարձեալ 'ի յուս
Ի տեղին Սաբեկայ տակաւ տակաւ տարեալ հանցէ։
Դուք եւս արդ ելէք ընդխս արեամբ դառինն, փըրկեալ մանկունք,
Ընդ նորմա կերպ հրաշազան դիտեալ ոգւով զարմացարուք.
Որ ոչ էր հնոյն հանդունակ լեալ ինքն անդէտ իւրոյ զենմանն,
Հայրենկդ իմ, յիս ահա փայտն, իսկ հուր և սուր պատրաստ առ քեզ,
Սուր դառնուկըն ողջակէզ՝ հարցանելով տեղեկանայր։
Զի գիտող էր ծածկելոցն Աստուած գոլով որդին մարդոյ
Համութեամբ Հօրն և Հոգւոյն երթայր յօժար յանդարձ զենումն,
Ուստ չէր անդրէն դառնալ ողջ զխոյն ընկալեալ հրեշտակաբեր։
Ի՛նքն էր իսկ խոյն անարատ ձօնեալ փոխան Իսահակայ
Կախեալ 'ի գօս խաչին ծառոյ պատրաստութեամբ Հօրըն վերին։
Մինայնէկ երթայր, աւա՛ղ, չէր ընդ նըմին ինքն Աբրահամ,

Այլ որդիքն անհարազատ և աններմանք հօրըն բարուց։
Սո՛ւր ունէին դըժընդակ զգործիսն ասեմ ըղտանջանաց,
Կամ ըղլեզո՛ւս հայհոյիչ սըրեալ սաստիկ արդարոյն դէմ։
Հո՛ւր էր նոցին պլանիւթ զնախանձն իմա դու զչարութեան
Բորբոքեա՛լ յոգւոյն արտաքս իբր 'ի հնոցէ Բաբիլօնի
Ի սեղա՛ն փայտին կիզել զինքնանուէր գառն Աստուծոյ։
Ի սպա՛նդ իբրու ոչխար վարեալ լինէր անդիմադարձ,
Լուռ անձա՛յն և անմռունչ ընդ մըշակացն Իսրայէլեան.
Որ հանէին այգւոյն արտաքս 'ի սպանանել զժառանգըն Հօր։
Ո՞հ, ասէ՛ն առուք արեան առ խեղաթիւր փայտին ծանու
Հոսէի՛ն 'ի բերանոց բացեալ վիրացըն գանահար,
Եւ թափեա՛լ խառն ընդ քըրտունս յուղիս այսմիկ Գողգոթային
Կարմրադո՛յն կաթիլք արեան զգետնով շիթ շիթ երևէին,
Ես անկեա՛լ զհողըն լիզեմ, ուր ցօղեցաւ Փըրկչին արիւն։
Տեսէ՞ք արդեօք, Նախաստեղծ, և ամբարձէ՞ք զաչըս քոյին։
Հայեցա՞ր ընդ Արարիչդ առ 'ի շիրմէդ Գողգոթայի,
Որպէ՞ս քըրտնահար բեռամբ խաչին նա գայր առ քեզ։
Դու ոտի՛ւքըդ կայթելով չոգար 'ի ծառըն մահածին
Տա՞լ միթէ տընկողին քեզ անդ ըղդրախտըն վայելուչ
Այնպէս տաժանաքայլ վաստակաբեկ դիմել 'ի մահ։
Որ շընչո՛վըն հատկըլեալ և նըւաղեալ յուժոյ մարմնոյն
Մերթ քայլէր կթուցեալ ծընկօք, մերթ խոնջելով ըղկայ առնոյր.
Դահճա՛ցըն դառնութեան 'ի ստիպմանէ տագնապելով
Զգարշապա՛րս Աստուածային յուշիկ յուշիկ փոխեալ յառաջ
Հաղի՛ւ հաղ գառն անարատ ածեալ լինէր 'ի սպանդարան։
Բե՛ր սիրտ ինձ աստ 'ի ժուժել ընդ անմեղուկ որոջն Յիսուս,
Ի՞բր անշարժ կայր ընդ առաջ իւր կըտըրչացն ինքն ամըռունչ.
Ոյք չե՛ւ զէնեա՛լ սրով քառասայր զմորթըն քերթել նախ փութային
Զհանդերձի՛կն ապաշուք և զպատմուճանըն փորանկեալ,
Զոր 'ի բա՛ց քարշեալ յանձնէն՝ մերկ առնէին ըղդեցուցին

Մերկացեալ անդամոց նախաստեղծիցն ամօթապարտ ։
Զի՞ ապա զՏէրն անծածկոյթ այնպէս տարած 'ի չոր փայտին ,
(Որ պարզեալ ինքնին զբազուկս անպարտ 'ի թեւս խաչին ձգտէր)
Հեղուսիւք ուժգին հարմամբ սեւեռէին անագորոյնքն
Զթաթ ձեռացն աշխարհաստեղծ և արարող զմարդն 'ի հողոյ ,
Եւ զո՛տսըն վերաթռիչ , ում պատուանդան է ողջ երկիրս ։
Քանի՞ յորդ կարմիր վտակունք 'ի ծակուածոցըն կայլակեալ
Հոսէին թաթաւէին ըզշուրջ տեղիս այս Տարածման .
Ուր ըզդէմըս մեր մածեալ և մեք լալիս հեղցուք , մանկունք ,
Փոխանա՛կ մեր ազատիչ Փըրկանակին թափեալ արեան ։

23 Աւադիկ 'ի բարձու գլուխդ ելեալ հասի , ո՛վ Գողգոթա ,
Տո՛ւր , ժըտեմ , զվէմ ինձ այժմիկ , ուր իմ կացեալ , 'ստ Ամբակումայ
Հայեցայց 'ի խաչեցեալն և զարմացայց ընդ նորին գործ ,
Երգեցից ըզՄանկանէն , որ վերացաւ թեւօք փառացն ։
Այր ընդ իս և դուք մանկունք փրկեալք արեամբ խաչեալ Մանկանս
Այր ուշի ուշով զհանդէս յաղթող մանկանըս դիտեցէք
Որ հեծեալ այլ իմն 'ի կառս՝ մուտ յասպարէզ նա խաղալով
Քառասայր տէգն և նիզակ թեթև ճօճէր խաչն 'ի ձեռին ,
Հա՛ր նովիմբ ուժգին ըզսիրտ դառ իշխանին աշխարհադրաւ
Տապաստ արկ վիրաւոր , տարաւ 'ի գլուխ ըզյաղթութիւնն
Նորահրաշ եղանակաւ մահուամբըն իւր անպարտակիր
Ուստի յերկրի և յերկինս փառաւորեալ եղև նա յոյժ ,
Թէ և ա՛ստ յանարգութեան փայտ պըրկեցաւ անփառունակ ։
Սիրեմ ես ըզբազէն երկնաթըռիչ թեւատարած ,
Որ եկա՛ց 'ի ծառ խաչիս և ընդ հարաւ դիտեաց աչօքն
Փըրկութիւն ակնարկելով ջեռեալ ազգաց 'ի կրօնըս կռոցն ։
Սեղան իմն առ գագաթամբս փայտ կանգնեցաւ քառակուսի ,
Յոր զենեա՛լ Հօրն երկնաւոր զիւր Միածին պարարակ եզն՝
Ձայնարկեա՛լ և հրաւիրեաց զանառակեալ ազգ մարդկային ,

Որ դիմեալ դարձան առ նա տանջեալք սիրոյ արդարութեան ,
Եւ մատեան քաղցեալ ոգւով պարարտ եղինն 'ի ճաշակումն ,
Թողեալ ըղձմունս անըզգամ՝ ելին խնդրել զիմաստութիւն ։
Զողաբորձ օձըն պղնձի , որ էր խաչին հանդունատիպ ,
Բարձրացեալ աստէն կանգուն 'ի տես հանուր տիեզերաց
Ուր և եթ Իսրայէլեան ըզվիրաւորսըն բըժըշկէր .
Հապա ո՞չ սեռըս մարդկան զթունաւորեալսն 'ի թշնամոյն
Թափեա՛ց դեղօք զօրեղ ամբիծ արեամբըն իւր կազմեալ ։
Սաբեկայ ծառ խոյաբեր բուսաւ 'ի բլուրս այս երկնամբարձ ,
Ուր անբանըն կախեցաւ յիւր եղջերացն առ 'ի նմանէ .
Եւ այն , զոր Տէրըն տես յայտնի բանիւն Աբրահամու ,
Յիսուսըն կուսաբեր կախեալ խաչին 'ի յեղջերաց
Ուր փըրկանս Իսահակայ , այլ և հանուր հեթանոսաց ։
Բայց երգո՛յն՝ հարսին 'ի սէր եղ ասա փեսայն ինքն առանձին ,
Եւ խընկեալ դառըն վըշտօք իբրև զըմուռս 'ի փայտին հուր
Զհոտ բուրեաց անուշութեան , առ հոտոտեաց հարսն 'ի հեռուստ
Վազեալ եկն առ իւր փեսայն ինքն յանտառէն Լիբանանու .
Ուր , աւա՛ղ , թողլով զԱստուած զուգաւորեալ էր նա մեղօք
Ընդ անշո՛ւնչ կուռըս փայտից անխծագործ կազմեալ ձեռօք ։
Զայն առնէր փեսայն հարսին , եկ սիրելի մերձաւոր իմ ,
Դարձիր առիս և յառեաց յիմ կարմրացեալ դեղ վայելուչ
Նոր յարքայդ ծիրանաւոր և պսակ թագին ականակուռ .
Զգեցիր և դու զպատմուճանդ զոր հան 'ի քէն և կապտեաց օձն .
Արի եկ մուտ յառագաստ նոր օրինակ այս հարսանեաց ,
Քեզ խրախճան կազմեցի աստ ես 'ի գինւոյ ամբիծ արեանս .
Զունիս այսուհետև արատ 'ի քեզ տըգեղութեան ,
Որով արեան իմոյ լուացեալ՝ գեղեցկացար ամենևին ։
    Զայն անդէն և հարսն եկեալ տայր փեսային իւրոյ անձկով ,
Աւասիկ ես , որ սիրով քոյին յաւէտ եմ խանդակաթ
Ընդուստ մինչ 'ի դրախտին առագաստէն արտաքսեցայ .

Ո՜հ, զորկեա՛լ 'ի փարելոյդ թափառեցայ 'ի մէջ երկրի,
Ի սիրոյդ ելեալ, աւա՜ղ, գնացի կամաւ առ ատելին,
Յազատչէդ իմ արձակեալ՝ տուամբ նորին ես կապեցայ.
Զիս տարա՛ւ և հարսնացոյց ընդ իւր ուստերց անշունչ կռոց,
Ի կենդանւոյդ իմ լուծեալ՝ ընդ անմռունչս միացայ:
Երբ ըզմեղա՛ց հեշտութեան զքուն նընջէի ես 'ի մահիճս,
Եւ զաչօքըս մածեալ էր մըթին գիշեր անգիտութեան
Կարծէի թէ զոր սիրեաց անձն իմ ընդ իս է նա բնակեալ,
Խնդրեցի խանդակաթօ, ո՜հ, ոչ գտի զքեզ հուպ առ իս,
Կոչեցի և ըզփեսայդ ձայն ինձ ետուր դու ոչ երբէք.
Եւ քո սիրովդ հարեալ՝ զնիրհումն և քուն մեղաց լքի,
Զօղջ գիշեր 'ի փողոցս և հրապարակըս շըրջեցայ:
Եւ այն ինչ ընդ մերձ այգուն երբ արուսեակըդ ծագեցաւ
Հարսնաւէրն Յովհաննէս ինձ աւետիս ետ խընդաւէտ.
Ահա քոյդ արփին փեսայն հուպ է ծագիլ առ քեզ լուսովն:
Լեալ ուրա՛խ՝ անցի փոքր ինչ և երբ գիշերըն մերժեցաւ
Անըստուէր ճառագայթիդ ցոլեաց նըշոյլ ընդ տիեզերս,
Վա՜հ, ըզսիրելիդ գտի անձին իմ 'ի լեառն այսմիկ.
Եւ յաւուր փեսայութեանդ ես հարսըն քո եկեալ հասի.
Արդ կալեա՛լ զքեզ ոչ թողում այլ ևս յինէն մեկուսանալ
Մինչև զիս տարցես անդրէն 'ի հարսնարանդ երկնից սենեակ
Ուրանօր երգեալ ըզսէր՝ ուրախասցուք յաւէրժաբար:

Զայսոսիկ նըկատելով 'ի քեզ այսպէս, ո՜վ Գողգոթա,
Զուարճանա՛մ և իմ ոսկերք ընդ Նախահօրըն ոսկերաց,
Թէ յայս ձա՛յն միշտ երգեցից, որ խնդութիւն է փըրկելոցս:
Այլ յորժամ դարձեալ ուշիւ զխաչեցելոյն գործ նըշմարեմ,
Ո՜վ, 'ստ Ամբակումայ ես զարհուրիմ հիանալով:
Որ համա՛կ զերկին, զերկիր լնոյր անսահման փառօքըն իւր,
Եւ եղելոցըս բոլոր շնորհ պարգևէր գեղեցկութեան,

Կապտեցա՛ւ 'ի ճոխ փառացն և մերկացաւ 'ի խաչին, ո՜հ։
Որ ըզՏէ՛րըն զօրութեանց տեսեր փառօք 'ի տաճարին
Սրբասա՛ց երգով պաշտեալ Թևապարփակ 'ի սրովբէից.
Զի՞ և յայնժամ մինչ յաթոռ խաչին բազմեալ կայր աստանօր,
Դու դիտէ՛ր զնոյն Տէր հոգւով, զկերպըն պատմեա, Եսայիաս։
Ե՛ս, ասէ, տեսի ըզնա յիւր աննըման գեղոյն թափեալ,
Եւ չըքնա՛ղ տիպըն դիմաց անշըքացեալ ամենևին,
Այնպէս անա՛րգ և նուաղեալ քան զամենայն որդւոց մարդկան.
Նըմանեա՛լ աշնանային անշուք ծառոյ տերևաթափ,
Կամ իբրև՛ զարմատ բուսոյ 'ի ծարաւուտ երկրի թօշնեալ
Ի վերա՛յ գետնոյն սըփռի. թափէ զծաղիկս այլագունեալ։

Թողեա՛լ այժմիկ զորդւոյն անճառելի կիրս առ 'ի մէնջ՝
Զդառնագո՛յն կըսկիծ Կուսին և անարիւն նահատակին,
ԶՏեառըն Մօ՛ր առնում երգել, որ առ խաչին կայր թալկացեալ.
Մի՛նչ հայէր յիւր միածին՝ կրէր բիւր մահուն անհընարինս.
Զի հանդէ՛պ խաչեալ Որդւոյն և Մա՛յրն անդէն գտաւ խաչեցեալ
Ոչ փայտիւ, ոչ բևեռօք, այլ սաստկագէր սըրտին խոցով
Նոյնավիշտ և զուգակիր եղեալ Նըմին 'ի չարչարանս։
Ըստ երգո՛յն Ներբողենի Երաժըշտին Ռըշտունեան,
Իբրու որո՛ջ անարատ լինըն 'ի սեղան սիրոյն մատեաւ
Հրով անծա՛խ բոլորանուէր ողջակիզեալ անձնատուչոր
Եկա՛ց կենդանի մըշտաչարչար մեռելութեամբն։
Հայէր և տեսանէր զորդին այնպէս անարգամահ.
Յո՛ւշ բերէր զԳաբրիէլին բան աւետեացըն հեշտալուր,
Զդէպ ժամո՛ւն այն նըկատեալ՝ յանձին հեծէր հառաչելով։
Եւ զի ո՛չ յաթոռ Դաւթին ետես ըզնա նըստեալ արքայ,
Այլ 'ի գա՛հն անփառունակ 'ի փայտ խաչին պըրկեալ անարգ.
Եւ 'ի գլո՛ւխըն գերակայ չէր թագ փառաց ականակուռ
Ո՜հ, ընդ ա՛յն՝ անարգութեան պըսակ եդեալ քըստըմնափուշ.

Որ արփւոյն էր հանգունակ, ըզգիտակին գեղ վայելուչ
Տեսանէր անաւագեալ ձաղկեալ յարփւն ապաժոյժ։
Փշահերձեալ 'ի գըլխոյն կայլակք արեան ծորեալք յորդոր
Ի ծայրից գանգուր հերացն իբր 'ի ծառոց խընկաբերից
Զիւնաթոյր սպիտակ անձամբըն խաղալով ոլոռնաձեւ
Ի վերայ երեսաց Մօրըն կաթէին իբրեւ զմուռս.
Որ ըզխաչիւըն մածանէր 'ի սէր որդւոյն սիրասընունդ,
Ոյր ընդ արեան կարմրորակ Մօրն խառնէին եւ արտասուքն։
Առ խաչին պատուանդանի մերթ թալկանայր ուշաթափեալ,
Մերթ յուշի եկեալ անդրէն պատըսպարէր զինքն 'ի յոտին,
Փարելով հեղուսահերձ ըզվիածնին մերկիկ թաթիւք՝
Համբուրէր շըրթամբքըն իւր կափուցելովք արիւնամած։
Շուրջ կային եւ ողբանուէր պաշտող կանայքն եղերամայր.
Աղաւնին Մարիամ 'ի սիրտ մընչէր հառաչահան.
Ում այնչափ դառն էր մընչիւնս, միայն իւր ձագուն սըրտակցեալ,
Ում յաւէտ ցաւս յաւելոյր, միայն միածնին հոգեհատոր.
Առ որ շըրթամբք տատանեալ՝ ողբս յօրինէր աշխարահեծ։
Արարէ՞ր ընդէս, հըզօր որդեակ իմ, դու ըզմեծամեծս
Անդըստին մինչ ես հոգւով քեզ աղախին խոնարհեցայ։
Մեծութեամբդ անպարագիծ 'ի յարգանդիս ամփոփեցար,
Հուրդ անմերձ 'ի Մովսիսէն ըզմորենիս պահեր անկէզ,
Հայրական ծոցոյն ծընունդ, կըրկին դու ծնար 'ի կոյս մորէս.
Քեզ Արքայք ընծայաբերք խոնարհելով երկըրպագին.
Լուսով ծածկեալըդ անմատոյց, ով, իմ ձեռօք խանձարըրապատ
Յանբանից 'ի մսուր եդար իբրեւ զաւակ աղքատածին,
Դարմանիչ տիեզերաց 'ի կաթանէ մօրս դիեցար։
Տաճարին դուռըն փակեալ բացաւ անդէն քոյդ առաջի,
Գըրգուելովդ 'ի ծերունւոյն՝ արձակեցեր զնա 'ի կապից։
Քեւ թագաւորք թագաւորեն, 'ի յարքայէն Հերովդէսի
Յեգիպտոս փախեար ընդ մեզ եւ շարժեցեր ըզձեռագործսն։

Ընդ քաղաքիդ վերնայնոյ դու բնակեցար 'ի Նազարէթ ,
Կատարեալդ Աստուածութեամբ՝ տիօք ծաղկելով սընար 'ի Նմին ։
Ընդ ձեռինդ ամենագրաւ հնազանդ էին երկին , երկիր ,
Եւ ընդ Հօրդ 'ի հրաբունից փառաւորեալ համապատիւ ,
Ո՛վ , հնազա՛նդ որդի ցուցար աստ Յովսեփայ և Մօրըդ կոյս ։
Եւ 'ի տա՛ն իբրև ծառայ դու ձեռնասուն եղեր 'ի պէտս ։
Կոչո՛ղ ըզհրաւիրեալս 'ի հարսանիս Արքայորդւոյդ ,
Դու սիրո՛վ եկիր ընդ իս 'ի հարսանիսըն երկրաւոր ,
Ուր ըզջո՛ւրն իմ ժըտելով փոխարկեցեր յանոյշ գինի ։
Այսքի՛կ են քո , որդեակ , գործք անքըննին և մեծասքանչ ,
Յոր դիտեա՛լ և խելամուտ լեալ 'ի սրտիս՝ զարմանայի ։
Թողո՛ւմ զանթիւ հրաշից ձեռին քոյոյ Աստուածազօր
Ներգործեա՛լ մարդեղութեամբդ 'ի մէջ ազգիդ քո տիրադրուժ ։
Ես որո՛վք ուրախամիտ լեալ բերկրէի սրտիւ հոգւով
Յե՛ս տեսեալ ըզՏէրդ ըստ հրեշտակին աւետաւոր ։
Այլ ընդէ՞ր այս , ո՛վ որդեակ , զի՞նչ քո այդ գործ վերջին առիս
Անձա՛ռ և մեծահրաշ , զի՞ մարթացից հասու լինել ։
Զհեզութեա՛նդ քո զչափ գիտեմ , բայց անցուցեր քան զպայման ,
Դու արդա՛ր ամենեւին այդպէս 'ի խա՞չ դատապարտիս ,
Դու անմա՛հ գառն Աստուծոյ , ո՛հ , զենանի՞ս 'ի փայտ մահու
Դու արե՛ւ աշխարհալոյս 'ի միջօրէ տիս հասակիդ
Յանկա՛րծ 'ի մուտըս հասեալ՝ նըսեմանա՞ս մահուդ մըթով ։
Դու ծաղի՛կ երկնահոտ , ա՞հ , թառամի՞ս պյլագունեալ ։
Դու 'ի ծնէ՛ կուրին ական նոր լուսատու շնորհիւ Թըքոյդ
Այսօր 'ի ծո՛վ քո աչաց քաղին տակաւ նըշոյլք լուսոյ ։
Դու զբազո՛ւկըն գօսացեալ կենդանական 'ի շարժմանէ
Ջրով արեա՛ն զուարթացուցեալ՝ անդրէն դալար հրաշագործեր ։
Այժմ ընդ ա՛յն 'ի չոր փայտին ըզքոյդ բազո՞ւկըս տարածեր ։
Ո՞ւր երգոյդ սիրահրաւէր բա՛ն առ որդւոյս իմ փեսայի ,
Երևեա՛լդ նորուն 'ի տիպ արքայածինըդ Սողոմոն ։

Չէ՞ 'ի գլուխըն վեհային պսակ կեփաղեայ մաքուր յոսկւոյ․
Հապա զի՞նչ, խայթահար քըստըմնելի տատասկափուշ
Թըլրաթում կուածոյ զվարսիւքըն բոլորեալ պըսակօրէն։
Կոչեցէք, ո՛վ օրիորդք, արդ ըզդըստերըն Սիօնի
Ելանե՛լ և տեսանել յիմ միածին նոր Սողոմոն
Ի զգըլխո՛յն թագ փըշահիւս 'նդ ազնիւ ական գոհարաշար․
Այպէս մայրը իւր Սիօն Եկեղեցին Իսրայէլեան
Պըսակեա՛ց, աւա՛ղ, ըզնա յաւուր նորին փեսայութեան։
Այդ, գիտե՛մ, քաղցր է գըլխոյդ, ոչ քըստըմնիս, ազնիւ որդեակ,
Վաղո՛ւց փափագէիր այդ օրինակ փեսայութեան․
Այլ, գիտե՛ս, թէ քանի՞ սուգ արդ 'ի սըրտիս իմ սաստկանայ
Մինչ այսդո՛յն կամ հրաւիրեալ 'ի հարսանիս խաչապսակիդ։
Որ ի՛նձ հանդերձեալ էք տալ զերանիս, ո՛վ ազգք մարդկան,
Եղո՛ւկ այսօր կարդացէք ցընծացելոյս յԱստուած փըրկիչ,
Որ մեկնի՞ յինէն մահուամբ և խընդութիւն ոգւոյս բառնի։
Արի՛ դու, ո՛վ ծերունիդ գուշակ ցաւոյս իմ անհանդուրժ․
Ե՛կ և կաց ինձ առընթեր, հայեաց 'ի Մայրըս վըշտակիր,
Տես որպէս խորամուխ սուրդ անցեալ ընդ անձն իմ աւասիկ
Մինչ 'ի սիրտըս կարեվէր մըխի, խոցէ դառնակըսկիծ,
Խընդրե՛մ, այլ ոչ բառնայ զկեանս իմ գոնէ հանդեայց մահուամբ․
Լոյս գոլ մանկա՛նս իմ, գուշակէր, հեթանոսաց խաւարասնունդ․
Եւ փա՛ռք անդրանիկ ժողովըրդեանն Իսրայէլի․
Ե՛կն ահա ժամ խաւարին լուսոյն այնմիկ անըստուեր
Նուազե՛լ նըման լուսնին 'ի լրութենէն բոլորափայլ։
Զա՛յն առ քեզ ես արկանեմ, ո՛վ Նախամայրդ իմ դու Եւայ,
Հասի՛ր այսր և կարեկից լեր քո դըստերս Մարիամու․
Կուսակա՛ն ծնընդեամբ թէպէտ ազատ կացի յերկանց ցաւոց
Սակայն ե՛ւս դառնագունի վըշտաց այժմիկ ես դիպեցայ,
Զոր ոչ մա՛յրդ և տըրտմածին դըստերըք քո կրեցին երբէք։
Դու 'ի ծա՛ռըն մահաբեր չոգար չարին հրապուրանօք

Յարգելեալ պըտղոյ Նորին ճաշակեցեր և հեշտացար ,
Քաղցրացան անդէն քո քիմք այլ դառնացաւ աստ որովայնս .
Զի զորդեակըս տեսանեմ վասըն պարտեաց քոյին այսօր
Ի ծառ խաչիս բևեռեալ ընդ քո ձեռինդ ձըգման 'ի պտուղ ։
Այսպէս , ո՛վ սիրամայր անդրանիկդ իմ անախտածին ,
Նախամօրն իմոյ զպարտիս դու հատուցեր անպարտականդ ։
Այլ ինձ Մօրս ողորմելւոյ ձայն տուր այժմիկ , Յիսուս որդեակ ,
Զմէ՞ լռեալ ոչ բարբառիս առ Մայրըդ քո աղէկիզեալ .
Զի՞ սփոփիչ անոյշ լեզուաւդ ոչ լինիս դու սրախոցելոյս ,
Մինչ տակաւ գոյ շունչ 'ի քեզ խօսեաց և տուր զյետին զողջոյնդ .
Ո՜հ , քաղին ահա ոգիքդ գամ քան ըզգամ նըւաղելովդ ,
Եւ մերձ ես իսկ աւանդել զոգիդ քո սուրբ 'ի ձեռըս Հօրդ ։

Շատ է ինձ խաչիս իմոյ կըսկիծ անտար 'ի կըտտել զիս ,
Մի՛ Մայրիկդ իմ այդպիսեօք ես 'ի վերայ դու յաւելուր
Ի ներքուստ աղէկտոր մըրմըքելով հանդէպ որդւոյս .
Ե՛րթ , ծածկիր յաչաց իմոց մի զվըշտահան Մայրդ իմ տեսից ։
Մերըն Հըզօր զքեզ ես ընդիս տանջէ համակ նոյնաչարչար .
Ես 'ի սեղան փայտիս արեամբ , և դու 'ի քո սըրտիդ սիրով
Մայր հանդերձ որդւով այսպէս ողջակիզիլ որոշանման ։
Ես արդ գո՛հ ըզքէն լինիմ վասըն մեծի քո երախտեացդ
Ցուցեալ 'ի ծնընդենէն մինչև ցայսօր բազմապատիկ ։
Հաճեցա՛ր խոնարհ ոգւովդ ինձ աղախին լինել և Մայր ,
Զինն ամիս տաղաւար յարդարեցեր զմաքուր արգանդդ ,
Ընդայեակ 'ի մէջ այրին աղքատակերպ ծնար կուսութեամբդ ,
Զքառասունըս պահեցեր ըստ օրինացըն Մովսիսի ,
Եւ ընդ զոյգ տատրակաց առեալ ածեր զիս 'ի տաճարն ,
Ընդ 'ի ծերոյն գիրկ տըւեալ զազդուշումն առեր սրոյդ անձնամուխ ,
Որ այսօր մինչ ցորոշումն անցեալ՝ շընչոյդ հանէ զոգիդ ,
Զիս բազկիդ վերայ բարձեալ՝ հետի փախեար 'ի յԵգիպտոս ։

Պէս պէս և այլ բազում վիշտըս կրեցեր 'ի սէր որդւոյս ·
Անհանգիստ եղեր յազգէդ միշտ քամահեալ և հալածեալ ։
Կուսական կաթամբդ անոյշ դիեցուցեր մայրօրինակ ,
Հանդերձինս արարեր և զգեցուցեր ինձ աղքատիս ,
Եւ այլով ամենայնիւ խնամարկեցեր սիրողապէս ։
Արդ եհաս և մօրդ իմոյ , որ յետ այսչափ աշխատանաց
Ի վերջին օրհաս ժամու , ո՛հ , այդ վըշտացըդ վիճակիլ ։
Մի՛ սակայն սըրտակոտոր լինիր այդքան , Մա՛յր ցաւակիր ·
Անցանէ՛ օրս առ 'ի մէնջ իբրու թեթև ամպ հողմավար ,
Հանգիցեն լալեք քոյին և Մարեմանցդ ընդ երեկոյս ·
Դու որ զիս արդ տեսանես արևուն պէս մերձեալ 'ի մուտս
Դո՛յ լուսաբեր առաւօտն ես նորահրաշ ծագիմ լուսով
Սեւաթո՛յր քող 'ի գլխոյդ մերժի յայնժամ իբրու զգիշեր ·
Փարատի և տրտմական սուգն 'ի սրտէդ ծանրաթախիծ ,
Եւ սրոյդ վէրք Սիմէօնեան բուժին անդրէն իբր անըսպի ·
Դու լըցեա՛լ ուրախութեամբ զդառնալի ժամս այս մոռասցիս ։
Ո՛չ թողից ըզքեզ երբէք , սէր է անուն իմ , Մարիամ ,
Վայրկ մի մեկնիմ 'ի քէն , այլ երևիմ յետ յարութեանս ։
Արդ ընդ իմ լիցի որդի քեզ հաստատ 'ի բոլոր կեանսդ
Մըտերիմ քոյն Յովհաննէս և աշակերտն իմ սիրելի
Որ առ խաչիւ կայ ընդ քեզ գոլ որդեգիր սիրով Կուսիդ ։

Օ՜ ինչ յետոյ զբան սըրտառուչ դարձուցանէր Յիսուս յերկինս ·
Հա՛յր , ընդէ՞ր այդքան ներէ քո սէր թողուլ զորդիդ ·
Բա՛ւ թէ զքեւ անցցէ դուլթ Մօրն իմ վըշտակից որ հուպ է ինձ ։
Ի Թափօր և Յորդանան դու կըրկնակի վկայեցեր
Ինձ՝ հաճոյ և սիրելի որդի լինել անճառ Ծնողիդ ·
Ո՞ւր և արդ սէր քո առիս , ընդէ՞ր թողեր զիս միայնակ ,
Եւ յինէն հեռացուցեր ըզբարեկամս իմ և ծանօթս ,
Եղէ՛ ես որպէս մարդ մնացեալ առանց օգնականի ։

Արարե՞ր դու զայս ընդ իս թըշուառանամ՝ որդւոյդ այսպէս ,
Յիմ վերայ հաստատեցաւ սըրտմըտութիւն քոյին սաստիկ .
Եւ ցաւօք անհընարին մորմոքիմ յոյժ աստ ՚ի տանջանս ,
Դու այտ անկարեկից լեալ քո որդւոյս և զուարճանաս .
Տեսարան խաչիս իմոյ քեզ ՚ի զբօսանս է համարեալ ։
Զի զենուլ ետուր ՚ի նմա ըզմիածինդ պարարակ եզն ,
Եւ խրախճան կազմեալ յերկինս ուրախանաս թըմբկօք պարուք
Ի դարձումն անառակին սովեցելոյ հացիդ անմահ ։
Ո՛հ , Հայր իմ , մի դու մերժեր իսպառ ՚ի գթոյդ քո և սիրոյդ .
Դարձո՛ զաչըս քո այտի , հայեաց որդւոյդ ՚ի նախատինս ։
Ահա եդին զիս նըշաւակ իւրեանց որդիքն Իսրայէլեան ,
Տեսանե՞ս թէ զի՞ կացեալ ինձ յանդիման շարժեալ ըզգլուխս
Հայհոյեն և բիւրազգի բանըս խօսին ըզկըծանաց ։
Ահա ետուն ինձ կերակուր , ո՛հ , ըզլեղի դառնաճաշակ
Ընդ պարգևաց մանանայիդ տեղացելոյ յանապատին ։
Ահա քացախ ինձ արբուցին ծարաւելոյս ոգւոց մարդկան
Ընդ անոյշ և յորդահոս ջրոյդ ՚ի վիմէն բըղխեցելոյ ։
Ո՛հ լռեր մի լռեր տեսեալ վերուստ զիմ անարգանս ,
Սիրո՛վդ հայրականաւ հայեաց յաղքատս և միամայրս ,
Ապրեցո՛ զիս ՚ի նեղչացս և թըշնամեաց իմոց փըրկեա .
Ո՛հ գուցէ ասասցեն , թէ արդ վաշ վա՛շ անձանց մերոց ,
Զի խաչիւ անկուշելով զնա ընկլուզաք ՚ի մահուն խոր .
Հա՛ն աստի , մի թողուր , Հայր , ձըգմամբ ձեռինդ ամենազօր ,
Յամօթ լիցին թող նոքա , որ զայսոսիկ ինձ հատուցին ։
Ես զՀօրդ իմոյ զհրաման բոլոր սըրտիւ կատարեցի .
Խաչն և եթ էր մնացեալ ինձ յոր արդ կամաւ բարձրանալով
Ահա զա՛նձն իմ ողջակէզ հաճոյական քեզ նըւիրեմ .
Որ ՚ի վե՛ր անուշութեան քեզ հոտ բուրէ ըստ Աբէլին ։
Հայցեմ , զի հաշտեսցիս ընդ քո աշխարհ պատարագաւս
Եւ հայեսցիս քաղցր ակամբդ այսուհետև ընդ արարածս .

Թո՛ղ նաև չարչարողացն իմոց ըզմեղս ներողութեամբդ,
Որ չգիտե՛ն թէ զի՛նչ գործեն՝ նըսեմացեալք առ 'ի լուսոյդ
Ի խորհո՛ւրդ քոյին ծածկեալ ոչ կարացին 'ի միտ առնուլ,
Ջանացի՛ն ըստուեր ածել զ'ի քէն լուսով ծագեալ յաշխարհ
Այսպէս անարգամահ բառնալ ըզկեանս իմ 'ի յերկրէ ։

Քո հայցուած կատարեալ է, ո՛վ հեզ որդեակդ իմ և հնազանդ,
Վարեալդ 'ի մա՛հ կամովին յայդ անըզգամ ժողովրդէն.
Վա՜յ դոցա, որ ոչ ծանեան զփրկող բազուկդ իմ զօրաւոր
Ի փրկե՛լ զդոսին՝ ձըգեալ յաշխարհ սիրոյս 'ի գթութենէ ։
Այլ հատանե՛լ հնարեցան մինչ վերածել դու կամէիր,
Իւրովի՛ յաջոյդ հըզօր թողացուցեալ զինքեանս 'ի բաց
Ի քոյին փրկութենէդ զըրկեալ յերկիր կործանեցան ։
Անմեղի՛դ ըզդատաստան ոչ յամեցից առնել փութով,
Մե՛րձ եմ ես արդար առնել զքեզ առաջի քո դատողացն
Առ այդչափ մըտադիւր ծառայելոյդ մարդկան՝ սիրով ։
Որ ըզքե՛զ չարչարեցին՝ հնասցին արագ իբրև ըզձորձս,
Կերիցէ՛ և ըզնոսին ցեց մեցամէս պատուհասից.
Տա՛ց ըզչարս վաղվաղակի ես փոխանակ գերեզմանիդ,
Եւ պատիժըս մեծամեծս ընդ քո մահուդ անպարտակիր,
Յայդ վիրա՛ցդ արիւնահոս և սըրբեցից ողջացուցեալ ։
Ո՛չ թողից հըզօր ոգւոյդ կալ 'ի դըժոխս վըտարանդի,
Կամ սըրբո՛յդ՝ մարմնով 'ի դիր ապականիլ լուծմամբ 'ի հող ։
Որ յայդ կա՛ս, Մանուկդ իմ քաջ, ձիաւորեալ ես զօրութեամբ
Ա՜ջ, խաղա 'ի ստոր երկրիդ զհետ իշխանին խաւարասէր,
Մո՛ւտ 'ի տուն գանձու նորին, կապեա զհըզօրն աշխարհակալ
Առ զաւարն 'ի գերողէն, դարձո առիս երամովին,
Աւասի՛կ պատրաստեմ նոցա տեղի և օթևան,
Եւ քե՛զ գերեդարձիդ գահ ընդ աջմէ իմ զօրութեան.
Եդի՛ց և զթըշնամիսդ 'ի պատուանդան ոտից քոյին ։

Որ փոքր ինչ խոնարհ ցուցար քան ըզհրեշտակս առեալ մարմնով ,
Բարձրացիս քան ըզնոսա փառօք պատուով դու պըսակեալ .
Իշխա՛ն և Թագաւոր լեցիս հանուր ձեռակերտաց ,
Տիեզե՛րք ամէն ընդ քո ոտիւք կացեալ՝ հնազանդեսցին .
Եւ անո՛ւն շնորհեցից քեզ գեր և 'ի վեր քան զընաւ անուանս ,
Ում երկնի՛ն երկիր ողջոյն ծունր 'ի խոնարհ կըրկնել ելցեն :
Այսպէս , ո՛վ մարտադիր Մանուկդ իմ վէհ և յաղթական ,
Յայդ 'ի խա՛չ վերանալովդ՝ փառաւորեալ լեցիս դու յոյժ :

Հերի՛ք բանիցըս երգ 'ի Գողգոթա գերաշխարան .
Ընկեա՛լ , մանկունք , պատուանդանի խաչին սըրբոյ Քրիստոսաբարձ
Տենչանօք երկրպագցուք իբրև 'ի նմա խաչեցելոյն .
24 Իջեա՛լ աստուստ ապա 'ի վայրըն սուրբ Պատանատեղ ,
Երգեցէ՛ք անդ ըզպատիլըն կենդանւոյն մեռելատիպ
Ի Յովսեփայ արդարոյն , որ Յիսուսի վարդապետին
Աշակե՛րտ էր 'ի ծածուկ և 'ի սըրտին հաւատացեալ .
Հասեա՛լ արքայութեանն ակընկալու յուսովըն մեծ ,
Եւ անմա՛սն 'ի խորհըրդոց նենգաւորացըն տիրասպան :
Մինչ մըտերի՛մքըն Թագուցեալ և երևիլ ոչ իշխէին
Սա և ե՛թ 'ի Քրիստոսի սէր 'ի սըրտին վառեալ յաւէտ
Ե՛լ 'ի դուրս ինքն անվեհեր 'ի բաց եդեալ զահըն Հրէից ,
Փութացա՛ւ յԱրիմաթիայ , մուտ համարձակ առ Պիղատոս :
Գիտե՞ս դու քաջ , ո՛վ իշխան , ասէր բանիւն իւր իմաստուն ,
Զի ապաշնո՛րհ և դառնացող այն ոխերիմ ազգ մեր նենգիչ
Զանմե՛ղն առ նախանձու քեզ մատնեցին իբրև խռովիչ
Զո՛ւր բարուրս կըցկըցելով՝ բողոք բարձին առ քեզ դըպիրքն ,
Լըցին զատեանդ աղաղակաւ , ո՛հ , մահապարտ ցուցին զարդարն ,
Մինչ յաւէտ քո ձանձրացեալ 'ի մահաշունչ նոցին ձայնից
Լըւացմամբ դըքեզ յարենէ նորին քաւեալ՝ ետուր խաչել :
Արդա՛ր էր նա և սուրբ 'ի մէջ որդւոց կանանցածին ,

Անարատ 'ի բովանդակ վարըս կենաց իւր ընթացաւ,
Չեղեւ յանդիմանիչ ոք առ մեղաց ըզնա երբէք,
Ծանուցաւ որդի մարդոյ, այլ ինքն Աստուած էր ճըշմարիտ,
Այսըմ վըկայ են նորա զարմանահրաշ ըսքանչելիք
Ներգործեալ նորին ձեռօք 'ի մէջ երկրիս Հրէաստանի:
Բայց առին կաղքըն նովաւ զերդ եղջերուս քաջընթացիկս,
Լոյս տեսին աչքըն կուրաց, լուան խուլք, համրք բարբառեցան,
Այս հրաշից նորա պէս պէս ականատես եմ, ո՛վ իշխան,
Եւս վասն այն աշակերտիլ նըմին սըրտիւ յօժարեցայ
Մինչև ցայժմ իբր 'ի ծածուկ, այլ յայտնապէս այսուհետև:
Թէ բանիւ իմ դու ըզնա չկարծես լինել Աստուածորդի,
Մի՛ սակայն ըզմըտերմին քոյոյ տեսիլ զուր վարկանիր.
Ում հրաշիւք ցուցաւ յանուրջս և քեզ ծանոյց 'ի զգուշանալ,
Մի՛ մահու վճիռ տալ երբէք և շաղախիլ յարիւն ամբիծ.
Զի բազում անցք առ դորին անցին ընդ իս յայսըմ գիշեր:
Տէր ուրեմն, խնդրեմ 'ի քէն զմեռեալ մարմինն ինձ 'ի պարգև
Պատեցից արժանապէս և յիմ տապան եդից ըզնա,
Սըգալի մօրըն նորա սըրտին ցաւոց դիւր տաց ես գէթ
Որ առ խաչիւըն թալկացեալ աղէկիզի որդւոյն 'ի սէր:
Լըսէր յօժար Պիղատոս կոչէր անդէն զհարիւրապետն,
Զարմանայր ընդ վաղամեռ լինել կամաւ մեռանելոյն
Եւ ընդ մեծ հրաշիցըն դէպ ցուցեալ 'ի ժամ վերջի շընչոյն.
Ուստի սիրով շնորհէր անդէն զայն հայցողին մեծափափագ:
Զի՛ յայնժամ սըրտին ըղձիւք փութայր Յովսէփ ածել ըզկտաւ,
Եւ իշխան Նիկոդիմոս բերել զըմուռս և ըզհալուէ.
Երկոքին Քրիստոսաւէրք 'ի Գողգոթա զոյգ ընթացեալք՝
Սարսափմամբ և դողալով մերձեալ 'ի խաչն Աստուածակիր
Զեղելոյն վասն իմ անէծ առին 'ի վայր զկախեալ մարմինն,
Այր ահա բերին, մանկունք, և ըզվիմաւ տարածեցին:
Առ գըլխովըն կայր Յովսէփ և յոտից կոյս Նիկոդիմոս,

Աստի ուստի Մարեմանքն և Մայրըն իւր ուշակորոյս ։
Ոմն ըղծակեալ ձեռամբ համբուրէր , և ոմըն զոտս հեղուսահերձ ,
Եւ այլ ոմն արիւնամած մարմնոյն ըզվէրս լուացեալ սըրբէր .
Իսկ վըշտալին Մարիամ որպէս անկեալ աղէտակոծ
Ի վերայ դալկահար և գեղաթափ դիմաց որդւոյն .
Ի վերայ լուսանըլաղ և կափուցեալ աչացըն , ո՜հ ,
Ընքաժան առ ՚ի նմանէ խընդրէր լինել անդ ՚ի մահուն ։
Ո՞ տայր նըմա ողջ այնպէս ընդ մի պատան դնիլ ընդ որդւոյն
Կենդանւոյն ՚ի գերեզման թաղիլ երկուցըն գըրկախառն ։
Որ յայրին ընդ հրաշաւոր ծնունդն իւր անախտ հըրճուէր հոգւովն ,
Ի մսուր եդեալ խանձարրապատ՝ մանկիկըն լայր , ինքըն ցընծայր ,
Տեսանէր , աւա՜ղ , ըզնա մեռեալ աստէն իբրև ըզմարդ ,
Խանձարուրին փոխան պատան և ընդ մըսրոյն , ո՜հ , գերեզմա՜ն .
Ինքըն լայր աղէխարշ , ցընծայր ոգւով մեռեալ որդին ,
Որ գնացեալ էր աւարել զգանձըս հոգւոյն ՚ի գերողէն ։
Զի՞ սաստ կոծ և ջայլական ըզՄարեմանցն ասեմ , մանկունք ,
Որ կուսին լեալ ողբակից ըզտարփալւոյն մահ սըրտային .
Յարտասուաց նոցին թափեալ՝ թանայր մարմին ողջ՝ Տէրունւոյն ․
Յո՜ւշ լինէր աստանօր Մարիամու Մագդաղենին
Բա՜նըն սըրտառուչ , որ զհեղմանէ իւղոյն ազնիւ
Ի գլուխ պարտեաց բաշխողին գոլ նըշանակ նորին թաղման ․
Հազիւ ըզգաստըն Յովսէփ զինքն յայրական սիրտ կազդուրեալ
Ողոքէր ըսփոփելով զեղերական դաս կանանւոյն .
Եւ զմարմինն անապական ըստ օրինի զմըռսելով՝
Ի մաքուր պատառակալ եդեալ պատէր զանպարագիրն ․
Որ երէկ ըզՂազարոս ՚ի թաղմանէն կոչէր ՚ի լոյս
Եւ լուծանէր ՚ի նմանէ զերիզապինդըն մահագգեստ
Ինքըն այսօր ՚ի մահացուած , ո՜հ , պատանէր իբրև մեռեալ ․
Որ Աստուած և պարգևիչ անբաւ բարեաց ճանաչէր ,
Եւ իւրաստեղծ արարածոց բաշխէր ըզձիր առատագոյն ,

Եւ ըզձեռըն իւր բացեալ լնոյր բովանդակ ըզտիեզերս .
Ո՛վ, ՚ի ծառայէն պարգեւ խնդրեաց ըզնա Յովսէփ ։
Նա՝ որ զԱդամ զարդարեաց պատմուճանաւըն լուսաշուք
Նոյն եկեալ յաշխարհ առ ՚ի ձեռաց որդւոց նորին
Պատան ընդ այն ըզգեցաւ, ո՜հ, ըզկըտաւ անարգանիւթ ։
Եւ որ նմին անդ ըզհոգի եւ շունչ շնորհեաց կենդանատու ,
Ի մարմնի անշընչացեալ՝ համարեցաւ աստ ընդ մեռեալս ։
Զի նորին անշընչութեամբ շունչ եկեսցէ մեռեալ յոսկերս ,
Որ ՚ի շնորհէ ցամաքեալ՝ սփռեալ էաք ՚ի դաշտ երկրիս
Անդրէն յօդեալք ՚ի մի կենդանացաք նոր հրաշապէս .
Զայս՝ հոգւով ածեալ ՚ի դաշտն՝ ետես կանուխ Եզեկիէլ ։
Ո՛վ գործոյ Աստուածասքանչ յաւէտ ՚ի մէնջ անճառելի
Շունչ շնորհեաց անշընչութեամբն ՚ի կըրկնակի արարչութեանս ,
Ոսկերացըս հողանիւթ՝ կենդանութիւն մեռելութեամբն ։



## ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

# ՆԱԽԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ ԻՄԱՍՏԻՑ

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳՈՑ

ԸՍՏ կանանցն իւղաբերից բարձեալ զիւղ հաւատոյ՝ հրաւիրէ զմանկտին 'ի գերեզման Քրիստոսի ․ ուր զվերջին գործ տնօրէնութե̃ նորին յուշ ածելով՝ ափշի զարմացմամբ ։

Իջանէ Քրիստոս հզօր ոգւովն 'ի դժոխս աւար առնուլ զոգիս մարդկան ․ արհաւրօք ըմբռնեալ իշխանին խաւարասէր՝ խուճապի տագնապաւ և թաքչիլ կամի յերեսացն ահաւոր ։

Ազատիչն զփրկութեան զաջն իւր առ Ադամ և առ բոլոր նահապետս և մարգարէս կարկառեալ՝ խօսի այցելութեան բանիւ ․ և զիւրաքանչիւր նոցին որ վասն իւր գրեալ զգուշակութիւնս 'ի մէջ բերելով՝ աւետիս տայ նոցա ցնծութեան և քարոզէ զյաղթող փրկութիւն իւր ։ Յետ ամենեցուն խօսի առ Դաւիթ և ակնարկէ նմա լինել պարագլուխ ազատեալ դասուցն և հարկանել զտասնաղին օրհնութեան մինչև յերկինս ։

Փոխեալ աստ Հրաւիրակին զեղանակ երգոյն՝ ընդ Դաւթի հարկանէ զուրախալի քնար և զյաղթականին Աստուածահրաշ և փառաւոր հանդէս յարութեան երգէ հռչակելով պէս պէս օրինակօք խորհրդոց նախագուշակեալ ։

Գոհութիւն փառատրութեան առ Հայրն որ յաղթեալ 'ի սիրոյ և 'ի գթութենէ իւրմէ՝ ոչ խնայեաց մատնել զորդին վասն մեր 'ի մահ և տալ 'ի դժնդակ հարուածս տանջանաց ։

Մատուցանէ ապա զնոյն շնորհ գոհութեան առ որդին, որ ոչ շատացաւ մարդ եղանիլ միայն 'ի Կուսէն, այլ և անբաւ հեզութեամբն տարաւ այնչափ վշտաց դառնութեան, զորս մի մի վերստին յիշատակեալ՝ վերջացուցանէ ։

# ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

## ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՒՂԱԲԵ՛Ր ընդ սուրբ կանանց լի բարձեալ մեր զիւղ հաւատոյ
Մի՛ նիւթական 'ի յանօթ, այլ 'ի սրտի սիրապատար ,
Ո՛ն , մանկունք , արդ 'ի պարտէզըն Յովսեփայ ելցուք աստի .
Ուր նըստեալ առ քնարանի նոր Յուդային առիւծանինչ՝
Երգեցից անտանօր զԹաղումըն սուրբ անապական ,
Ըզփըրկչին իջումն 'ի յայց , զազատութիւն գերեալ հոգւոցն .
Մինչև ձայն ինձ աւետեաց հընչեցուսցէ զուարթունն երկնից ,
Թ՛է յարեա՛ւ խաչեալն Աստուած , դու զձայն փոխեա տըխուր քնարիդ ։
Զ՛իս յաւէտ աստ պաշարէ մեծ զարմացումն ափշեցուցիչ
Զանքըննին վերջին այս գործ տեսանելով իմ Տէրունւոյն ։
Որ բո՛ւռն էր և ահաւոր քան զԹագաւորս հանուր երկրի ,
Եւ զոգիս գոռ իշխանաց քաղէր ձեռօք իւր հրամանին .
Պակասեա՛լ ինքն 'ի հոգւոյ և Թաղեցաւ իբր անկենդան ։
Որ ճաճա՛նչ և ճառագայթ էր ճըշմարիտ փառացըն Հօր ,
Եւ հայելի՛ անարատ Նորին կամացն ազդեցութեան ,

Մարմնո՛յն աղօտացեալ՝ մուտ զօղեցաւ 'ի ստուեր շիրմիս ։
Լո՛յսն անվայրափակ , ուր ոչ բաւէր սահման երկնից ,
Ի՞բր 'ի նսեմ յանձուկ վայրիս ամփոփելով պարագրեցաւ ։
Ծնո՛ւնդըն Հօր , որ 'ի քաղցրիկ ծոցի նորին օթագայէր ,
Անորի՛շ 'ի նմանէ եկաց մարմնով 'ի ծոց երկրիս ։
Որ ըզգիրըն եօթնակնիք գառըն զենեալ՝ եբաց արեամբն ,
Եւ զանիծից դատակնիք եղծ խաչիւըն փրկական ,
Մատանեա՛ւ Քահանայից , ո՛հ , կընքեցաւ ինքն 'ի վիմիս ։
Որ զաշխա՛րհ և զԻսրայէլ միշտ պահպանէր անքուն ակամբն
Ռա՞բէ , 'ի զինուորաց պահպանեցաւ անկապտելին ։
Վէ՛մն ընտիր միացուցիչ երկուց կողմանցն որոշելոց
Անարգեա՛լ 'ի շինողացըն թագուցաւ ընդ նոր վիմաւս ,
Զածին յուշ պանդըղ ոգիք , թէ լինելոց է գլուխ անկեան ։
Կենարա՛ր բանիւըն իւր անմահութեան հոտոյն բուրիչն
Անուն նորին իւղ թափեալ , զոր օրիորդք մաքուր հարսին
Սիրեցին և ընթացան ըզհետ հոտոյն փափագելով ,
Յեւղանո՛յշ խընկեցաւ 'ի սուրբ կանանցն արտասուալից ։
Ա՜յն , որ յարգանդի Կուսին եկաց Աստուածութեամբն ,
Նոյն և 'ի կո՛յս տապանիս մարմնովըն իւր անապական ։
Զայս եցոյց կանուխ ճըշգրիտ բան արդարոյն համբերատար .
Կենդանին յաւիտենից գընաց ինքնին 'ի գերեզման ,
Ի տապանի՛ տըքնեցաւ արթուն բնութիւն Աստուածային ։
Իսկ հոգւո՛յն ամենազօր էջ 'ի ներքին բանտըն խաւար ,
Քաղցրացա՛ն 'նդ ոտիւք նորա հեղեղատին խիճք դըժոխոց ,
Եւ բացա՛ն առաջի դրունք ամրափակ յաւիտենից ,
Գեհեհա՛ն , աւարառուն եմուտ 'ի ներքըս համարձակ ։
Արհաւրօ՛ք անհընարին անդ ըմբռնեալ իշխանն դիւաց
Խուճապէ՛ր տագնապաւ , կամէր թաքչել 'ի յերեսացն
Ահաւո՛ր ամբաւազօր և խաչադրօշ Զօրագլխոյն .
Եւ զերդ ո՛ձ սողեալ աստ անդ՝ չոյտ ծակամուտ լինէր 'ի խորշս ։

Որ 'ի ստուե՛ր մահու նըստեալք հառաչէին հանապազօր ,
Ի միջի տեսլին յանկարծ լոյսըն պայծառ խաւարամերժ .
Եւ զա՜յն ազատիչ եկեալ հասեալ 'ի փըրկութիւն ,
Զոր յԱդամ նախ կարկառեալ՝ ձայն արկանէր Արարչագործն ։
Մի՛ և այժմ իբրու յայնժամ Թաքչիր յինէն ընդ Թըղենեաւ
Պատկառեա՛լ ամօԹերես , ո՛վ Նախաստեղծդ իմոյ ձեռին .
Արի որ վաղ նընջես աստ , ել և կանգնեաց 'ի մեռելոց ,
Եւ արե՛ւ լուսաբեր քեզ յայտնեցայ արդ 'ի բարձանց ։
Հերի՛ք եղև գեղեցիկ ձեռակերտիդ իմոյ այդչափ
Ի վայրիդ խաւարակուռ՝ կալ փոխանակ դըրախտին փառաց ,
Ուրանօ՛ր յաւէժ լուսով իմ ցընծացեալ զուարճանայիր ։
Եւ բոլո՛ր քոյդ ըզպարտիս վըճարեցի սիրողաբէս .
Ընդ զպտո՛ւղ ճաշակելոյդ՝ անսուաղ մնացի զքառասուն օր .
Ընդ անիծի՛ց քըրտանց և փշոց , որ զքեզ անխնայ տարժանեցին ,
Բըրտնեցա՛յ վաստակելով՝ շըրջեալ յերկրի տնօրինաբար ,
Եւ զանիծի՛ցն այն ըզփուշ բարձի յիմ գըլուխ իբրու զծաղիկս ։
Դու սփածո՛ր մաշկեղինօք ընդ լուսանիւԹ պատմուճանին
Յերկի՛ր վարեալ 'ի դըրախտէն՝ Թափառեցար Թըշուառայեղց ։
Եւ Թափեա՛լ սիրով քոյին յերկնից փառացն իմ ընտանի
Զծառայից կերպ ըզգեցայ ընդ հանդերձիդ քո մաշկեղէն ,
Անդրագո՛յն և քան ըզքեզ պանդըխտեցայ աղքատ կենօք ,
Թողու՛մ զայս և քո յորդուոց մերկեալ՝ 'ի խաչ բեւեռեցայ ։
Ե՛կ հապա մուծից անդրէն ըզսիրելիդ 'ի քո սենեակն ,
Ըզմերժեա՛լդ յերկրաւորէն 'ի լուսատունկ երկնից 'ի դըրախտն .
Ուր զիմեա՛ց վաղ քան ըզքեզ ինձ խաչակից գող աւազակն ։
Ընդ գըլխո՛յդ տիրականի ընԹա դու , ով օձինաշարժ ,
Որ 'ի ծա՛ռըն վաղեցեր , Եւայ խաբեալըդ նախադոյն ։
Ողջ հարո՛յց քոյդ ըզպարտիս զաւակդ ամբիծ կոյս Մարիամ ,
Ծնանելո՛վ անախտաբար զիս՝ մայր եղև նա կենդանեաց
Բանաւո՛ր սեռից մարդկան , որ յարենէ չեն ծնանելոց

Այլ Աստուծոյ հրաշապէս մըկըրտութեամբն առ 'ի Հոգւոյն ։
Ես մարմնոյս գարշապարօք առեալ 'ի քո կոյս դըստերէդ
Կոխելով ջախջախեցի ըզգլուխ օձին դարանագործ ,
Որ պըտղովըն ցանկատես Աստուած լինել գքեզ յուսացոյց ։
Պարծի՛ր դու և բարձրացի՛ր օրհորդիդ խոնարհութեամբ ,
Որ ծնաւ զիս կոյս յարդանդէ և որդ փըրկիչ քեզ առաքեաց ։
Տիպ ճըշգրիտ քաջ Հովուիս , Աբէլ արդար սիրող խաչանց ,
Մատուցո՛ղդ հաճոյական զոհ 'ի գառանցդ անդրանկածին .
Սիրեցի և ես հովիւ լինել հօտին իմ բանաւոր ,
Ի վե՛ր թողի զանմոլարն և զհետ իջի կորուսելոյն ։
Ո՛հ , գտի զայն 'ի Գողգոթայ՝ ես գառն անմեղ զենեալ անդէն
Յեղբարցն իմ ընտանի որպէս և դու՛ հարազատէդ ։
Թափեալ արեանըդ գոչումն յերկրէ բողոք ամբարձ առ իս ,
Հասեալ կամ այսր աւադիկ ընդ քեզ ընդ այն դատ առնել այժմ.
Վասն արդարոյդ եմ եկեալ՝ եւ դու թող նա մնասցէ ասաէն ։
Թաղծելո՛յն կարի սըգով ընդ կըրսերոյն մահուանն անպարտ ,
Մխիթարիչ որդի եղեալ , Սէթ , նախահօրդ 'ի կերպարան .
Համատիպ քեզ՝ Ադամայ և ես որդի ծնայ բերկրութեան
Պատկերի նորին ըզկերպ յիս բերելով ճըշգըրտապէս ։
Ջեռն 'ի ձեռն տըւեալ ելէք ընդ Ենովսայ նահապետին
Որ անյուսի՛ցն 'ի միջի միայն յուսացաւ կոչել ըզՏէր ,
Լուսոյ յերկնուստ և աւասիկ՝ հասի ես նմին յայցելութիւն ։
Ա՛ռ ընդ քեզ և զողջ քո զարմս որդի գըրեալդ Տեառն Աստուծոյ ,
Որ երբէք ոչ թիւրեցան 'նդ մարդկան դըստերս Կայինազարմ
Այց 'ի միջո՛յ որոշել իբրև զօդիս յայծեաց՝ եկի ։
Դու միա՛յն մարդ երեւեալ ընդ մէջ մարմին եղեալ մարդոց
Օրգի՛ Աստուածատիպ անեղծ 'ի քեզ պահեալ յաւէժ ,
Կուսանէր արդարաճոխ Նոյ կատարեալ 'ի մէջ ազգիդ ։
Հանդուցի՛չ եղեր անդէն յանարժան գործս աշխատելոցն ,
Եւ կազմելո՛վդ ըղտապան՝ յուցար քարող ամբարըշտացն .

Որ զբանիւքդ այպանելով՝ աւա՜ղ, քեզ ոչ հաւատացին,
Ջրով սուզմամբ պատուհասեալ՝ անապաշաւ կորեան յանդունդս .
Վրիպեցա՛ն ՚ի կենաց օրհնեալ փայտին արդարութեան,
Որ քե՛զ յուսացողքդ փրկիչ եղեւ ազատութեամբն,
Անյուսի՛ցն անարգելոց դատապարտիչ և պատուհաս ։
Քառակո՛յս և իմ՝ զտապան հրաշակերտեալ չարչարանօքս
Ի Գողգոթա՛ կանգնեցի դու հանդուցիչ ամենեցուն,
Որ նորի՛ն բացեալ թեւոց առ հովանեօք պատըսպարին,
Եւ յենո՛ւն ՚ի նա յուսով իբրեւ ՚ի նմին խաչեալս Աստուած ։
Որ յայնժամ ՚ի հեղձմանէ ջուրցն ապրեցար դոյզըն լաստիւ,
Փրկութեա՛ն փայտիւն իմ արդ զերծիր յերկնից ազատութիւն,
Ի ծովուդ անդընդախոր, ուր սուզեցաւ վիշապըն մեծ ։
Զհայրենի՛դ յօժար թողեալ՝ պանդուխտ շըրջիլ եկեր վասն իմ,
Կորուսե՛ր և զտուն հօր քո առ միայնակ զիս գըտանել,
Աբրահամ սիրահարուստ և լի յուսով քաջահաւատ .
Ահա զոր դու՛ հայցեցեր՝ արար Հայրն իմ սիրողապէս՝
Պատրաստեա՛լ զիս ողջակէզ ընդ սիրելոյդ Իսահակայ .
Ամբարձե՛ր զաչըս քոյին աստուստ ՚ի լեառըն Գողգոթայ,
Տեսե՛ր զիս յանսաղարթ ծառոյ խաչին զի՛ կախեալ մերկ .
Որոյ տի՛պ ցուցաւ արդէն անբան խոյիւն ՚ի Սաբեկայ
Քե՛զ ցանկացողքդ տեսանել զօրն իմ փրկական ։
Ես քո՛ եմ շառաւիղ զաւակ ծընեալ առ ՚ի զարմէդ,
Ինե՛ւ օրհնի՛ն ազի՛նք, որ հանդերձեալ են հաւատալ ։
Աւա՜ղ, զի քո որդիք անհարազատ ՚ի բնութենէդ
Զիս ըզհե՛ւրս Տէր հրեշտակաց ոչ ընկալան իբրեւ ըզքեզ ։
Վարեցա՛ն ընդ իս իբրեւ ընդ օտարի և թըշնամւոյ ։
Դու զենո՛ւլ ըզմիածինդ ոչ խնայեցեր վասըն սիրոյս,
Զիս նոքի՛ն այնչափ ատեալ մինչ ՚ի մահու փայտի զենին ։
Արի՛ օ՛ն ընդ Սահակայ բազեաց յերկնից արքայութիւն,
Բա՛ց անդէն ըզգօգ քոյին դու ընդունակ արդար հոգւոցն,

Ոյք ահա՛ դիմեալ առ քեզ գա՛ն քառանկիւն ծագաց յերկրէ ·
Թո՛ղ որդիքդ անհաւատ ելցեն խաւարն 'ի յարտաքին ։
Հե՛զ և ընդասուն Յակոբ օրհնեալդ 'ի Սահակայ ,
Իսրայէ՛լ կոչեալդ յինէն ընդ ժուժկալելդ գօտէմարտիւ ·
Դու զինե՛ւ պինդ փարեցար ուժով ձեռինըդ հաւատոյ ,
Բայց ըզփա՛ռս պըլում ազգի Թողուլ երբէք ոչ կամէիր ։
Ո՛չ հանդոյն քեզ բուռն հարին զինէն որդիքըդ Թուլադոյն ,
Թողի՛ն , աւա՛ղ , զիս 'ի բաց ւետուն զօգուտս օտարոտւոյ ,
Ոյք ինձ փա՛ղ ըստ գուշակմանդ ակընկալեալ ըսպասէին ։
Կորիւն եմ ես առիւծու Նըման որդւոյդ քո Յուդայի
Ի Նորին շառաւիղէ վերընձիւղեալ առ 'ի Կուսէն .
Ելի՛ և բազմեցայ 'ի քառաթև գահն իմ փառաց ,
Իջի՛ անդուստ 'ի շիրիմ , ուր արդ Նընջեմ առիւծանման ։
Կապեցի զորթոյս ճըշդրիտ՝ զէշն՝ ազգիդ քո զհաւատացեալս ,
Եւ զգընդակէն յաւանակ զեկեղեցին հեթանոսաց ։
Լուացի և զպատմուճան մարմնոյս անաղտ յարիւն գինւոյ ,
Զուարթացա՛ն աչք իմ սիրով՝ հայել 'ի քեզ արդ փըրկութեամբ ։
Զարթի՛ր դու և առ ըզգըլուխդ 'ի վե՛ր՝ Նայեաց յիմ տուն Բեթէլ .
Տե՛ս կազմեալ քեզ անտանօր Խաչն իմ սանդուխք յերկրէ յերկինս .
Փութացի՛ր և ել ընդ այն , մուտ յանկասկած 'ի հայրենին ,
Զերծի՛ր ոչ յԵսաւայ , այլ անողոք 'ի բանսարկուէն ,
Սիրուն աղնիւ և գեղեցիկ Յովսէփ ընտրեալդ 'ի մէջ եղբարց ,
Ցանկալի ծնողիդ աչաց՝ եղեալ Նըմին ցուպ ծերութեան .
Ընդ իս ե՛ւս Նախանձեցան որդիք հօր քո իբրև ընդ քեզ ։
Հաց կենա՛ց 'ի Հօրէն առաքեցայ Նոցին յերկնուստ ,
Որոնեա՛լ ըստէպ ըստէպ 'ի մէջ դաշտին Հրէաստանի
Խընդացի յուսապատար մինչ ըզնոսին գըտի ողջամբ ։
Իսկ Նոքին տեսեալ հեռուստ կորուսանել զիս խորհեցան ,
Բամահեա՛լ զկենաց հացիւս , ո՜հ , կապտելով զիս կապեցին ,
Զպատմուճա՛ն մարմնոյս իմոյ ծաղկեայ գեղովին կուսական

Ո՛չ անբան ուլուն այծի, այլ իմ արեամբ թաթաւելով
Կախեցին մերկ ըզփայտէ, ետես Հայրն իմ ողբաց վերուստ.
Ո՛չ և նման քեզ կենդանեացն վաճառեցին 'ի յԵգիպտոս,
Այլ սպանեա՛լ ձեռօք իւրեանց, ա՜հ, իջուցին 'ի մահուն գուբ.
Ուստ 'ի վե՛ր իւրովի մերձ եմ այժմիկ ես ելանել,
Դու ե՛ւս կալ զիմ ձեռանէ և ել 'ի գբոյդ անդընդային.
Զ.ի քե՛զ այցելութիւն իջի այսր ես իբրև յայնժամ
Ի բանտէդ խաւարաչուին յարև կենաց հանել ըզքեզ
Տէր կարգել՝ ո՛չ Եգիպտոսին, այլ երկնագահ արքայութեանն.
Ուրանօր թագաւորել քեզ է ընդ իս յաւերժապէս.
Մովսէս ծառայդ իմ հեզ, ո՞ւր ես, առ իս եկ խայտալից
Մի՛ սարսիր յինէն դողմամբ որպէս անդէն 'ի Սինէ լեառն.
Մեղմացա՛ն դէմք իմ ահեղ տնօրէնութեամբըս մարմնաւիկ.
Նո՛յն անեղածին Էնն եմ 'Քորէբ քեզ երևեալ
Բոցով հրո՛յ 'ի մորենւոջ հրաշիւք պահեալ յինէն անկէզ.
Ընդ և ե՛թ 'ի յայց իջի չարչարելոցն 'ի յԵգիպտոս,
Ըստ 'ի հանո՛ւրց աշխարհի և խաւարաւ կաշկանդելոցդ.
Հօ՛ւր 'ի ցասմանէ Հօր բորբոքեալ յոյժ զօրութեամբ
Մինչ նեղքի՛ն 'ի դժոխս իջի այսպէս յերկնուստ կայծակնաթափ
Այրե՛լ և ճարակել զտուն հըզօրին շինեալ ամուր,
Եւ անլո՛յծ կապեալ ըզնա՝ զաւար նորին գերփել բոլոր.
Գերահրա՛շ է եղանակ, նոր փըրկութեանս իմոյ, Մովսէս,
Թէպէտ ա՛ստ իշխանաբար բուռըն ձեռամբս Աստուածազօր,
Այլ յերկրի՛ անոյժ մատամբըս մարդկային ծառայապէս.
Դու յինէ՛ն պատուհասիչ Աստուած եդար Փարաւոնի,
Նորանօ՛ք զարմանազան ափշեցուցեր զողջ Եգիպտոս,
Խուճապա՛ւ հաներ անտի զազգ Յակոբեան յազատութիւն.
Եւ Աստուա՛ծ՝ հանդոյն մարդոյ երևեցայ խոնարհակերպ,
Չէ՛ր ընդ իս հարուած, պատիժ, այլ քաղցըր սէր և հեզութիւն,
Ընդ խաւարի՛ն շօշափական՝ լոյս աշխարհի ծագեալ վերուստ,

Ընդ կարկտոյն անասնածախ՝ ցօղ զուարթարար վերայ սիզոյ
Ընդ հրեշտակին սատակիչ՝ տիեզերաց կենդանաբաշխ։
Խաչն եղև իմ գաւազան, Նովիմբ հարի զհին Փարաւոն,
Եւ հերձեալ մահուն ըղծով՝ դիւր ձեզ շաւիղ բացի յերկինս։
Ե՛լ 'ի չարատանջ յԵգիպտոսէդ յազատ վիճակ.
Որ անճաշակ մնացեր դու 'ի յԱւետեաց երկրին բերոց,
Մուծանեմ ըզքեզ ահա 'նդ երկրաւորին յանանց բարիսն։
Հետևողդ Մովսիսի և քան ըզնա ցուցեալ յաղթող,
Անուանակիցդ իմ Յեսու պարտիչ ազգին Ամաղեկայ
Տարածմամբ աղօթանուէր առիս բազկացըն Մովսիսի։
Նմին նըման և իմ եղեալ մարմնով 'ի բլուրըն Գողգոթայ
Ի վերայ Թևոց խաչին, որ յենարան եղև ինձ դիւր,
Զբազուկս իմ պարզի յաղերս առ հաշտութեան Հօրն ընդ մարդիկ.
Եւ զինու վառեալ՝ անդուստ իջի յայս դաշտ իբրու ըզքեզ
Խորտակել ըզզօրութիւն արդ անմարմին Ամաղեկայ։
Այլ զինչ աստ գանգատ բերից այն քո զազգէն Թերահաւատ.
Զմեծակոյտըն քաղցրային՝ ձիր Աւետեաց երկրին պարարտ,
Զոր ուսով բարձեալ բերէր ճաշակ առնուլ քմացն անըզգայ,
Առին արդ մերժող ոգիքն և 'ի ծակէ խաչին կախեալ
Ճըմլեցին քարաձիգ որպէս ըզքեզ անդ 'ի բանակն,
Եթէ ոչ ամպով փառաց պաշտպանէի շուտ առ վրանօք։
Չիմացան խելաթափքն եթէ պարգև էր այն վերուստ,
Որ քաղցրախորժ ճաշակմամբըն հաղորդ առնէր երկնից բարեաց։
Դու սակայն որ զօրացեալ եղեր յուսով անտարակոյս,
Խրախուսեալ և զԻսրայէլ մուծեր յերկիրըն կաթնաբուղխ,
Ժառանգող եղեր նըմին յորմէ չուառքըն զըրկեցան.
Արժան է քեզ և արդէն ժառանգ լինել երկնից բարեաց.
Ե՛լ ուրեմն այտի մուտ անդր 'ի վայելել յաւէրժապէս։
Որ ձայնիւըդ նըւաղեալ զիս կոչէիր դու անձանձիր.
Արի, Տէր, փըրկեա զգերեալքս և մի մերժեր ըզմեզ իսպառ,

*Ողորմեա՛ մեզ, ո՜վ Աստուած, օրհնեա և ցոյց զերեսըս քո,*
*Աւասի՛կ հասի առ քեզ, Դաւիթ, հայրիկդ իմ ըստ մարմնոյ։*
*Այս Թախանձ աղաչողիդ շարժեաց ըզգութ սիրոյ Հօրն իմ,*
*Զի ըզԻա՛ն իւր առաքեաց բուժել զաշխարհ ախտից ոգւոց։*
*Հանդերձեա՛լ են տեսանել ըզփրկութիւն իմ ծագք երկրի,*
*Իշխա՛նք և Թագաւորք խոնարհելով երկըրպագել*
*Ծառայե՛լ ինձ երկիւղիւ և համօրէն ազգք և ազինք։*
*Ո՜հ, ապառո՛ւմըն Յակոբ չետես միայն զիմ փրկութիւն,*
*Զդէմս դարձո՛ց, Թիկունըս ետ և զաչըս իւր կափոյց յինէն,*
*Արա՛ր զայն ամենայն, զոր դու կանուխ գուշակեցեր։*
*Թագո՛յց 'ի նանիր ինձ որոգայթ խարդաւանօք,*
*Եւ 'ի զո՛ւր տարապարտ զիս նախատել բերան եբաց։*
*Հատո՛յց չար ընդ բարւոյ, սիրոյս փոխան զատելութիւն,*
*Խորհեցա՛ւ անժառանգել զանձն իմ յորդւոց 'ի մարդկանէ։*
*Ծակեա՛ց զոտս իմ և ձեռս, ո՜հ, պիրկ 'ի փայտ և սեւեռեաց,*
*Զարդարիչըս մերկացոյց և խայտառակ եհան 'ի խաչ։*
*Ե՛տ 'ի կերակուր ինձ ըզլեղի դառնաճաշակ,*
*Արբո՛յց ծարաւելոյս քացախ փոխան ջրոյն անուշակ։*
*Ի փայտէն իջուցեալ 'ի գբի ներքնում ետ խաւարին,*
*Որովա՛րդ եկի հանել զքեզ խոր 'ի գբոյդ տառապանաց։*
*Ե՛լ 'ի վեր, ո՜վ ցանկացող դու փրկութեան Աստուածորդւոյս,*
*Թող իջցե՛ն այդըր նոքա, որ զայսոսիկ ինձ հատուցին։*
*Հա՛ր այժմիկ ընդ առաջ իմ և նըւագեա գեղգեղելով*
*Զտասնաղիդ քո օրհնութեան լեալ պարագլուխ ազատելոցն։*
*Չեւ այգո՛ւն հասելոյ ժամ է զարթնուլ ինձ առիւծիս*
*Զպահպան գո՛ւնդըս զինուորաց պակուցանել մռընչելով.*
*Եւ կենդանի՛ երևիլ, որ գողացեալ համբաւեցին.*
*Իսկ դու հա՛ր մինչ 'ի յերկինս և անդ լըռեա, հարցեն հրեշտակք։*

*Աստ ահա փոխեմ, մանկունք, և ես երգոյս իմ զեղանակ,*

Հարկանե՛մ ուրախալի զԴաւթեան քընար աւետաւոր ,
Յարեա՛ւ Աստուած փառօք , որ սիրտ արթուն նընջէր յերկրի ,
Ցըրուեցա՛ն իւր թըշնամիք դատապարտողքն ըզնա 'ի մահ :
Ծափս հարէք , ո՛վ հեթանոսք , և ցընծացէք դուք առ Աստուած ,
Օրհնեցէք , որ եւ թևօք խաչին իւրոյ ինքն 'ի բարձունս ,
Ա՛ռ զաւարն 'ի գերողէն՝ դարձոյց եհան 'ի հայրենիս :
Վասն որո՛յ յաղթանակին հընչեմ ըզփող մեծաբարբառ .
Նոր Յեսո՛ւն Փըրկիչըն մեր արկ 'ի կործան զհին Երիքով ,
Տապալեա՛ց անկանգնելի զամուր պարիսպըս նորին վայր
Ահարկո՛ւ ձայնիւըն իւր , որ 'ի խաչին անդ արձակեաց :
Վեհն իմ Մովսէս հրաշարուեստ գաւազանաւըն խաչանիշ
Պատառեա՛լ մահուն ըզծով՝ հորդեաց որդւոց մարդկան շաւիղ .
Սուզեցա՛ւ հին Փարաւոն և գոռ իշխանն աշխարհական :
Եւ բա՛ց նորագոյն մեզ ճանապարհ ազատութեան ,
Որ ո՛չ ևս տանի դըժուար ընդ անապատ Սինէական ,
Ուր կարօտ հացի և ջրոյ կրէր տըրտընջող հինն Իսրայէլ .
Ո՛ւր հապա , 'ի Սիոն վերին , յոր ցընծութիւն է հոգեպէս .
Անդանօր Ահարոնի քոյրն ըզթըմբուկն առեալ 'ի ձեռն
Պարագլո՛ւխ լեալ կանանց երգէր նըւագ սուրբ օրհնութեանն .
Իսկ աստէն ընդ ընկըղմիլ Փարաւոնին աներևոյթ ,
Մարիամ Մագդաղենի , որ խանդակաթ էր նազելոյն ,
Դասագլո՛ւխ եղեալ կանանց իւղաբերից տըրտմազգեցեալ
Աւետեա՛ց հընչէր ըզնուագ 'ի պարտիզին տեսեալ ըզՏէրն :
Ուր այնի՛նչ խանդաղատեալ փարիլ կամէր զոտիւք սիրոյն
Ո՛չ թողոյր ըստ առաջինն մօտիլ մարմնոյն փառաւորեալ .
Ե՛րթ , ասէր , վաղագոյն դու առ եղբարսն իմ թափառեալ ,
Ասա՛ , զի փութասցին 'ի Գալիլեա զիս տեսանել
Չե՛ւ ելեալ ինձ առ Հայրն իմ զկարօտ իւրեանց առցեն յինէն :
Զուարթո՛ւնն , որ 'ի ծնընդեան հովուացըն տայր մեծ աւետիս ,
Նոյն և արթո՛ւն զգաստից կանանց հընչէր յայգուն տարփողելով .

Ո՛չ 'ի լուր նախ ուստերց, այլ դըստերացըն Եւային,
Յարեա՛լ, ո՛վ դուք յաւէտ խաչեցելոյն լեալք սիրակաթ.
Աստ եկեա՛լ՝ կենդանւոյն խնդրակք լինիք իբր ընդ մեռեալս,
Եւ լա՛յք դառնապէս զայն, որ սըրբեաց մարդկան զարտօսր։
Սուգ սըրտի՛ն ձեր թախծալից թող փոխեսցի յուրախութիւն,
Սըրբեսցի՛ն յաչաց կաթիլք, որ առ խաչիւըն ցօղեցիք։
Սըգաւո՛րըն Մարիամ խոցեալն 'ի սուրըն խորամուխ
Յարութեամբ որդւոյն անդէն սըրոյն խոցուածքըն բուժէին։
Հօտ ցըրուեա՛լ ոչխարացն ընդ քաջ Հովուին 'ի հարկանիլն
Աւետեօք Մարիամու դարձեալ 'ի մի ժողովելով՝
Խընդալից եղեն յոգիս ամենեքին յուսապատար։
'Նա՝ յուշ բերեա՛լ անտանօր զՎարդապետին կանխագոյն ձայն.
Ես թէպէտ մատնեալ կամաւ 'ի ձեռն ազգին այն դըժկամակ
Մեռանիմ անպարտաւոր բիւր կըտտանաց տարեալ ժուժեալ.
Այլ և յետ երից աւուրց յառնեմ կանգնիմ ես կենդանի
'Նորահրա՛շ մանկութեամբ նոր նորոգեալ արծւոյն նըման.
Գերարփի՛ն լոյս համափիւռ ցօղեալ 'ի ծոց շիրմիս երկրի
Թագմա՛մբ երեքօրեայ ծածկեաց յիւրմէն ըզշառաւիղս.
'Նշուլիւք Աստուածահրաշ դարձեալ 'ի վեր ցոլանալով
Զուարթաբե՛ր արշալոյս նոր ծագեցաւ արևացայթ,
Փարատեա՛լ մերժեցաւ մութն և ըստուերն աշխարհապատ։
'Նըմա՛ն փախուցելոյ մարգարէին այն Յովնանու
Տէրն Եւս եկաց յորովայն կիտին 'ի խորըս դըժոխոց.
Սրաժանիք ուաշխարհակուլ բերան մահուն լայնաբացեալ
Ըմբռնել ոչ զօրեաց զօրէն մարդոյն առաջնաստեղծ
Կլանելոյն առ 'ի նմանէ ծնընդովքն 'ի մահ յաւիտենից։
Եւ զի ո՛չ 'ի յանապատն եգիտ բնաւին ըզբիծ մեղաց
Իշխա՛նըն աշխարհիս, որ ընկեցաւ Խաչիւն արտաքս.
Այլ բազո՛ւմ և ընդ նըմա զմարդկան ոգիս տըւեալ աւար
Հութափեա՛լ եթուք 'ի դուրս յորովայնէ խոր դըժոխոցն։

Հօր որսո՛րդն ամենարուեստ 'ի ծովն անտակ վաստակելով՝
Կուսակա՛ն դոյզըն խայծիւ մարմնոյն իւրոյ ըղկէտըն մեծ
Ըմբռնեա՛լ իբր 'ի կարթի և սատակեաց խաչին սլաքաւ ։
Որ բանիւ տեսանողին երդնոյր 'ի յանձն իւր կենդանի
Շօշափե՛լ յաւուր միում զըստորին վայրըս դըժոխոց ·
Նաւի՛կ զօրեղագոյն զաջն իւր ձըգեալ զբանն 'ի վերուստ
Շօշափեա՛լ և զըռամբ էած ըզմեծ վիշապն՝ և պատառեալ
Ի վաղո՛ւց կլեալ զոգիս հան 'ի փորոյն ողջամբ 'ի դուրս ։
Յուդայեա՛ն 'ի մեծ զարմէն յաղթեաց Առիւծըն հըզօր ,
Ձայն ահե՛ղ մըռընչելով՝ դող առ սաստիկ սանդարամետ ։
Զարթեա՛ւ որպէս 'ի քնոյ Տէրն , որ ննջէր 'ի սիրտ արթուն ,
Զառ խաչիւ արբեալ զգինին թափեաց յիւրմէն իբրև հըզօր ։
Որ մահուամբըն վայրիկ մի կափոյց մարմնոյն զականողս
Մինթէ ո՛չ այլ ևս անդրէն յառնել 'ի վեր նա յաւելոյր ։
Հատն ատո՛ք ցորենոյն յանդաստանէ կուսին բուսեալ
Ի կալատե՛ղ Գողգոթայի կասեալ խաչին կամնասայլիւք՝
Ընկեալ մեռա՛ւ 'ի յերկրի՝ ծածկեալ հանգոյն սերման 'նդ հողով
Յարութեամբն իբր 'ի գարուն բուսաւ անդրէն փունջ եօթնահասկ ,
Բազմագո՛յն առատաբեր արդիւնս գործեաց ըստ իւր բանին
Ընթրիւ նընջեցելոց պըտղովք 'ի կեանս բարդաւաճեալ ·
Որ առ խաչիւ կացեալ հանդէպ տիրադրուժիցըն խօլ խուժան
Կախելո՛յն , ո՛հ , ըզփայտէ վաշ կարդային շարժեալ ըզգլուխս ,
Զամօթի՛ հարան խայտառ և կորակնեալ եղեն դիմօք ,
Մինչ տեսի՛ն՝ ճարտարապետն առ 'ի յինքեաց քակեալ զտաճարն
Վերըստի՛ն վայելչապէս շինեաց ըզնա զերիս աւուրս ։
Նա՝ պաշտպա՛ն եկաց նըմին և Հայրըն իւր դատաստանօք
Զառ 'ի նեղչա՛ց զերծուցեալ՝ զնա ծանոյց գոլ Աստուածորդի ·
Եւ զհանդէ՛ս արդարութեան խաչի նորին ցոյց փորձողացն ։
Վասն որո՛յ նախ առ 'ի մէնջ միշտ մատուսցի քեզ օրհնութիւն
Սիրողի՛ Հօրըդ մերոյ , որ յաղթելով 'ի գթութենէդ

Առ սիրոյ մարդոյն անկեալ ըզսիրելիդ քոյոյ անձին
Իբրեւ թողեալ 'ի խնամոյդ՝ մատներ 'ի ձեռըս թշնամեաց,
Եւ տալ չանխայեցեր 'ի չարչարանըս վըշտաբեկ։
Զի նորա մարմնոյն վիրօք բըժըշկեսցես մարդոյն ըզվէրս
Անկելոյն կիսամահ ընդ իջանելն իւր յԵրիքով,
Որ 'ի սրոյ աւազակաց վիրաւորեալ հեծէր ողորմ.
Ոյր 'ի կերպն աղէտալի եւ նուաղ ձայնին աղաչելոյ
Զածին գութ հայել երբէք եւ կամ լըսել անփոյթարարքն։
Զեւըն նոյին ապիկար չզօրէր ըզվէրս նորին բուժել,
Եթէ ոչ, ով Հայր, 'ի քէն սամարացին եկանէր յայց։
Արարեր զայսոսիկ՝ սիրոյդ առ մեզ յայտնել ըզչափ։
Այլ եւ քեզ որդւոյդ անմահ մարմնով առ մեր մահացելոյդ
Նուիրեսցի յաւէտ եւս շնորհ 'ի փըրկելոցըս քո արեամբ.
Որ սիրով դու եղանիլ մարդ 'ի Կուսէն ոչ շատացար,
Նա եւ անբաւ զըրկանաց քո հեղութեամբըդ տանելով
Ի ձեռաց ապաշնորհաց, ոհ, եւ ըզմահ ճաշակեցեր.
Թալկանամ, ով, երբ ըզքոյդ կիրս նըկատեմ, խաչեալդ Յիսուս,
Զարտասուելն 'ի պարտիզին եւ զըմբըռնումն անմատչելոյդ,
Զկալըն քո 'ի յատենի դատաւորաց լուռ ակընկոր,
Զհարուածով գանին ձաղկիլն 'ի զինուորացըն դըժընդակ,
Զապտակն, ըզփուշ պըսակն եւ զթուքըն պիղծ՝ անարգանաց,
Զբառնալ փայտին ուսոյդ վերայ եւ զքայլ ոտիդ վաստակաբեկ,
Զուժգնապիրկ սեւեռումն, արեան զվիժակ մարմնոյդ քընքուշ,
Զբարձրանալն յերկրէ 'ի խաչ կալ նըշաւակ ազգին ժըպիրհ,
Զվէր կողիդ քո տիգաւոր եւ զպատանիլդ իբրեւ մեռեալ,
Եւ կենդանւոյդ ըզթաղումն 'ի գերեզման մահացելոց։
Այս քո վըշտաց յիշատակ եւ եղանակ չարչարելոյդ
Յաւելուն ցաւք իմ սըրտիս եւ զիս գրաւեն մինչեւ 'ի մահ,
Եթէ ոչ քո յարութիւն նորոգեսցէ դարձեալ 'ի կեանս.
Եւ որով ցընծացեալ 'ի սիրտ ըզքեզ ըզփըրկանակդ

Երգեմ այսու յաղթական օրհներգութեամբ յաւերժապէս .
Եւ անկեալ ահիւ 'ի ծունկս երկրպագեմ Գերեզմանիդ ,
Եւ ըզդէմս մածեալ 'ի կոյս կռածոյ 'ի Վէմիդ՝ համբուրեմ ,
Ուր տարրացար դու մարմնով դիակնացեալ մեռելատիպ ,
Ըզթաղեալս մեղօք 'ի հող քո յարութեամբըդ վերածեր .

ՀՐԱՒԻՐԱԿ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

# ՆԱԽԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ ԻՄԱՍՏԻՑ

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳՈՑ

ՍԿԻԶԲՆ երգոյս յուշ առնէ նախ զսէր հարսին սգազգեաց և փեսային հեռացելոյ. որ զկնի յարութեանն երևի բազմիցս և Սողոմոնեան Երգոց Երգոյն ձայնիւ աւետիս տալով՝ մերժէ ’ի նմանէ ըզվարանական սուգն և հաւատարիմ առնէ նմա զիւր յարութիւն։

Հանէ զմանկտին ’ի լեառն Ձիթենեաց։ Նկարագրութիւն համբարձման Քրիստոսի և հանդէս Հօր Աստուծոյ հրեշտակաց տօնակցութեամբն՝ պլովքն հանդերձ։

Ի լեռնէն ձիթենեաց հրաւիրէ կրկին ’ի Սիոն Վերնատուն, ուր զգերազօր Հոգւոյն գալստենէն, զբազմադիմի շնորհաց նորին՝ երգէ հռչակելով և գերազանց ցուցանէ զարդիւնս Հոգւոյն. որով լցան իմաստութեամբ տգէտ աշակերտքն և զօրացան լքեալ ոգիք նոցուն։

Հայցուած առ նոյն Հոգին Աստուած ինքնազօր ընդունել ’ի նմանէ շնորհս ճշմարիտ գիտութեան։

Ի հասանիլ աւարտ տնօրինական Տեղեացն սրբոյ Քաղաքին՝ հրաւիրէ զմանկտին ’ի գերահռչակ վանս սրբոց Յակոբեանց։ Համառօտ ներբողեան ’ի սուրբն Յակոբ որդին Զեբեդեայ և ’ի միւս Յակոբ Տեառնեղբայր կոչեցեալ։

Ածէ անդուստ ’ի գերեզման Աստուածամօրն, որ է ’ի ձորն Գեթսամանի։ Հրաշափառ վերափոխումն նորին ’ի յերկրէ և աւանդումն ամենասուրբ և պայծառ հոգւոյն ’ի ձեռն Միածնի իւրոյ։

Ի վախճան բոլոր երգոյն՝ յիշեցուցանէ մանկտւոյն համառօտիւք զօր դատաստանին զահաւոր ատենին զհանդէս, որ անդ լինելոց է. և կրկին զտնօրինական տեղիսն յիշատակելով՝ յուշ արկանէ նոցա զերախտիսն Քրիստոսի։

Գոհութիւն Հրաւիրակին առ սէրն իւր Յիսուս և կնիք երգոց բանից։

## ՀՐԱՒԻՐԱՆ

# ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ

### ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

ԻԵ՛Ր ինձ արդ նուագեցից Հարսին ըղձէր և փեսային
Եւ զմանկանցն առագաստի, յոյց ժամ հասեալ էր վերանալ
Ընձկալութն 'ի յերկրէ որպէս ասաց ինքն անտանօր ։
Ուստի ստէպ՝ կարօտելոցն ինքըն զաւուրըս քառասուն
Երևեալ և ըսփոփէր զոգիս նոցին ըղթախծալից ․
Եւ արե՛ւ լուսարձակ՝ դիմաց նոցին ծագեալ նըսեմ՝
Հալածէր առ 'ի նոցունց ըղմութ սըգոյն վարանական ։
26 Նախ երթեալ 'ի Գալիլեա՝ Հովիւըն քաջ հանդոյն հովուաց
Նըստեալ փողէր քաղցրալուր, ձայն արկանէր փոքրիկ հօտին
Թափառեալ 'ի մէջ դաշտաց, լերանց, հովտաց առ ահ գայլոցն ։
Գրոհ տըւեալ դիմէին անդըր գառինքըն հովուասէր
Կարօտեալ Վարդապետին աղին կենաց անուշարար,
Եւ քաղցեալ արօտոյ, հացին ասեմ երկնապարգև ։
Որպէս անձուկ ոգւով անկեալ յայնժամ երկըրպագին,
Գոգ թէ վաղուց 'ի հետէ չէին տեսեալ զփարելույն տիպ ․

Ոյր դիմացըն լուսահրաշ հանդիպելով յագեցան ․
Եւ լցա՛ւ խընդութեամբ սիրտ բոլորին յուսապատար ։
Դարձեա՛լ ՚ի վերնատուն յորժամ թաքչէր հարսըն տըխուր ,
Չհանդուրժեա՛լ ևս ՚ի սըրտի նոր աւետեօք օրհորդացն՝
Լայր և սըգո՛վ վարանէր ըզսիրելւոյն հեռացելոյ ․
Գա՛յր յանկարծ փեսայն իւր սուրբ ու առ դուրս կացեալ ձայն արկանէր ․
Բա՛ց ինձ արդ , ո՛վ քոյր իմ , մերձաւոր իմ , աղաւնիդ իմ ,
Որ խանդակա՛թ ես ՚ի սէր քո փեսայիդ յարուցելոյ ։
Սեւաթո՛յր զքօղըդ սըգոյ ՚ի բաց այժմիկ առ ՚ի գըլխոյդ
Զգեցի՛ր դու և զարդարեաց պատմուճանաւդ ուրախութեան ,
Ողջախո՛հ գօտեաւ պընդեա՛լ՝ եկ ընդ առաջ իմ պարելով ․
Քանզի ձմե՛ռն էանց զինեւ անձրեւք անցին չարչարանաց ,
Գարո՛ւն է արդ գեղեցիկ , ձայն տատրակիս յարուցելոյ
Աւասի՛կ հընչեալ այսպէս ՚ի պարտիզիդ քաղցըր լըսի ․
Որ զատեա՛լ յանձկալւոյդ զիս որոշեաց վայրիկ մի Խաչն ,
Եւ այրի՛ թողեալ ըզքեզ՝ ողբով լըցար անհընարին ․
Արդ առ քե՛զ դարձայ կըրկին և դու առ իս դարձի՛ր այժմիկ ,
Պի՛նդ գըրկեա զիս հաւատով, զի չունիմ այլ մեկնիլ ՚ի քէն ,
Դու ընդ իս և ես ընդ քեզ սիրով կապեալ անխըզելի ։
Զայս ասէր , և դրօք փակեալ մըտեալ առ հարսըն սըգաւոր
Ի միջի՛ ղօղեալ հօտին կանգնէր յանկարծ Հովիւըն քաջ
Շողապէ՛ս ընդ պատուհան թափանցելով ծագեալ ՚ի ներքս
Նմի՛ն՝ առ ՚ի կուսէն թանձըր մարմնովն ըմբըռնելի ։
Հարցանէր տեղեկանայր ըզհաւատոյն ողջութենէն ․
Եւ զնոսի՛ն ՚ի նոյն կըրկին նոր կազդուրէր կըշտամբելով,
Առ չկարծե՛լ զինքն անմարմին՝ առեալ ուտէր զձուկն և խորիսխն ։
Յետ ութի՛ց աւուրց ապա ըստ առաջնոյն մըտանելով
Երեւէր նոյնօրինակ թերահաւատ փափագողին ․
Ե՛կ հուպ առ իս ո՛վ Թովմաս , բեր և մըխեա ըզքոյդ մատունս ,
Շօշափեա՛ զգեղարդնախոց վէր իմ կողիս ձեռամբացի ,

Տե՛ս աչօք և նշմարեա զծակեալ տեղիսըն բեւեռաց .
Դաւիթ հոգւո՛վն 'ի հեռուստ դու 'ի մօտոյ ո՞չ տեսանես ,
Հաւատա՛ ուրեմըն յիս և ընդ եղբայրըսըն քո դասեաց :
Առ ծովակին Տիբերական յայտնէր դարձեալ ըստ Յովհաննու ,
Ուր Պետրոսըն որսատենչ Տեառն ըզպատուէր մոռանալով
Փախագեա՛լ հնոյ արուեստին որսալ ըզձուկըն գնացեալ էր
Մըտերմօքըն որսակից , որ զհետ երթալ յօժարեցան :
Ընդ մանկո՛ւնըս կոչելով՝ յանդիմանէր Տէրն ըզնոսին ,
Եւ հրաշի՛ւք ուռկանալի՛ր խուռըն ձըկանց ըմբռնելոց ,
Եւ մի ձկամբըն խորովեալ հրոյն 'ի վերայ առ ծովակին ,
Եւ նորաստե՛ղծըն հացիւ՝ նոյն ինքըն Տէր գոլ ցուցանէր :
Այսպիսի՛ հրաշադան ըսքանչելեօք Խաչաչարչարն
Զյարութիւն իւր ճըշմարիտ հաւատարիմ առնէր նոցա :
27 Այլ ըզկնի քառասնաւուրց 'ի Ձիթենեաց լեառըն հանէր ,
Ո՛ն մանկունք , ելցուք և մեք ընդ Քրիստոսին որպէս յայնժամ,
Գոլ նըմին յուղարկաւոր և շնորհաբաշխ յաջոյն օրհնիլ :
Ո՛վ, քանի՜ ցընծութիւն էր յաղթող Փըրկչին մերում յայնժամ,
Որ ըզծո՛ցըն հայրենի թողեալ՝ յաստիս պանդուխտ եկաց ,
Ընարգեա՛լ 'ի մարդկանէ՝ դատապարտեալ եղեւ 'ի խաչ ,
Չարչարեա՛լ՝ որով զտանջեալս 'ի զընտանէ մահուն զերծոյց ,
Մեռեա՛լ՝ բայց յարութեամբըն կեանըս շնորհեաց մահացելոյս ,
Երեւեա՛լ ինքըն նըկուն՝ վանիչ եղեւ աշխարհի :
Եւ իբրեւ ըսքանչելի եղանակաւս պարտեաց ըզմարտն
Այսըր եւ զօրագլուխն և նահատակըն խաչադէն
Իբր 'ի մարտից՝ յաղթական դառնալ անդրէն փառօք յերկինս :
Ո՞ր բանիւ ողջունական խօսէր աստէն առ սիրելիսն ,
Այսօր 'ի ձէնջ վերանամ, երգիչ մանկունք հարսնարանիս ,
Այսօր զողջոյն իմ տըւեալ 'ի ցանկալեացըդ որոշիմ,
Այսօր ըզձե՛զ, որդեակք իմ, օրհնեմ աջովս հայրականաւ :
Դուք ինե՛ւ զօրացարուք , մի՛ լքանիք յուսահատեալ,

Տեսէք զիս, ուստի յինէն զնոր եղանակ իմ յաղթութեանս,
Թէ որպէ՞ս պարտ է և ձեզ, որ Արքայիս գրեցայք զինուոր
Կո՛ւռ վառեալ մերկամարմին՝ կռուել մրցիլ սաստ ընդ աշխարհ.
Ընդ անձո՛ւկ շաւիղ դժուար գալ հետեւիլ հանդիսադրիս,
Որպիսեօ՛ք ես ընթացայ լեալ իմ խաչիւս նախամարտիկ.
Թէ ընդ նո՛յն յօժարակամ հետեւեսջի՛ք արիապէս
Հասանե՛լ ունիք ընդ իս և դուք ՚ի սոյն կէտ վախճանի
Այսպէս դիմե՛լ ՚ի յերկինս և անդ առնուլ ըզմրցանակն.
Զոտըս ձե՛ր ըզբոկանի նոր ամրացոյց Հայրն իմ կօշկօք.
Եւ զառաջին պատմուճան ագոյց անդրէն մերկացելոցդ.
Տիրակա՛ն իշխանութեան ըզմատանին մատոյց ՚ի ձեռս.
Յորժամ ե՛գն ես պարարակ զենայ առ ձեր ՚ի Գողգոթայ.
Տե՛ անվա՛խ ընթացարուք արդ ընդ աշխարհըս բովանդակ,
Ամենե՛ր դուք ՚ի վերայ գլխոյ չարին կոխեալ անցէք
Բամահեա՛լ զնետիւք նորին զինու Հոգւոյն զրահաւորեալք.
Մատանւո՛յն զօրութեամբ տիրող լերուք տիեզերաց,
Խաղացէ՛ք զօձիւք, կարծօք, ձեզ ոչ վնասեն Թոյնքըն նոցին,
Զի ուժգնութեա՛մբ երկաթոյս խայթոցք նոցին խորտակեցան.
Ամբռնո՛ւնչ գառին նըման զձեզ առաքեմ ՚ի մէջ գայլոց,
Մի՛ կասեալ զանդիտիցէք ՚ի սրաժանեացըն պատառող.
Խորագէ՛տ լերուք մըտօք հանդոյն օձի դուք և ըզգոյշ
Մի՛նչ և ձե՛զ որպէս և ինձ դարան դընէ նենգիչ ոսոխն
Բիւրակե՛րպ գաղտնի հնարիւք զոտըս ձըգել ձեր ՚ի Թակարթ.
Որ յինէ՛ն եդաք որսորդ ՚ի յալէտանջ ծով կենցաղոյս,
Մի՛ լիցի ձեզ ըմբռնիլ երբէք նենգաւ առ ՚ի նմանէ.
Փրացարո՛ւք մանաւանդ, որ զըմբռնեալս ՚ի բանսարկուէն
Ուռկանա՛ւ քարոզութեան առիս ձըգեալ դուք որսայցէք.
Լե՛րուք դարձեալ միամիտ աղաւնանման և հեզագոյն
Մի՛նչ բըռնի՛ ընդ առաջ դատաւորաց քարշեալ երթայք,
Մի՛նչ ըզձե՛զ նախատեն և բան ըզչար խօսին ըզձէնջ,

Մինչ անարգեալ ելանէք 'ի յատենէ դատափետեալ։
Երանի է ձեզ յորժամ զըրկանս կրիցէք դուք զայսոսիկ,
Որ այսու հարազատ իմ աշակերտ գոլ ճանաչիք՝
Հանդուրնակ վարդապետիս կրեալ ըզնոյն անպարտօրէն։
Այլ մի լուռ մնայցէք այնչափ մինչեւ ծածկիլ ճըշմարտութեանն,
Ի խօսել զիրաւացին յանդուգն եղէք և համարձակ։
Լոյս եղելոցդ աշխարհի մի բնաւ լիցի նըսեմանալ,
Կամ թաքչիլ քաղաքացըդ շինելոց 'ի բարձու լեառն,
Կամ ըղնիլ ընդ գրուանաւ ճրագացըդ վառ իւղով բանիս,
Կամ չասել, զոր պարտ իցէ տանեաց վերայ քարոզ կարդալ։
Աղ անհամելոց կոչիլ յինէն արժանացայք,
Ըզխոտեալս աղիւ կենաց բանից իմոց անուշեցէք։
Հայր կոչիք տղայայելոցն՝ օրինակաւ լեալք խրատատու,
Ընդ բանիւ ուսուցանելն՝ ըզնոյն գործովք ցուցէք յանձինս,
Ցիս կատարեալ տեսիք զայս, զի ձեզ արդեամբք աւանդեցի։
Թէ զերկնիցն ունիք խօսիլ, ելէք յերկրէ դուք կենդանեաւ,
Թէ զփառացն անճառագոյն՝ խոտեալ խոյս տուք յանցաւորէն,
Թէ զկենացն անմահական՝ ընդ առ աշխարհ մեռեալ լերուք։
Այնչափ արժան է ձեզ պայծառ փայլել վարուց լուսով,
Զի տեսեալ զարմասցին և օրհնեսցեն մարդիկ ըզՀայրն։

Այլ, գիտեմ, զոր ցարդ ընդ ձեզ ես խօսեցայ յայտնաբարբառ
Հասու ոչ եղէք լիով թաքուն բանից իմ զօրութեան։
Ուստի փութամ առաքել ըզհայրաշարժ Հոգին շնորհաց
Իջանել և հանճարով իւրով լընուլ ըզմիտըս ձեր,
Եւ բանիցըս խորագոյն առնել հըմուտ ամենայնիւ.
Փոխան 'ի ձէնջ մեկնելոյս՝ նա բնակեսցի միշտ անանջատ,
Սգաւորացդ 'ի յաշխարհի՝ լիցի սփոփիչ և մխիթար,
Զօրավիգ՝ զինուորացըդ միահոյլ, սակաւաձեռն,
Ձայն ազդու խրախուսական՝ մեղկեալ ոգւոցըդ տարակոյս,
Զօրութիւն անդամանդեայ՝ հողանիւթիցըդ դիւրափուխր։

Դուք նորին զայժ ըղձեցեալ անպարտելի քաջանայցէք,
Ընդ աշխարհ և սատան, և ընդ մարմին մարտընչելով
Յաղթիցէք, և ինձ նման յաղթանակաւ դարձջիք յերկինս։
Օ՜ն գնացէք, այլ մի մեկնիք 'ի քաղաքէն Երուսաղէմ,
Ընդ նըստեալ ըսպասեցէք Հօրն աւետեաց խոստացելոց։
Զայս Յիսուս, և համբարձեալ զձեռս իւր օրհնէր ապա զնոսին.
Այն Աջոյն արարչագործ, յորմէ ստեղծաւ մարդն 'ի հողոյ,
Ճոխութեամբ տիրականին իշխան եղաւ եղականաց.
Ըստ նովաւ ձեռնադրեցան նոր Երիցունք Եկեղեցւոյ
Հոգևոր իշխանութեամբ տիրել փոքրիկ ընտրեալ հօտին։
Այն անէծք, որ 'ի Հօրէն զեղան 'ի գլուխս յանցաւորացն,
Յօրհնութիւն փոխարկեցաւ աստ բերանովըն Յիսուսի.
Լինելոյն անդրէն 'ի հող դառնալ լինել 'ի հոգենիւթ
ՅԱստուած միանալով՝ նովիմբ 'ի դրախտըն վերբերիլ։
Ընդ աւարտիլ օրհնութեանն զօրացուցիչ և շնորհաղեղ՝
Նոր Եղիայն ինքնաթռիչ ևս հրաշային կառօք մարմնոյն
Ի միջոյ աշակերտացն անջրպետեալ ճախրէր 'ի վեր։
Բա՜բէ, զի՞ ցաւ էր յայնժամ բաժանելոցն առ 'ի սիրոյն,
Ի՞բր անթարթափ պըշուցեալ ընդ գարշապարս գնալոյն յերկինս՝
Աղաղակ բառնային Եղիսէին նման վայրուստ։
Յիսո՞ւս վարդապետ, դու ոչ միայն կառք Իսրայէլի,
Այլ և համօր հեթանոսաց, զորս քո խաչիւդ կենարար
Այդպէս ունիս հանել իբրև կառօք յերկրէ յերկինս.
Արկ այտի, ժըտեմք 'ի քէն, ոչ ըղմաշկեակըն մաշածոյ,
Այլ ըղհոգին եօթնաշնորհ, որով հարեալ զգետ աշխարհիս,
Նըմա՛ն Յորդանանու պատառելով զջուրըն մեղաց
Յայդ վեր կոյս ելցուք և մեք ընդ քեզ 'ի քոյդ շաւիղ նորոգ;
Զոր այդպէս հորդելով լայնես բանաս մեր ընդ առաջ։
Մի՞ զոր մեզ խոստացար 'ի յառաքումըն յապաղեր,
Ո՜հ, 'ի քէն թողեալ այրի՝ յապուշ պատիմք տարակուսեալ։

Ընկալեա՛լ յուսայք մանկունքըս քոյդ առագաստի
Հոգեզուա՛րճ խընջոյս կազմեալ՝ ակումբ առնուլ երգով պարել
Յաւէրժ 'ի փեսայիդ յարուցելոյ սուրբ հարսնարան.
Եւ յագի՛լ 'ի վայելուչ գեղոյ դիմացըդ քո չըքնաղ,
Յորմէ մի՛նչ աչօք յառեալ ըզմայլեցաք վայրիկ մի ժամ
Կարօտով Թողեր ըզմեզ փութով այդպէս վերանալովդ.
Երբ ըզմիտըս մեր բացեր փըչմամբ 'ի մեզ զոգիդ քո սուրբ
Իմանա՛լ, որ վասն քո զկանխաճառ բան մարգարէից,
Այն ի՛նչ աչք մեր բացան դիտել զանտեսդ առ 'ի նոցունց
Ծածկեցա՛ր ամպով 'ի մէնջ իբրու զարեւ երեկորի.
Որ ծագեցա՛ր 'ի բարձանց ճառագայթիւքըդ գերահրաշ,
Ի վերի՛ն մայըր սիօն անդրէն յերկրէ մուտ արարեր.
Իջի՛ւ, զի դարձեալ գըտցուք ըզքեզ առ մեզ, Յիսուս,
Եւ տեսլեամբըդ տենչալի, ո՛չ, կըշտապինդ վայելեսցուք.
Զա՛յս նոքի՛ն, այլ զի՛նչ անդէն սպիտակազգեստ արք լուսաւորք
Երեւեա՛լ և աւետիս տային նոցա յուսադրական.
Զի՞ յակնճիռս եղեալ 'ի վեր հայիք այդքան, Գալիլեացիք,
Սիրակա՛թ աչօք ըզկնի սիրեցելոյն յափըշտակեալ,
Իբրու թէ չէ՛ւ խաչեալ ձեր և դո՛ւք յերկինս թըռչիլ կամիք
Կա՛լ վերի՛ն 'ի հարսնարան ընդ փեսայի՛ն ւ երգող մանկանցդ.
Մի՛ կարի ըզտարփելի՛ն յուշ բերելով ճըմլիք 'ի սիրտս,
Գա՛յ նա վաղ դոյնօրինակ որպէս այժմիկ Թըռեաւ յերկինս,
Եւ ըզձե՛զ առեալ ընդ իւր տանի յայնժամ յայն առագաստ,
Ուրանօ՛ր յաւէտազուարճ մնայ ձեզ մանկանցդ երգել պարել,
Թէ զԹիկո՛ւնս ձեր 'ի խաչէն զոր բարձ Փեսայն՝ չդարձուցանէք.
Այլ սիրով հանդոյն նըմին զայն բառնալոյ յօժար լի՛ջիք.

Ե՛կ բեր արդ ըզհրեշտակաց դասուց երգել զտօնակցութիւն
Կատարեա՛լ 'ի նոցանէ ընդ համբառնալ Բանին 'ի վեր.
Դասք ներքի՛ն խորհըրդազգածք մարդացելոյն տնօրէնութեան

*Առ վերին դասս անտեղեակ ըղձաձայնեալ բարբառէին .*
*Համբարձէք ըզդրունըս ձեր , ո՜վ պետութիւնք երկնաւորաց ,*
*Թող մըտցէ՛ ընդ այն փառօք վեհ Թագաւորըն մեր հըզօր ,*
*Որ ընդ մէջ երկնի , երկրի զխաղաղութիւն արար իջմամբն ։*
*Համբարձէք պահպան Քրովբէք սուր 'ի դրանէ դրախտին երկնից*
*Թող անցցէ՛ ազատօրէն Ադամակերպըն ճոխաբար .*
*Ա՛յն է որ պահել ըզդա սաստիւ անդէն ձեզ հրամայեաց ,*
*Ի՛նքն 'ի Գողգոթա Խաչին 'ի ծառ ելեալ մարմնով՝*
*Նըբա՛ց զայդ ճանապարհ մարդոյն ընդդէմ փակեալ 'ի ձէնջ ։*
*Բացէ՛ք և դուք , Սերովբէք , ըզմուտ վերնոյ վարագուրիդ ,*
*Զի դորին 'ի ներքին կողմն անցեալ մըտցէ Հայրափառդն*
*Քահանայն ինքնանուէր պատարագաւըն հաշտութեան ,*
*Զանարատ Կուսին պըտուղ ընծայել Հօրն 'ի մարդկանէ ։*
*Այլ վերինքըն սըխրացեալ ընդ նոր այս լուր հրաշաբարբառ ,*
*Նա յաւէտ 'ի չքնաղ կերպ վերընթացող Թագաւորին*
*Սքանչացեա՛լք և 'ի ներքնոցըն գոլ հասու՝ հարցանէին ։*
*Ո՛վ իցէ այս Թագաւոր , որ գիտակքդ էք , ասացէք մեզ ,*
*Զի՞ դիմեալ արագապէս գայ յԵդովմայ առ 'ի յերկրէ*
*Կարմրաձորձ արիւնազարդ պըճնեալ բոլոր անձամբըն իւր ,*
*Պատմուճա՛ն մարմնոյն անաղտ յոյժ գեղեցիկ բոսորատիպ ,*
*Թագ 'ի գլուխ և փեսայի նորոյ նըման զարդարեալ ինքն ,*
*Ցընծա՛յ հըսկայապէս և սիգալով ճոխ ընթանայ ,*
*Կարի՛ բուռն է զօրութեամբ իբրև յաղթող գայ 'ի յերկրէ ,*
*Նորասքա՛նչ է դրօշըն իւր յուսոյն վերայ եդեալ փառօք ,*
*Զի կերպ մարմնո՛յ ունի ճըշգրիտ , Թէև Թըռչի անմարմնոց պէս .*
*Նա անարգէ՛լ ընթանայ 'ի ճանապարհըս երկնաչու*
*Միայնա՛կ ինքն առանձին առանց ուրուք օգնականի .*
*Ո՛չ պիտին կառք ինչ հրեղէն որպէս անկար Եղիային .*
*Կամ սատա՛ր՝ դունդք հրեշտակաց գոլ վերբերիչք ըստ Ենովքայ ։*
*Ո՞ իցէ , տուք մեզ նըշան զնոր Արքայէս ամենասքանչ*

Երեւեալ զերդ առաւօտ, այլ 'ի յերկրէ զարմանալէս,
Գեղեցիկ իբրու զլուսին ջահավառեալ 'ի մէջ աստեղց,
Ընտիր և քան զարև, ո՛վ, 'ի սորին վայրէ ծագեալ
Ի հիացմունս և նոր տեսիլ կարգեալ յերկրէ երկնաւորացս.
Ասացէք, ո՛վ ներքնագունդք, ո՞ իցէ վեհ այս Թագաւոր։

Ե՞ր այդպէս անկարանայք զՏէր զօրութեանցըդ ճանաչել,
Այդ ինքն է, ո՛վ Սերովբէք, որում երգէք զերեքսրբեանն,
Ա՛յն է դա, ո՛վ Քերովբէք, ում 'ի հանգիստ փառաց լինիք։
Ո՞չ տեսիք, մինչ 'ի ծոցոյն հայրականի լուսածագեալ
Առ ձեօք անց և էջ յերկիր Բանն 'ի վերուստ արփիանման,
Եւ 'ի Կուսէն ընտրելոյ եկն 'ի մարմին յայդ անարատ.
Ի տիոցըն մանկագոյն աճեալ եհաս յարբուն հասակդ.
Արդ՝ այլ մեծասքանչ ցուցաւ յերկրի զարմանալեօք,
Աստուած՝ բայց ըզմարդոյն կիրս բոլոր կրեաց մարմնով։
Ի վերջնում աւուրս ապա չոգաւ ինքնին 'ի չարչարանս,
Մատնեալ՝ և դառնատանջ վըշտաց խաչին տարեալ՝ մեռաւ.
Վայր առեալ 'ի վիմափոր եդաւ շիրմի պատանապատ,
Ի խաւար բանտն էջ հոգւովն՝ հան ըզկապեալ ոգիսն 'ի լոյս,
Յարուցեալ երեքօրեայ՝ հաւատարիմ եղև եղբարցն։
Այսպէս քաջ մարտադիրդ ըզթըշնամին իւր վանելով
Մեծապանծ յաղթանակաւ յերկրէ դարձեալ գայ 'ի յերկինս,
Ո՛ն արդ երգով օրհնութեան բարձր արարէք ըզնահատակդ։
Իսկ որ հուպ յառեալ ընդ գեղ հրաշանային կարմիր ձորձոյն
Հարցանել ոչ 'ի ներքնոցն, այլ Յիսուսէն ըղձանային.
Տէր, առ ի՞նչ է ողջ հանդերձ քոյին այդպէս արիւնաներկ,
Կարմրացեալ 'ի գոյն գինւոյ գոդ թէ իցէս հընձանահար,
Եւ լիակոխ առնելովդ ողջամբ դու զայդ թաւթաւեցեր։
Եւ ընդէ՞ր են այդ նըշանք վէրաց 'ի յոտս քո և 'ի ձեռս,
Ընդ ո՞ւմ իջեր արդեօք դու ինքնինդ մըղեր ըզպատերազմ,

Ուստ ՚ի վե՛ր գաս արդ փառօք զայդ գեղեցիկ վէրս ընկալեալ։
Թէ անշո՛ւշտ որպէս ասեն ըղ․քէն ներքինքն լցես Աստուած,
Հաւատա՛մք և մեք ըղ․քեզ Տէր զօրութեանց և Արարիչ.
Օ՜ն հապա զանեղական Աստուածութեամբըդ լուսադեղ
Նխութակա՛ն և զարխնոտ զգեցեալ ունիս այդ նոր հանդերձ։
Կե՛րպդ է իսկ Ադամային, բայց հրաշագոյն է ընթանալդ,
Նա մարմնո՛վըն վայրաբեր՝ դու վեր այդու թեւթեւ սլանաս։
Նու ե՞ր ըղ․խուրաւոր քո զօրս որ քեզ եմք զինուորեալ,
Թողե՛ր և գաղտ ՚ի մէնջ իջեր մըղեր զմարդ միայնակ.
Ո՛չ գիտեմք, թէ ե՞ւ, ո՜վ Տէր, վանիչ եղեր դու թշնամոյն,
Այդ մարմնո՞վդ մարդկային թէ զօրութեամբդ Աստուածական.
Ուսո՛ մեզ աւասիկ ըղ․յաղթութեանդ նոր յեղանակ։

Այս գո՛րծ է իմ անքընին, ո՜վ լուսաստեղծ հօյլք հրեղինաց,
Միայնո՛ւմ յայտնեալ յինէն եկեղեցւոյս նորածնելոյ։
Թէ տարփմյք և դուք յաւէտ զայս ուսանիլ ըստուգապէս
Խոնարհեա՛լ հասու լերուք ՚ի ստորայնոյ եկեղեցւոյն,
Որ ինձ հա՛րսն եղև նա կոյս և ես նըմին փեսայ մաքուր։
Ո՞ւր արդեօք խորհուրդս այս մեծ կատարեցաւ, գիտե՞ք, զուարթունք.
Ո՞չ ելիք և տեսիք զիս, ո՜վ դուք վերին Սիօնի դըստերք,
Ի լեռա՛նըն զմըռսոյ և հրաշակերտա՛ն իմ հարսնարան։
Ա՛նդ ահա նոր պատմուճան այս առեցեալ մարմնոյս իմոյ,
Որ գեղո՛վըն կուսական՝ շուշանի պէս փայլէր յառաջ,
Դարձա՛ւ բոսորաթոյր, մինչ ես յօրն իմ ուրախութեան
Բաշխեալ ՚ի գա՛հ պարծանաց՝ պըսակեցայ կարմիր արեամբ։
Ա՛նդ ըղ․լի հընձան խաչին ես կոխեցի սըրտմըտութեամբ,
Յորմէ կաթք արեան գինւոյն ցայտեալ հանդերձք իմ կարմրացան։
Անդէն առի և զայս վէրս, ո՜հ, ՚ի տանէն իմ սիրելեացն,
Անկորուստ յիս պահելով՝ ցուցից նոցա յիմ գալըստեանն։
Այսպիսի՛ օրինակաւ, ո՜վ զըւարթունք, զինու մարմնոյս

Պարտեցի՛ ըզբանսարկուն յաղթայարիչ Նախաստեղծին ․
Որ մեղօ՛ք ախորժ պըտղոյն մարմնովըն իւր ծանրանալով
Ի դրախտէ՛ն բարձրութենէն ’նդ աշխարհ բերաւ լեալ վայրաքարշ ։
Սէրըն Հօր զիս պարանաւ իջոյց ըզկնի ստորանկելոյն ,
Որ զմարմի՛ն մեղաց նորա ’նդ Աստուածութեան իմ կապելով
Զծանրութիւն բարձի կարեաց , և անարատ պահելով զայն՝
Յերկրէ հանե՛մ ’ի յերկինս այսպէս ընդ իս թեթևընթաց ։
Ճո՛յտ ուրեմն արագեցէք , ո՛վ սքանչացող սրովբէից դասք ,
Զխորանին ուստի ելի բացէք այժմիկ ըզվարագոյրն ․
Յոր մըտեա՛լ մատուցից զայս պատարագ Հօրն իմ հաճոյ ։
  Զի՛ անդէն սաւառնացեալ սըրբանըւագ սէրափի՛ գունդք ,
Ոմն ըզփո՛ղ յաղթականի առեալ երգէր բարձրաբարբառ ,
Ոմն անցեա՛լ ըզխորանին Երրորդութեան բանայր ըզփեղկն ։
Մօտ առնէր ընդ այն Յիսուս , Հայրըն յառնէր և գայր յառաջ ,
Ըզվիրա՛ծ որդեակըն իւր ողջագուրէր ըզմիածինն ․
Եւ ըստ երգո՛յն՝ բերանովըն համբուրէր զտիպ փեսային
Ընդ հարսին մարմնոյ բնութեանս պըսակելոյն խորհըրդապէս ․
Որ ձայնէ՛ր անձանձիր , Հայր , համբուրեա զիս բերանովդ
Ընդ որդւո՛յդ անարատի պըսակելով անախտաբար ։
Եւ ապա՛ Դաւթի բանիւն ասէր ցորդին Թագաժառանգ ․
Նիստ այժմիկ ընդ աջմէ իմ , որ ’ի յերկրէ գաս ’ի ստորին ,
Մինչ բազմիր ընդ իս յաթոռ այդ առեցեալ մարմնովդ քո
Ինձ ընծա՛յ բերեալ քեւ արդ , ուր ես անձկով փափագէի ։
Եկ , միածին իմ , հանգիր ’ի ծոցըս հայրական ,
Որ դիմեա՛լ գաս ’ի յերկրի մըրցարանէ յոյժ վաստակեալ ։
Յաղթեցէ՛ր , Մանուկդ իմ քաջ , տապալեցաւ ’ի քէն աշխարհ ,
Զո՞ր ես պսակըս հիւսեցից գըլխոյդ քոյդ գերապարծեալ ․
Նոր անո՛ւն շնորհեմ քեզ , որ անցանէ զամենեքումք ,
Ում երկի՛ն , երկիր բոլոր ծունըր դիցեն երկըրպագեալ ։
Օ՛ն հապա , ո՛վ հրակերպեան հոյլք հրեշտակաց և պետութիւնք ,

Պարակից եղեալ միմեանց զերգըս Դաւթեան հընչեցուցէք․
Այսօր է օր բերկրութեան երկրի, երկնից, մարդկան և ձեզ
Արարեա՛լ յինէն անդուստ իբրև օր մեծ և հրաշաւէտ․
Հըրճուեցէք պարելով և ցընծացէք յուսապատար,
Աւանիկ հասաք աւուրն, ում անձկալով ըսպասէաք։

Այլ Որդին, որպէս յայնժամ բանըս բերեալ առ այսոսիկ․
Հա՛յր, ահա զհաճոյս կամաց քոյին կատարեցի,
Առ 'ի քէն ելեալ իջի զհետ կորուսեալ մի ոչխարին,
Ի մէջ լերա՛նց աշխարհի յոյժ որոնեալ վաստակեցայ,
Մինչ ելեա՛լ 'ի գլուխ բըլըրոյն Գողգոթայի գըտի զայն, վա՛շ․
Խընդութեամբ 'ի յուս բարձեալ առ քեզ հանի ես աւասիկ,
Զոր խառնե՛լ ընդ անմոլար հօտին այժմիկ արժան է, Հայր,
Եւ զդրացի՛ դասս արդարոց կոչել առ մեզ ուրախակցիլ։
Նա զօրէն աւելածու կնոջն 'ի միջի տան աշխարհին
Ճրագ վառեա՛լ զմարմնոյս իմոյ՝ եգի խաչին 'ի յաշտանակ,
Աւելեա՛լ զաղբիւս մեղաց, և մուլթ 'ի խորշըս Գողգոթայ
Զա՛ռ 'ի մէնջ ըզկորուսեալ դրամըն գըտի զպատկերըն մեր․
Եւ ըզժանկըն սըրբելով 'ի ջուր արեան իմ կողահոս
Նո՛ր եղև ըստ առաջին մաքուր փայլուն ոսկեանման։
Պա՛րզ էր և սըրբափայլ դրամըն մարդոյն՝ 'ի բնութենէն,
Բանսարկուին պատրանօք առ արտաքուստ ժանգոտեցաւ․
Ծանեա՛ զայս, յորժամ 'ի փորձ մատեայ նըմին մարդեղութեամբս․
Զ՚ի բոց հրոյս արկեալ ըզնա բորբոքելոյ 'ի մեծ սիրոյդ
Հալեցի և գտաւ մաքուր ներքուստ բնութեամբ 'ի գնալ ժանգոյն․
Եւ ձուլեա՛լ ընդ անմարմին Աստուածութեանս ըզնիւթականն,
Ահա սուրբ ամենայնիւ քեզ ընծայեմ զպատկեր մարդոյն․
Տես այն է իսկ նոյնատիպ, զոր անարատ ձեռօք ստեղծեր․
Ա՛ռ, Հայր իմ, և դիր դարձեալ զայս արդ 'ի քո գանձարանիդ։
Այլ և 'ի քէն զըղեալ բաժակ մահու արբի ըզգառնահամ,

Ի Պարտիզէն աղօթից ես գառըն քո 'ի սպանդարան
Վարեցայ, և անմըռունչ լեալ իմ բնաւին զենայ կամաւդ.
Ընդ անբան զոհիցն Ահարօնի զայս անարատ մարմին իմ քեզ
Պատարագ հաճոյական ընծայեցի բոլորանուէր։
Յետ և 'ի խոցուած նայեաց կողիս, ձեռացս, ոտիցս,
Ընդ աշխարհ հաշտեաց վասն իմ և լեր ներող մասանց մարմնոյն,
Կողին նախապարտեալ, ու'ի ծառն ոտից ընթանալոյն,
Եւ ձեռացն արձակ ձըգման քաղել զպտուղըն մահածին։
Զի մարմնով զայդուսիկ պինդ հեղուսի ընդ մահուան փայտ
Մարմանջմամբ դառըն ցաւոց ըղձեշտութիւն դոցին բարձի.
Զունին այսուհետև վաղել զվեհիդ պատուիրանօք։
Զիս ամբիծ մարմնովս այս քեզ ընծայ ետուն յերկրէ մարդիկ,
Տուր և դու փոխան սըմա զՀոգիդ քո սուրբ անդրէն նոցին.
Զոր յայնժամ 'ի նոցունց բարձեր իբրև յանարժանից
Ընդ վարել զաղբր գործովք մարմնականին առանց հոգւոյ։
Եւ 'ի քէն մըտեմ այժմիկ, ո՛վ փառակից իմ, Հոգի հեզ,
Ի՜ջ սիրով արդ 'ի նոսա, որ ըսպասեն քեզ փափագմամբ,
Ի՜ջ յեղբարսն իմ անտերունջ, որ վըհատեալ են ափշութեամբ,
Ի՜ջ հանգիր և 'ի սըրտից նոցին մերժեա զահ, տարակոյս
Որ զօղեալ 'ի վերնատուն, ո՜հ, պաշարեալ են երկիւղիւ։
Փոքըր մի երբ 'ի ժամու խաչին լըքի միայն ըզնոսին,
Տատանեալ իբրու զտերևս 'ի շարժմանէ ուժգին հողմոյն
Ի վիմէս հաստատնոյ 'ի բաց խախտեալ տապալեցան.
Եթէ ոչ խուճապէի ես յարութեամբս անդրէն չինել
Վաղու ե՛ւս 'ի հաւատոյն հիմանց քակեալ կործանէին։
Հասի՛ր ո՛ն և հրազինեալ վառեա զնոսին և զօրացո,
Եւ բեկելոցըն սըրտից վէմ անդամանդ լեր կարծրագոյն,
Հա՛ն անտի և խրախուսեալ թող 'ի կըռիւ ընդ աշխարհի։
Քո՛յդ յայսըմհետէ 'ի խնամս յանձնեմ զդունդն իմ փոքրիկ
Զօրավո՛ր լեալ նոցին դու խաղացո 'ի յասպարէզ.

Գիտեմ , զի քո ձեռամբ յաղթայարեն ըզտեղերս ։
Այսպիսի՛ էին հանդէսք համբառնալոյն փառօք յերկինս ,
Եւ այսքա՛ն նորա բանից հայցուած առ Հայր և առ Հոգին ։

Զդէմս յերկի՛ր եղեալ , մանկունք , երկըրպագցուք ’ստ աշակերտացն
Սուրբ տեղւո՛յս , ուր նըշմարին մարմնացելոյն ոտիցըն հետք
Որպէս ա՛նդ լեառն ’ի Սինէ կալո՛վն աննիւթ գարշապարօք
Ի վիմի՛ն , ուր նըկարէր ձեւ աղիւսոյ շափիւղափայլ ։
Դա՛րձ առէք աստուստ ապա ելցուք կըրկի՛ն ’ի Վերնատունն
Երգեցի՛ց ա՛նդ զէջըն առ ’ի Հօրէ զՀոգւոյն Գալուստ ։
Որ այն ի՛նչ ’ի լըումն աւուրց հընգից տասանց պենտեկոստէ
Ցոլեալ վերուստ իջանէր , ոչ մեղմագոյն փառակցին տիպ
Ցօղանմա՛ն հանդարտ հեզիկ իջեալ ’ի գեղմն խոնարհութեանն .
Այլ սաստի՛կ հողմոյ հանդոյն ահեղաձայն որոտալով
Մուտ առնոյր այսըր յանկարծ , տուն ողջ լընոյր հրաշէկ բոցով .
Երևեա՛լ՝ բաժանելոց լեզուացըն շնորհք հրանիւթակերպ
Հանգչէ՛ր իւրաքանչիւր ըստ ընտրութեանն վերայ նոցին ։
Ըստ յանժամ էր տեսանել զձայնից հընչումն այլատարազ ,
Թէ զի՞ թարց աշխատութեան տգէտ և անուս աշակերտքըն
Հրաշագո՛յն ’ի դպրոցիս առ ’ի Հոգւոյն հրահանգելով
Բազմակի՛րթ ’ի մի վայրկեան ուսան խօսել զբարբառս այլոց ։
Ի հանդէս դեռավարժից խուռն ընթանայր մարդկան ժողով
Նորալո՛ւր ըզդէպ հրաշից դիտել աչօք յաղքատ ձըկնորս ։
Ընդ որս յաւէտ սըխրացեա՛լք և ասէին սքանչանալով՝
Գիտէ՞ք դուք ըզսոսա , որ են գռեհիկ Գալիլեացիք ,
Շինակա՛նք և անշուք ’ի գաւառի ծընեալք ողջոյն .
Զմի բարբա՛ռ ամենեքին և եթ ուսեալք ըզհայրենի ։
Բա՛բէ , զի՞ արդ ըզբոլոր ազգաց լեզուս գիտեն խօսիլ ,
Ո՛հ ըզձո՛յլ Հռովմայեցւոց բարբառ որպէ՞ս քաջիկ հընչէ ,
Ո՛րըն պե՛րճ Հայոց բառիւք , զի վայելուչ բանըս յօդէ ։

Նո՛ր են այս ըսքանչելիք Աստուածահրաշ ցուցեալ առ մեզ ,
Զի՛նչ արդեօք լինել կամի , աւա՜ղ , ընաւին անդիտանամք ։
Այլ կիսո՛ցըն խաղ առեալ զմեծամեծօքն Աստուածաձեռն
Զհանճարո՛վ Հոգւոյն լըցեալս գոլ քաղցուալից՝ համարէին ։
Իսկ Պետրո՛ս , որ աղախնոյն հարցմամբ ըզխօսըս խառնակէր ,
Առ ահի լեալ կորագլուխ՝ նըստեալ դողայր առ խարուկին ․
Զի՞ աստէն յառնէր յոտին , զոր ուրացաւըն դաւանէր ։
Յի՛ս դարձուցէք ունկն , որ զարմացեալքդ էք ափշութեամբ ․
Ո՞չ որպէս դուքըդ կարծէք , եթէ արբեալ եմք ՚ի գինւոյ ,
Այլ ՚ի Հոգւո՛յն բաժակէ , որ ըստ բանին կանխազեկոյց
Տէրըն հեղ յոգւոյ իւրմէ առատահոս ՚ի վերայ մեր ,
Որով ա՛րդ շարժիմք խօսիլ պէս պէս լեզուս ամենեքեանս ։
Այս պարգեւ է Յիսուսին , ում աշակերտ եղաք սիրով ,
Զոր դատեա՛լ յանիրաւի՝ սպանիք զանմեղն և զանարատն ․
Իսկ Աստուա՛ծ հրաշապէս յարոյց ըզնա ՚ի մեռելոց ,
Որ բազմիցըս երևեալ մեզ փառաւոր մարմնովըն իւր՝
Համբարձա՛ւ և զաւետիս Հօրըն իւրոյ մեզ խոստացաւ ․
Զոր առաքեա՛ց աւասիկ , ընդ որ այդչափ սքանչացեալ էք
Ըզնորի՛ն շնորհաց զեղումն ՚ի մեզ տեսեալ առատալիր ։
Ձեզ ե՛ւս են այս աւետիքս և ձեր որդւոցըն կոչեցեալ ,
Թէ դարձջիք և ՚ի Յիսուս հաւատայցէք ապաշաւեալ ։
    Այսր և ի՛նձ է զարմանալ իբրև երգիչըն Լամբրօնեան ,
Թէ առ ի՛նչ Քրիստոսի այնչափ հրաշից մեծամեծաց
Շարժեցա՛ւ ոչ ոք սրտիւ ՚ի հաւանիլ և հաւատալ ․
Իսկ աստանօր Պետրոսին մի բարբառոյ քաջայանդուգն
Անձի՛նք երեք հազար աշակերտիլ յօժարեցան ․
Որ այսո՛ւ քարոզեցաւ արդիւնք Հոգւոյն գոլ գերազանց ։
Բա՛նըն համազօր Հոգւոյն և ժիր մըշակն Յիսուս
Արօրեա՛լ մարդկան ըզսիրտս և ՚ի նոսին ցանեաց ըզսերմն ,
Թո՛ղ այնպէս իբր առ հողով ի՛նքըն չոգաւ յերկրէ յերկինս ։

Ե՛կն ժամ այնուհետև ցօղել Հոգւոյն առ 'ի վերուստ
Այսպէս 'ի վե՛ր ընծիւղել ըզփառակցին բանից ըզըոյսս,
Նո՛ր ծաղկել և հաւատոյ տալ ըզպըտուղ հարիւրաւոր ։
Յերկի՛ր, յոր ընթացեալ սերմանահանքըն Քրիստոսին
Հերկե՛լ և 'ի նմա ցանել զցորեան սուրբ հաւատոյն ·
Զոյգ ընդ բանի՛ն ընթանայր վըտակ Հոգւոյն առոգանող,
Գո՛ւր տըւեալ և յընդունակ հողոյն 'ի վեր բուսուցանէր ։
Որ շըրջէր անդ իսկըզբան 'ի ջուրս երկրի համատարած
Զօրութի՛ւն տալ եղելոցն առ 'ի Բանէն արարչական ·
Նո՛յն 'ի մէջ հանուր մըկըրտելոցն առ 'ի Քրիստոս
Շըրջէ՛ր 'ի խընդրել զարժանաւորս ըստ Իմաստնոյն,
Որոշե՛լ պաշտօնատարս Աստուածայնոյն ըստ Պօղոսի ։
Քանզի միա՛յն է հրահանգիչ ինքըն կարգաց եկեղեցւոյ,
Նա և ծնո՛ղ յորդեգրութիւն Հօրն ըզմանկունս աւազանաւն,
Եւ դայեա՛կ շնորհաց կաթամբ նոցին 'ի տիոց չափ Քրիստոսին ։
Գարո՛ւն աւետաւոր եկն 'ի յաշխարհ յետ Իսակցին
Հողմո՛վ հարաւայնոյ հալեցուցիչ սառնամանեացն ։
Տեղի ետ ձըմեռըն ցուրտ և անձրևացըն ժամանակ,
Բանաւո՛ր դաշտաց երկրի բացան երեսքըն ծիւնալիր,
Նորափթի՛թ ամենազան ծաղկունք 'ի վեր երևեցան,
Յանուշահո՛տ բուրմանէ նոցին լըցաւ բոլոր աշխարհ ։
Թըռչնի՛ք անպըտուղք ընծիւղեցին զըողըոջս իւրեանց,
Այգեա՛ց՝ ապականեալ ուռք յաղուեսուցըն խորամանկ
Յորթատո՛ւնկըն ճըշմարիտ մատամբ Հոգւոյն պատուաստելով՝
Ծաղկեցա՛ն խաղողալի ուռճազարդեալք վայելչապէս ։
Զի նապաստա՛կքըն երկչոտ զաշակերտացն ասեմ նըկուն,
Որ ղօղեա՛լք էին 'ի տանս իբր առ վիմօք ապաւինի,
Հոգւո՛վըն զօրացեալք՝ առիւծ դարձան ամեհագոյն ·
Եւ աստէ՛ն իբր 'ի մորւոյ մըռընչելով ելեալք 'ի դուրս՝
Զաղուեսո՛ւնս ապականիչս յայգեաց 'ի բաց հալածեցին,

Եւ արկին շուրջանակի ցանկ ըզնոքօք պարափակեալ
Զունե՛լ անդրէն մուտ 'ի նմա նենգող օձին սողոսկելոյ։
Քանի՞ն այնուհետև բարգաւաճէր այգին խոպան
Նոր զարդարեա՛լ ծողաբարձ բարունակօք ողկուզաբեր։
Դարմանիչ մշակ նորին Հայրն էր երկնից ամենախնամ,
Որթն 'ի նմա հաստարմատ առ 'ի նմանէ տընկեալ Յիսուս.
Առ որ ո՛ւռքըն պատուաստեալ՝ ձըգեն պարզեն ըզշառաւիղս։
Այլ Հոգւո՛յն ակն 'ի միջի որպէս աղբիւր անհատահոս
Ընթանա՛յր արբուցանէր զուռս ըզնորեկ հաստատացեալս.
Որ աճեա՛լք և Տեառն այգւոյն բերրի պըտուղս ընծայէին։
Մե՜ծ են ձիրք Հոգւոյն, մանկունք, ո՞ր բան զորէ ճառել արժան,
Կամ նորին պարգևաց, որ առ մարդիկ լինել քարոզ։
Եսայի վասըն սորա ձայն առնէ մեզ աւետազուարճ.
Ուրա՛խ լեր և ցընծա յոյժ, ո՛ ծարաւիդ դու անապատ,
Քանզի ջո՛ւր կենդանի բըղխեալ յորդեաց 'ի քեզ առատ։
Դաշտորա՛յք քո անջըրդի՝ դարձցին յաղտիւր և ճախճախուտ,
Առ որո՛վք ուրախութիւն լիցի հաւուցըն համերամ.
Զօրացեա՛լ երկիրդ անբոյս փոխեսցի ողջ մարգագետին,
Եւ խաշանցըդ բանաւոր անդ եղիցի մակաղատեղ։
Կարի ևս ուրախալի բանիւ նա զնոյն կըրկնէ այլուր.
Աւետիս տամ ձեզ, տընակք, և կարօտեալք ամենայնիւ,
Որ ըզջո՛ւր խընդրէք յաւէտ բերանաբաց փափագանօք,
Եւ լեզո՛ւք ձեր, ո՛հ, սաստիկ 'ի պապակէ կըցեալ 'ի քիմս.
Բացի՛ց ես ահա զգետս 'ի վերայ լերանցդ երկրի,
Եւ զաղբիւրս առատաբուղխ խաղացուցից 'ի մէջ դաշտացդ,
Բուսուցի՛ց յանջուր երկրէդ զանտառ մայրի և ըզտօսախն.
Դըժնըկին փոխան ելցէ ծառ մըրտենւոյն անուշահոտ,
Տընկեսցի՛ ցըրտոյն 'ի տեղ նոճն և սօսին, սարդն և սարոյն,
Կաղամախն և այլ պէս պէս ծառք վայելուչ 'ի զարդ այգւոյս.
Ծանիցե՛ս դու յայնժամ, թէ ձեռն արար իմ զայդոսիկ։

Զի՞ ես արդ և ըզՀոգւոյն մատըռուակայըն երգեցից ,
Որ զո՛ւխըս փափկութեան արբեալ 'ի տանըս լիապէս
Լըցեա՛լ ըզմայլեցան և զուարթացան յոգիս իւրեանց ։
Եւ զբաժա՛կն 'ի ձեռս առեալ ընթանային ընդ տիեզերս
Բաշխե՛լ առատապէս հրաւիրելոցն 'ի հարսանիս ։
Ծո՞վ , ցամաք՝ ուստից նոցին դիւր ճանապարհ լինէր պատրաստ ,
Ո՞ կարէր կալ խոչընդոտն և արգելիչ սուր ընթացիցն ։
Թեթե՛ւըս թըռչէին աւետաւորքն արքայութեան ,
Ճա՛խր առեալ և արծուօրէն վեր սլանային որսորդքըն քաջ ·
Ի վերա՛յ լերանց բարձանց և 'ի միջոյ ծակուց վիմաց
Զոգիս անասնամիտ վայրենացեալ անբանութեամբ
Որսային 'ի գիտութիւն լուսոյ Բանին ճըշմարտութեան ։
Եւ դաժա՛ն 'ի բնութենէն փոխեալ անդրէն քաղցրաբարոյս
Դառնային մարդ ըզգօն , հանդարտ , ըզգաստ , հեզ և անոյշ ։
Նա՝ սըրտից յանդաստանս նոցին խոպան և փըշաբոյս
Զհուր Հոգւո՛յն արկեալ 'ի նմա զմեղաց տատասկըս կիզէին ·
Եւ հերկեա՛լ զօրութեամբ Բանին խոփովըն խորամուխ՝
Ցա՛ն ապա զցորեան կենաց արկանէին առատաբուռն ,
Եւ ահա՛ երագ անդէն բողբոջէին կենդանի ջրով
Հա՛ց լինել կարօտելոյն , որպէս ասէր առ աշակերտսն ·
Թէ ունի՛մ ես կերակուր զմարդիկ որ յիս արդ հաւատան ։
Ծառա՛յքն և սպասաւորք մեծի ընթրեաց պատրաստողին
Որպէ՞ս արագաոտն արշաւեցան 'ի հրապարակս ,
Զխե՛ղս և կաղս , կոյրս և զաղքատս մուծին յընթրիս երկնաւորին ։
Եւ հրաւիրա՛կք 'ի Հօրէն առաքեցան 'նդ աշխարհ բոլոր ,
Սիրելի՛ արքայորդւոյն ընտրել ըզհարսն անարատ ։
Շըրջեցա՛ն , որոնեցին և երբ գըտեալ զայն՝ խօսեցան ·
Հաւանէ՞ր հարսըն յօժար , թողո՞ւր ըզտուն բուն Ռեբեկայ ,
Ո՞չ կամէր կալ ես 'ի նմա , որպէս ծընողքըն խընդրէին ·
Փարելո՛յն 'ի սէր վառեալ՝ փութայր առ Նա սըրտին ըղձիւք ,

Մինչ լուաւ զայս աւետիս, ում ըսպասէր նուաղեալ աչօք·
Թէ գեղջ՛ն իւր ցանկացեալ վեհ Թագաւորն երկնից գահուն
Նոր Սահմ՛ան աշխարհանաղ, չըքնաղ տեսլեամբ և շնորհաշուք
Կոչէ՛ զինքն 'ի հարսանիս, փեսայանալ կամի հոգւով։
Վասն որոյ սիրալըցեալ չոգաւ ըզհետ հրաւիրակացն,
Որ ըզնա՛ զարդարեցին նոր հանդերձիւքըն հարսանեաց,
Եւ նարդեա՛ն անուշահոտ իւղով օծեալ շնորհաց Հոգւոյն՝
Այնպէս 'ի յառագաստ երկնաւորին մուծին յերկրէ·
Փեսային Քրիստոսի անդ կացուցին 'ի յանդիման
Իբրև ըզկոյս մի ամբիծ, որպէս պարծէ Անօթն ընտրեալ։

Արդ 'ի վե՛ր համբառնալով զաչըս, մանկունք, 'ի Վերնատանն
Մաղթեսցո՛ւք հաւատով առ ինքնազօր Հոգին Աստուած·
Եւ 'ի մե՛զ որչափ կամի՝ հեղցէ զկաթիլ իւրոյ շնորհաց,
Ըզբաժա՛կն իմաստութեան ըմպել տացէ ում փափագիմք։
Մերժեսցէ՛ իսպառ 'ի մէնջ ըզշընչաւոր Թիւր գիտութիւն,
Ըզհաճոյն իւր ուսուսցէ, որ տայ խորհիլ միշտ ըզվերնոյն։
Սիրով առնէ զայս այո՛, թէ մեք զանձինըս մեր պատրաստ
Օթևա՛նս յարդարեսցուք 'ի բնակութիւն նմին մաքրութեամբ։
Եւ զի միշտ ինքըն շըրջի խընդրէ զոգիս արժանաւորս,
Ի մարմնի վարեցելոյ մեղօք երբէք չառնէ դադար։
Նա՝ 'ի Թիւր խորհըրդոց և նենգաւոր մըտաց փախչի,
Տըրտմի յոյժ յորժամ Թափուր մնամք մեք նորին 'ի պարգևաց։
Ուստի զանձինըս մեր խորան մաքուր գործով յօրինեսցուք,
Եւ զաղբ մեղաց ըզհոտ մերժեալ՝ հոգւով տաճարասցուք,
Ի սիրտըս մե՛ր բուրվառաւ սիրոյ ծըխեալ խունկս անուշից՝
Ընդ բուրո՛ւմն ախորժելով՝ եկեալ 'ի մեզ դադարեսցէ։

Մինչև ցարդ, ազնիւ մանկունք, 'ի բոլոր վայրս տնօրէնութեանցն
Խաչեա՛լ Յիսուսին, ճեմեալ ընդ իս՝ հասաք 'ի լրումն·

Հրաւիրեմ այժմիկ ըզձեզ և խաչակցացն 'ի վկայարանս ,
28 Վեհագոյն և հրաշակերտ 'ի Սուրբ Տաճարըն Յակոբեանց ,
Հրաշակեալըն ընդ տիեզերս վայելչութեամբն անհամեմատ ,
Գրիգորին և Տրդատայ շնորհիւ ձօնեալ Հայոց պարգև ։
Ուր հանգչի Գըլուխըն պատուեալ Առաքելոյն բաժակարբու
Եւ մարմին Քրիստոսանուէր արդար անուն Աշակերտին ։
Նախ 'ի մատուռըն մըտեալ տացուք համբոյր Գըլխոյն այնմիկ ,
Անտանօր զբարի բողբոջըն Զեբեդեայ դրուատեցից ,
Զոտարփալին Յակոբն ասեմ , քան ըզնախնին գերազանցեալն ։
Նա և ե՛թ 'ի մի գիշեր ըզցանկալին արկեալ 'ի բուռն
Թողուլ երբէք ոչ կամէր չեւ ըզփափագ սըրտին առեալ ։
Սա զերրեակ ամըս ողջոյն զտիւ և գիշեր միշտ անբաժան
Ցանկալւոյն ըզհետ շըրջեալ՝ սիրով Նորին սիրտըն լընոյր ։
Նա ցաւոյն ամոլաջըլի չհանդուրժելով՝ ձըգէր ըզսէրն
Կաղացեալ այլ ոչ կարէր վազել ըզկնի և ըմբռնել ,
Օրինակ որդւոցըն Թոյլ , որ կաղացան կամօք իւրեանց
Զհետ շաւղայցըն երկնաչու ճըշմարտութեան ճանապարհին ։
Սա որոշեալ 'ի Նոցունց ճետ քաջաշնորհ երևեցաւ
Սիրասլաց և սրընթացիկ անկաղ ոտիւք սուրբ հաւատոյն
Հետևեցաւ Քրիստոսին և երկնատար կենաց ուղւոյն ։
Նա զորդիս երկոտասան ծընեալ մարմնով տայր աշխարհի .
Իսկ սա ելեալ տարադէմ գնաց 'ի վիճակն իւր 'ի Սպանեայ ,
Ընդ ըզգեանըն քարոզեալ դիւամոլոր անաստուածիցն՝
Ի Քրիստոս հոգւով ծընեալ զազգըն ողջոյն՝ ձօնէր երկնից ։
Որ Յիսուսին խոստացաւ յօժար ըմպել զմահուն բաժակ
Այլ ընդ ուր Տէրըն իւր արբ յիւր ազգէն դառնացուցիչ .
Վասն որոյ դառնայր անդուստ և 'ի Սաղէմ աճապարէր
Տեառըն իւր նըմանելով , որ եկն ինքնին 'ի չարչարանս ։
Ուր 'ի ժամու Հերովդէսեան եդաւ 'ի բանտ զերդ Յովհաննէս
Արբ ըզնոյն բոլոր սըրտիւ համամբ գըլխոյն Քրիստոսասէր ։

Ում համբուրմա՛ն տարփացեալք 'ի սպաս հասին զուարթունք անդէն,
Բարձեա՛լ զայն 'ի միջոյ լուսասպիտակ դաստառակաւ՝
Բերեալ յանկա՛րծ իջուցին այսր ընդ առաջ Մօրն Աստուծոյ,
Եւ խուրո՛ւմ Հարազատին և արդարոյն Յակոբայ:
Որ միմեա՛նց լեալ կարեկից և ձեռնամած նըստեալք 'ի յողբ
Ի թո՛ւխս համակէին ըզգուժ մահուն առեալ նորա:
Քանի՛օն ևըս կըրկին սուգ տարաժամ սաստկանայր աստ
Երբ աչօ՛ք հայէին 'ի հատեալ Գլուխըն սիրելոյն
Այնպէս եդեա՛լ ընդ առաջ արիւնաթաթաւ և ապաժոյժ,
Որ թանա՛յր և ողողէր 'ի յարտասուաց նոցին պարկեշտ:
Սիրելի՛ էր Յակո՛վբայ բնակիլ գըլխո՛վն 'ի սուրբ երկրիս,
Իբրև հո՛ւպ վեհագունի Գըլխոյն մեռեալ և յարուցեալ:
Իսկ մարմնո՛վըն կալ յերկրին իբրև յօդից որոշելոյն
Ի մի գլո՛ւխըն Քրիստոս յոր միանան հանուր անդամք:
Նա՝ մասա՛մբըն իւր միով զինքն ընծայեաց սեռիս Հայոց
Իսկ միւսո՛վըն՝ սեպհական ազգին, ում զբանըն քարոզեաց:
Այսպէ՛ս յերկրի աստ և անդ պարգև անդիւտ նա բաշխեցաւ,
Եւ հոգւո՛վն առ Քրիստոս միշտ բարեխօս նոցին և մեզ.
Որ արդ նըստի՛ ընդ աջմէ՝ արեամբըն 'ի մահ մըկրտելով:

Դիմեսցուք այժմ 'ի նըշխարս և փոքըրկանըն Յակոբայ,
Վըշտըմբե՛ր ճըգնող անձին ուարդարութեամբ ճոխացելոյն:
Փոքրի՛կ, այլ մեծութեամբ շնորհացըն իւր յոյժ անքանակ,
Արդա՛ր, զի անարատ գնայր 'ի շաւիղս վարուց իւրոց,
Տեառնեղբա՛յր, զի ազգակից և մերձաւոր էր Քրիստոսին,
Ամոխա՛խ դայեկանունդ 'ի մի տոհմէ շառաւիղեալք:
Այոքի՛ւք պատուեալ եղև 'ի մէջ գընդին առաքելոցն
Նախաթո՛ռ Երուսաղէմ նըստիլ 'ի գահ Դաւթի որդւոյն:
Յիսուսին նըմանելով սիրեաց և սա բոլոր սըրտիւ
Ոչ մեկնիլ երբէք մարմնով 'ի յիւր տանէն Իսրայէլի:

Այլ բանիւքն իւր խրատու նա յոյժ մերձ էր հեռաւորացն ,
Առ 'ի սփիւռս երկոտասան օտար ազգացըն նորակոչ
Շնորհաբեր ողջունական Թուղթըս գըրեալ և առաքէր ։
Յորդորէր , թէ զուր է բնաւ լոկ հաւատոյն ապաստանիլ ,
Եթէ ոչ տալ ըզպըտուղ գործոց բարեաց՝ փոյթ ունիցիք ։
Ծառ էք նոր Քրիստոսատունկ , որ արդ ծաղկեալ էք հաւատով ,
Տուք պըտուղ , զի մի հատջիք սուր տապարաւն եդեալ 'ի հուպ ։
Սիրտ վառիւր աննիւթ բոցովն և նախանձու Եղիային ,
Ոչ նըման նըմին փախչէր զանգիտելով 'ի կատաղեացն .
Այլ իբրու զվէմ հաստատուն կայր 'ի միջի գայթագղելոցն
Ըզշինողըն կըշտամբէր , որ զՎէմն անկեան անարգեցին ։
Դարձեալ սիրով աղաչէր ընտրել անդրէն զայն 'ի շինուած՝
Կառուցեալ հաւատով ամուր զինքեանս վերայ նորին ։
Ով , ասէր , հարեալ 'ի նա դուք փըշրեցիք մանր 'ի կորուստ ,
Եւ հողմով բարկութեան հոսեալ այսր անդըր ցըրուեսջիք ։
    Այլ որդւքն ապառում ձանձրացեալ յոյժ յանդիմանչէն՝
Խորհեցան խարդաւանել զԵրանելին նենգաւ 'ի մահ ,
Դարան գործել արդարոյն և կալ անմասն յօրհնութենէն ։
29 Վասն որոյ հնարիւք հանեալ զնա տաճարին 'ի յաշտարակն՝
Ընդուստ արկին 'ի վայր , որ բարձրացաւ հոգւովն յերկինս .
Մինչ ոչ մեռաւ սքանչելեօք՝ Թափչով ըզգըլուխըն փըշրեցին ,
Որ մարմնովըն պատուական ամփոփեցաւ ընդ սեղանովս ։
    Մատուցեալ արդ , ով մանկունք , և մեք ոգւով Փափագողին ,
Արդարոյն նըշխարաց տացուք համբոյր սիրոյ ջերմամբք .
Երկնամբարձ գըլխոյն այնմիկ , որ զհամայնից գըլուխըն Քրիստոս
Ընդունէր և առ նորին Թափչով հարեալ խորտակեցաւ .
Աչացն արտասուահեղ միշտ առ ազգին իւր դըժկամակ .
Բերանոյն համբուրիչ լուսոյ դիմաց մանկացելոյն ,
Որ վըկայ լինէր բանիւ և դաւանէր ըզնա Քրիստոս ,
Որ դըպրաց , փարիսեցւոց յանդիմանիչ էր անաչառ .

Ձեռա՛մբն Աստուածակիր, որ պաղատէր տարածելովն,
Արփինագե՛ղ պատարագին նախանըւէր մատուցողացն.
Աթոռն այն սրբազգոյն, որ Յիսուսին էր բնակարան,
Որ անխառն էր և անախտ ՚ի բնաւ չարեացըն եկամուտ,
Ընդունիչ և լայնածիր տեղի շնորհաց Աստուածայնոց,
Հե՛ղ երկայնամիտ քաղցր և գըթած ամենայնիւ.
Ծընդա՛մբըն խըստացեալ ՚ի կըրկնելոյ ծունր ՚ի յաղօթս,
Որ տըկա՛ր էր և կըթոտ առ ՚ի պահոցըն պընդութեան.
Ոտիցն ընթացելոց միշտ ՚ի Տաճարըն վեհային,
Եւ ՚ի տե՛ս հիւանդացն արագապէս փութացելոցն։
Համբուրիւ ողջունեսցուք զբոլոր մարմինն սըրբասընեալ,
Զպատարա՛գն անուշահոտ և զբանաւորըն ողջակեզ,
Ըզպարկե՛շտն և վայելուչն ըզկուսութեամբըն զարդարեալ,
Ըզտաճա՛րըն մաքրագոյն կազմեալ մասամբքն արդարութեան,
Ուր եկեա՛լ Քրիստոս ընդ Հօր օթևանէր ըստ իւր բանին։

Մնա՛յ ինձ և եթ ՚ի վախճան երգոյս, մանկունք, զձեզ հրաւիրել
Ի հովիտն աշխարհատեան ՚ի ձորըն մեծ Յովսափաթու,
30 Ի Գերեզմանն հրաշալի Մօրն Աստուծոյ Մարիամու։
Որ այն ինչ գայր հասանէր օր բերկրութեան վեհ Թագուհոյն
Վերբերիլ մարմնով յերկրէ և ընդ որդւոյն լինել յերկինս,
Իջանէր ըստ առաջին մեծ Գաբրիէլ աւետատուն
31 Ի լեառըն Ձիթենեաց տալ բրաբիոն Կուսին ՚ի պսակ։
Ուրա՛խ լեր և արդ, ասէր, Դըշխոյդ երկնից Թագաւորին,
Հանդերձեա՛լ ես աւասիկ կալ ընդ աջմէ Նորին փառօք.
Միածին որդեակըն քո, որ Թող ըզքեզ չոգաւ յերկին,
Ի պատիւ ծնողիդ ամբիծ նա խոնարհի զուարթուն զօրօք
Փոխել ըզՄա՛յրդ ՚ի յերկրէ անդ ուր բազմի հուպ ինքն ընդ Հօրն,
Յերջանիկ վայրն անմատոյց ՚ի սրովբէիցըն սիրալառ։
Շա՛տ եղև երկնակենցաղ Կուսիդ լինել ՚ի վայր վըշտաց

Այդպէս աղքատին կեանըս վարել տառապանօք,
Անհանգիստ զօր ամենայն հալածելով յազգականացդ .
Թողո՛ւմ զայս և կրել կարօտ քո սիրասուն որդւոյդ դիմաց ։
Ե՛կ ահա ժամ ցընծութեան , զի երթիցես առ Նա փառօք
Սիրո՛վըդ կաթոգին անդ ընծայաւ փարիլ անբաժ ։
Բանի՛ յայնժամ հոգեզուարճ լեալ Կուսամօր յայս աւետիս
Բերկրալի՛ դառնայր անդէն ՚ի տնակըն իւր աղքատիկ .
Ժողովեա՛լ գային առ Նա պաշտող կուսանքըն խաչակիր .
Եւ առաքեա՛լք , որ քառանկիւն ՚նդ աշխարհ բոլոր սփռեալ էին ,
Ազդելո՛վ Հոգւոյն սրբոյ հասանէին յԵրուսաղէմ
Ի լինե՛լ յուղարկաւոր հարսին՝ երկնից ՚ի յառագաստն ։
Ակմբեա՛լ բոլորէին շուրջ ըզմահճօք անմահացուին ,
Ջահազգեստեա՛լք լուսավառ և պաշտէին զտիւ և գիշեր .
Անդադա՛ր և քաղցրաձայն երգովք ըզկոյսն օրհնաբանեալ՝
Գալըստեա՛ն որդւոյ Նորին ըսպասէին զուարթ և անքուն ։
Եւ ահա՛ երկինք բացեալ , Տէրն իջանէր հրանիւթ զօրօք ,
Գա՛յր և ըզգըլխով Մօրըն կանգնէր վերայ յօդոյն ,
Լուսափա՛յլ շողանըշոյլ ամպն էր ոտից իւր պատուանդան ,
Եւ հովանի՛ Նազելւոյն իբրև յայրին ՚ի Բեթլէհէմ ։
Ի սըրտին Կոյսըն հըրճուէր , ժըպտէր դիմօք առ Միածինն ,
Դիւր և հեշտ իբր ըղխընծոր հանեալ զՀոգին իւր ՚ի ծոցոյն
Աւանդէր քաղցրութեամբ ՚ի ձեռս որդւոյն աւանդատուր ,
Ում ՚ի գե՛ղն և գերահրաշ պայծառութեան ափշէր Պետրոս ,
Հարցանէր սքանչանալով և յԱրարչէն տեղեկանայր .
Թէ զոգիս բանաւորաց այդպէս պայծառ ստեղծի սկըզբան ,
Դարձուցի՛ն խաւարազգած , աւա՜ղ նոքին մեղօք մարմնոյն ։
Հուպ եկեա՛լ պատեցին պարկեշտ կանայքն արտասուելով
Ըզմարմի՛ն պատկառելոյն , որ տաղաւար եղև Բանին .
Բարձեա՛լ Առաքելոցն օրհներգութեամբ խընկանըւէր
Յայս ՚ի դի՛ր բերեալ եդին զանօթ գանձուն Թաքուցելոյ ։

Յետ երի՛ց աւուրց ապա իջեալ որդի՛ն նոյն հանդիսիւք,
Վերառեա՛լ հրաշօրէն 'ի տապանէս ըզՄօ՛ր մարմին
Ընդ ոգւո՛յն արփիափայլ զուգաւորէր ձեռօքըն իւր.
Որ աննի՛ւթ թեւօք թեթեւ զուարթնոց յերկինս վերասլանայր,
Ոսկեհո՛ւռըն հանդերձիւք կալ ընդ աջմէ որդւոյն 'ի փառս։
Բարդողիմէ՛ն անձկաւէտ, որ դեգերէր 'ի տարաշխարհս,
Ի փոխո՛ւմն Աստուածամօր եկեալ, աւա՜ղ, ոչ ժամանէր։
Ո՞ յայնժամ դուլ կարէր տալ նորա ողբոյն լալահառաչ,
Որ գըրկեա՛լ զտապան թափուր լայր և կոծէր անմխիթար,
Ո՜հ, ասէր, ես միայնա՜կ չեղէ տեսոյդ արժանաւոր,
Եւ Տեառն իմո՛յ Մօրդ ամբիծ յերկրէ յերկինս յուղարկաւոր։
Բացէ՛ք, հայցեմ, ո՛վ եղբարք իմ լըծակիցք դուք ըզշիրիմս,
Թէ ո՛չ ես արժանի գտայ պատկերի՛ն կենդանութեան
Գէթ առի՛ց ըզփափագս 'ի յանարատ մարմնոյն մեռեալ։
Տեսեա՛լ ըզտղայապէս լալումն եղբօր՝ բացին ըզդի՛րն,
Երբ ունա՛յն գտին 'ի մարմնոյն, ո՛վ յաւելոյր նոր ցաւ սըրտին։
Որդեգի՛րն Յովհաննէս կարկառէր ձեռս աստ առ Պետրոսն.
Տուր, ասէր Բարդողիմեայ դու զտիպ Կուսին կենդանագիր,
Թող նորի՛ն թախծալից ոգին այդու ըսփոփեսցի։
Ընկալեալ զայն խընդալից անչափ ըղձիւ տենչացողին
Համբուրէ՛ր և անձկաբեկ սիրտըն լինէր բերկրապատար,
Լեալ այնպէս պարգեւագիւտ՝ դառնայր ուրախ 'ի Հայաստան,
Ընձեւացեա՛ց աշխարհին զայն ընծայէր գոլ պահապան,
Եւ հալածի՛չ սեաւ սատանից 'ի տեղւոջէն դիւասարսափ։

Այլ մե՛ք, ո՛ մանկունք, առ տապանաւ Կուսի՛ն՝ անկեալ
Արտասուօ՛ք պաղատեսցուք զի բարեխօս լիցի առ մեր
Յաւէնի՛ն աշխարհախումբ առ անաչառ որդի՛ն դատող։
Քանզի մօտ գայ 'ի կատուլ ըզկալ մարդկան ժողովելոց,
Հեծանո՛ւն արդարութեան զօրեանն կուռէ երկնից յամբար

Զյարդըն ո՛հ, անշիջելի հրոյ դեհենին մատնէ յայրումն։
Մի՛ ուրեմն հանցուք ՚ի մոաց զահեղ աւուրն ըզհատուցումն,
Մի՛ մեղօք՝ ամօթապարտ ելցուք յատեան դատաւորին,
Մի՛ լիցի լսել մեզ բնաւ զնորուն վճիռ սարսափելի
Զարի՛ն ՚ի կեանս անմահ, զերթալն ՚ի հուրըն յաւիտեան։
Որ երգո՛ս ոտիւք ճեմեալ ՚ի քաղաքիս Երուսաղէմ
Տիպ սիրոյ Քրիստոս ողջոյն նըկարեցաւ ՚ի սիրտըս ձեր։
Տե՛ս նա մի լեալք ապաշնորհ զարդիւնս խաչին ապախտ առնէք.
Թէ՛ անդ ծանեայք Հրաւիրակաւն Արարատեան զերախտիս հարցն,
Քանի՞ աստ ըզՔրիստոսին, որ անկըշիռ է և անբաւ։
Տարրասցի յուշ ձեր յաւէտ տեղիք նորին տնօրէնութեանց.
Ցանկալին Նազարէթ, ուր ցօղեցաւ Բանն ՚ի վերուստ,
Բեթլէհէմ հովուաց այրին և անբանից մըսուրըն սուրբ,
Վերնատունն, ուր մեզ ՚ի կեանս բաշխեաց մարմինն և զարիւնն իւր.
Պարտիզէկն, ուր ըզքըրտունս արեան հոսեաց աղօթելովն.
Զենարանըն Գողգոթայ գառինն արեամբըն ողողեալ,
Այն ահե՛ղ վէմն և տեղին, ուր պատեցաւ անբաւելին.
Հրաշունակ գերեզման, ուր արթնաչեայ ննջեցաւ Տէրն.
Գալիլեա, ուր մետասանքն երկըրպագին յարուցելոյն.
Ձիթենեաց լերին գագաթ յորմէ յերկինս վերհամբարձաւ։
Զայսոսիկ յուշ ածելով դուք Յիսուսին ՚ի սէր վառեալ
Ո՛ն ՚ի Սաղէմ փութացէք ՚ի տեսութիւն հրաշալեացս,
Որ պատմեն անբարբառ զանչափութիւն սիրոյ Փըրկչին
Առ բերեալ զնկարս և նորին վըշտաց պատկերս աչաց ՚ի դէմս։

Առ քեզ դարձուցից բանիս ըզդէմ, սէր իմ Յիսուս,
Քեւ ըզկնիք երգոյս իմոյ դընեմ վերջին վայելչօրէն.
Որ օծման և օժընդակ ելեր հեքոյս հանճարաղուրկ։
Առ ՚ի քէն խրախուսելով անդ յիսկըզբան մըտի յայս դուռն,
Քեզ ընդ ելանելս աստ ընծայեմ ըզգոհութիւն։

Ո՜վ սիրուդ հրոյ արկեալ յերկիր, որ զհամօրէն վառէ զաշխարհ,
Ի Բաղձքըդ ցանկալի վարեալ տանի զամենեսեան,
Տարա՛ւ և զանարժանս, մոյծ 'ի քո յարկս ուր կաս անտես,
Բոյդ ոտից պատուանդանի երկրպագի փափագելով։
Մեռդ սաստիկ 'ի սիրտ իմ աստ բազմապատիկ առաւելու
Մի՛թէ հո՛ւր է բոցանիւթ, որ խարուկէ զիս 'ի ներքուստ։
Ցե՛ս մըշտաբորբոք պահեա դու զայս, մաղթեմ, Յիսուս,
Զ՚ի յամենայն 'ի սրտէ զմարդեղութիւնըդ սիրեցից.
Եւ զարդիւնս խաչիդ քոյդ մի զլացայց ես յաւիտեան։



# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 Քանզի դուռն խցկին, ուր պարապեալ երգէի զայս, հայէր ընդ արևելս 'ի լեառն Համբարձման. ուստի վայել էր շնորհս հայցել 'ի Նմանէ, որ ոտից շաւիղս մերձ կացեալ նկատէի աչօք:

2 Ցանկալի քաղաքն Նազարէթ հեռի կայ յԵրուսաղէմէն իբրև երից աւուրց ճանապարհ. յորում էր տուն հայրենական Յովսեփայ Աստուածահօրն. որ է արդ վանք հրաշակառոյց 'ի ձեռս Լատինաց. և ունի վայելչաշէն եկեղեցի մի: Իսկ տեղին յոր էջ Գաբրիէլ և աւետիս ետ Կուսին, քանի մի աստիճանօք խոնարհագոյն է քան զյատակ եկեղեցւոյն. և հանգոյն Բեթլէհէմեան այրին սա ևս փոքր այրիկ մի է. զի ծնելոյն յանբանից մսուր վայել էր և տեղւոյն յղացման լինել նոյնօրինակ:

3 Իբր երկու ժամաւ հեռի 'ի քաղաքէն կից փոքրիկ գեղջ միոյ շինեալ կայ վանք Յովհաննու ծննդեան, գեղեցիկ և վայելուչ. որ սորին ևս ծննդեան տաճար ցածուն քարայր մի է. քանզի վիճակեցաւ Մկրտիչ ծառային ևս Տեառն իւրում նմանելով 'ի մէջ այրի ծնանիլ: Իսկ անապատն, ուր զամս երեսուն ճգնաւորական վշտըմբեր վարուք եկաց Յովհաննէս, երեք մղոնաւ զատ է 'ի ծննդեան վանիցն. յորում գոյ փոքրիկ այր մի և առ նմին աղբիւր մշտահոսան և անուշակ բղխեալ յապառաժուտ վիմէ իբր պարգև ծառային 'ի տեսչութենէն Աստուածախնամ:

4 Չեռակերտ և խուռաբնակ քաղաք Դաւթի Բեթլէհէմ բացագոյն կայ յԵրուսաղէմէն իբր երկու ժամ. և յեզր արևելեան կողման քաղաքին կառուցեալ է վանքն, հոյակապ և ընդարձակ յոյժ ուր երից ազգացն ևս գոն առանձին վայելչակերտ սենեակք 'ի պէտս միաբան կրօնաւորաց: Մեծ եկեղեցին, որ իբր գաւիթ համարի ծննդեան Տաճարին, հրաշակառոյց և ընդարձակ է յոյժ շինեալ 'ի վերայ միաձոյլ քարեղէն մեծամեծ յիսնից սեանց. որ կամար, ոչ 'ի քարանց, այլ 'ի կարծրագոյն փայտից յօրինեալ ճարտարապետական արուեստիւ:

Ի վերայ միջին դրան եկեղեցւոյս, որ է Հայոց, գոյ գրեալ այսպէս. "Ի թուին հայոց ՋՃՀԶ կազմեցաւ դուռս սուրբ Աստուածածնիս ձեռամբ տէր Աբրահամին և տէր Առաքելոյ. 'ի թագաւորութեանս Հայոց Հեթմոյ որդոյ Կոստանդի. Քրիստոս Աստուած ողորմի աշխատաւորաց": Զմեծագործ եկեղեցւոյս աւանդեն զոլ շի-

նուած Քրիստոսազօր Արքային մերում Տրդատայ · զի այնպիսում հրա-
կայի միայն էր կանգնել զայնպիսի սիւնս , որպէս 'ի Արարատ 'ի նը
Միածնաէջ տեղին ։ Իսկ այրիկն հովուաց հրաշալի տեղին սուրբ ծննըն-
դեան Փրկչին մերոյ , է 'ի ներքոյ աւագ խորանին , յոր իջանին աստի-
ճանօք և 'ի վերայ յօրինեալ կայ սեղան կիսաբոլոր ձևով ։ Հուպ սը-
մին է մսուրն անքանից , ուր եդաւ աղքատածին մանուկն Յիսուս և
'ի Մոգուցն ընծայեցաւ ։

5 Յորձանապտոյտ գետն Յորդանան միոյ աւուր ճանապարհ հեռի կայ յԵրուսաղէմէն , որ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ ընթացեալ՝ Թափի 'ի մեռեալ ծովն · որ է Տեղին Սոդոմայ և Գոմորայ ։ Եւ մեռեալ յայն սակս ասի · զի չիք 'ի նմա բնաւին կենդանի և անշարժ կայ միշտ , Թէ և սաստկապէս բախիցէ 'ի նա հողմ ։

6 Հանդէպ Երիքովի յարևմտից կուսէ կայ լեառն փորձութեան , ուր եւ Տէրն մեր և ժուժկալութեամբ պահոցն՝ յաղթեաց երրակի կերպիւ փորձողին ։

7 Այն իսկ է Տիբերական ծովն , ուր Առաքեալքն որսային 'զձկունս և արժանացան կոչման Քրիստոսի լինել այնուհետև որսորդ մարդկան ուղկանաւ Աւետարանին ։

8 Զանուն քաղաքիս այս ռամկօրէն Ճինին կոչեն , որ վեց ժամաւ հեռի է 'ի Սամարիոյ , այն է 'ի Նապլուս քաղաքէն · և ունի խոտաւէտ դաշտորայս · սակայն յոյժ դաժանագոյն են Արաբացի բնակիչք սորին · առ որով անցանել Թէպէտ յառաջ վտանգաւոր էր , բայց արդ փոխեալ երևին 'ի դժնիկ բարուց իւրեանց · ուստի անվիաս անցանեն ուխտաւորքն , որ 'ի Նազարէթէն գան յԵրուսաղէմ ։

9 Փոքր ինչ բացագոյն 'ի հիւսիսահայեաց դրանէ Սօղոմոնեան տաճարին և մերձ դրանն քաղաքին , որ հանէ ընդ արևելս և կոչի դուռն Բենիամենի , կայ Պրովպատիկէ աւազան · որ յարևմտից կուսէ երևին դեռ երկու սրահք , որք Թուին Թէ 'ի հինգ սրահիցն մնացեալ են · յորս անկեալ դնէին բազմութիւնք ախտաժէտաց և սպասէին ջուրցն յուզման ։

10 Երկնահանդէտ լեառն Թափոր կայ 'ի հանդիպոյ Նային քաղաքին · որոյ 'ի գլուխ շատ եկեղեցիք և մատուռք շինեալ կային յառաջին ժամանակս և այժմ բնաւքն ևս աւերեալ են ։ Հուպ է լերինս այս տափարակ և խոտաւէտ դաշտն · ուր երախան երախան բազմեցան հինգ հազարքն և կերակրեցան կշտապինդ 'ի հինգ նկանակացն աճելոց օրհնութեամբն Յիսուսի ։ Եւ առ եզր դաշտիս գոյ ցամաք ջրհոր մի · զորմէ ասեն լինել գուբն , յոր ընկեցին զեղբայրիկն իւրեանց զՅովսէփ նախանձաբեկ որդիքն Յակոբայ և անդուստ հանեալ յետոյ վաճառեցին յԵգիպտոս ։

11 Գիւղն Բեթանիա կից է 'ի պարանոց համբարձման լերին և է կէս ժամու հեռի յԵրուսաղէմէն ընդ արևելս հարաւոյ։ Անդ է գերեզման բարեկամին Ղազարու և է այր մի. որոյ 'ի դուրս կացեալ կոչեաց ըզսիրելին 'ի թաղմանէն ։ Անդ էր և տուն Սիմոնի բորոտին. ուր յընթրիս բազմեցաւ Յիսուս 'ի մօտակայ աւուրս չարչարանաց և օծաւ 'ի կնոջէն ազնիւ իւղով նարդեան։ Իսկ վէմն՝ յոր վերայ նստաւ կենարարն 'ի հանգչել և Մարթա քոյրն Ղազարու ընդառաջեալ անկաւ յոտս նորին, սակաւ ինչ բացագոյն է 'ի գեղջէս. ուր դիմեն ջերմեռանդութե՟ ուխտաւորքն և զդէմս եդեալ 'ի վերայ մեծաւ փափագանօք համբուրեն և բազումք են 'ի կատարեալ հաւատոյն և սիրոյն Քրիստոսի՝ փըրծուցեալ զմասն ինչ ընդ իւրեանս տանին ։

12 Թէպէտ գոյ այլ ճանապարհ խոնարհագոյն 'ի Բեթանիոյ յԵրուսաղէմ. սակայն Տէրն մեր ընդ վերնագոյն ճանապարհաւ, որ է 'ի գլուխ լերին ձիթենեաց, էջ իշով և յաւանակաւն ։ Աւասիկ անդր ընթացեալ ծերք և մանկունք ոստովք ձիթենեաց բարեբանեցին զփրկաւէտ գալուստ նորա ։

13 Այժմ վկայէ ճշմարտապատում Խորենացին 'ի Թուղթն Աբգարու, որ առ Քրիստոս, հաստատեալ յայժմ բանէ Յովհաննու Աւետարանչին. «Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոյն անդր, զի երկիրպագանիցեն 'ի տօնին ։

14 Մերձ փրկչին վանից մերոց 'ի հարաւակողմ է Սիոն վերնատունն, զոր շինեաց Դաւիթ արքայն և հանգոյց անդ զՏապանակն Աստուածային։ Նա և աստ հրաշակերտեաց զգեղեցիկ աշտարակն զոր որդի նորին Սողոմոն յերգս իւր զպարանոց հարսին նմին նմանեցուցանէ ։ Աւանդեն զայսմանէ լինել տուն Յովսեփայ Արեմաթացւոյն, վասն որոյ Տէրն մեր անդ ետ պատրաստել զզատիկն. զի որ 'ի ծածուկ աշակերտ էր Յիսուսի՝ արժան էր նմա վերնատուն մի զարդարեալ պատրաստել սիրելի Վարդապետին իւրում ։ Ի մեծահաւատ Հեղինէ Թագուհւոյն շինեալ կային աստ յառաջ ժամանակաւ կրկին եկեղեցիք, մինն 'ի տեղի Հոգւոյն սրբոյ իջմանն բարձրագոյն կաթուղիկէիւ և միւսն 'ի ներքոյ նորին, ուր կան շիրիմք Դաւթի և Սողոմոնի ։ Վասն այն բռնութեամբ գրաւեալ են այլազգիքն 'ի ձեռաց Լատինացւոց և այժմ ինքեանք բընակին միայն և չկարէ ոք յուխտաւորաց մտանել 'ի ներքս ։

15 Ի գեթսեմանի ձորն փոքր ինչ բացագոյն յԱստուածածնայ գերեզմանէն ցուցանեն զպարտէզն աղօթից, և մերձ նմին գոյ մեծ վէմ մի, զորմէ ասեն, եթէ 'ի վերայ նորա ննջեցին երեք առաքեալքն Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս. առ որս դարձաւ Յիսուս երիցս անգամ 'ի տեղւոջէն աղօթից և պատուիրեաց արթուն կալ ։

16 Այժմ մնաց նկարագիր կարես գտանել 'ի գիրս Յովէլայ լթ Գլ.

19 համար. ուր խօսի Տէրն 'ի յամպոյն առ նա 'ի լուր երից բարեկամացն ։

17 Տուն Աննայ քահանային որ է այժմ եկեղեցի և վանք Հայոց, կառուցեալ 'ի հարաւակողմ քաղաքին առ պարսպօք սուրբ Յակոբայ վանից, փոքր, այլ գեղեցիկ յոյժ և կոչի սա Նախկին բանտ Քրիստոսի. քանզի յորժամ ըմբռնեցին՝ ածին այսր 'ի պարտիզէն. և ծառն՝ ընդ որ կապեցին զՏէրն առասանաւ՝ աստ է, շուրջանակի պատուարաւ փակեալ. որում ստուգութեան վկայէ և Մարինոս պատմագիրն 'ի կարգէ Լատին կրօնաւորաց ։

18 Սա ևս կոչի երկրորդ բանտ Քրիստոսի շինեալ փոքր ինչ բացագոյն 'ի դրանէ Դաւթի Մարգարէին, որ հայի ընդ հարաւ. և է 'ի նմա վայելչակերտ փոքրիկ եկեղեցի մի և գեղեցիկ սենեակք միաբան ուխտից ։ Առ սեղանով աւագ խորանին կայ եդեալ կափարիչ վիմի գերեզմանին Քրիստոսի և աւանդեն՝ եթէ Հեղինէ թագուհին ջանացեալ է տանիլ ընդ իւր և ցայս վայր բերելով՝ անշարժ մնաց ։ Իսկ յահեակ կուսէ սեղանոյն գոյ փոքրիկ մատուռ մի ուր 'ի սիւն կապեալ իբր 'ի զընդանի՝ եկաց Յիսուս մինչև ցառաւօտ. վասն այս իսկ ասի երկրորդ բանտ, և է 'ի ձեռս Հայոց ։

19 Ցուցանեն զայս քարայր առ լերամբ Սիօնի յանկեան ագարակի միոջ, յոր ընդ ելանելն արտաքս՝ եմուտ Պետրոս և ելաց դառնապէս ըստ գրելոյ աւետարանչին ։

20 Ի մէջ քաղաքին առ Ճանապարհաւ, որ հանէ 'ի դրանէն արևելից՝ երևին տակաւ ապարանք Պիղատոսի դատաւորին. յոր այժմիկ զինուորք տէրութեան բնակին ։ Հանդէպ այսմ 'ի միւս կողմ Ճանապարհին է տեղին ձաղանաց և ասի փուշ պսակ. քանզի յորժամ վճիռ եհատ Պիղատոս յաղագս մահուան Կենարարին՝ այսր ածին զինուորքն զՅիսուս, որպէս ասէ Աւետարանիչն, պսակ կազմեալ բոլորակի 'ի փշոց՝ եդին 'ի գլուխ նորա, և այլ պէս պէս անարժան կերպիւ ձաղեցին անդ զՏէրն մեր ։

21 Քանզի յօրինակ ազատելոյս Քրիստոսի արեամբ եցոյց Տէրն օրինօք, որ յաղագս բորոտելոյն. այս է առնուլ 'ի սրբելոյն երկուս հաւս սուրբս, զմինն զենուլ և զմիւսն թաթաւել յարիւն սպանելոյն և արձակել 'ի դաշտ ։ Ընթերցիր 'ի գիրս Ղևտացւոց. ժդ Գլ. 4 համար ։

22 Որպէս պատմէ Խորենացին, զի քաջահաւատ արքայն մեր Աբգարիոս զերկուս Թուղթս գրեաց առ Տիբեր կայսր Հռովմայեցւոց և յերկրորդ թղթոջն՝ յոյժ այպանելի եցոյց զխորհուրդ սինկղիտոսին. որք մարդկային քննութեամբ կամէին ընտրել զԱստուած ։ Ընդ նոսին պարտաւոր եցոյց նաև զՊիղատոս. որ թիւրեաց զիրաւունս և 'ի շնորհուկս Հրէից՝ ետ զանմեղն 'ի խաչ հանել ։ Յայսմանէ իսկ սըրտ-

մեռեալ Տիբերիոսի՝ եղեն խնկոյն անարգանօք զանիրաւն յիշխանութենէն։

23 Լեառն զմռսոյ և զենարան անմահ գառինն Գողգոթա է 'ի մէջ լայնածաւալ Տաճարին սուրբ Յարութեան, դրիւք բարձր, ընդ որ ելանեն աստիճանօք, հրաշակերտ յոյժ քան զամենայն տեղիսն տնօրինական, գերազանցութեամբն եւս աճաւոր. զի Տէրն 'ի նմա տեսանի բազկատարած 'ի փայտ մահու սեւեռեալ. ընդ որ 'ի հայելն ո՞ իցէ այն, որ սրտիւք ոչ ճմլիցի և արտասուօք զխաչին պատուանդան ոչ թանայցէ, որ Կենարարին կաթուածովք արեան ողողեցաւ։ Առ ընթեր սորա է և Տարածման տեղին. ուր նախ 'ի վերայ փայտին բեւեռեալ մերկաբազուկ և յետոյ աղաղակաւ վերացուցին անդուստ և բերեալ կանգնեցին 'ի գագաթան Գողգոթայի գոլ 'ի տեսիլ և նշաւակ ամենեցուն։

24 Ընդ մտանելն 'ի բարձրակամար դրանէն սուրբ յարութե̃ հուպ երեւի հանդէպ առաջի աչաց Վէմն Պատանատեղ՝ ահեղակերպ յոյժ ընդ որ 'ի հայելն սոսկա սիրտ մարդկային, և սքանչանայ 'ի միտս յորժամ զնորին մահուան զեղանակ յուշ բերէ. և իբր աչօք նկատէ 'ի վերայ նորա, կենդանին յաւիտենից մեռօրինակ տարածեալ 'ի մահկանացու ձեռաց պատանի։ Ով, քանի՜ փղձկեալ սրտիւ ջերմեռանդագոյն ուխտաւորքն զդէմս 'ի վերայ վիմին եդեալ մածանեն արտասուօք և կամին անբաժան լինել 'ի նմանէ։ Արժանի յիշատակաց համարիմ զերկու մեծամեծ պատկերսն, որ եդեալ կան 'ի վերայ Պատանատեղին, այնչափ սքանչելի և բնակաւոր են կենդանագրութիւնքն, մինչև չկարծես զնա ստուերագիր, այլ կենդանի տիպ ճշգրտութեան. յորս 'ի մինն երեւի տեառն 'ի խաչէն իջանիլն, Յովսէփ և Նիկոդիմոս առ նովաւ, և Մարիամանքն, որ զծակեալ ձեռսն Յիսուսի կալեալ համբուրեն. իսկ 'ի միւսն՝ իբր 'ի վայր առեալ պատեն և մայր Տեառն Մարիամ աղեկիզեալ և նուաղեալ դիմօք կայ 'ի վերայ։ Չտեսի զոք յուխտաւորաց, որ 'ի հայելն չարտասուեաց աչօք. և բազում այնոքիկ էին, որ անշարժ կացեալ մի ժամ արտօսրալից աչօք դիտէին ընդ այնս։

25 Ընդունարան Տէրունեան մարմնոյն գերահրաշ և սարսափելի Գերեզմանն է 'ի միջակին լայն և բարձրակամար Տաճարին Աշխարհամատրան 'ի ներքոյ փոքր կաթուղիկէի, և ունի երկու դրունս. ուր 'ի մտանելն ընդ մինն՝ երեւի վէմն, յոր վերայ նստեալ կայր լուսափայլ հրեշտակն և տայր աւետիս իւղաբերից կանանցն. իսկ 'ի միւսն՝ ահաւոր շիրիմն, յորում անմահն Աստուած մարմնովն եդաւ 'ի կարգի մահկանացուաց։ Իմ ոչ բերէ կար ասել աստ զանչափութիւն ջուրց արտասուաց, որ 'ի յաչաց աղբերց ջերմեռանդից վտակօրէն խաղացեալ՝ թանան ողողեն զՎէմն սրբոյ Գերեզմանին. և ոմանք արտաքուստ շուրջ կացեալ զպատուարաւ կաթուղիկէին՝ անկանին զվիմօք հիմանց

այնպէս բազում ժամս, համբուրեն երեսամած և բախմամբ սրտից և հոսմամբ արտասուաց խանդաղատելի դիմօք խնդրուածս առնեն 'ի Քրիստոսէն և խնդան յուսով և հաւատով յոգիս իւրեանց ։ Անդ է տեսանել, թէ զիա՞րդ փառաւորեցաւ Անունն Հօր. որ չունէր դոյզն ինչ տեղի գլխոյն հանգստեան, տաճար զարմանակերտ յօրինեցաւ նմին. որ արհամարհ ցուցաւ առաջի ազգին իւրում, որպէս ընթացեալ ամենայն ազանց 'ի ծագաց երկրի՝ յիւր գերեզման կենահրաշ՝ փառաւորեն զնա ։ Ինձ այնու առաւել փառաւորեալ թուի Որդին Աստուծոյ, որ յամենայն գիշեր պաշտի անդ երգով օրհնութեան 'ի մարդկանէ իբրև յերկինս 'ի հրեշտակաց ։ Զանզի անխափան կանխեն միաբանք երից ազգացն ևս, այսինքն Յունաց, Լատինաց և Հայոց և 'ի գիշերային ժամու կարգաւ կատարեն զխորհուրդ պատարագին 'ի վերայ գերեզմանին սրբոյ ։ Աստ ահա ստիպիմ հատուցանել յիշատակաւ զերախտիս մեծի առն ականաւոր Պէզճեան Արքայաշուք Յարութիւն Ամիրային. որ յետ բազմապատիկ բարութիւնս առնելոյ իւրում ազգին, զայս հոգևոր և ծայրագոյն բարիս ևս առնել հոգացաւ ։ Զանզի ազգն մեր յիրաւանց իւր զրկեալ՝ իբր քսան և երկու ամօք յառաջ չունէր մասն պատարագ մատուցանել 'ի վերայ Գերեզմանին. սա միայն զօրաւոր ձեռամբն իւր և Արքայատուր հրովարտակաւն՝ մասնակից արար զմեզ այնմ գերագունի շնորհաց. զոր Քրիստոս հաւասար բաշխեաց ամենայն հաւատացելոց ։ Ուստի վայելեալ մեր զայսպիսի շնորհս հոգևորական՝ պարտիմք ճանաչել զերախտիս մեծ և պատուական առն և յիշել զնա 'ի մաղթանս մեր. մանաւանդ յորժամ 'ի հրաշալի գերեզմանն դիմեալ յուխտ՝ հաղորդակից լինիմք շնորհացն սրբոյ պատարագին ։

26 Առ հիւսիսակողման Զիթենեաց լերին, քառորդաւ միով հեռի 'ի սուրբ Համբարձման տեղւոյն՝ գտանես զԳալիլեա, ուր ժամադիր եղև Յարուցեալն 'ի մեռելոց և անդր հասին մետասան Առաքեալքն և անկեալ երկիրպագին Յիսուսի, և ոմանք երկուացան, զի տեսին զաղքատակերպ Վարդապետն իւրեանց փառաւորեալ մարմնով և լուսափայլ դիմօք. զորս հաստատեցին 'ի հաւատս, որ տեսեալ էին զնա նոյնահրաշ կերպիւ 'ի լեառն Թաբոր ։

27 Համբարձման տեղին Քրիստոսի է 'ի կատար լերին Զիթենեաց յարևելից կուսէ յանդիման քաղաքին. ուր թէպէտ յառաջին դարս շինեալ կայր փառաւոր եկեղեցի. սակայն յայլասեռիցն դրաւելով՝ աւերեալ էր ։ Իսկ յորժամ քանի մի ամօք յառաջ կրկին էառ 'ի նոցունց ազգն մեր և հրաշակերտ տաճար կառոյց 'ի վերայ գմբէթայարկ յօրինուածովք, չկամելով երկուց ազգացն՝ վերստին 'ի մէնջ հանեալ ետուն անհաւատից զտեղին սրբութեան ։ Եւ այժմ միայն պարիսպն կայ շուրջանակի և 'ի վերայ Համբարձման տեղւոյն՝ փոքրիկ կաթու-

ղեկէ մի. յորում է վէմն, ուր նշմարին հետք ոտից Փրկչին մերոյ. յոր հուպ տարեալ զշրթունս՝ համբուրեն անյագ բերանով փափագանաց: Տեսի անդէն զկոյր մի, այլ հաւատոյն աչօք լուսաւոր, զի շօշափմամբ ձեռաց որոնելով՝ եգիտ զվայրն Լուսաւորին գարշապարացն և կոյր զականողես 'ի վերայ կափոյց զմեծ ժամս: Եթէ չէր լցեալ ակն ա-բեր աչացն՝ ընդ որ արդարև յորդահոս արտասուօք զփոս տեղին 'ի սաս-տիկ սիրոյն և ջերմեռանդութենէն, որ առ Քրիստոս և գոհութիւն վասն այս մատուցի կոչողին զնա յանցից ճանապարհաց 'ի յընթրիսն իւր արքայութեան:

28 Ընաշխարհիկ և ամենեցուն տենչալի մեծահռչակ վանք սրբոց Յակոբեանց Առաքելոց իբրև զերկին պանծայ վայելչութեամբն իւր 'ի քաղաքին Երուսաղէմ, դրիւք բարձր և լայնածաւալ, շուրջանակի ամրափակեալ պարսպօք: Ի միջի իւր պարունակին չորեքհարիւր և կամ ևս աւելի քարաշէն վայելչակերտ սենեակք. ըստ ամենայն կարգի յար-մարապէս յօրինեալք են և թաղքն վարդապետաց և հասարակ միա-բանից՝ որոշ են յուխտաւորացն, բաժանեալք դրօք և ընդարձակա-գոյն գաւթօք: Իսկ ցանկալին աչաց ամենեցուն և բղձալին ինձ երկ-նահանգէտ Տաճարն սրբոց Յակոբեանց 'ի վերայ չորից քառակուսի սեանց խորհրդապէս կառուցեալ է հրաշաձև կաթուղիկէիւ, ոյր տե-սիլ գեղեցիկ երևի աչաց հայելոյ: Սիւնք և որմունք համայն Տէրունա-կան սրբոց պատկերօք զարդարեալ են. որ այնչափ սքանչելի և բնա-կաւոր գեղովք կենդանագրեալ տեսանին, մինչև համարձակիմ ասել, թէ յայլ ուրեք դժուարաւ գտանին այնպիսի շնորհաշուք նկարք. որ-պէս և վկայեաց իսկ Եւրոպացի ոմն 'ի դիտելն իւրում զարմանալեօք: Առ որմովք աջակողման ունի վայելչակերտ և անուշաձև մատուռ մի փոքր, ուր ամփոփեալ կայ պատուական Գլուխն Զեբեդեայ որդւոյն Յակոբոսի: Երանի թէ անդ դիպեալ տեսանէիր զջերմեռանդագոյն սէր նոր ուխտաւորացն. թէ քանի՜ փափագանօք մերձեալ համբուրեն զտեղին սուրբ նշխարացն. և անդէն զուարթացեալք ոգւով՝ մխիթա-րին և մոռանան զնեղութիւնսն, զոր կրեցին 'ի ծովու և ցամաքի: Իսկ մարմին Տեառնեղբայր Յակոբայ արդարոյն ամփոփեալ է առ սե-ղանով աւագ խորանին և գերագահ աթոռն իւր հաստատեալ կայ 'ի գլուխ աջակողմեան դասուն կաթուղիկէիւ հովանացեալ և առ ընթեր նմին նորին յաջորդ Հայրապետացն աթոռ: Են և այլ երկու եկեղե-ցիք աստի և անտի մեծագոյն Տաճարիս. մինն կոչի Սուրբ Ստեփան-նոս, որ է 'ի յաջակողմն, երրակի խորանօք զարդարեալ. 'ի մէջ միոյն է երանելի Կիւրեղ Հայրապետին բազմածնունդ աւազանն. ուր յա-ւուրս երևման խաչին մկրտեաց նա զբիւրաւոր հաւատացեալս: Իսկ միւսն՝ որ է 'ի ձախակողմն, Էջմիածին անուանի և եդեալ կան 'ի նմա

երեք քարինք բերեալք 'ի հրեշտակէն խնդրանօք Կուսին 'ի Սինայէ,
Յորդանանու և 'ի լեռնէն Թափօրական։ Բազում հրաշս ցուցեալ են
քարինքս այս զօրութեամբ և շնորհիւ ոտիցն կացելոյն 'ի վերայ նոցա.
յորոց զմինն պատմել 'ի փառս Ներգործողին ոչ դանդաղիմ։ Տեսի
զոմն, զի ստէպ յամենայն աւուրս երթեալ բազում ջերմեռանդութբ
համբուրէր զքարինսն և լալեօք ևս Թանայր զնոսին։ Իմ յոյժ զարմա֊
ցեալ ընդ այս և առ չժուժելոյ սրտիս՝ մօտեցայ նմին հարցանել զպատ֊
ճառն։ Ընդէ՞ր, ասացի, պատուական եղբայր, այդչափ ջերմագոյն սի֊
րով անձանձրոյթ յամենայն ժամ դիմես 'ի քարինսդ։ Եւ նորա տեսեալ
զիմ անկեղծաւոր հարցումն՝ սկսաւ պատմել ինձ ճշմարտապէս։ Ես,
ասաց, տեսեալ եմ զզօրութիւնս սքանչելեաց դոցին ցուցեալ առիս
ժամանակաւ. քանզի յիմ առաջին գալստեան յուխտ 'ի սուրբ քաղաքս
յետին յաւագ շաբաթուն յերիվար ելեալ ընդ այլ ընկերակիցս իմ
գնացաք 'ի ձորն Գեթսեմանի և անդ դիպուածով իմն ձիս իմ խրտ֊
չեալ զարկոյց զիս սաստկապէս զգետնի մինչ միոյ ոտիցս ճան բոլոր֊
վին մանր փշրեցաւ 'ի մէջ մորթոյն։ Եւ բարձեալ զիս անդուստ իբր
մեռեալ 'ի վանս հասուցին. և էր ինձ այնուհետև լալ և ողբալ յու֊
սակտուր. քանզի չէր բնաւ հնար ինձ այլ ևս յոտից վերայ կալ և շար֊
ժիլ։ Եւ առաւել վասն այն սգայի, զի չգոյր յոյս տեսանել զհանդէս
սուրբ Յարութեան և կամ ընդ ընկերս իմ դառնալ 'ի հայրենիսն։ Եւ
իբրև այսպէս անմխիթար ողբայի զիմ Թշուառութիւն զերիս աւուրս՝
յանկարծ յուսով լցաւ հոգիս և ետու զիս բառնալ և տանել յեկե֊
ղեցիս այս Եջմիածնի և դնել առաջի սեղանոյս։ Որպէս ես յայնժամ
յորդ արտասուօք աչացս ողողէի զքարինսդ և ձեռօք սրբեալ զիմ ար֊
տօսր 'ի դոցունց՝ 'ի վերայ նշխարեալ ոտիցս դնելով՝ ինձ 'ի բժշկու֊
թիւն մատուցանէի։ Եւ իբրև զմեծ ժամ այսպիսի հաւատով և յու֊
սով առ Քրիստոս աղերսէի՝ լուաւ ինձ և այց արար արժանապէս
պատժաւորիս. քանզի, որ այլոյ ոտիւք այսր դիմեալ եկի՝ ես իւրովի
ոտիւք իմովք ելեալ աստէն ուրախութեամբ գնացի։ Ահա սոյնպիսեօք
ցուցաւ զօրութիւն սքանչելեաց քարանցդ այդոցիկ առիս. ես վասն
այնորիկ պատուեմ և համբուրեմ տենչանօք զդոսին։

29 Աշտարակս այս է յարևելեան կողմն պարսպի Տաճարին. յորմէ,
ասեն, մինչ արկին զերանելի Առաքեալն՝ ընդ զառ 'ի վայր Թաւալգլոր
գնաց մինչև ցյատակ հեղեղատին 'ի ներքոյ ձորոյն Կեդրոնի հուպ 'ի
կամուրջն, ընդ որ անցեալ գնամք յԱստուածածին. և 'ի տեղւոջն, ուր
Թափչով 'ի գլուխն հարեալ կատարեցաւ նա՝ երևի սալագոյն քար մի
և 'ի վերայ՝ հետ միոյ ոտից. զոր Լատինք զայն ոչ տան առաքելոյն,
այլ Քրիստոսին՝ այսպէս աւանդելով. եթէ յորժամ 'ի մատնութեան
գիշերին ըմբռնեցին զՏէրն, չետուն Թոյլ 'ի կամրջոյս անցանել, որ

էր նշան յաղթութեան . այլ բռկանի ոտիւք 'ի վերայ սուր քարանց հեղեղատին պարանակապ քարշելով անցուցին . և առ այս բերին զվկայութիւն 'ի գուշակութեանցն Յովբայ . «Քաղցրացան ընդ ոտիւք նորա խիճք հեղեղատին» : Վասն որոյ տիպք Տէրունւոյն ոտից դրոշմեցան 'ի վերայ քարիս այսորիկ :

30 Հրաշալի և խնդրակատար Գերեզման ամենօրհնեալ Կուսին Մարիամու, որ է 'ի մէջ ձորոյն Գեթսեմանի, խորագոյն է յոյժ և քառասուն կամ ևս աւելի աստիճանօք իջանեն 'ի վայր . յատակ տաճարին գեղեցիկ և խաչաձև խճն երևի և կամարքն կարի հնաշէն են : Յամենայն աւուրս անխափան 'ի մէնջ և 'ի Յունաց պատարագ մատչի 'ի վերայ գերեզմանի Մօր Տեառն : Գան երամովին արք և կանայք և ջերմեռանդագոյն ոգւով անկեալ զտապանաւ Տիրուհւոյն՝ լան և խնդրուածս առնեն 'ի Նմանէ, որ վասն իւր ուխտաւորաց բարեխօս է միշտ առ որդին իւր Միածին :

31 Ընդ մէջ Համբարձման տեղւոյն և Գալիլեային՝ կայ փոքրիկ աւերեալ եկեղեցի մի և աւանդեն՝ եթէ յայսմ վայրի երևեցաւ հրեշտակապետն Գաբրիէլ սուրբ Կուսին և ըստ առաջնոյն ողջունելով՝ ետ նմին զբրբիոնեայ պսակն կոչելով առ որդին իւր 'ի քաղաքն վերին . և այսմ Շնորհալին ևս վկայէ 'ի տաղին իւրում :

Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ՝
Բերեալ զբրաբիոն պսակ յաղթող Կուսին :

Մի այնպէս կարծեր, ով ուշիմ ընթերցող, եթէ ծանօթութիւնքս այսոքիկ, զորս եդաք աստանօր՝ բաւական լիցեն կատարելապէս տեղեկութիւն տալ զբոլոր տնօրինական տեղեացն սրբոյ քաղաքին . հապա միայն զկարևորագունիցն, յորս ճեմեցուցաք զմանկունսն . և այն յոյժ հարևանցիկ յիշատակութեամբ և եթ ըստ պահանջման համառօտ մատենիս : Այլ թէ քեզ ըղձալի է բարւոք տեղեկանալ համօրէն հրաշափառ տեղեացն՝ մի դանդաղիր դեգերել յարձակ պատմութեան սրբոյ Երուսաղէմին յօրինեալ 'ի Հաննա շնորհալի վարդապետէն . որ գեղեցիկ և դիւրիմաց ոճով ըստ ամենայն մասանց վայելուչ կարգաւ պատմէ զհամայն Քրիստոսաճեմ վայրիցն և զփոփոխումն անցից ևս յայտ առնէ՝ պատահեալ յառաջ կամ 'ի ժամանակի իւրում : Բաց 'ի պատմութենէ սորին՝ է և այլ հին ձեռագիր ընդարձակ պատմութիւն սրբոյ Երկրին իբր չորեքհարիւր ամաւ յառաջ յօրինեալ 'ի Մարինոս Լատին կրօնաւորէ, որ ոչ միայն զտնօրինական տեղեացն . այլև զբազմադիմի անցս քաղաքին Երուսաղէմի և զայլ պէս պէս նիւթոց՝ երկարագոյն պատմագրէ ըստ ամենայն հանգամանացն :

# ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

| ԵՐԵՍ | ՏՈՂ | ՍԽԱԼ | ՈՒՂԻՂ |
|---|---|---|---|
| Ը Յառաջ" | 27 | ծաղկեցու | ծաղկեցաւ |
| 9 | 19 | Բեթլէհեմ | Բեթլէհէմ |
| 27 | 7 | իշխանութիւնո | իշխանութիւնս |
| 33 | 15 | Րնդ | Ընդ |
| 34 | 18 | Րնդ | Ընդ |
| 37 | 12 | Օրինա՞կ եր | Օրինա՞կ էր |
| 42 Երր" Նախ" | 14 | ինքնահամ | ինքնակամ |
| 52 | 20 | հրաբոյր | հրապոյր |
| 62 | 24 | գոլ | գալ |
| 81 | 29 | օղնականի | օգնականի |
| 107 | 10 | գալոցն | գայլոցն |
| 128 | 6 | արգ | արդ |
| 128 | 11 | որ | որ |

1 ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библ.
7/Ш 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0107900
ՀՀ Ազգային գրադարան
NL0107899